



413
A91.99-3

USDA 1961

S-37 ՀԱՍՆՐՄԱՏՁԵԼԻ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՕՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ

ԵՆ

ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄՏԱԾ
ՄՏՔԵՐԻ ՈՒ ԳԱՐԶԻՆԱԾՔՆԵՐԻ

Անհրաժեշտ ձեռնարկ՝ լրագիրներ ու
գրքեր կարգալիս



ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ» Գանձակաջա փող. 3.
1908

A $\frac{\pi}{12842}$

Ա.

ԱՅՔԱ—1) Կաթօլիկ վանահայր, արքահայր: 2) Կաթօլիկ հոգևորականների պատուաւոր տիտղոս:

ԱՅՍԵՆՏԷԻՉՄ—Բացակայութիւն: Մասնաւորապէս՝ արսենտէիզմ է կոչուում կալւածատէրերի մշտական բացակայութիւնն իրանց կալւածից: Արսենտէիզմի զարգացումը կախուած է կալւածի տարածութիւնից մի երկրում որքան որ շատ կան խոշոր կալւածներ, այնքան մեծ է իրանց կալւածներից հեռու. սպորոզ կալւածատէրերի թիւը, և, ընդհակառակը: Այս երևոյթը բացատրուում է գլխաւորապէս նրանով, որ խոշոր կալւածատէրը, մեծ արդիւնք ունենալով՝ կարող է մայրաքաղաքներում ապահով ու ճոխ կեանք վարել, մինչդեռ՝ փոքր կալւածի տէրն անձամբ պէտք է կառավարէ իր հողերը, որպէսզի կարողանայ իր ապրուստը դուրս բերել եկամուտներից: Մեր օրերում արսենտէիզմն առանձնապէս զարգացած է Իրլանդիայում, ուր գերիշխում է խոշոր հողատիրութիւնը: Ռուսաստանում արսենտէիզմը զարգացած է հետեալ չափերով.—երկրագործութեանը յատկացրած միջակ կալւածներից բացակայում են կալւածատէրերի մօտաւորապէս $8\frac{0}{10}$ ը, խոշոր կալւածներից, որոնց մի մասն է միայն մշակում, բացակայում են $45\frac{3}{10}$, իսկ երկրագործութեան համար ամենևին չմշակող կալւածներից՝ (անտառից, արօտից, հանքերից և այլն) միջակներից բացակայում են $58\frac{0}{10}$ և խոշորներից՝ $86\frac{0}{10}$: Արսենտէիզմի անխուսափելի հետևանքն է հանդիսա-

նում այն՝ որ կալւածները կամ կապալով են տրուում, կամ մշակուում են վարձկան բանւորների ձեռքով: Սո-
վորաբար՝ խոշոր կալւածները տրուում են կապալով
զանազան միջնորդների, որոնք հողը մանր կտորների
բաժանելով՝ տալիս են գիւղացիներին: Կալւածներից
օգտւելու միւս ձևը՝ կառավարիչներին յանձնելն է, ո-
րոնք վարձու մշակներով են շահագործում հողը. սա-
կայն, այս դէպքում մշակութիւնը վատ է դնում, տըն-
տեսութիւնն աւելի ու աւելի է յետադիմում ու հողի
արդիւնքը պակասում: Արսենտիկզմ է կոչւում և այն,
որ մարդը կամ իրաւատէր հաստատութիւնը, կազմա-
կերպութիւնը, կուսակցութիւնը հրաժարուում է իր ի-
րաւունքներից, չի օգտւում նրանցից: Արսենտիկզմ փո-
խաբերաբար նշանակուում է նաև անբարեխիղճ վերա-
բերմունք, անպարտաճանաչութիւն:

ԱԲՍՈՒՐԳ—Անհեթեթութիւն, մի բան, որ մարդկային խելքից
ու ըմբոնողութիւնից դուրս է. անմիտ, անընդունելի
եզրակացութիւն, աներևակայելի, ծայրայեղ, անմտու-
թիւն:

ԱԲՍՏՐԵԿՏ—(ած.) Վերացական, մտաւորապէս կամ երևա-
կայութեամբ պատկերացրած:

ԱԲՍՏՐԵԿՏԻՆ—Վերացականացումն, մտաւորապէս կամ երևա-
կայութեամբ պատկերացումն:

ԱԲՍՕՂԻԻՏ—1) Բացարձակ, անկախ, բացառիկ, կատարեալ,
անպայման: 2) Փիլիսոփայական տերմին, որ նշանակուում
է ինքնագոյ, անսկիզբ, անկախ, կատարեալ էութիւն,
որից առաջ է եկել և զարգացել ամբողջ աշխարհը:

ԱԲՕԼԻՑԻՅՈՆԻՍՏ—1) Հակառակորդ, 2) արօլիցիօնիստ կոչւում
էին Հիււիս. Ամերիկայի Միացեալ Նահանգներում այն
մարդիկ, որոնք խափշկների ճորտութեան դէմ էին: 3) Ա-
րօլիցիօնիստ են կոչւում նաև այն մարդիկ, որոնք հա-
կառակ լինելով պոռնկութեանը՝ պահանջում են որ կա-

ուսմարութիւնը պաշտօնապէս արգելէ կա՛մ անց պոռնը-
կութեամբ պարապել:

ԱՅՕՐԻԿԷՆ — Բնիկ, տեղացի:

ԱԳԱՐԱԿ — Տես «Ֆէրմա»:

ԱԳԳՐԵԳԱՏ — Միատեսակ կամ տարբեր նիւթերի խառնուածք
խառնաշփոթ, անկարգ հաւաքածու:

ԱԳԴՐԵՍՍԻԻ — Յարձակողական, յառաջընթաց, նւաճողական:

ԱԳԷՆՏ — 1) Ներկայացուցիչ, միջնորդ, հաւատարմատար. 2)
Ֆիզիկայի և քիմիայի մէջ ազէնտ է կոչուում այն ոյժը,
այն պատճառը, որ զանազան երևոյթներ է առաջացը-
նում. 3) Դրդիչ պատճառ:

ԱԳԻՏԱՏՕՐ — Քարոզող, գրգռիչ: Ազիտատօր է կոչուում այն
մարդը, որ խօսքով, քարոզներով ու ճառերով աշխա-
տում է ունկնդիրներին մէջ մտցնել իր համոզմունքներն
ու գաղափարները և զրդել նրանց՝ այս կամ այն գոր-
ծողութեանը: Մեր օրերում սովորաբար ազիտատօր
են անւանում յեղափոխական կուսակցութիւնների ան-
գամներին, որոնք աշխատում են ժողովրդի մէջ տարա-
ծել իրանց կուսակցութեան գաղափարները: (Տես «Ա-
զիտացիա»):

ԱԳԻՏԱՅԻՆ — Դրդուձն, քարոզչութիւն, գրգռուձն: Ազիտացիա
մղել՝ զրդել որևէ ձեռնարկութեան, որևէ գործողու-
թեան: Ազիտացիայի միջոցները բազմատեսակ են.—
բանաւոր քարոզ, լրագիրներ, թուուցիկ թերթեր, պատ-
կերներ, ծաղրանկարներ, երաժշտութիւն, երգ, հանդի-
սաւոր թափօրներ, ներկայացուձներ: Ազիտացիան պրօ-
պագանդից նրանով է տարբերուում, որ նպատակ է ու-
նենում առաջ բերել որոշ գործողութիւն, ոչ հեռաւոր
ապագայում. մինչդեռ՝ պրօպագանդան ծառայում է այս
կամ այն գաղափարների տարածմանը:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ — Տես «Հողային ծրագիրներ»:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿՐԻՋԻՍ — Ագրարային հարցի ծայրահեղ լարւա-

ծութիւնը, որով անհրաժեշտ է դառնում այդ հարցի անմիջական լուծումը: (Տես «Ազրարային հարց»):

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑ—Հողային հարց: Թուսաստանում ճորտատիրութիւնը վերանալուց յետոյ, Գզարնակութեան անհեցողութեան հետ միաժամանակ խիստ սուր կերպարանք ստացաւ հողի պակասութեան հարցը, (տես «Հողի պակասութիւն») որի արդիւնքն եղաւ այն, որ մեր օրերում գիւղացիների 70,7%-ը չի կարողանում իր հողարածնից ստանալ իր ուտելիք հացը, նրանց միայն 20,4%-ը ստանում է իր տարեկան հացի պաշարը և 8,9%-ը աւելացնում է իր հացից՝ միւս կարիքների համար: Այդ պատճառն, անշուշտ, պէտք է ստիպէր գիւղացիներին մտածելու իրանց հողարածիները լայնացնելու մասին, մի հանգամանք՝ որը բարձրացրեց հողի գինը (տես «Հողի գինը»): Արագութեամբ աճեց նաև կապալազինը (տես «Կապալազին») և հասաւ այնքան մեծ չափի, որ հողի արդիւնքը չէր ծածկում նոյնիսկ մշակութեան ծախսերը. փորձեր եղան հողի պակասութեան դէմ կուել հողագործիկներին պաղթեցնելով, բայց այդ ևս գործին չօգնեց, բանի որ գաղթողները մի քանի անգամ պակաս էին, քան նոր ծնւածները: Գիւղական հողային բանկերը, (տես «Գիւղական հողային բանկ») որոնց նպատակն էր միջոց տալ գիւղացիներին նոր հողեր գնելու, անհամեմատ աւելի բարձրացրին հողի գինն և իրանց նպատակին չծառայեցին: Ի լրումն այդ բոլորի, գիւղացիներին ընդհանուր պայմաններն ևս հնարաւորութիւն չէին տալիս ակնկալելու լաւ ապագայ: Տգիտութիւնն ու իրաւագրկութիւնը, որոնց մէջ խարխափում էր ոուս գիւղացիութիւնը, արգելք էին հանդիսանում գիւղատնտեսական տեխնիկայի զարգացմանը: Բերքը ոչ թէ տարէցտարի լաւանում, այլ աւելի ու աւելի պակասում էր, հողի ուժասպառութեան

և գիւղացիների սնանկութեան պատճառով Արևմտեան Եւրոպայում մէկ դեսեատինը տալիս է 100 փթից աւելի հացահատիկ, (Անգլիայում՝ 114, փ., Բելգիայում՝ 119, փ.) մինչդեռ Ռուսաստանում միջին թւով մէկ դեսեատինից ստացւում է հազիւ 30, փութ: Այդ բոլորին պէտք է աւելացնել հարկերի ու տուրքերի ծանրութիւնը, որ ընկնում է գլխաւորապէս երկրագործ-գիւղացիների վրայ և կառավարութեան ընդհանուր ֆինանսական-տնտեսական քաղաքականութիւնը, որ երկրագործութիւնը զոհ է բերում արհեստականօրէն զարգացող, մշակող արդիւնագործութեանը: Ահա այդ բոլոր պայմանները հասկանալի են դարձնում թէ ինչո՞ւ ագրարային խնդիրը աւելի ու աւելի սուր կերպարանք է ընդունում: 1891 թւի անբերրիութիւնը ամենքի համար պարզ դարձրեց գիւղական ազգաբնակչութեան անապահովութիւնը և գիւղատնտեսութեան անկումը: Հսկայական կարիքն ուզում էին գոհացնել կիսամիջոցներով, (տես «Ազրար քաղաքականութիւն») որոնք գրեթէ ոչ մի դրական արդիւնք չտւին և չկարողացան դադարեցնել ագրարային շարժումները (տես «Ազրարային շարժումներ»):

ԱԳՐԱՐՆԵՐ—Այսպէս են կոչւում խոշոր հողատիրութեան պաշտպանները: Ագրարների կուսակցութիւնը խիստ ուժեղ է Գերմանիայում (հիմնւել է մօտաւորապէս 1869 թ.) և պաշտպանում է կալւածատէրերի շահերը, ընդդէմ խոշոր արդիւնագործներին—Ֆարբիկանտներին, գործարանատէրերին: Ագրարները պահանջում են, որ պետութիւնն ուրիշ երկրներից ներմուծող գիւղատնտեսական մթերքների, գլխաւորապէս հացի վրայ մաքս դրնէ, որպէս զի իրանք կարողանան թանկ ծախել իրանց արտադրութիւնները. պահանջում են, որ խիստ օրէնքներ հրատարակեն գիւղատնտեսական բանւորների

դէմ. որ երկրի կառավարութիւնն իրանց յանձնեն, մի խօսքով այնպիսի պահանջներ, որոնք երկրի գերիշխող ու ղեկավարող ոյժը դարձնեն խոշոր հողատէրերին:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐ—Հողի սակաւութեան, կալածատէրերի ու վաշխառուների անսահման կեղեքման, կառավարութեան ծանր հարկերի ճնշման տակ ուժասպառեղած գիւղացիների ըմբոստացումը—անհա ինչէ նշանակում «ազրարային շարժումներ»: Ազրարային շարժումներն առանձին ոյժ են ունեցել Ռուսաստանում, որպէս խոշոր երկրագործական կենտրոնում, թէ հին ժամանակ, թէ վերջին տարիներս: Սկսում են շատ անգամ անակնկալ կերպով որևէ գիւղում, բայց տարածւում են արագութեամբ, ընդգրկելով ամբողջ գաւառներ ու նահանգներ: Վերջին ժամանակներս Ռուսաստանում ազրարային երկու մեծ շարժումներ առջ եկան. 1902 թ. մարտին սկսեցին Սարկովի և Պոլտավայի նահանգներում, բայց կառավարութիւնը զօրքերի միջոցով ճնշեց այդ շարժումները: 1905-ին շարժումը նորից բռնկեց, աւելի մեծ թափով և աւելի երկար ժամանակով: Նարժումները՝ ըստ իրանց բնօյթի և նպատակի՝ կարելի է երկու տեսակի բաժանել.—երբ գիւղացիներին սպառնում է սովամահը՝ համբերութիւնից դուրս եկած՝ նրանք յարձակւում են կալածատէրերի ազարակների վրայ, իրանց անմիջական կարիքներին բաւարարութիւն տալու համար. իսկ երկրորդ տեսակի շարժումների նպատակն է լինում, առհասարակ, բարելաւել գիւղացիների և գիւղատնտեսական բանտրների դրութիւնը, տանելի պայմաններ ստեղծել նրանց համար.—ինչի էք բունթ անում, հարցնում է կառավարութեան ներկայացուցիչը.—Հաց ենք ուզում, անօթի ենք: Ահա ազրարային շարժումների գլխաւոր պատճառը: Շատ անգամ գիւղացիք, հասարակական ժողո-

դովում, ստարշինայի ներկայութեամբ վճիռ են կայացրնում և նրան հաստատել տալիս՝ որ հողն Աստուանն է, ուրեմն, թիվ կարիք ունի, պէտք է օգտուի: Ապա տեղիկացնում են իրանց վճուի մասին կալւածատիրոջը և յայտնում՝ որ այսինչ օրը կը դան. նշանակած օրը զանգահարութիւնը կամ հրդեհի բոցը ազգանշան է դառնում հարեան գիւղերից մի տեղ հաւաքելով՝ սայլերով, պալօղկաներով: Ագարակին մօտենալով՝ յաճախ մի քանի անգամ հրացան են պարպում, ապա կոտրատում են կողպէքները, դռները և ամբարների հացը տիրոջ ներկայութեամբ սայլերին բարձելով՝ հանգըստութեամբ տուն դառնում: Սովորաբար՝ բացի հացից, կալւածատիրոջ միւս կարողութեանը չեն դիպչում. բայց երբ կալւածատէրը կամ կառավարութեան պաշտօնեաները դիմադրութիւն են ցոյց տալիս, այդ դէպքում հրդեհում են ագարակը, քարուքանդ անում բոլոր շինութիւնները, կոտորում անասուններին: Կալւածատիրոջը կամ նրա ընտանիքին ձեռք չեն տալիս և յաճախ առաջարկում են նախօրօք հեռանալ: Անտառ եղած տեղերում, կտրտում են ծառները, բայց քիչ է պատահում որ հրդեհեն: Ագրարային շարժումներին տեղտեղ նպաստում են գործադուլի կամ անգործ մնալու պատճառով գիւղ վերադարձած բանւորները թէ՛ ագիտացիայով և թէ՛ իրանց պատմութիւններով բանւորական շարժումների մասին: Կառավարութիւնը ագրարային շարժումներին պատասխանում է զինւորական-դաշտային դատարաններով և ֆեասւած կալւածատէրերին «նպաստներ» տալով: Միայն 1905 թ. ագրարային շարժումների տւած ֆեասը՝ ներքին գործերի նախարարի հաշուով՝ Եւրոպական Ռուսաստանի 6 նահանգներում 24 միլիոն ռուբլուց աւելի է: (Տես «Ագրարային հարց»):

ԱԳՐԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ—Պետութիւնն իր ներքին կեանքում որոշ համաչափութիւն պահելու համար ստիպւած է խստուհի նաև քաղաքացիներին տնտեսական կեանքի մէջ, վերջինս որոշ կանոններով ենթարկելու: Եւ այն տնտեսական-գիտական ընդհանուր սկզբունքները, որոնցով շեղւաւարում է պետութիւնն իր գերծունէութեան մէջ, այն գործնական նպատակները, որոնց ձգտում է, իրանց ամբողջութեամբ կազմում են պետութեան քաղաքականութիւնը. հողային հարցում՝ ագրարային քաղաքականութիւնը, արդիւնագործութեան հարցում՝ արդիւնագործական քաղաքականութիւնը, Գիւղացիներին ճորտութիւնից ազատելով՝ ուսական կառավարութիւնը հողային հարցը վերջնականապէս լուծւած համարեց. կառավարութեան կարծիքով՝ գիւղական մասսաների բարօրութիւնը կասկածի, դուրս էր. ուստի նրանց վրայ ընկած տուրքերն արագութեամբ բարձրացր՝ ց և հասցրեց այնպիսի չափի, որ մի քանի անգամ աւելի դարձան, քան հողի տւած ամբողջ եկամուտը: 1872 թ. տեղեկութիւնների համեմատ, պետական և ուղեւորի գիւղացիների զանազան տեսակ տուրքերը կազմում էին նրանց զուտ եկամուտի 92,75⁰/₀, իսկ նախկին կալւածական գիւղացիներինը՝ 198,25⁰/₀: Մի քանի տեղերում (օր. Նովոգորոդի նահ.) այդ տուրքերը կազմում էին սեփականատէր-գիւղացիների զուտ արդիւնքի 275⁰/₀, իսկ ժամանակաւոր-պարտաւորեալ գիւղացիների զուտ արդիւնքի 565⁰/₀-ը: 70-ական թւականներից քիչ առաջ և մանաւանդ այդ ժամանակներն սկսեցին ուսումնասիրութիւններ լոյս տեսնել, որոնց մէջ խիստ կասկածի էր ենթարկւում գիւղացիների տնտեսական բարօրութիւնը: Շուտով գիւղացիներն անկարող դարձան տուրքերը վճարել և նրանց վրայ ահագին պարտքեր կուտակւեցին—հանգամանք՝ որն իր վրայ դարձ-

րից նաև կառավարութեան ուշադրութիւնը: 1881 թւին պակասեցրին յետ գնման վճարները (ВЫКУПНЫЕ ПЛАТЕЖА), 1883—1887 թ.թ. վերացրին շնչերի վրայ դրած տուրքերը, բայց դրա փոխարէն՝ աւելացրին անուղղակի հարկերը (տես «Ճորտութիւն», «Հարկեր»): Սկզբունքով ընդունելով, որ գիւղացիները զրութիւնը բարելաւելու համար անհրաժեշտ է նրանց աւելի մեծ չափերով հողից օգտւելու իրաւունքներ տալ, կառավարութիւնն այնուամենայնիւ այն համոզմունքին էր, որ պէտք էր թողնել դա գիւղացիների և հողատէրերի փոխադարձ ու ազատ համաձայնութեանը: Ուստի կառավարութեան միջամտութիւնն այդ հարցում արտայայտեց մի քանի մասնակի միջոցներով, որոնցից աչքի ընկնողներ են. 1882 թ. Գիւղացիական հողային բանկի հիմնումը, (տես «Գիւղացիական հողային բանկ») որի նպատակն էր գիւղացիներին հող գնելու դիւրութիւններ տալ. ապա՝ «Փամանակաւոր Կանոնները» հրատարակումը, բրոնցով կանոնի տակ էր դրոււմ պետական հողերի կապալը. 1889 թ. օրէնքը՝ զաղրականութեան մասին (տես «Գաղթ»), նաև 1893 թ. օրէնքը՝ որով գիւղացիներին արգելոււմ էր վաճառել իրանց նաղէշները հողաբաժինները (տես «Նաղէշ»): 1891 և 1892 թ.թ. հսկայական սովն ստիպեց կառավարութեանը յետաձգել չվճարւած հարկերի և յետ գնման վճարների հաւաքումը: 1905 թ. յետ գնման վճարները կէսով չափ պակասեցրին, իսկ 1907 թ. յունվարի 1-ից բոլորովին վերացրին: Կառավարութեան ազրար քաղաքականութեան մէջ էական դեր է խաղացել նաև այն հսկողութիւնը, որ շարունակ գործ է դրել գիւղացիներին հետու պահելու «վնասակար ազդեցութիւններից», որի արդիւնքը եղել է գիւղացիների յետամնացութիւնը: Ազնաւականները հողատիրութեան վերաբերմամբ կառավարութիւնը

յոյց է տեւել առանձին հոգատարութիւն, աշխատելով բարձր պահել ազնւականութեան թէ տնտեսական և թէ բարոյական դիրքն ու ազդեցութիւնը: Այն ժամանակ, երբ գիւղացիները բացի անձնական տուրքերից (որ ամեն շնչի հասնում էր 4 ր. 45 կոպ.) և կոռուրէզեառից, ամեն մի դեսեատինի համար վճարում էին 95¹/₂ կոպ., ազնւականները, ազատ լինելով ամեն տեսակ տուրքերից, իրանց հողի մէկ դեսեատինի համար վճարում էին միայն 14¹/₂ կոպ.: Ազնւականութեանը շարկելու համար աշխատող ձեռքերից՝ արգելած էր գաղթը, մինչև 80-ական թւականները. բայց երբ տեսան, որ այնուամենայնիւ ազնւականների տնտեսութիւնն աւելի ու աւելի է ընկնում, դիմեցին նոր միջոցների. 1885-ին հիմնեց «Պետական ազնւական հոգային բանկը», 1886-ին հրատարակեց «Գիւղական բանկորների օրէնքը». 1901 թ. հրատարակեցին մասնաւոր մարդոց Սիրիւում հողաբաժիններ յատկացնելու կանոնները, որոնք պէտք է ծառայէին խոշոր հողատիրութեան զարգացմանը, և վերջապէս՝ 1902-ին հիմնեցին «Ազնւականների փոխադարձ օգնութեան կասսաները»:

ԱԳՐՈՆՈՄ—Ագրոնոմիայի մասնագէտ: Գիւղատնտես: (Տես «Ագրոնոմիա»):

ԱԳՐՈՆՈՄԻԸ—Գիտութիւն, որն զբաղւում է հողային հարցի և նրա հետ սերտ կերպով կապւած բոլոր խնդիրների ուսումնասիրութեամբ. քննում է հողի մշակութեան ձեւերը, գիւղատնտեսութեան զարգացման պայմանները, բարելաւելու միջոցները, և այլն, և այլն:

ԱԳՐՈՍԵՆՏ—Սպայ, որը կառավարում է ղինւորական որևէ կանցիլիար կամ բարձրաստիճան ղինւորականի հրամանով զանազան յանձնարարութիւններ է կատարում:

ԱԳՐՈՆՈՄՍՐԱՍՏԻ ԴԱՏԱՍՏԱՆ—Ոստիկանական վարչական դա-

տաստան: Ազմինխատրատիւ դատավարութիւնը դանա-
դան երկրներում տարբեր իրաւասութիւն ունիւ չա-
մարեա ըստը պետութիւնների մէջ պետական պաշ-
տօնեաների յանցանքները քննում է հէնց այդ պաշ-
տօնեայի բարձր իշխանութիւնը և այդ ձևով վարած
դատը կոչում է՝ ազմինխատրատիւ: Բացի այդ, մի քա-
նի պետութիւնների մէջ երբոր արտակարգ պայման-
ներ են ստեղծուում, օրինակ՝ պատերազմ է սկսուում կամ
սովը, հիւանդութիւնները մեծամեծ զոհեր են տանում
և խոշոր վտանգ է սպառնում հասարակութեանը, այդ
դէպքերում երկրի որոշ մասերը՝ սովի, հիւանդութիւն-
ների ենթարկւած, կամ թշնամի պետութեան սահմա-
նակից նահանգները՝ յայտարարուում են «բացառիկ դը-
րութեան մէջ», (սուսեղացրած պահպանութիւն), «պա-
տերազմական դրութիւն» և այլն) որի ժամանակ ազմի-
նխատրացիային (ստիկանութեանը) իրաւունք է տըր-
ւում վարիլ այն դատերը, որոնք անյետաձգելի կը հա-
մարեն, առանց խտրութիւն դնելու քաղաքացիական
և քրէական գործերի մէջ, (Աւստրիայի և Պրուսիայի
կողէքսն երը): Ռուսաստանում, 1881 թ. օգոստ. 14-ի
օրէնքով, «պետական կարգն ու հասարակական խաղա-
ղութիւնը պահպանելու համար», կարևոր համարւած
դէպքերում որոշ նահանգներ յայտարարուում են ուժե-
ղացրած դրութեան մէջ, նշանակուում են գեներալ-գու-
բերնատօրներ կամ վերջինիս փոխարէն տեղական նա-
հանգապետին իրաւունք է տրւում 500 ր. տուգանք
նշանակելու կամ 3 ամիս բանտարկելու: «Բացառիկ
դրութեան» (чрезвычайная охрана) ժամանակ պատ-
ժելու իրաւունքը հասնում է 3 հազար ընդու տու-
գանքի և 3 ամիս բերդարգելութեան: Բացի այդ՝ իշ-
խանաւորը կարող է և այդ սահմաններում պարտադիր
օրէնքներ հրատարակել: Վերջապէս՝ որ ամենից զըլ-

խաւորն է, «բացառիկ դրութեան» ժամանակ ազմի-
նխատրացիան կարող է իր ցանկութեան համեմատ յան-
ցաւորներին զինւորական դատարանի յանձնել (տես
«Զինւորական դատարան») և մամուլի վերաբերմամբ
զանազան վճիռներ կայացնել—[Թերթերը զաղարեցնել,
խմբագրներին դատի ենթարկել, և այլն, և այլն:

ԱԳՄԻՆԻՍՏՐԵՏԻ ԿԸՐԳՈՎ ՊԸՏԻԺ ԵՒ ԸՔՍՈՐ—Գոյութիւն ու-
նեն միայն այն երկրներում, որոնք ոչ թէ օրէնքով են
կառավարուծ, այլ՝ միապետի կամքով, այսինքն՝ ու-
տիկանական պետութիւնների մէջ: Իրաւական պետու-
թեան մէջ միայն օրէնքն է քաղաքացուն պատժողը,
իսկ ազմինխտրատիւ պատիժը բացառիկ երևոյթ է:
Ոստիկանական պետութեան մէջ բարձրագոյն իշխա-
նաւորը իրանից աւելի ցածր պաշտօնեային իրաւունք
է տալիս իր հայեցողութեամբ զանազան տեսակ պա-
տիժներ տալ արտերի, բանտարկել, տուգանք վեր-
ցնել: (Տես «Այմինիստրատիւ ղատաստան»):

ԱԳՄԻՆԻՍՏՐԵՏՈՐ — կառավարիչ, գործավար, կարգադրիչ,
բարձրաստիճան պետական պաշտօնեայ:

ԱԳՄԻՆԻՍՏՐԵՏԻՍ—Վարչութիւն: Ինչպէս պետական նոյնպէս
առևտրական, ունումնական, բարեգործական և այլ
ձեռնարկութիւնների ու հիմնարկութիւնների վարչու-
թիւնը կարող է կոչուել նաև ազմինխտրացիա: Ոս-
տիկանութիւն:

ԱԳՄԻՐԱԼ—Ծովային վարչութեան ամենաբարձր չիւնը: (Տես
«Աստիճանների կարգ»):

ԱԳՎՅԱՍ—Տես «Փաստաբան»:

ԱԶԱՏ ՀԱՄԵԼՍԵՐԵՆ—Տես «Համալսարան»:

ԱԶԸՐՏ—Եռանդ, ծայրայեղ գրգռում: Ազարտ թղթախաղ—
տաք թղթախաղ, (զուճար):

ԱԶԳԱՅԻՆ ԳՎԸՐԴԻՍ—Տես «Գլարդիա ազգային»:

ԱԶԳԱՅՆԱՅՈՒՄԸ ՀՈՂԻ—Տես «Հողի ալգայնացումը»:

ԱԶՆԻԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿ—Տես «Պետական ազնեական հողային բանկ»:

ԱԶՆԻԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ.—Ռուսաստանում բոլոր մասնաւոր հողատիրութեան 60⁰/₀ է կազմում: Գիւղացիներին ճորտութիւնից ազատելուց և նրանց հողաբաժիններ տալուց յետոյ՝ ազնեականների ձեռքին մնաց դարձեալ 77,800,000 դես. հող, որը սակայն մաս-մաս ծախւելով՝ 1887 թ. եղաւ 65 միլիոն դես., 1892 թ. 58¹/₂, միլիոն դես.: Այդպիսով 30 տարւայ ընթացքում պակասեց 25¹/₀-ով:

ԱԶՆԻԿԱՆՆԵՐԻ ՓՈՒՍԵՂԱՐԶ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԵՄՍԱՆԵՐ—Տես «Այրար բաղարականութիւն»:

ԱԺԻՕՏԱԺ—Մեծ քանակութեամբ տոկոսաբեր թղթեր առնել՝ նրանց գինը բարձրացնելու և ապա՝ վաճառումը, արժէքը ցածրացնելու նպատակով: Լայն մտքով ատիտաժ նշանակում է բիրժային խաղ, սպեկուլիացիա:

ԱԳՆԵՐԱ—Հանրահաշիւ: Գիտութիւն թւերի, տարբերում է թւարանութիւնից նրանով, որ թւերի փոխարէն գործածւում են տառեր—իրբև անորոշ մեծութիւնների նշաններ, այսպիսով՝ ալգեբրան վերացական մեծութիւնների յատկութիւններն է ուսումնասիրում: Վերացական մեծութիւնն այն է, որը մենք մտքով, երևակայութեամբ ենք պատկերացնում, որը գործնական կերպով մեր առաջ չէ գրւած:

ԱԼԻԱՆՍ—Դաշնակցութիւն պետութիւնների միջև:

ԱԼԼԵԳՐԻ—Վիճակախաղ, որը կատարւում է տոմսակները ծախելուց յետոյ, ինչպէս՝ հասարակական երեկոյթներին, հանդէսներին, զբօսանքների ժամանակ:

ԱԼԼԵԳՐԻՍ—Այլարանութիւն: Միտքը կարելի է հասկացնել այլարանական ձևով. օրինակ՝ առակով: Քրիստոս իր զրոյցների մէջ մեծ տեղ էր տալիս առակներին—այ-

լարանութիւններին, ինչպէս օրինակ՝ Սամարացու,
Կոյսերի առակը, և այլն, և այլն:

ԱՆՏԵՐՆԵՏԻՒ — Դրութիւն, որի ժամանակ ստիպած ևս ընդունել երկու, իրար հակառակ վճիռներից որեւէ մէկն՝ առանց միջին ճանապարհին գիմելու. օրինակ՝ «մահ կամ կեանք»:

ԱՆՏՐՈՒԹՅՈՒՆ — Օտարասիրութիւն: Ալտրուիզմին հակառակն է Էգոիզմը՝ եսասիրութիւնը: Ալտրուիստը պատրաստ է իր շահերը, նոյնիսկ կեանքը զոհել ուրիշների բարեկեցութեանը, մինչդեռ Էգոիստն աշխատում է ուրիշներին շահը, յաճախ և կեանքը իր բաւականութիւններին ծառայեցնել:

ԱՆՓԱՆ — Այդպէս է կոչուում յունական այբուբենի առաջին տառը.

«ալֆա» փոխարեբրական մտքով նշանակում է «սկիզբ»:

ԱԿԱԴԵՄԻԱ — 1) Ճեմարան, բարձրագոյն դպրոց: 2) Գիտութեան և գեղարւեստի զարգացմանը ծառայող պետական բարձրագոյն հաստատութիւն:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ — Տեսական, գիտական, չոր ու ցամաք:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ-ԻՆՔՆԵՎԱՆՏԻՒՄ — Լիակատար ազատութիւն /գիտութիւններն աւանդելու և վարչական-ներքին գործերը վարելու ամենալայն իրաւունքներ, որ տրուած են համալսարաններին, ակադեմիաներին և միւս բարձրագոյն դպրոցներին:

ԱԿՈՒՍՏԻԿԱՆ — Ձայնագիտութիւն, ուսումն՝ ձայների մասին:

ԱԿՍԻՍ — Դրութիւն, նախադասութիւն, միտք, որի ճշմարտութիւնը պարզ է ինքնըստինքեան, առանց ապացոյցների:

ԱԿՎԱՐԻԱՆ — Կամ «Ակվարի» նշանակում է ջրամբար, որի մէջ պահուում են ջրային բոյսեր ու կենդանիներ, զըլխաւորապէս գիտական նպատակների համար:

ԱԿՏ — 1) Գործողութիւն. օպերայի կամ պիեսի մի մասը. 2)

Հանդէս, շքանշանդէս. 3) Պատմական գրաւոր դօկումէնտ. 4) Ակտ կազմել—պաշտօնական արձանագրութիւն կազմել:

ԱԿՏԻ—1) Գործունեայ, եռանդուն. 2) Առևտրական, արդիւնազործական և նման հիմնարկութիւններէ կարողութեան ընդհանուր դումարը: (Տես «Պասսիւ»):

ԿՐ—Հազային չափ, որ Անգլիայում հաւասար է 900 քառ. սաժ., Գերմանիայում՝ 1126 քառ. սաժ.:

ԱԿՐՈՒԹԵՆ—1) Լարախաղաց, փահլիվան, «քեանդրբագ»: Մարմնամարդութեան մէջ վարժած, ճարպիկ մարդ. 2) Առհասարակ, իր գործը ճարպիկութեամբ, զանազան աչքակապութիւններով գլուխ բերող մարդ:

ԱԿՅԻՆ—Տես «Ակցիօներական ընկերութիւն»:

ԱԿՅԻՅՆԷՐ—Ակցիայի սեփականատէր: (Տես «Ակցիօներական ընկերութիւն»):

ԱԿՅԻՅՆԵՐԱԿՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ—Որոշ գրամագլխով ընդհանուր ձեռնարկութեանը մասնակցող անհատներէ ընկերութիւն: Ակցիօներական ընկերութիւնը հիմնելիս՝ որոշուած է այն ամբողջ գրամագլուխը, որն անհրաժեշտ է գործը վարելու համար. ապա գրամագլուխը բաժանուած է փայերի կամ ակցիաների: Ամեն մարդ կարող է վճարել նշանակած բաժնեգինը և իր բաժնի, ակցիայի համեմատ մասնակից լինել ընկերութեան թէ օգուտին և թէ փասին: Բաժնետէրը, ակցիօնէրը ընկերութեան փաստի դէպքում պատասխանատու է միայն իր ակցիայով, այսինքն՝ արդէն ընդհանուր զանձաբանը մտցրած բաժնեվճարով: Ակցիօնէրը իր բաժնեվճարը յետ ստանալու իրաւունք չունի, որովհետև այդ դէպքում ամբողջ գործը կը տուժէ. բայց կարող է իր ակցիան, բաժնեթուղթը ծախել: Հասկանալի է, որ ընկերութեան գործերի յաջողութիւնից կամ անյաջողութիւնից է կախած ակցիաների գնի կամ ինչպէս ա-

սոււմ են՝ կուրսի բարձրացումն ու անկումը: Պէտք է յիշել և՛ այն, որ ամէն մարդ կարող է միքանի ակցիաները գնել, որի հետեանքն այն է լինում, որ շատ անգամ ակցիօններական ընկերութեան իսկական տէրը դառնում են միքանի կապիտալիստներ, որոնք և ղեկավարում են ընկերութեան գործերն ըստ իրանց ցանկութեան: Ակցիան կարող է լինել «անւանական և անւանուն»։ առաջին դէպքում բաժնեթղթի վրայ գրում է ակցիօնէրի անունը, և ակցիան ծախելիս՝ ակցիօնէրը պէտք է յայտնէ ընկերութեան վարչութեանը, որպէսզի նոր բաժնետիրը՝ վրայ գրէ: Իսկ անանուն ակցիայի վաճառումը այդպիսի ձևականութեան հետ կապած չէ: Ակցիօններական ընկերութիւնը յաճախ անւանւում է «Անօնիմ» ընկերութիւն:

ԱԿՑԻՉ — Անուղղակի տուրք, որ վերցնում է պետութիւնը կենսական անհրաժեշտ պիտոյքներից: Ռուսաստանում մէկ փութ թէյից վերցնում են միջին թւով 17 րուբլի ակցիդ. շաքարից՝ 1 րուբլի 75 կոպ. մի գրագուս սպիրտից՝ 9 $\frac{1}{2}$ կոպ.: Ակցիդային տուրքերն աւելի մեծ են ցածր տեսակի մթերքների վրայ, որոնց գործածում է ազգաբնակչութեան չքաւոր մասը: Ռուս կառավարութեան եկամուտի գլխաւոր մասը կազմում են ակցիդից ստացւած գումարները: Միայն օդից կառավարութիւնը հաւարում է տարեկան 550 միլիոն րուբլի: (Տես «Հարկեր»):

ԱԿՑԵՆՏ — Մայրենի լեզուն յատուկ արտասանութեամբ օտար լեզուով խօսելուն ասում են «ակցենտով խօսել»:

ԱԿԿՕՄՊԱՆԵԸՄԵՆՏ — Չայնակցութիւն, երաժշտութիւն, երգի հետ:

ԱՄԱԶՕՆԿԱ — Այդպէս էին կոչւում այն առասպելական ռազմիկ կանայք, որոնք՝ ըստ աւանդութեան՝ իրանց սեփական թագաւորութիւնն ունէին Սև ծովի ափերին:

ԱՄԲԻՈՆ—1) Բարձրութեան վրայ կանգնած սեղան, որտեղից ճառեր են ասում և դասախօսութիւններ կարդում.

2) Հոգևոր թեմ:

ԱՄԲՐՈՍԻՈՍ—Հին յոյների կարծիքով՝ Ոլիմպոսի աստուածները ամբրոսիոսով էին կերակրուում, որը նրանց միշտ երիտասարդ ու կայտառ էր պահում:

ԱՄԷՕԲԱ—Կենդանի օրգանիզմի ամենահասարակ ու պարզ ձևը:

ԱՄՆԻՍՏԻԱ—Հայերէն կարելի է թարգմանել մօտաւորապէս ներումն, մոռացումն խօսքերով: Ներումը և անխտիան մեծ տարբերութիւն ունեն: Ներումը գործ է գրում յանցաւորների վերաբերմամբ իբրև մի մեծանօգութիւն, ողորմութիւն: Ներումը խղճի գործ է. թագաւորը կարող է խղճալ որևէ առանձին յանցագործի վրայ. օրինակ՝ իմանալով որ անտէր, անխնամ են մնում նրա ընտանիքը, ծերացած ծնողները, փոքր հրեխաները, իբրև ողորմութիւն՝ թեթևացնում է յանցագործի պատիժը: Այսպիսի ներումը՝ իսկապէս օրէնքի խախտումն է, որը վերապահած է սովորաբար թագաւորներին կամ, հանրապետական երկրներում, հանրապետութեան նախագահին և կարող է լինել միայն այն ժամանակ, երբ գործը վերջնական լուծումն է ստացել դատաստանական ամենաբարձր ատեանում, (ուր տիրող օրէնքների համեմատ կարող է հասնել գործը): Այսպիսի մասնակի ներման ինիցիատիւրը, նախաձեռնութիւնը, միջնորդութիւնը կրտարում է առհասարակ դատարանը: Անխտիան՝ ներումից տարբերում է նրանով, որ կրում է ընդհանուր-պետական հասարակական բնութեութիւն: Անխտիան՝ արտակարգ, բայց որոշ բացառիկ պայմանների ժամանակ անհրաժեշտ միջոց է, որով պետական անխուսափելի անհրաժեշտութիւն է համարուում դադարեցնել այս կամ այն օրէնքի ոյժն ու գոր-

ծաղրութիւնը և իբրև հետևանք լինում է այդ իսկ օրէնքի հիման վրայ պատիժ կրող բոլոր յանցաւորների պատժից ազատումը, նրանց անցեալի մոռացումը: Ուրեմն տեսնում ենք, որ ներումը անձնական ցանկութեան ու քմահաճոյքի գործ է, իսկ ամնխատիան ընդհանուր պետական շահերի տեսակէտից կատարող անհրաժեշտ պարտականութիւն: Սակայն ամնխատիայի բարձր նշանակութիւնը շատ յաճախ ստորացնում են նրանով, որ կապում են թագաւորի անձնական կամ ընտանեկան ուրախալի դէպքերի հետ. այսպէս, երբ թագաժառանգ է ծնւում, ամնխատիա են տալիս կամ բոլոր յանցաւորներին, կամ նրանց մի մասին: Այդպիսի բռնազրօսիկ դէպքերի հետ կապւած ամնխատիան արդարադատութեան հետ ոչ մի կապ չունի և կարող է ցանկալի համարւել միայն այն տեսակէտից, որ մեր ժամանակի օրէնսդրութիւնը մեծ չափով իր վրայ կրելով հին, միջնադարեան ազդեցութիւնները՝ առհասարակ խիստ պատիժների է ենթարկում յանցագործներին: Բայց այդ դէպքում պէտք էր մէջ բերել օրէնքի բարեփոխութեան խնդիրը և ոչ թէ սպասել թագաժառանգի ծնւելուն կամ թագաւորական ընտանիքում որևէ ուրախալի դէպքի: Թագաւորական ընտանիքի բռնազրօսիկ դէպքերի հետ կապւած ամնխատիան սովորաբար վերաբերում է բոլոր յանցագործներին, թէ քաղաքացիական, թէ քրէական և թէ քաղաքական: Բոլորովին այլ բան է իսկական ամնխատիան, որի շարժառիթը բարձր պետական դիտումներն են լինում: Այս տեսակի ամնխատիան վերաբերում է բացառապէս քաղաքական յանցանքներին կամ սրանց հետ կապ ունեցողներին: Երբ պետութեան մէջ փոխւում է հին օրինակաբար, ինչպէս օր., անասնման միապետութիւնը դառնում է սահմանադրական՝ միապետական կարգերի դէմ կա-

տարւած բոլոր յանցանքները, բնականօրէն կորցնում են իրանց նշանակութիւնը. հետեապէս նրանց մէջ մեղադրւողները անհրաժեշտօրէն պիտի ազատւին՝ այն է՝ ամբիստիայի ենթարկւեն: Այստեղ էլ ամբիստիան թէև տրւում է թագաւորի անունից, բայց իրապէս՝ դա մի պետական ակտ է, և ոչ մի կախում չունի թագաւորի անձնական ցանկութիւնից ու կամից: Պատմութեան մէջ օրինակներ են եղել, որ երբ մի քաղաքական կուսակցութիւն պայքարի մէջ յաղթել է իր հակառակորդ կուսակցութեանը՝ պետական կեանքը խաղաղապընելու և կանոնաւոր ընթացքի մէջ մտցնելու համար ամբիստիա է շնորհել իր հակառակորդներին:

ԱՄՊԼՈՒԱ—Այն դերերը, որոնց դերասանը կատարում է աւանձին շնորքով ու յաջողութեամբ և որոնք համապատասխանում են նրա ընդունակութիւններին և ոյժերին:

ԱՄՊՈՒՏԱՅԻԱ—Անդամահատութիւն:

ԱՄՕՐՏԻՉԱՅԻԱ—Զեղջ, ոչնչացում, պարտքի հանգցնելը:

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ—Տես «Ալլեգորիա»:

ԱՆԱԲԱՊՏԻՍ—Կրկնամկրտող: XVI-րդ դարում գոյութիւն ունեցող մի աղանդ, որն ընդունում էր միայն հասակաւորի մկրտութիւնը և ոչինչ էր համարում երեխաների մկրտութիւնը: Իսկական հաւատացեալների շարքը մըտնելու համար պէտք էր զիտակից հասակում նորից մըկըրուել, որից և ստացել են «կրկնամկրտողներ» անունը: Անարապտիստները հաւատում և ձգտում էին երկրի վրայ Աստուծոյ թագաւորութեան հաստատմանը:

ԱՆԱԹԷՄԱ—Հանդիսաւոր, հրապարակական անէժք: Եկեղեցական բանադրանք:

ԱՆԱԼԻԶ—Տարբալուծում, վերլուծում: Անալիզ անել—բարդ մարմին գոյացնող հասարակ մարմինները կամ տարրերն իրարից բաժանել, զանազան նպատակներով:

Անալիզ անել—առհասարակ, ամեն մի ամբողջութիւն
բաժանել իր բաղադրիչ մասերին:

ԱՆԱԼՕԳԻԱ.—1) Առարկաների կամ երևոյթիների նմանողու-
թիւն: 2) Եզրակացութիւն նմանողութեան մեթոդով:
3) Սահմանափակում, փակում:

ԱՆԱԽՐՕՆԻԶՄ — 1) Ժամանակագրական սխալ: 2) Փաստի
կամ դէպքի անհամապատասխանութիւնն այն ժամա-
նակին, որին վերագրում են: Իր ժամանակի ընդհա-
նուր կարգերից դուրս կատարւած դէպք կամ փաստ:

ԱՆԱՆՈՒՆ ՆԱՄԱԿ—Տես «Անօնիմ նամակ»:

ԱՆԱՏՕՄԻԱ.—Կազմախօսութիւն. գիտութիւն, որ զբաղւում
է օրգանական մարմինների կազմւածքի ուսումնասի-
րութեամբ:

ԱՆԱՐԽՆԻԶՄ — Անիշխանականութիւն. սօցիալական - փիլի-
սոփայական ուսմունք, որը չի ընդունում ոչ մի իշխա-
նութիւն, ինչ ձևով և ինչ անւան տակ էլ որ լինի
կազմակերպւած, սլատճառաբանելով, որ ամեն իշխա-
նութիւն ինքն ըստինքեան առաջ է գալիս միայն նրա
համար, որպէս զի ճնշէ մարդու անկախութիւնը և
անհատական ազատութիւնը, որ անարխիստական
ուսմունքի հիմնաքարն է կազմում: Անհատի լիակա-
տար ազատութեան գաղափարի վրայ են բարձրացը-
նում անարխիստներն իրանց աշխարհայեացքի ամ-
բողջ շէնքը: Այս տեսակէտից անարխիստները մօտե-
նում են «կոմմունիստներին», որովհետև, թէև վեր-
ջիներս ընդունում են հանրակեցութիւնը, կոմմունիս-
տների (համայնքների) կանոնաւոր կազմակերպութիւնը,
սակայն կոմմունիստն էլ, ըստ կոմմունիստների, կոչումն
ունի ապահովելու անհատի ազատութիւնը. անարխիստ-
ների և կոմմունիստների նմանութիւնը միայն այդքանն
է և զրանից յետոյ նրանք բաժանւելով՝ կատարելապէս
հակառակ ճանապարհ են բռնում: Կազմակերպւած հա-

սարակական մարմինը, պետութիւնը, պէտք է ծառայէ անհատի շահերին, ասում են կոմմունիստները. մինչդեռ «սօցիալիստները» պնդում են կատարելապէս հակառակ դրութեան վրայ, այն է՝ որ ղեկավարող դերը կատարելու է հասարակութիւնն իբրև ամբողջական մի մարմին և հասարակութեան շահերին պէտք է զոհուին անհատի շահերը: Ըստ սօցիալիզմի՝ հասարակութիւնը, դեմօկրատական ձևով կազմակերպւած, իր ոյժով պէտք է ամեն բոլոր պէ ասպարէզ իջնէ, երբ կը տեսնէ ընդհանրութեան շահը վտանգւած՝ անհատի կողմից. անարխիստները՝ մօտենալով կոմմունիստներին անհատականութեան հարցում, կատարելապէս բաժանուում են նրանցից, երբ խօսքը գալիս է հասարակական մարմնի կազմակերպութեանը: Անարխիստները ընդունում են միայն անհատների «ազատ համաձայնութիւնը», «ինքնակամ միութիւնը» և դրականապէս ժխտում են ամեն մի իշխանութիւն: Ո՛չ մի հասարակական մարմին, ո՛չ մի ընկերական կազմակերպութիւն՝ իրաւունք չունի իշխանութիւն գործ դնելու, ստիպելու անհատին, բռնանալու նրա վրայ, և հակառակ նրա կամքի, որևէ բան անել տալու: Անարխիստ անհատն այնքան զիտակցական կը լինի, — ասում են անարխիստները, — անկախութեան զաղափարը նրա մէջ այնքան զարգացած կը լինի, որ ինքը իր ազատ կամքով, ինքնօրինաբար կը հասկանայ, թէ ի՞նչ է հարկաւոր անել, թէ իր և թէ ուրիշների համար: Նա ինքը, մարմնացած ազատութիւն լինելով, չի կարող ազատութեան զաղափարի և վերջնիս իրագործման դէմ գնալ: Ուստի, բոլոր այն ուսմունքները, որոնք ուզում են անհատի շահերը զոհ բերել հասարակութեան շահերին, ինչպէս օրինակ՝ սօցիալիստներինը, մարդկութեան համար ամենամիտասակարն են հանդիսանում, որովհետև ստեղծում

են մի միջավայր, ուր զոհուում է անհատի համար ամենաթանկ բանը՝ անկախութիւն—ինքնուրոյնութիւնը: Ահա թէ ինչո՞ւ անարխիստները հանդիսանում են սօցիալիզմի ամենակատաղի թշնամին և ամեն կերպ աշխատում են սօցիալիստական գաղափարների տարածմանը խանգարել: Վերև ստածներից բնականօրէն հետևում է, որ անարխիստները չեն կարող ընդունել ժամանակակից և ոչ մի իրաւակարգ, որը հիմնւած կը լինի «պետական» գաղափարի վրայ, որովհետև պետական կազմակերպութեան անբաժանելի մասն է իշխանութիւնը, հետևապէս և անհատի անկախութեան բռնագատութիւնը: Անարխիզմը դէմ է թէ արսօլիւտիզմին և թէ սահմանադրական կառավարութեանը կամ ներկայացուցչական հասարակապետութեանը, որքան էլ սրանք դեմոկրատիկ ձևով լինին կազմակերպւած: Անարխիզմը դէմ է սօցիալիզմին, որովհետև վերջինս ընդունում է պետութեան գաղափարը, թէև սոմալիարական կազմակերպութեամբ: Անարխիստները նոյնչափ կատաղի կերպով կը կուեն սօցիալիզմի դէմ, եթէ վերջինս իրականանայ, ինչպէս ներկայումս կուում են արսօլիւտիզմի դէմ: «Սօցիալիզմը—մարդկութեան վերջին ունիվերսալ յիմարութիւնն է», ասում են անարխիստները: Իրաւունք, օրէնք, դատարան, բանտ, կրօն, մասնաւոր սեփականութիւն—դրանք բոլորը մարդկային անդիտակցութեան արդիւնք են, իսկ մեծ մասամբ շառլատանների հնարած բաները: Իրանք՝ անարխիստները՝ իրրև ապագայ հասարակական կազմակերպութեան և հանրակեցութեան իղէալ ընդունում են լիապէս անկախ, աւտօնօմ անհատների ազատ ու ինքնակամ համաձայնութեամբ կազմած փոքրիկ ընկերութիւնները—աւտօնօմ համայնքները և սրանց ազատ դաշնակցութիւնը—Ֆէդէրացիան: Այդ իղէալին հասնե-

լու ճանապարհները որոշելիս՝ անարխիստները մի քանի ճիւղերի են բաժանուում: Նրանց մեծ մասը ելակէտ ունենալով իրանց աշխարհայեացքի հիմնական գաղափարը՝ բռնութեան բացասումը՝ առաջարկում են նպատակին հասնելու համար խաղաղ ճանապարհի՝ պրօպագանդայի միջոցով ազդել մարդոց խղճի ու գիտակցութեան վրայ և համոզել անարխիստական կարգեր մտցնելու: Միւս մասը, հաշւի առնելով գոյութիւն ունեցող կարգերն ու պայմանները, նկատելով որ աշխարհում ծայրից ծայր տիրում է անսանձ բռնակալութիւնն ու Ֆիզիքական ոյժի առաջ ստեղծւած սարսափը՝ իբր հակադիր գործօն առաջարկում է «պրօպագանդա՝ գործողութեամբ» — այսինքն՝ տէրրօրներ աջ ու ձախ, թէ պետական իշխանութեան ներկայացուցիչների և թէ առհասարակ տիրող կարգերի բոլոր պաշտպանների դէմ, ի միջի այլոց և սեփականատէրերի: (Աւելորդ չէ յիշել, որ սրանից օգտւելով շատ շանտաժիստներ, բազդախնդիր սրիկաներ, անարխիստների անւան տած ծածկւելով՝ պարսպում են աւազակութեամբ և դրանով վարկարեկ անում անարխիստներին ու նրանց տեսական-բարձր սկզբունքները): Անարխիզմի մէջ ներկայումս կարելի է որոշել երկու գլխաւոր ուղղութիւն. 1) Կօմմունիստական անարխիզմը, որ քարոզում է ամեն մի անհատի անսահման ազատութիւնն ու լիակատար հասասարութիւնը՝ աշխարհի բարիքներից օգտւելու մէջ: Բոլոր մարդոց աշխատանքի արդիւնքը հասարակութեան սեփականութիւնն է, որի վրայ հասարակութեան ամեն մի անդամն էլ հաւասար ու լիակատար իրաւունք ունի: «Ամեն մարդ աշխատում է իր ընդունակութիւնների և ոյժի չափ և օգտւում է իր պահանջի համեմատ»: Այս ուղղութեան յայտնի ներկայացուցիչներն են ռուս Բակունինը, Կը-

բապօտկինը և ոսմանական անարխիստների մեծ մասը, այս խումբը վերջին ժամանակներս ընդունել է «գործողութեան պրօպագանդան» — տէրբօրը, իբրև հակաոյժ կատարելոյ բռնութիւններին: 2) Ինդիվիդուալիստական անարխիզմը, որ բացասում է «գործողութեան պրօպագանդան» և ամբողջ յոյսը դնում է լուսաւորութեան ու մարդկային մտքի՝ բանականութեան դանդաղ պրօգրեսի վրայ: Այս ուղղութեան աչքի ընկնող ներկայացուցիչներն են Տիւկերը, Մակարը և, բելլետրիստիկայի մէջ, Իբսէնը: Նորագոյն ժամանակներս Գերմանիայում փորձեր են անում միացնել անարխիզմի և սօցիալիզմի գաղափարները և ստեղծել անարխօ-սօցիալիստական ուղղութիւն: (Տես «Սօցալիզմ», «Կօմմունիզմ», «Կառավարութեան մե», «Ֆեդերացիա»):

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ կամ Եպիսկոպոսական, Եկեղեցի — Անգլիայի բողոքական եկեղեցին, որի պետն է Կենտրոնը իր Արքեպիսկոպոսը: Հիմնւել է 1534 թ. և ունի 18 միլիոն հետևորդներ: Մեծ կախում ունի քաղաքական իշխանութիւնից, որովհետև թագաւորը համարւում է առաջին վարչական պաշտօնեան:

ԱՆԳԼԻՍԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏ — «Ներքին պալատը», «Լորդերի պալատը» և «Թագաւորը» միասին կազմում են Անգլիական Պարլամենտը: Երկրի իրական իշխանութիւնը գտնւում է Ներքին Պալատի ձեռքին: (Տես «Պարլամենտ», «Կառավարութեան մե»):

ԱՆԵԿՐՈՏ — Կարճ պատմաձք, որ կարգից դուրս է, և ծիծաղելի կամ անհաւատալի:

ԱՆԵՄԻԱ — Արեան պակասութիւն:

ԱՆԿԷՏ — Հարցուփորձ: Երբ զանազան պատճառներով անհրոնար է լինում որևէ հարց ուսումնասիրել գիտական ձևով, ստատիստական թւերով՝ դիմում են անկէալի: Պարզելու կարօտ խնդրի վերաբերմամբ կազմում են

մի քանի հարցեր և տեղեակ մարդոց հրաւիրում են՝ այդ հարցերին պատասխանելու: Շատ անգամ պետութիւնն ևս անկէտ է կատարում, երբ ուզում է որևէ օրէնք հրատարակելուց առաջ իմանալ իր քաղաքացիներին կարծիքը: Պետական անկէտը կարող է տեղի ունենալ միայն դեմօկրատական երկրներում: (Տես «Դեմօկրատիա»):

ԱՆՁՆԱԿԱՆ ՈՒՆԻԱ—Տես «Ռեխիա»:

ԱՆՕՐՄԱԼ—Անբնական, անկանոն, կարգից դուրս:

ԱՆԼԼԱԳ—Պատերիկ կախած զբաւոր յայտարարութիւն:

ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ — Տես «Մանկանատակների աշխատանք»:

ԱՆՍԱՀՄԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ — Տես «Կառավարութեան ձեւ»:

ԱՆՍԱՀՄԱՆ ՄՕՆԱՐԽԻԱ—Տես «Կառավարութեան ձեւ»:

ԱՆՏԱԳՕՆԻՉՄ—Հակառակութիւն, հակառակ, թշնամական գործողութիւն, հակամարտութիւն:

ԱՆՏԱԳՕՆԻՍ—Հակառակորդ, ախոյեան, սուխ:

ԱՆՏԻԹէՉ—Հակադրութիւն, հակառակ դատողութիւն. դատողութիւն, որ թեզիսին ներհակ է:

ԱՆՏԻԿ—Հնութիւն, հազադիւտ իր, հրաշայի, թանկագին բան: «Անտիկ աշխարհ»—հին կլասիքական (յունական և հռոմէական) աշխարհը:

ԱՆՏԻՊՍՏԻԱ — Հակակրութիւն, անհամակրութիւն: (Տես «Միմպատիա»):

ԱՆՏԻՊՕՏԵՐ—1) Երկրագնդի երկու հակառակ ու հեռաւոր ծայրերի բնակիչներ. 2) Իրարից ամենախիստ կերպով տարբերող անհատներ:

ԱՆՏԻՍԵՄԻՏԻՉՄ—Հակահրէականութիւն, ատելութիւն, թըշնամութիւն դէպի հրէաները, որ գործնականապէս արտայայտուում է վերջիններիս դէմ յարուցած ամեն տեսակ հալածանքներով: Կան շատ երկրներում թէ ան-

հատ անտիսեմիտներ, թէ ամբողջ կուսակցութիւններ: Անտիսեմիտները իրանց ծրագրները հիմնաւորում են. 1) Նրանով, որ իբր թէ հրէաները քրիստոնէութեան դարաւոր թշնամիներն են և հաւատացող քրիստոնեաներին անասուած են դարձնում. 2) Որ հրէաները ծագումով «արիացի» (տես «Արիացի») չեն և եւրոպացիներից տարբեր բարոյական հասկացողութիւն ունենալով, նրանց փչացնում, անբարոյականացնում են. 3) Որ իբրև սեմիտներ, (տես «Սեմական») նրանք թշնամի են արիացիներին, որպէս օտար ցեղի: Մոռացւում են փաստերը, որ անասուածութեան գլխաւոր քարոզիչները XVІІІ-րդ դարում, Վօլտէրը և Դիդրօն, հրէաներ չէին: Հրէաները Սպանիայում, Անգլիայում, Ամերիկայում և այլ երկրներում խառնւում են տեղացիներին և ոչնչով չեն տարբերւում նրանցից: Սակայն զարբերի ընթացքում ենթարկւած լինելով ամենախիստ հալածանքների ու նեղութիւնների, ինչպէս ամեն մի հալածական ազգ, պատմական անժխտելի օրէնքով խրտացրել են մի քանի թերութիւններ, որոնք միայն նրանց յատուկ չեն, այլ շատ ուրիշ ազգերի ևս: Ուրեմն անտիսեմիտիզմն իր յառաջացման և զոյութեան համար ի՛նչ պատճառներ ունի,—այն, որ նրա մէջ կենտրոնացիլ ու խճճւել են բազմաթիւ սօցիալական, տնտեսական, ցեղական և կրօնական խնդիրներ: Ներկայումս անտիսեմիտիզմը զարգացած է Գերմանիայում, Աւստրօ-Ունգարիայում, Ֆրանսիայում, Ալժիրում, Ռումինիայում և Ռուսաստանում: Այդ երկրներում կան անտիսեմիտական ամբողջ կուսակցութիւններ, որոնց տեականութեան պատճառը ոչ թէ հրէաներին վերագրւող փրասակար դերն է մարդկութեան կեանքում, այլ այն հանգամանքը, որ անտիսեմիտիզմի յատկ թազցրած են հրէաների հետ ոչ մի կապ չունե-

- ցող գաղափարներ, ինչպէս օրինակ՝ Գերմանիայի անտի-սեմիտները պահանջում են որ երկաթուղիները և հազորդակցութեան բոլոր միջոցները պետութեան սեփականութիւնը դառնան (նացիօնալիզացիա), որ բանւորներին ապահովադրեն պետութեան հաշւով. որ աշխատանքի ժամերը սահմանափակեն օրէնքով. որ կանայք ու երեխաները գործարանական աշխատանքից ազատուեն, և այլն, և այլն: Միայն ծրագրի վերջին կէտը խօսում է այն մասին, թէ պէտք է հրէաների իրաւունքները սահմանափակել և օտարերկրեայ հրէաներին ամենին պետութեան մէջ չթողնել: Պարզ է այստեղից, որ անտիսեմիտիզմը ոչ մի հիմք չունենալով՝ դիմում է կեղծ միջոցների և համակրութիւն ձեռք բերելու համար ծածկւում է սօցիալական մի քանի համակրելի գաղափարների տակ: Ֆրանսիայում անտիսեմիտները հրապարակ եկան իբրև քաղաքական կուսակցութիւն 1898 թւին, Դրիւմօնի ղեկավարութեամբ:
- ԱՆՏՐՕՊՈՒՕԳԻԱ**.—Մարդարանութիւն. գիտութիւն՝ մարդու մասին:
- ԱՆՏՐՕՊՊՕՄՕՐՖԻԶՄ**.—Աստուծութիւնը մարդու կերպարանքով պատկերացնող հաւատալիք, կրօն. մարդացումն, մարդակերպութիւն:
- ԱՆՏՐՕՊՊՕՖԱԳԻԱ**.—Մարդակերութիւն:
- ԱՆՏՐՕՊՊՕՅԵՆՏՐԻԶՄ**.—Աշխարհայեցողութիւն, որի համաձայն մարդն է կազմում աշխարհի կենտրոնը և նրա համար է ստեղծւած ամեն ինչ:
- ԱՆՕՄԱԼԻԱ**.—Անկանոնութիւն, տարօրինակութիւն, զարտուղութիւն, այլատարազութիւն:
- ԱՆՕՆԻՄ**.—Հեղինակ, որ իր գրքի, յօդւածի, հրատարակութեան վրայ չէ նշանակել իր իսկական անունը կամ ստորագրել է կեղծանունով: Օտարերկրեայ օրէնքներով անօնիմ հեղինակը իբր արտագրութիւնների վերա-

բերմամբ նոյն իրաւունքն ունի, ինչ որ բոլոր հեղինակները: Ռուսաստանում թէև այդպիսի օրէնք չկայ, բայց, փաստօրէն, անանուն հեղինակը միշտ կարող է ապացուցել իր իրաւունքները, որովհետև ցենզուրական վարչութեան մէջ նշանակւած է լինում արտադրութեան իսկական հեղինակի անունը: Իսկ պարբերական հրատարակութիւնների, ժողովածուների մէջ, անանուն հեղինակի իրաւունքները վերապահւում են հրատարակչին: Այնտեղ, ուր չկայ մամուլի ազատութիւն, ինչպէս օր, Ռուսաստանում, անօնիմ հրատարակութիւններ շատ են լոյս տեսնում անլեզալ կերպով:

ԱՆՕՆԻՄ ՆԱՄԱԿ—Անանուն նամակ: Շատ անգամ նամակի հեղինակը զանազան դիտումներով նամակի տակը իր անունը չի ստորագրում, անյայտ մնալու համար: Այդպիսի նամակը կոչւում է անօնիմ կամ անանուն:

ԱՆՕՆՍ—Յայտարարութիւն, ազդ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ—Տես «Մանուֆակտուրա»:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԻՐԺԱ—Հիմնարկութիւններ, որոնց նպատակն է անգործ բանւորներին աշխատանք ձարել: Աշխատանքի բիրժաներն ուսումնասիրում են արդիւնագործութեան գրութիւնը, տեղեկութիւններ են հաւաքում ու յայտարարում ի գիտութիւն ամենքի, թէ ռրտեղ կան անգործ բանւորներ, կամ, ռր գործարանում բանւորների կարիք կայ, և յարմարութիւններ են տալիս ու միջնորդում գործի գտնելու: Աշխատանքի բիրժաները՝ զոհացնելով թէ՛ ձեռնարկողների և թէ՛ բանւորների պահանջները, առանձին ծառայութիւն են մատուցանում գործազուրկ-բանւորներին: Վերջիններիս հաղորդելով բոլոր կարևոր տեղեկութիւնները, աշխատանքի բիրժաները չեն թոյլ տալիս, որ գործազուրկները միտեղ լսուին և աշխատավարձը պակասեցնեն, այլ նրանց ուղարկում են այնտեղ, ուր աշխա-

տող ձեռքերի պահանջ կայ: Աշխատանքի բիրժաները սկիզբ առան Ֆրանսիայում 1887 թ. և ապա տարածւեցին բոլոր երկրներում: Թէ ի՞նչ դեր են խաղում աշխատանքի բիրժաները բանւորների կեանքում, կարելի է գաղափար կազմել այն փաստից, որ 1898 թ. միայն Պարիզի բիրժան 54 հազար անդորժ բանւորի աշխատանք է ճարել: Ռուսաստանում աշխատանքի առաջին բիրժաները հիմնւեցին 1905—1906 թ.թ. Մոսկվայում, Պետերբուրգում և Օդեսսայում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԻՒՐՅՈՒՄ—Հիմնարկութիւններ, որոնք ուսումնասիրում են բանւորների դրութեան հետ կապ ունեցող բոլոր հարցերը, հաւաքում, մշակում և յայտարարում են ի գիտութիւն ամենքի արգիւնագործութեան զարգացման, աշխատանքի պայմանների, բանւորական կեանքի, ձեռնարկողների ու բանւորների փոխադարձ յարաբերութիւնների մասին ամեն տեսակ տեղեկութիւններ, և բազմակողմանի կերպով լուսարանում են այդ խնդիրները: Առաջին անգամ աշխատանքի բիրժաներ հիմնւեցին Հիւսիս. Ամերիկայի Միացեալ Նահանգներում 1869 թ., ապա տարածւեցին նաև Ֆրանսիայում «Աշխատանքի խորհուրդ» անունով, Անգլիայում Շվէյցարիայում և այլ երկրներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՈՐՀՈՒՐԴ—Տես «Աշխատանքի բիրժան»:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՆՏԵՍՈՒԹԻՒՆ—Այն տնտեսութիւնը, որի ժամանակ գիւղացին իր հողը մշակում է սեփական ձեռքերով, առանց վարձու բանւորների:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՐԻՍԻՍԻՍ—Կրիսիսիւն, որն զբաղւում է երկրագլխի ուսումնասիրութեամբ՝ իբրև տիեզերքի մի մասի և իբրև մարդու բնակատեղիի: Մաթեմատիկական աշխարհագրութիւնն ուսումնասիրում է երկրագունդն, իբրև արեգակնային սիստեմի մի մոլորակի: Ֆիզիքական աշխարհագրութիւնը նկարագրում է երկրագլխի մակե-

րևոյթն իր բոլոր ձևերով, յատկութիւններով և բնութեան օրգանական ու անօրգանական արտադրութիւններով: Քաղաքական աշխարհադրութիւնը քննուժ է երկիրն, իբրև մարդու բնակատեղի, ուշադրութեան առնելով նրա բնակութեան պայմանները և պետական ու հասարակական յարաբերութիւնները:

ԱՊԱՀՈՎԼԻ ԳՐՈՒԹԻՒՆ — Ապահովագրութիւնը հիմնած է այն սկզբունքի վրայ, որ անհատին, անհատական տնտեսութեանը կամ խմբակցութեանը զտնազան պատահարների կողմից սպառնացող վտանգը բաժանուժ է շատերի մէջ: Բնական կամ այլ անսակնկալ աղէտներից տնտեսութիւնը պահպանուժ է ապահովագրութեան միջոցով (ապահովագրութիւն հրդեհից, հեղեղից, կարկուտից): Ապահովագրուժ է ապրանքը, անասունը, մարդոց կեանքը — անսակնկալ դժբաղդութիւններից: Ապահովագրուժ է բանւորի կեանքը մեքենայի դէմ (տես «Բանւորների ապահովագրութիւն»): Ըստ կազմակերպութեան՝ ապահովագրութիւնը լինուժ է պարտադիր և կամաւոր: Սրանց ձևերը խիստ բազմազան են, պետական, նահանգական, զեմստովային, փոխադարձ, առևտրային, և այլն, և այլն: Սովորաբար կամաւոր ապահովագրութիւնն իրագործուժ են ակցիօներական կամ փոխադարձ ապահովագրութեան ընկերութիւնները: Ապահովագրական ընկերութիւնները նախօրօք սահմանած սարիֆով ապահովագրուժ են զանազան կայքեր և մարդոց (ապահովագրւողների) կեանքը: Դժբաղդութեան դէպքուժ անմիջապէս իմաց են տալիս ընկերութեանը, որն իր գործակալների միջոցով ստուգուժ և պնահատուժ է մնացած կայքը և որոշուժ կրած ֆնասիշափը: Փոխադարձ ապահովագրութեան ժամանակ, ընկերութեան ստացած օգուտը բաժանուժ է բոլոր անդամների մէջ: Պարտադիր ապահովագրութիւնն իրագոր-

ծում է կառավարութիւնը կամ հասարակական հիմնարկութիւնները:

ԱՊԱՏԻԱ—Անտարբերութիւն, սաննութիւն, անզգայութիւն, թմբութիւն, ծուլութիւն:

ԱՊՊԱՐԱՏ—Գործիք:

ԱՊԵՂԻՒԱՅԻԱ—Բողոք, գանգատ: Դատուողի խնդիրը, իր գործն աւելի բարձր ատեանում քննելու մասին: Ապելլիացիա կարելի է տալ, 1) եթէ վճիռ կայացնող դատարանը, ըստ օրէնքի, նմանօրինակ գործերի համար վերջին ատեանը չէ, 2) եթէ վճիռը դեռ ես իր ոյժի մէջ չէ մտել և 3) եթէ դատարանը թոյլ է տւել իրան փաստացի կամ իրաւարանական որևէ սխալ:

ԱՊՕԹԷՕԶ—1) Աստուածացումն, աստուածների դասը բարձր բացումը. 2) Հանդիսաւոր գովարանութիւն:

ԱՌԱՋԱՊԱՀ—Տես «Աւանգարդ»:

ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱՐԳ—Մտցրել է Ռուսաստանում Պետր՝ Մեծը: Այդ կարգով բոլոր քաղաքացիական և զինւորական աստիճանները 14 էին. ներկայումս վերացրս են՝ քաղաքացիական աստիճաններից երկուսը և զինւորականներից՝ մէկը: Բաղաքացիական աստիճանները (գրաժդանսիկյ ջին) հետեւեալներն են,—XIV-րդ աստիճանը, ամենացածր չինը—կօլլէժսկիյ բէգիստրատոր, XIII-ը վերացրած է, XII—գուբերնսկիյ սեկրետար, XI—վերացրած է, X—կօլլէժսկիյ սեկրետար, IX—տիտուլեարնի սօվետնիկ, VIII—կօլլէժսկիյ ասեսուօր, VII—նադօրնի սօվետնիկ, VI—կօլլէժսկիյ սօվետնիկ, V—ստատսկիյ սօվետնիկ, IV—դէյստօլիտեւնիյ ստատսկիյ սօվետնիկ, III—տայնիյ սօվետնիկ, II—դէյստօլիտեւնի տայնիյ սօվետնիկ, I—աւաջին կլասի դէյստօլիտեւնի տայնիյ սօվետնիկ կամ կանցլէր: Զինւորական ծառայութեան մէջ դրանց համապատասխանում են հետեւեալ չիւնները.— XIII—պրասպօրչչիկ (1884 թւին խաղաղ

ժամանակւայ համար այս չինը վերացւած է): XII—
պողպօրուչիկ, X—պօրուչիկ (ծովային ծառայութեան
մէջ՝ «միշման»), IX—շտարս-կապիտան և շտար-բօտ-
միստր (ծովային լէյտընանտ), VIII—կապիտան և բօտ-
միստր, VII—պողպօլկովնիկ (ծովային կապիտան II-րդ
ասնգի-կարգի), VI—պօլկովնիկ (ծովային կապիտան
I ասնգի), IV—գեներալ-մայօր (ծովային կօնտր ադ-
միրալ), III—գեներալ-լէյտէնանտ (ծովային՝ վից-ադ-
միրալ), II—գեներալ կալալէրիայի, ինֆանտէրիայի,
արտիլլէրիայի (ծովային՝ ադմիրալ), I—գեներալ-ֆէլդ-
մարշալ (ծովային՝ գեներալ-ադմիրալ):

ԱՍԿէՏ—ձգնաւոր:

ԱՍԿԵՏԻՉՄ—ձգնութիւն, ձգնաւորութիւն, ձգնաւորական
կեանք:

ԱՍԵՍՍՕՐ—Տես «Աստիճանների կարգ»,

ԱՍՍՕՅԻԱՅԻԱ—Մարդոց ազատ ու ինքնակամ ընկերակ-
ցութիւն՝ ընդհանուր նպատակի համար: Միութիւն,
ընկերութիւն:

ԱԻԱՆԳԱՐԴ—Առաջապահ, առաջից գնացող, առաջնորդող,
ղեկավարող: Զօրքի մէջ աւանդարդ են կոչուում այն
զօրամասերը, որոնք ուղարկուում են թշնամու դիրքերը
քննելու, նրանց թիւն իմանալու: Առաջապահ են կոչ-
ուում նաև գլխաւոր ոյժերը պաշտպանելու համար ա-
մենավտանգաւոր տեղերում կանգնեցրած զօրամասե-
րը: Մտաւոր շարժման և հասարակական կեանքի մէջ
ևս աւանդարդ է կոչուում այն դասակարգը կամ գոր-
ծիչներին այն խումբը, որն իր պատրաստակամութեամբ
ղեկավար է հանդիսանու մեծամասնութեանը:

ԱԻԱՆԶԱՒ—Նախասրահ, գլխաւոր սրահի առաջը գտնւող
սրահ (դահլիճ):

ԱԻԱՆՊՕՍ—Առաջապահ դիրք: (Տես «Աւանգարդ»):

ԱԻԱՆՍ—1) Դրամական վճար, որը տրւում է որոշւած գործը կատարելուց առաջ. 2) Օգուտ:

ԱԻԱՆՍՑԵՆԱ—Բեմի առաջին մասը:

ԱԻԱՆՏԻԻՐԻՍ—Բազմախնդիր: Փառք, հարստութիւն կամ իշխանութիւն ձեռք բերելու համար ոչ մի վտանգաւոր ու անազնիւ միջոցի առաջ կանգ չառնող մարդ:

ԱԻԱՐԻԱ—1) Արտակուսի: Նաւի խորտակուսի. 2) Գործի լիակատար անյաջողութիւն. 3) վնաս:

ԱԻԳԻԵԱՆ ԱԽՈՒ—Կեղտի և ապականութեան մէջ կորած շինութիւն կամ հիմնարկութիւն:

ԱԻԳՈՒՐ—1) Գուշակ, գուշակող. 2) Խաբեբայ, կեղծ մարդ:

ԱԻԴԻՏՕՐԻԱ—Լսարան:

ԱԻԵՏԱՐԱՆ—Աստուածաշնչի նոր կտակարանի առաջին չորս գրքի անունը: Մատթէոսի, Մարկոսի և Ղուկասի աւետարանները կոչւում են սինոպտիքական (համատես), որովհետև թէ բովանդակութեամբ և թէ ծրագրով իրար խիստ նման են: Ամենահինն է Մատթէոսի աւետարանը (50—60 թ.թ. Քր. յետոյ) որի ընագիրը հրէերէն է եղել գրւած, բայց մեղ հասել է յունական թարգմանութեամբ, սրա նպատակն է՝ ապացուցել, որ Յիսուսը Մեսսիան է: Մարկոսի աւետարանը Պետրոս Առաքեալի պատմածներից է գրւած և նշանակւած է եղել կապաշտների համար. (60—70 թ.թ.): Ղուկասի Աւետարանը նշանակւած է եղել կապաշտութիւնից քրիստոնէութեան դարձածների համար (60—70 թ.թ.): Յովհաննայ Աւետարանը գրւած է I դարի վերջերին և նւիրւած է Յիսուս Քրիստոսի աստուածութեան հարցին: Քննադատներն աշխատել են ապացուցել, որ աւետարանը գրւած է եղել ուշ ժամանակներում, բայց այդ փորձը չէ յաջողւել:

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ—Լութերական և ուէֆօրմատ միացեալ եկեղեցիների անունը: Միութիւնը կատարւեց

Գերմանիայում 1817 թ. «պրօտեստանտական ունիան»
անունով: 1850 թ. ունիային միացան Ֆրանսիայի,
Շվեյցարիայի, Հոլլանդիայի և Անգլիայի շատ բողոքա-
կաններ:

ԱԻԵՏԱՐԱՆԻԶՆԵՐ—Աւետարանի հեղինակները, որ չորս էին
—Մատթէոս, Մարկոս, Դուկաս և Յովհաննէս: (Տես
Աւետարան):

ԱԻՏՕԿԻՍՏԻԱ—Պետական կառավարութեան այնպիսի ձև,
որի ժամանակ թէ՛ օրէնսդրական և թէ՛ գործադիր իշ-
խանութիւնը անսահման է և գտնուում է մի անձնա-
ւորութեան, մօնարխի (միապետի) ձեռքին: (Տես «Կա-
ռավարութեան ձեւ»):

ԱԻՏՕՄԱՏ—1) Ինքնաշարժ, ինքն իրան բանող մեքենայ.
2) Աւտօմատ անւանում են նաև այնպիսի մարդոց, ո-
րոնք առանց հասկանալու, մեքենաբար են կատարում
այս կամ այն գործը:

ԱԻՏՕՄՕԲԻԼ—մեքենաշարք կառք, ինքնաշարժ կառք:

ԱԻՏՆՕՄԻԱ—Ինքնօրինութիւն, ինքնավարութիւն: Աւտօ-
նօմիա է կոչւում իրանց գործերն այս կամ այն սահ-
մաններում ինքնուրոյն, ազատ կերպով կառավարելու
իրաւունքը, որ օրէնքով տրւում է զանազան ընկերու-
թիւնների, դաշնակցութիւնների, կազմակերպութիւն-
ների: Քաղաքական աւտօնօմիա—պետութեան մէջ ապ-
րող զանազան ժողովուրդներին տրւած ինքնավարու-
թիւնը, իրանց ներքին գործերն անկախօրէն կարգա-
դրելու իրաւունքը, իրանց ցանկութեամբ օրէնքներ
հրատարակելու, դատ վարելու, հարկեր ու տուրքեր
կարգելու: Աւտօնօմ ժողովուրդը որոշ պարտակա-
նութիւններ է ունենում դէպի ընդհանուր, գերիշխող
պետութիւնը՝ որի սահմաններում ինքն ապրում է և
այդ իրաւունքները լինում են լայն կամ նեղ, նայելով
պայմաններին: Սովորաբար աւտօնօմ ժողովուրդը տա-

լիս է դերիշխող պետութեանը որոշ հարկ և օգնում է գործով:

ԱՒՏՕՆՕՄԻՍՏ—Աւտօնօմիայի կողմնակից: (Տես «Աւտօնօմիա», «Անարխիզմ»):

ԱՒՏՕՐԻՏԷՏ—Տես «Հեղինակութիւն»:

ԱՏԱԻԶՄ—Պապենականութիւն: Սկզբնական տիպի կամ յատկութիւնները կրկին երևալը յետագայ սերունդներին մէջ:

ԱՏՐԻԲՈՒՏ—Յատկանիշ, բնորոշ նշան, առարկայի էական յատկութիւնը:

ԱՏՐՕՖԻԱ—Քայքայումն, ծիրութիւն, ուժասպառութիւն, բթացումն:

ԱՏՏԵՍՏԱՏ—Վկայագիր, վկայական:

ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾՈՒԹԻԻՆ—Մարդու տնտեսական գործողութիւնը, որի նպատակն է ստեղծել, մշակել և տեղափոխել նիւթական առարկաները: (Տես «Խոշոր արդիւնագործութիւն»):

ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԻԶԻՍ—Տես «Կրիզիս արդիւնագործական»:

ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՆ—Տես «Ազրալքաղաքականութիւն»):

ԱՐԽԻԻ—Դիւանատուն, հնադարան:

ԱՐԽԻՏԵԿՏՕՐ—Ճարտարապետ,

ԱՐՏԻՍՏ— 1) Արւեստագէտ, գեղարւեստագէտ. 2) Երաժիշտ, դերասան. 3) Չեռնածու, ճարպիկ խաբեբայ:

ԱՐՏԷՂ—Տես «Կօօպերացիա»:

ԱՅԷՐԱ—Շահագրտական ձեռնարկութիւն:

ԱՅԷՐԻՍՏ—Արկածախնդիր, շահախնդիր մարդ:

ԱՅՕՐԻԶՄ--Ասացւածք, հակիրճ կերպով արտայայտւած միտք:

ԱՅՅԷԿՏ—Խիստ յուզմունք, կրքոտութիւն:

ԱՅՅԷԿՏԱՑԻԱ—Կեղծ, շինծու, անբնական վերաբերմունք, շարժմունք, գործողութիւն:

Բ.

ԲԱԲՈՒՎԻԶՄ — Ֆրանսիացի Բարիոֆի, Մեծ յեղափոխութեան գործիչներից մէկի սօցիալ-քաղաքական և տնտեսական ուսմունքը: Բարուվիզմը ուսույթիական-անարխիստական սօցիալիզմի մի ձևն է: (Տես «Սօցիալիզմ»):

ԲԱԳԱԺ — Ծանրութիւն, որ ճանապարհորդը տանում է իր հետ:

ԲԱԶ կամ **ԲԱԶԱ**, **ԲԱԶԻՍ**՝ հիմք: Ամբողջիւն, որ զինւորական գործողութիւնների ժամանակ իբրև յենակէտ և ոյժերի հաւաքման ու թարմացնելու անդ է ծառայում:

ԲԱԼ — Շքեղհանդէս՝ երաժշտութեամբ ու պարերով:

ԲԱԼ-ՄԱՍԿԱՐԱԴ — Բալ՝ որին հիւրերը պարտաւորապէս դիմակներով պէտք է դան:

ԲԱԼԱՆՍ — 1) Հաւասարակշռութիւն: 2) Վերջնական եզրակացութիւն, եղբարկական մե՝ որ դուրս է բերած հաշիւներից:

ԲԱԼԻԱԽԻՆ — Շքեղ ծածկոց, որ գործածուում է զանազան հանդէսների ժամանակ:

ԲԱԼԷՏ — ներկայացում: որ կազմւած է պարերից ու անձայն խաղից:

ԲԱԼԷՐԻՆԱ — Բալէտի մասնակցող պարուհի (պարող կին):

ԲԱԼԼԱԴ — Բանաստեղծական պատմւածք, որի նիւթը վերցրած է ժողովրդական աւանդութիւններից, հեքիաթներից կամ պատմութիւնից:

ԲԱԼԱՍՏ — 1) Ծանրութիւն, որ դրւում է նաւի մէջ, հաւասարակշռութիւնը պահելու համար: 2) Աւելորդ ծանրութիւն:

ԲԱԽՇԻՇ — Ընծայ, կաշառք:

ԲԱԿԱԼԱԻՐ — Արտասահմանեան համալսարաններում առաջին գիտնական աստիճանն է:

ԲԱԿԱԱԼԷՅ—չոր մրգեր, պտուղներ, մեղր, պանիր, ձկնեղէն
և նման մթերքներ:

ԲԱԿԿԱՐԱ—թղթախաղի մի տեսակը, որ սաստիկ ընդուն-
ւած է Ֆրանսիայում:

ԲԱԿՇԱ—Այդպէս է կոչուում կալմիկներին (ղալմուխներին) և
կիրգիզներին (յրդզներին) հեզևոր պեալը:

ԲԱՆԱԼ—Յաճախակի գործածութիւնից սովորական դարձած,
հնացած, փշացած, ապականւած:

ԲԱՆԴ կամ **ԲԱՆԴԱ**—Աւազակային, հրոսակային խումբ. Առ-
հասարակ՝ խումբ:

ԲԱՆԴԱԺ—1) կապ, որը գործածուում է մարմնի որևէ մասի
վրայ կոմպրէս, սպեղանի և այլն անշարժ պահելու:
2) կապ, որը գործածուում է մարմնի որևէ օրգանը ու-
րոշ դիրքի մէջ պահելու:

ԲԱՆԴԵՐՕԼ—1) թուղթ, որ կպցուում է դանազան իրերին
վրայ, իբր նշան, որ վճարւած է այդ առարկայի հա-
մար որոշւած տուրքը:

ԲԱՆԴԻՏ—Վարձկան մարդասպան, աւազակ:

ԲԱՆԹՈՂ—Տես «Գործադուլ»:

ԲԱՆԿ—Հասարակական փոխատու հիմնարկութիւն, որը պե-
տութեան հսկողութեան տակ է դանուում և ունի պե-
տական օրէնքով հաստատւած կանոնադրութիւն: Բան-
կի նպատակն է՝ ա) փոխատուութիւնը որոշ սիստեմի
տակ դնել, բ) կենտրոնացնելով բոլոր ազատ դրամա-
դրութիւնները մի տեղ, գործադրել նրանց հասարակա-
օգուտ նպատակներով ժողովրդական տնտեսութեան
զանազան ճիւղերում: Իրանց գործունէութեան ընաւո-
րութեամբ բանկերը լինում են երկարատե փոխառու-
թեան և կարճատե փոխառութեան բանկեր. առաջին
տեսակի բանկերը կոչուում են առեւտրական բանկեր և
երկրորդ տեսակինը՝ ձողային: Առեւտրական բանկերը
դրամներ են ընդունում որոշ տոկոսով և փոխառու-

թիւն բաց թողնում մուրհակով կամ արժէքաւոր թղթերի ու ապրանքների գրաւականով, կլիէնտների յանձնարութեամբ դրամ են փոխադրում զանազան տեղեր, մասնակցում են ուրիշ հիմնարկութիւնների բաց թողած փոխառութեանն ունայիզացիային, գնում և վաճառում են տոկոսաբեր թղթեր և այլն, և այլն: Մի քանի բանկեր իրաւունք ունենւ ընդհանուր գործածութեան մէջ մտցնելու իրանց տոմսերը, որոնց վրայ նշանակւած գրամագլխի համեմատ պէտք է ոսկի ունենան տոմսը ներկայացրած գէպքում ոսկի վճարելու (եմիսսիսն բանկեր, մասնաւոր-ակցիօներակտն, արտօնեալ և պետական բանկեր): Եւրոպական պետութիւնների մէջ գոյութիւն ունեն ատանձին զիւղատնտեսական բանկեր, որոնց նպատակն է գիւղական տնտեսութեան բարեկաւումը (տես Վեյխորատիւ կրեդիտ): Իրանց գրամագլխի կազմակերպութեան ձևով բանկերը լինում են՝ ա) պետական, բ) դասային, գ) հասարակական (քաղաքային, զեմսկիյ, զիւղական), դ) մասնաւոր՝ (անհատների և ընկերութիւնների), ե) փոխադարձ վարկի ընկերութիւններ և փոխատու-խնայողական ընկերութիւններ: Բանկերը, կենտրոնացնելով մասնաւոր խոշոր գրամագլուխներ, պետութեան տնտեսական կեանքում ահագին դեր են խաղում և քանի որ բազմաթիւ մարդոց շահեր են շոշափում, ենթարկւում են պետութեան կօնտրօլին ի դէմս ֆինանսների մինիստրութեանը: Բանկերի հաշիւներն ամեն ատարի պարտաւորապէս հրատարակում են հասարակութեանը գործի դրութեանը տեղեակ դարձնելու համար: Ռուսաստանում առաջին պետական բանկային հաստատութիւնը բացւել է 1733 թ.: Ներկայիս պետական բանկը (Պետական Առևտրական Բանկը) իր գործունէութիւնն առևտրական վարկային գործողութիւնների համար

սկսել է 1860 թ. յուլիսի 1-ից: Իր գործողութիւնների համար Պետական բանկն օգտուում է, բացի Հիմնական դրամաւալից նաև Պետական Գանձարանի ազատ դրամներէ, որոնց ընթացիկ հաշիւը միշտ պահած է իր մօտ: Իր հերթում՝ Պետական բանկը պարտաւոր է ձրիաբար կատարել կառավարութեան դրամական յանձնարարութիւնները, վճարել պահանջւած դէպքում պետական պարտքերը կամ նրանց տոկոսները՝ ի հաշիւ Պետական Գանձարանի: Պետական Բանկի կառավարութիւնը յանձնւած է յատուկ կառավարչի և նրա օգնականին, որոնց վրայ հսկում է Ֆինանսների մինիստրութիւնը և պետական վարկային հիմնարկութիւնների Սորձուրդը: Ռուսաստանի զանազան քաղաքներում Պետական Բանկն ունի իր բաժանմունքները, որոնց թիւը 1897-ին 108 էր. Պետական Բանկի հսկողութեան տակ են գտնուում նաև Խնայողական Կասսաները (տես «Խնայողական Կասսաներ»): Պետական գլխղացիական Հողային Բանկը հիմնւած է 1882 թ. այն նպատակով՝ որ գիւղացիներին դրամական միջոց տայ հողեր գնելու: Հողային Բանկը դրամ է տալիս՝ գրաւ վերցնելով գիւղացիների գնած հողը: Դրամը տրւում է՝ ա) գիւղական հասարակութիւններին, եթէ սրանք ներկայացրնեն հասարակական համախօսական իրանց հասարակութեան բոլոր անատէրերի $\frac{2}{3}$ -ի ստորագրութեամբ. 2) գիւղացիների ընկերութիւններին (սրանց անդամների թիւը 3 հոգուց պակաս չպէտք է լինի) բոլոր անդամների փոխադարձ եառչխաւորութեամբ և գ) առանձին գիւղացիներին: Եթէ հողատիրութիւնը համայնական է, ամեն մի արական շնչին բանկը տալիս է մինչև 125 ռ. իսկ եթէ հողատիրութիւնը մասնաւոր սեփականատիրական է, ամեն մի շնչին տալիս է մինչև 500 ռ. $24\frac{1}{2}$ և $34\frac{1}{2}$ տարով. 1883 թ. մինչև 1895

թ. բանկը պարք էր տւել գիւղացիներին ընդամենը 70 միլիոն ռուբլի: Նոյն ժամանակամիջոցում գնւած հողերի քանակը 2 միլիոն դեսետաին էր: Բանկի գործունէութիւնն աւելի կենդանացաւ 1850—1898 թւերին երբ փոխառութեան ժամանակը երկարացրին մինչև $55\frac{1}{2}$ տարւան և տոկոսները պակասեցին: Բանկի գործունէութիւնն ամենալայն չափեր ստացաւ 1900 թ. երբ նրա միջոցով գնւեց 815 հազար դես. հող $67\frac{1}{2}$ միլիոն ռ. աշտոյութեամբ: 1883 թ. մինչև 1902 թ. գիւղացիներին փոխարինարար տրւել է ընդամենը 400 միլ. ռ. 6 միլ. դես. համար: Բանկի գործունէութեան զարգացման հետ զուգնթացաբար աճել է և հողի գինը 1883-ին մէկ դես. հողը ծախուում էր 34 ռ., 1896-ին՝ 52 ռ., 1887-ին՝ 71 ռ., 1898-ին՝ 76 ռ., 1899-ին՝ 78 ռ., 1900-ին՝ 83 ռ., 1901-ին՝ 91 ռ., 1903-ին՝ 108 ռ. Գիւղացիական Բանկն իր միջոցներն ստանում է այն թղթերից, որ բաց է թողնում «Գիւղացիական հողային բանկի պետական վկայականներ» անունով որոնք ապահովւում են որպէս բանկի միջոցով վաճառւած և զրաւ դրւած հողերով, այնպէս և պետութեան ընդհանուր զրամական միջոցներով: Պետական գիւղացիական հողային բանկը ենթարկւում է ֆինանսների մինիստրութեանը և գործում է իր բաժանմունքների միջոցով որոնք բացւած են ամբողջ Ռուսաստանում բացի Ֆինլեանդիայից և Արխանգելի, Վոլոգոզի, Վիեատսկի, Օլոնեցկի, Աստրախանի և Մերձբարլտեան ու Տերսկի շրջանից: Պէսական ազնւական նոդային բանկը հիմնւել է 1885 թ. հողատէր ազնւականներին էժան և երկարատե կրեդիտ բաց թողնելու և տարէց-տարի քայքայող ազնւական հողատիրութիւնը պահպանելու նպատակով: Ազնւական հողային բանկը փոխառութիւն տալիս է հողերի զրաւականով:

Բանկը գտնւում է Ֆինանսների մինիստրութեան և պետական վարկային հիմնարկութիւնների Սորհրդի հսկողութեան տակ: Բանկի գործունէութիւնը տարածւում է միայն Եւրոպական Ռուսաստանի վրայ բացի Ֆինլեանդիայից, Լեհաստանից և Օստրիայից Երկրից: Բանկը գործում է նաև Դովկասում: Ազնւականների Բանկը հողերը գնահատում է մասնաւոր բանկերից 40%-ով աւելի և $1\frac{1}{2}$ անգամ աւելի է դրամ տալիս բան վերջինները (օր. 1903 թ. Ազնւական բանկը մէկ դեպեատինը գնահատում էր 72 ո. և պարք տալիս ամեն դեպեատինի դէմ 41 ո., մինչդեռ մասնաւոր բանկերը գնահատում էին 50 ո. և պարտք տալիս 28 ո.): Գիւղական մասնաւոր բանկերը հիմնւում են գիւղական համայնքների սեփական միջոցներով կամ զեմստվոյի բաց թողած միջոցներով: 1901 թ. գիւղական բանկերի թիւը 653 էր $2\frac{1}{3}$ միլիոն ուրլի գրամագլխով: Փոխատու Սնայոդական բնկերութիւնները սկիզբ են առել 1866 թ. և հիմնւում են փայերով: 1902 թ. այդպիսի բնկերութիւնների թիւը Ռուսաստանում 764 էր 300 հազար փայատէրերով, որոնց մացրած գրամագլուխը հաւասար էր $10\frac{1}{2}$ միլիոն ո. Վարկային բնկերութիւնները հիմնական գրամագլուխն ստանում են կտուրութիւնից, զեմստվոյից կամ մասնաւոր անհատներից, որոնք բնկերութեան անդամներից փոխադարձ երաշխաւորութիւն են ստանում: 1902 թ. բոլոր վարկային բնկերութիւնների թիւը Ռուսաստանում 176 էր 280 հազար ո. հիմնական գրամագլխով (տես Սնայոդական Կասսաներ» Կոսովերացիա): 2) «Բանկ» կոչւում է թղթախաղի մի տեսակը:

ԲԱՆԿԷՏ—Հանդիսաւոր ճաշ, ինճոյք որևէ առիթով:

ԲԱՆԿՐՕՏ—Սնանկ, սնանկացած մարդ:

ԲԱՆԻՈՐՆԵՐԸ—1897 թ. աշխարհագրութեան համեմատ,

բանւորները կազմում են Ռուսաստանի ինքնուրոյն կերպով ազրուստի միջոց ձեռք բերող ազգաբնակչութեան 27,6⁰/₀-ը, իսկ իրանց ընտանիքով՝ Ռուսաստանի ազգաբնակչութեան 15,5⁰/₀-ը: Ռուսաստանում իրանց աշխատանքով ազրոզների թիւը 39,201 հազար է, որից 9,156 հազարը բանւորներ են: Այս թւից գիւղական տնտեսութեան մէջ աշխատում են 2,722 հազար հոգի, որից 1,969 հազ. արական և 753 հազ. իգական սեռի: Գործարարային արգիւնագործութեան և արհեստների մէջ աշխատում են 2,598 հազ. որից 2,210 հազ. արական և 388 հազ. իգական սեռի: Առևտուրի և տրանսպորտի մէջ աշխատում են 626 հազ. որից 569 հազ. արական և 58 հազ. իգական: Հասարակ բանւորներ (չերնօբարօչիյ) և ծառաներ—3,208 հազ. որից 1,586 հազ. արական և 1,622 հազ. իգական սեռի: Ֆարրիկանների, զաւօղների, հանքային և արհեստաւորական բանւորների ընդհանուր թիւը 1902 թ. մօտ 3 միլիոն էր, որից Եւրոպ. Ռուսաստանում 2¹/₂ միլիոն, Պրիվիլեանսկիյ կրայում՝ մօտ 300 հազ., Կովկասում՝ 100 հազ. և Սիբիրում՝ 100 հազար: (Տես «Բանւորներ երկրագործական»):

ՔԱՆԻՈՐԱԿԱՆ ԲԻՐԺԱ—Տես «Աշխատանքի բիրժա»:

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԲԻՒՐՕ—Տես Աշխատանքի բիրթո»:

ԲԱՆԻՈՐՆԵՐ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ—Կոչւում են նրանք, որոնք վարձւում են երկրագործական աշխատանքների համար: Երկրագործական բանւորներ դառնում են հողագուրի և քիչ հող ունեցող գիւղացիները, որոնք հնարաւորութիւն չունեն կապալով վերցրած հողերով լըրացնել իրանց պակասը: Ուստի, գիւղական ազգաբնակչութեան աճման և հողաբաժինների համապատասխան մանրացման հետ միաժամանակ աճում է և այն գիւղացիների թիւը, որոնք երկրագործական բանւոր-

ներ են դառնում: 1900 թ. սեփական տնտեսութեան մէջ գործ չունեցող աշխատաւոր-գիւղացիների թիւը եւրոպական Ռուսաստանում հասնում էր 23 միլիոն հոգու: Երկրագործական բանւորների հոսանքն ուղղւում է գլխաւորապէս կենտրոնական նահանգներից (ուր հողի պակասութիւնը ամենից շատ է զգալի) դէպի հարաւ և հարաւ-արեւելք (աւելի հողառատ տեղերը): Աշխատաւոր տղամարդկանց օրավարձը 1882 թ. մինչև 1891 թ-րի տասնամեակում զարնանացանին 32 կոպ. էր, խոտհարքին՝ 44,3 կոպ. և հունձին, 50 կոպ. աշխատեցնողի հացով: Նոյն տասնամեակում տըղամարդ բանւորի տարեվարձն էր 61 ռ. Արևմտեան և Անդրբալտեան նահանգներում երկրագործական բանւորներին գլխաւորապէս տարով են վարձում, Հարաւ-Արեւելքում պայմանաւորում են որոշ աշխատանքի համար. Նօլօրօսսիայում՝ օրավարձով և որոշ ժամանակով, յայտնի աշխատանքի համար: Բացի զբամական վճարից, ամեն տեղ ընդունւած է նաև բնական աշխատավարձը—բերքից: Ռուսաստանում երկրագործական բանւորների և աշխատեցնողի յարաբերութիւնները կանոնաւորւում են 1886 թ. օրէնսդրութեամբ, որը պաշտպանում է աւելի շատ երկրորդների շահերը, քան թէ բանւորներինը: (Տես «Ագրարային քաղաքականութիւն», Ագրար շարժումներ», «Բանւորներ», «Բատրակ»): ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ—Կոչւում են բանւորների շատ թէ քիչ տեւական միութիւնները, ապրուստի և աշխատանքի աւելի լաւ պայմաններ ձեռք բերելունը պատակով: Ներկայումս բանւորական միութիւնները բաժանւում են գլխաւորապէս չորս տեսակի. ա) այն միութիւնները, որոնք իրենց նպատակին հասնելու միջոցը համարում են քաղաքական կռիւլը.—զբանք քաղաքական կուսակցութիւններն են: բ) այն միութիւն-

ները, որոնք իրանց նպատակին հասնելու միջոցը համարում են զուտ-տնտեսական կուրը կապիտալիստներին դէմ.— դրանք պրօֆեսիօնալ միութիւններն են: Կ) միութիւններ, որոնք իրանց նպատակին ծառայում են միայն փոխադարձ օգնութեան դործի կազմակերպումով.— դրանք փոխադարձ օգնութեան ընկերութիւններն են: Եւ վերջապէս Դ) ծառայում են զուտ տնտեսական նպատակներին.— սրանք կօօպերատիւ ընկերութիւններն են: Սակայն բանւորական միութիւններին շատերը ստանձնում են մի քանի տեսակի գործունէութիւն: Սովորաբար միութիւնները կազմւում են արդիւնարեութեան միևնոյն ճիւղի բանւորներից, բայց լինում են նաև ընդհանուր բանւորական միութիւններ: Վերջապէս՝ միութիւններ կարող են կազմել զանազան երկրների բանւորները— այդ դէպքում միութիւնները կոչւում են միջազգային: Բանւորական միութիւնների մօտակայ նպատակն է լինում աշխատավարձի յաւելումը, աշխատաժամի կրճատումը, բանւորների համար լաւ բնակարաններ ձեռք բերելը, բանւորի կեանքը վտանգներից ապահովելը, տօնային հանգրատի որոշումը և այլն, և այլն, Այդ նպատակներին հասնելու միջոցներն են. գործադուլը, բոյկօտը, և խաղաղ համաձայնութիւնը հաշտութեան սրասնեակների միջոցով: Միութիւնների դրամական միջոցները գոյանում են անդամավճարներից: Բանւորական միութիւնների հայրենիքը հանդիսանում է Անգլիան որտեղ այդ միութիւնները ահագին ոյժ ձեռք բերին: Անգլիական բանւորական միութիւնները կամ տրեդ-ունիօնները բարդ տիպի միութիւններ են, որ պրօֆէսիօնալ շահերի հետ միաժամանակ ծառայում են ամենալայն կերպով փոխադարձ օգնութեան գործին: Սկիզբ են առել XVIII-րդ դարում, բայց առ անձնա-

պէս զարգանում են 1825 թ. յետոյ երբ միութիւններ կազմելու ազատութիւն է տրուում: 1899 թ. Անգլիայում կար 1292 տրէդ-ունիոն՝ բազմաթիւ բաժանմունքներով և աւելի քան 1,800 հազար անդամներով: Տրէդ-ունիոնների դրամական միջոցները չափազանց մեծ են: 100 ամենախոշոր տրէդ-ունիոններն ունէին 1899 թ. 32 միլիոն ուլերի դրամագլուխ: Նոյն տարին նոյն տրէդ-ունիոնները 18 և կէս միլիոն ուլերի մուտք և 12 և կէս միլիոն ուլերի ծախք ունեցան: Անգլիական տրէդ-ունիոններն օրինակ ծառայեցին միւս երկրների բանւորական միութիւններին: Ամերիկայի և Աւստրալիայի Բանւորական միութիւնները գրեթէ չեն տարբերուում անգլիական տրէդ-ունիոններից: Գերմանիայի բանւորական միութիւնների տւանձնայատկութիւնն այն է, որ սերտ կապ ունեն քաղաքական շարժումների հետ: Գերմանիայում առաջին տեղը բռնում են սօցիալ-դէմօկրատական բանւորական միութիւնները, որոնց անդամների թիւը 1895 թ. 259 հազարից չէր անցնում, իսկ 1906-ին հասաւ 1,200 հազարին: Այդ միութիւնների տարեկան եկամուտը 10 միլիոն ուլերի էր, իսկ ծախքը 9 միլ. ո. Բացի սօցիալ-դէմօկրատական միութիւնները, Գերմանիայում գոյութիւն ունեն նաև Հիքլ-Դոնկերեան բանւորական միութիւնները որոնք կողմնակից են կուրի խաղաղ միջոցների և Քրիստոնեական սօցիալիստական միութիւնները, բայց դրանք իրանցից մեծ ոյժ չեն ներկայացնում: Հիքլ-Դոնկերեան միութիւններն ունեն 100 հազ. անդամ. Քրիստոնէական սօցիալիստական միութիւնները՝ 200 հազար անդամ: Ֆրանսիայում 1890 թ. կային 1006 բանւորական միութիւններ 139 հազ. անդամներով: 1897 թ. Ֆրանսիական միութիւնների թիւը հասաւ 2,316-ի՝ 430 հազ. անդամներով, 1901-ին՝

3,680-ի, 614 հազ. անդամներով: Ռուսաստանում բանւորական միութիւնները գոյութիւն ունէին իբրև անլիգալ կազմակերպութիւններ և միայն 1904—1905 թ. թ. սկսեցին լիգալ ձև ընդունել: Մինչ այդ գոյութիւն ունէին զուբատովիան միութիւնները (Տես «Զուբատովցիևա»): 1905 թ. ազատութիւնների հետ յայտարարեց նաև բանւորական միութիւնների ազատութիւնը, սակայն 1906 թ. մարտի 4-ին նոր օրէնքով կրկին միութիւններ կազմելու իրաւունքը սահմանափակեց: Միութիւններ կարող են կազմել միայն ադմինիստրացիայի թոյլատրութեամբ, որին վերապահւած է նաև միութիւնների փակումը ամեն ժամանակ: Միութիւնների անդամ կարող են դառնալ արդիւնազոր-ծութեան միւլնոյն ճիւղի բանւորները: Ամեն միութիւն պէտք է ունենայ իր կանոնադրութիւնը, պատշաճա-որ իշխանութեան հաստատութեամբ: Զի թոյլարւում նաև մեծ միութիւններ կազմելը: (Տես «Ապահովագրութիւն», «Գործադու», «Բոյկոտ», «Սօցիալիզմ»):

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԻԻՆ— (Տես «Գործարանային օրենսդրութիւն»):

ԲԱՇԻԲՕԶՈՒԿ—Այդպէս է կոչւում տաճկական անկանոն զօր-քը, որը յայտնի է իր վայրագութեամբ:

ԲԱՊՏԻՍՏՆԵՐ—Կոչւում են քրիստոնէական այն ազանդի հետևողները, որը ժխտում է երկխաների մկրտութիւնը և ընդունում է հասակաւորների մկրտութիւնը: Բապտիզմն ունի զանազան ճիւղաւորութիւններ: Այս աղանդը ծագել է XVII-րդ դարում: Անդլիայում կան մօտ 300 հազար և ամերիկայում մօտ 5 միլիոն բապտիստներ:

ԲԱՍ—Տղամարդու կամ երաժշտական գործիքի ամենացածր ձայնը:

ԲԱՍԿԱԿՆԵՐ—Այդպէս էին կոչւում այն պաշտօնեաները,

որոնք մօնղոլների տիրապետութեան ժամանակ ռուս ժողովրդից հարկ էին հաւաքում և հսկում էին ռուս կնեազնների (իշխանների) վրայ, որպէսզի սրանք հաւատարմութիւնից դուրս չգան:

ԲԱՍՏԻԼԻԱ—1369—83 թ. թ. Փարիզում հիմնւած մի ամբողջ, ուր յետոյ սկսեցին բանտարկել քաղաքական յարցերու որոշումներին: 1789 թ. ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ ապստամբւած ժողովուրդը յուլիսի 14-ին հիմնայառակ քանդեց այդ ամբողջը:

ԲԱՏԱԼԻՕՆ—Հազար հոգուց կազմւած զօրամաս, որ բաժանուում է չորս «ոտայի» (վաշտի):

ԲԱՏԱՐԷՅ—1) մի քանի թնդանօթներ, որոնք գործում են միաժամանակ: 2) Բատարէյ է կոչուում նաև թնդանօթների համար պատրաստւած ամբուլթիւնը:

ԲԱՏՐԱԿ—Իրդատ: Երկրագործութեան մէջ օրավարձով աշխատող մշակ: 1851 թ. Ռուսաստանում կար 720 հաւ բատրակ, իսկ 1897 թ. դրանց թիւը հասաւ 2 և կէ միլիոնի: (Տե՛ս «Բանւորներ երկրագործական»):

ԲԱՏԻՍ—Թղթից կամ վուշից պատրաստած նուրբ գործւածք:

ԲԱՐԲԱՐՈՍ—Հին յոյները բարբարոս էին անւանում բոլոր օտարերկրացիներին: Այժմ բարբարոս նշանակում է կոպիտ, վայրենի, խիստ, դաժան:

ԲԱՐՆՈՂԻՄՈՍԵԱՆ ԳԻՇԵՐ—կոչուում է 1572 թ. օգոստոսի 10-ի 24-ի գիշերը երբ Փարիզի կաթողիկոսները անակնկալ կերպով յարձակեցին բողոքականների (հուգենօտների) վրայ և մեծ ջարդ առաջ բերին:

ԲԱՐԻՏՕՆ—Տղամարդու ձայն, որ բանում է տէնօրի և բասի միջին տեղը:

ԲԱՐՐԻԿԱԴ—Պատնէշ, որ շինուում է փողոցում կամ որևէ անցքի վրայ պատահական առարկաներից—կարասին-

- րից, արկղներից, սայլերից և քարերից՝ պաշտպանութեան համար: Բարրիկադները գործածուում են սովորաբար ժողովրդական ապստամբութիւնների ժամանակ:
- ԲԱՐՕՄԵՏՐ**—Ծանրաչափ: Գործիք, որ ցոյց է տալիս մըթնոլորտի ճնշման չափը, եղանակի փոփոխութիւնները և տեղի բարձրութիւնը ծովի մակերևոյթից:
- ԲԱՐՕՆ**—Ազնւական տիտղոս, որ ցածր է իշխանութեան (կնեազ) և կոմսութեան (գրաֆ) տիտղոսներից, բայց բարձր է սովորական ազնւականներից:
- ԲԱՐՕՍԿՕՊ**—Կշիւ, որ ցոյց է տալիս, թէ մարմինը օդի մէջ իր ծանրութիւնից ո՞րքան է կորցնում:
- ԲԱՅԱՌԻԿ ԴՐՈՒԹԻՒՆ**—Տես «աղմինիստրամի» դատաստան» և «պատերազմական դրուքիւն»:
- ԲԱՔՈՍ**—կամ Վակիս, գինու շաստւածը: Ըստ հին աւանդութեան, Բաքոսն է սովորեցրել մարդոց գինեգործութիւնը: Հին ժամանակ Բաքոսի պատւին աղմկալից խնճոյքներ էին սարքում, ուր սանձարձակօրէն նւիրուում էին անբարոյական գործողութիւնների. այդպիսի խնճոյքները կոչւում էին «վակիսանալիա»:
- ԲԱՕԲԱԲ**—Ծառ, որը հասնում է 5—6 հազար տարեկան հասակին և որի հաստութիւնը լինում է 10—12 արշին: Բուսնում է Աֆրիկայում: Պտուղը և տերևները գործածուում են իրրև ուտելիք:
- ԲԵԴՈՒԻՆ**—Տես «Ֆելլահներ»:
- ԲԵԼԼԵՏՐԻՍՏԻԿԱ**—Գեղարևեստական արձակ գրականութիւն:
- ԲԵՆԵՅԻՍ**—Թատրոնական ներկայացում, որի դրամական արդիւնքը յատկացւում է դերասանին կամ թատրոնական գործիչին, որն այդ դէպքում կոչւում է բենեֆիցիանտ:
- ԲԵՆԵՅԻՑԻԱՆՏ**—Տես «Բենեֆիտ»:

ԲԵՆԶԻՆ—Մաքրւած, զտած նաւթ, որ գործածուած է թէ իբրև վառելիք և թէ իբրև կտորեղէնից կեղտ հանելու միջոց:

ԲԵՆՈՒԱՐ—Կոչուում են թատրոնի այն օթեակները, որոնք բեմի հետ միահաւասար բարձրութիւն ունեն:

ԲԵՏՕՆ—Կրի և քարաւազի խառնուրդ, որ գործածուած է ստորջրեայ կառուցւածքներ ու խողովակներ շինելու:

ԲԵՐԱԹ—Կոչուում է այն թուղթը, որով սուլթանը որևէ մէկին յատուկ իրաւունքներ ու արտօնութիւններ է շնորհում:

ԲԵՐԴԱՆ—կամ բերդանկա, հրացան, որ 1868 թ. շինել է Բերդան անունով մի ամերիկացի:

ԲԷՅ—Տաճկական տիտղոս, որ տրւում է զինուորական և քաղաքական բարձր պաշտօնեաներին: Այդ տիտղոսը ցածր է «փաշա» տիտղոսից և բարձր «էֆէնդիից»:

ԲԵՐՆՇՏԷՆԻԶՄ—կամ Բերնշտէյնականութիւն, (տես Սօցիալիզմ և Ռեվիզիօնիզմ):

ԲԻԲԼԻԱ—Աստուածաշունչ գիրք: Գիրք, որ ըստ քրիստոնէական եկեղեցու՝ Սուրբ Հոգու ներշնչութեամբ է գրւած:

ԲԻԲԼԻՕԳՐԱՖԻԱ—Գրախօսութիւն, գրագրութիւն: Գրքի նկարագրութիւն: Լրագիրների բաժին, որտեղ համառօտ կերպով քննադատում են նոր լոյս տեսած գրքերը:

ԲԻԲԼՕՄԱՆ—Գրամուլ, գրքերով տարւած մարդ:

ԲԻԲԼՕՄԱՆԻԱ—Գրամուլութիւն:

ԲԻԲԼԻՕՖԻԼ—Գրասէր, գիրք սիրող:

ԲԻԳԱՄԻԱ—Երկուկնութիւն:

ԲԻԼԷՏ—Թուղթ, գրութիւն, տոմսակ, վկայական, հաստատութիւն: 1) Քանկայից բիլետը—տրւում է բանկից իբրև փաստաթուղթ, որ ստացողը բանկ է մտցրել որոշ գումար: Իսկ բանկը բաց է թողնում բիլէտներ, որոնք ապահոված են դրամով: 2) Պետական փոխա-

տու բիլետներ—այն թղթաղբամներն են, որոնք մի տեսակ մուրհակ են, տրամաբիլետը գնողներին պետութեան կողմից: 3) Երկարուղային բիլետներ—սրանց ձեռք բերողն իրաւունք է ստանում երկաթուղով ճանապարհորդելու: 4) Վիճակախաղի բիլետներ—որոնց գրանոցը վիճակախաղից կարող է որևէ իր կամ որոշ գրամագլուխ ստանալ: 5) Առետրական բիլետներ—որոնցով առետուր անելու իրաւունք է ձեռք բերում: Բիլլ, —կոչւում է նոր օրինագիծը, որ առաջարկւում է Անգլիական պարլամենտին:

ԲիլլիՄն—Հազար միլիոն կամ միլիարդ: Գերմանացի գիտնականները բիլլիոն անւանւում են միլիոն միլիոնը: ԲիլնֆԱՇԻ—Տաճկական զօրքի հազարապետ (բատալիոնի հրամանատար):

ԲիլՆՕԿԼ—Հեռադիտակ, երկու զուգահեռական դիտակներից կազմւած գործիք, որի միջոցով կարելի է տեսնել հեռաւոր առարկաները:

ԲիբլՍ.—Բօրսա: Գործածւում է տարբեր նշանակութեամբ: 1) Առետրականների հաւաքումը, որի ժամանակ զանազան առետրական համաձայնութիւններ են կայացնում: 2) Բիրթայի շինութիւնը: 3) Կատարւած համաձայնութիւնները: 4) Այն ժամանակը, օրը և ժամերը, երբ նշանակւած են լինում բիրթայի գործողութիւնները: Գիտական մտքով «բիրթա» նշանակում է վաճառականների և առետուրի հետ որևէ կապ ունեցող մարդոց (մակլէրների) պարբերաբար կրկնող (սովորաբար ամեն օր) հաւաքումները՝ առետրական համաձայնութիւններ կայացնելու, առանց ապրանքը նախօրօք տեսնելու և դրամի առանց անմիջական հատուցման: Բիրթան մի առանձնայատուկ շուկայ է, որտեղ համաձայնութիւն են կայացնում որոշ քանակի և որակի ապ-

րանքների վերաբերմամբ: Գնողն ապրանքն առնում է առանց տեսնելու, իսկ վաճառողը ոչ միայն տեսած չի լինում իր ապրանքը, այլև իր տրամադրութեան տակ չի ունենում նրան: Ծախում և առնում են օրինակ՝ 1000 փութ ցորեն, 100 տակառ շաքար, 100 բանկային տոմսակ, և այլն, և այլն: Ծատ յաճախ ոչ ապրանք գնողն է ներկայ լինում և ոչ վաճառողը, այլ նրանց փոխարէն գործում են միջնորդները—նրանց ներկայացուցիչները: (Տես Աշխատանքի Քիրժա):

ՔԻՕԳՐԱՖ—Կենսագրող, կենսագրութիւն կազմող:

ՔԻՕԳՐԱՖԻԱ—Կենսագրութիւն:

ՔԻՕԼՕԳ—Բիօլօգիական հարցերի ուսումնասիրող: (Տ:ս Բլո-լօգիա):

ՔԻՕԼՕԳԻԱ—Այս բառը կազմած է Բիօս և Լօգօս բառերից և նշանակում է՝ գիտութիւն կեանքի մասին: Բիօլօգիան գիտութիւն է, որն զբաղւում է օրգանական կեանքի ընդհանուր օրէնքների ուսումնասիրութեամբ: Բիօլօգիայի մէջ են մտնում բուսաբանութիւնը, կենդանաբանութիւնը, մարդակազմութիւնը, Ֆիզիօլօգիան և բոլոր այն գիտութիւնները, որոնց ուսումնասիրութեան նիւթը կազմում է բոյսերի ու կենդանիների կեանքը:

ՔԻՖՇՏԷՔՍ—Քակելյով փափկացրած և տապակած միս:

ՔԻԻԼԼՏԷՆ—1) Պարբերական տեղեկութիւններ, որ տալիս է կառավարութիւնը պատերազմի կամ այլ պետական նշանակութիւն ունեցող գործի ընթացքի մասին: 2) Պարբերական հաշւետւութիւն՝ զանազան ընկերութիւնների, կազմակերպութիւնների և մարմինների:

ՔԻԻՋԷ—Քսակ: Բիւջէ է կոչւում տնտեսութեան ելքի և մուտքի նախահաշիւը, որ կազմւում է որոշ ժամանակամիջոցի, սովորաբար մէկ տարւայ համար: Պետական

Բիւջէն, ընդգրկելով պետութեան ամբողջ տնտեսութիւնը, իր մէջ է բովանդակում պետական կառավարութեան բոլոր ատեաններէ ֆինանսական միջոցներէ եւ մուտքը: Բիւջէի մէջ որոշուած են՝ ինչպէս պետական միջոցներէց բաւարարութիւն պահանջող բոլոր կարիքները, այդ նպատակի համար անհրաժեշտ միջոցները, այնպէս և այն աղբիւրները, որտեղից պէտք է ստացւին ծախսերի համար պահանջուող դրամները: Ամեն պետութեան մէջ պետական բիւջէն հաստատուած է օրէնսդրական կարգով: Ռուսաստանում՝ մինչև Պետական Դումայի հաստատումը բիւջէն քննուած էր Պետական Խորհուրդը և հաստատուած թագաւոր կայսրը, իսկ 1905 թ. հոկտ. 17-ից յետոյ այդ իրաւունքը մասամբ անցաւ Պետական Դումային: Սահմանադրական և հանրապետական երկրներում բիւջէի հաստատման իրաւունքը՝ որ կոչուած է բիւջետային իրաւունք, ամբողջովին գտնուած է ժողովրդի ձեռքին, ի գէմս ժողովրդական ներկայացուցչութեան (պարլամենտի): (Տես Կառավարութեան ձեռք, Պարլամենտ):

ԲԻԻՁԷՏԱՅԻՆ ԻՐԱԻՈՒՆՔ—Տես Բիւջէ:

ԲԻԻՁԷՏԱՅԻՆ ՌԷՃԷՐԷՆԴՈՒՄ—Տես Ռեֆերենդում:

ԲԻԻՐԳԷՐ—կոչուած է գերմանական քաղաքացին: Բիւրգեր նշանակում է նաև՝ ապահոված դասակարգին պատկանող մարդ: Բուրժուա:

ԲԻԻՐՕ—1) Սեղան, 2) զանազան հաստատութիւնների ու հիմնարկութիւնների գրասենեակը կարող է կոչուել բիւրօ: Կանցլիար: 3) Մարմին, որի գործունէութեան նպատակն է նոյն ասպարիզում աշխատող մարմինների գործունէութեան միացումը:

ԲԻԻՐՕԿՐԱՏԻԱ—Բառացի կերպով նշանակում է «սեղանների տիրապետութիւն»: Բիւրօն մի հաստատութիւն է,

որ կազմւած է մի շարք՝ աստիճանական կարգով իրար
ենթարկւած անձերից, որոնց գլուխ կանգնած է մէկը,
իր ձեռքին ունենալով լիազօր իշխանութիւն և վճա-
կան ձայն, բոլոր գլխաւոր գործերում: Բիւրօկրատիա՝
աստիճանական կարգով իրարից կախւած պրօֆեսսիօ
նալ չինովսիկների իշխանութիւնն է:

«Բիւրօկրատ» խօսքը հոմանիշ չէ «չինովսիկ»-ին
պաշտօնեային: Միայն այն չինովսիկն է բիւրօկրատ
որն իր համոզմունքներով ու նախապաշարմունքներով
իր հայեացքներով ու գործողութիւններով պատկանում
է բիւրօկրատիային, իբրև մի որոշ հառարակական դա-
սակարգի: Բիւրօկրատիայի ծագումը սերտ կերպով
կապւած է անսահման միապետական կարգերի հետ:
Անսահման միապետութիւնը առաջին փորձն է՝ ստեղ-
ծելու բոլոր դասակարգւորի վրայ գեշիշխող կառավա-
րութիւն: Դրա համար էլ միապետութիւնն աշխատում
է ստեղծել մի նոր դասակարգ որի անդամները ներ-
կայանան իբրև պետական պրօֆեսսիօնալ պաշտօնեա
ներ: Բիւրօկրատիայի բնորոշ յատկանիշներն են այն
որ 1) բիւրօկրատիան որոշ պրօֆեսսիա է, արհեստ է
որի պատճառով յաճախ փոխարկում է պեղանտիցմի
2) Բիւրօկրատիան հասարակութիւնից կտրւած է,
3) Բիւրօկրատիայի յատկանիշն է օլիգարխիզմը. բիւ-
րօկրատիան աշխատում է սահմանափակել ինքն իր
մէջ, ապրել իր նեղ շրջանում, իր շահերով, և դառնալ
տիրող ու հրամայող մի դասակարգ, որից առաջ է
գալիս նրա մէջ ինքնահաւանութիւն և արհամարհանք
դէպի շրջապատը: Քննադատութիւնը բիւրօկրատիայի
ամենակատաղի թշնամին է, ուստի և դադտնապա-
հութիւնը նրա գլխաւոր գիծն է: Հասարակական
ինքնագործունէութիւնը, խօսքի, մտքի ազատութիւնը

—այդ բոլորը քանդում են բիւրօկրատիայի հիմքը: Բիւրօկրատիզմը կարող է գոյութիւն ունենալ թէ միապետութեան և թէ հասարակապետութեան ժամանակ:

ԲԼԱՆԿԻՉՄ—Ներկայումս այդպէս է կոչուում ամեն ձգտում՝ աշխատաւոր մասսաների օգտին յեղաշրջում առաջ բերելու ոչ թէ այդ մասսաների գիտակցական կալիքի և ջանքերով, այլ բացառապէս դաւադրական կազմակերպութեան սակաւաթիւ անդամների ոյժերով: Բլանկիզմ բառն սկիզբ է առել Ֆրանսիայի յեղափոխական-կոմմունիստ Բլանկի-ի անունից որը 1848 թ. Փարիզում մի ընկերութիւն հիմնեց կառավարութիւնը տապալելու և գոյութիւն ունեցող կարգերը կոմմունիստականի վերածելու նպատակով: Բլանկի-ի փորձերն անյաջող անցան և նա ինքը տասը տարւայ տաժանակիր աշխատանքի դատապարտեց:

ԲԼԱՆԿԻՍ—Բլանկիզմի կողմնակից: (Տես Բլանկիզմ):

ԲԼԱՆ-ԼԻԻՒ—Տես Սօցիալիզմ:

ԲԼՕԿ—Ժամանակաւոր համաձայնութիւն, որ կայացնում են քաղաքական կուսակցութիւնները որոշ նպատակով:

ԲՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ բնական կամ ՆԱՏՈՒՐԱԼ կոչուում է տնտեսութեան այն ձևը, որի ժամանակ ամեն ընտանիք իրան հարկաւոր բոլոր մթերքները պատրաստում է ինքն, առանց իր արտադրած մթերքներն ուրիշների հետ փոխանակելու: Ընտանիքն ինքն է պատրաստում իր անդամների հազուատները, ուտելիքն ստանում է սեփական հողերից, իր բնակարանը շինում է ինքը: Բնական տնտեսութեանը յաջորդում է մթերքների փոխանակութեան շրջանը:

ԲՈՂՈՒՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ—Տես Պրօտեստանտիզմ:

ԲՈՒԴԴԱ—Բուդդիզմի հիմնադիրը, որ ծնւել է 560 թ. Ք. Ա.

- և մեռել է 480 թ. Ք. Ա. Կապիլաւաստում որը գտնուում է Հանգէս գետի հովտում: (Տես Քուղղիզմ):
- ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ**—Տես Քուղղիզմ:
- ԲՈՒԴԴԻՍ**—Բուդդիզմի հետևորդ: (Տես Քուղղիզմ):
- ԲՈՒԴԴԻՉՄ**—Հնդկաստանում ծագած կրօն, որն ընդունում է չորս ճշմարտութիւն, ա) մարդու գոյութիւնը մի խարուսիկ բան է, բ) տանջանքը գոյութիւնից անբաժան է, գ) տանջանքի վերացումը գոյութիւն ունենալու ցանկութեան վերացումն է (Նիրվանա), դ) մարդը տանջանքներից ազատուում է բարոյական կեանքով և իր բոլոր կրքերի ու ախտերի ճնշումով: Բոլոր օրէնքները, զոհարելութիւնները և կաստաների բաժանումը Բուդդիզմը բացասում է: Աղքատներն ու անկեանքները փրկութեանն ամենից մօտ են: Բուդդիզմը, որ ուղղուած էր բրամանիզմի դէմ՝ տարածւեց արագութեամբ: Սկզբնական բուդդիզմը ասուած չէր ընդունում, բայց յետագայում հետևորդներն աստիճանաբար ընդունեցին դեերի, ոգիների, աստուածների գոյութիւնը և վերջապէս իրան՝ Բուդդային աստուածացրին: Բուդդիզմը III-րդ դարում Ք. ա. դարձաւ պետական կրօն ամբողջ Հնդկաստանում, որտեղից տարածւեց Յէյլօն, Աւղանիստան, Թուրքեստան, Հնդո-Չինաստան, Չինաստան, Եսպօնիա, Տիբետ, Մօնղօլիա: Հնդո-Չինաստանում և Չինաստանում ազգարնակութեան երկու կրորդ մասը բուդդիստներ են. Բոլոր բուդդիստների թիւը հասնում է 400 միլիոնի (Տես Քուղղա, Բրամանիզմ),
- ԲՈՒԼԼԱ**—կոչւում է Հոտի պապի կոնզակը:
- ԲՈՒԼԻՈՆ**—Մասջուր:
- ԲՈՒԿԻՆԻՍ**—Հին դրքեր առնող և վաճառող:

ԲՈՒՂԴԻԽԱՆ—Չինաստանի կայսեր մօնղօլական տիրոջսը, որ նշանակում է «Մեծ թագաւոր».

ԲՈՒՆԴ—Ռուսաց սօց.-դեմ. բանւորական կուսակցութեան մի ճիւղաւորութիւնը, որ միացնում է հրէական պրօլետարիատը և դեկաւարում է նրա կոիւր՝ բանւոր դասակարգի սօցիալական ու քաղաքական ազատութեան համար: Մինչև 1903 թ. Բունդը փաստօրէն կազմում էր Ռ. Ս. Դ. ք. կուսակցութեան մասը, կուսակցութեան երկրորդ համագումարում (1903 թ. աշնանը) Բունդի ներկայացուցիչները պնդում էին՝ թէ կուսակցութիւնը պէտք է Ֆեդերատիւ կազմակերպութիւն ունենայ և այդ Ֆեդերացիայի մէջ պէտք է մտնի Բունդը աւտօնօմ կերպով: Համագումարը չհամաձայնեց Բունդի առաջարկին, պատճառաբանելով, որ կազմակերպութեան Ֆեդերատիւ ձևը կը թուլացնէ կուսակցութիւնը և կը փնասէ բանւոր դասակարգի կուր յաջողութեանը՝ զանազան ազգերի բանւորների մէջ թշնամութիւն մտցընելով: Դրանից յետոյ Բունդը Ռ. Ս. Դ. ք. կուսակցութիւնից ձեականօրէն բաժանւում է: Բունդի գործունէութիւնը կենտրոնացած է գլխաւորապէս Ռուսաստանի արևմտեան նահանգներում որտեղ ազգաբնակչութեան գերակշռող մասը հրէաներ են:

ԲՈՒՆԴԻՍ—Բունդի անդամ կամ համակրող: (Տես Բունդ):

ԲՈՒՆԹ—Ապստամբութիւն, ըմբոստութիւն, խառնակութիւն:

ԲՈՒՏԵՐԲՐՕՏ—Կոչում է հացի փոքր կտորը՝ պանրով, իւղով, մսով և այլն: Բրթուծ:

ԲՈՒՐԳՕՄԻՍՏ—Քաղաքագլուխ:

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱ—Ամեն ժողովուրդ բաժանւում է երկու գլխաւոր-դասակարգի. 1) մեծամասնութիւնը ապրում է իր ձեռքի աշխատանքով որի պատճառով էլ կոչւում

է աշխատաւոր դասակարգ. 2) փոքրամասնութիւնը՝ որ ֆսեփականութիւնն են կազմում գործարանները, հողը, մեքենաները, տները: Սեփականութեան իրաւունքից օգուելով, այս դասակարգը՝ որ կոչուում է բուրժուազիա, բանւորի աշխատանքի մի մասը միայն նրան վճարելով՝ մեծ մասը իրան է պահում և նրանով անհոգ ու ճոխ կեանք վարում: Բացի այդ, բուրժուազիան, իբրև քաղաքական գործոն, միշտ աշխատում է իր ձեռքին պահել երկրի քաղաքական իշխանութիւնը իբրև արտօնեալ դասակարգ, ուստի՝ բնականաբար նաանհաշտ թշնամի է հանդիսանում աշխատաւոր դասակարգի ճշմարիտ-դեմօկրատական ձգտումներին: Բուրժուազիան լինում է խոշոր (կապիտալիստներ, գործարանատէրեր, և այլն) և մանր (մանր առևտրականներ, խանութպաններ և այլն): Մանր բուրժուազիան աստիճանաբար ոչնչանում է, իբ տեղը զիջելով խոշոր բուրժուազիային: Բուրժուազիան յառաջադէմ տարր էր այն ժամանակ, երբ տիրող դասակարգը անզւականութիւնն էր: Այժմ նա ինքն է դարձել յետադէմ տարր, իբ տեղը զիջելով աշխատաւոր դասակարգին:

ԲՈՒՐՇՈՒԱ—Բուրժուազիային պատկանող մարդ: Չրիակեր: (Տես Բուրժուազիա):

ԲՈՒՐՇ—Գերմանական ուսանող՝ որ անդամ է համալսարանական որևէ կազմակերպութեան:

ԲՈՒՖ—Կօմիքական դերեր կատարող երգիչ:

ԲՈՒՖ-ԹԱՏՐՈՆ—Չաւեշտական, թեթև թատրոն:

ԲՈՒՖԵՐ—Գործիք, որը թուլացնում է հարւածի ոյժը: Գործածւում է երկաթուղու, նաւերի և այլն վրա, իբրբ դիպչելու դէպքում հարւածի ոյժը կտրեւիու համար:

ԲՐԱԿՈՆԻԷՐ—Ուրիշի անտառներում գաղտնի որսորդութիւն անող մարդ:

ՔՐԱՀՄԱ—Տես Բրամա:

ՔՐԱՄԱ—կամ «Բրահմա», աես Բրամանիզմ:

ՔՐԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ—Տես Բրամանիզմ:

ՔՐԱՄԱՆԻԶՄ—կամ բրահմանիզմ, բրամականութիւն. հընդ-
կական կրօն, որի կրողներն ու պահպանողները բրահ-
մաներն են: Բրամանիզմը կրօնական սիստեմ չէ, այլ
շատ հաւատալիքների միացումն է մի ընդհանուր գըր-
քի, վեդայի մէջ: Այս բազմաստուածեան կրօնի բնորոշ
գծերիցն է ժողովրդի խիստ բաժանումը զանազան
կաստաների և սրա հետևանքը՝ բրահմանների գերիշ-
խանութիւնը: Բարձրագոյն աստուածը Բրահման է որն
աշխարհի հոգին է և որն իրանից արտադրել է աշ-
խարհը: Ընդունում է հոգեփոխութիւնը: Մարդկային
ցեղը որքան շատ է զարգանում, այնքան հեռանում է
Բրահմայից, հետևապէս և կորցնում է սրբութիւնը, որը
կրկին ձեռք բերելու համար պէտք է դառնալ Բրահ-
մային: Վերջինիցս աւելի կամ պակաս հեռու լինելը
մարդոց բաժանում է զանազան աստիճանների, կաս-
տաների, որոնցից ամեն մէկն առաջ է եկել Բրահմա-
յի մարմնի զանազան մասերից. բրահմաները՝ զլխից,
ըշատրիները (զինւորները՝) ձեռքերից, վայիսները (ա-
ռևտրականները, երկրագործները՝) ազդրից, սուղրա-
ները (արհեստաւորները, բանւորները)՝ ոտքերից: Բրահ-
մանիզմը ժամանակի ընթացքում ընդունեց երեք աս-
տուածութիւն. ա) Բրաման—ստեղծագործողը, բ) Վիշ-
նան—պահպանողը և գ) Սիվան—քանդողը: Բրամա-
նիզմը տարածւած է Արևելեան Հնդկաստանում: Բրա-
մանիզմի դէմ դուրս եկաւ մի նոր կրօն, Բուդդիզմը:
(Տես Բուդդիզմը):

ՔՐԱՆԴԷՐ—Փայտէ նաւ, որ լցրած է վառօդով կամ ուրիշ

պայթուցիկ նիւթերով կամ քարով, գործածուում է թըշ-
նամու նաւերը ոչնչացնելու համար:

ԲՐԱՆԴՄԷՅՍՏԸՐ—Հրդէհաշէջ խմբի հրամանատար:

ԲՐԱՆԴ-ՄԱՅՕՐ—Հրդէհաշէջ խմբի գլխաւոր հրամանատար:

ԲՐԱԻՍՍԻՄՕ—«Բրաւօ»-ի ամենաբարձր աստիճանը (անս
Բրաւօ):

ԲՐԱԻՕ—Հիանալի, գերազանց:

ԲՐԷՁԷՆՏ—Ձուր շանցկացնող ծածկոց, որ շինւած է լինում
զանազան նիւթերից:

ԲՐԵՂՕԿ—Չարգարանք, որ կախում են ժամացոյցի շղթայից:

ԲՐԷՎԷ—Կոչուում է Հոսմի Պապի գրութիւնը, որ ուզուած է
լինում թագաւորներին:

ԲՐԻԳԱԴԱ—1) Չօրախումբ, որ կազմւած է 2 պօլկից, 4
առանձին բատալիոնից, 6 բատարէյից: 2) Երկաթու-
ղու կամ տրամվայի բրիգադա նշանակուում է «կազմ»,
խումբ, օր. «կօնդուկտօրների բրիգադա»—կօնդուկտօր-
ների կազմ:

ԲՐԻԵՆՕՅ ՏԻՖ—Տես «Տիֆ»:

ԲՐԻՆԷՏ—Սեահեր և սեահեայ:

ԲՐՈՒՏՏՕ—Ապրանքի ծանրութիւնը՝ հետը հաշւած նաև այն
արկղը, տակառը, փաթեթը որոնց մէջ դրուում է ապ-
րանքը ճանապարհ ուղարկելու համար: Նետտօ կոչուում
է միայն ապրանքի ծանրութիւնը, իսկ տարաւ—միայն
փաթեթի, արկղի, տակառի ծանրութիւնը:

ԲՐՕՆՁ—Պղնձի և կալայեկի խառնուրդից կազմւած մետաղ,
որ բազմաթիւ տեսակներ ունի:

ԲՐՕՆՁԷ ԴԱՐ—Կոչուում է նախապատմական քաղաքա-
կըրթութեան երկրորդ շրջանը, երբ զէնքը և առօրեայ
գօրծիքները շինուում էին գլխաւորապէս բրօնզից: Բրօն-
զի դարից առաջ կղել է Բարի դարն, իսկ յետոյ՝ Եր-
կաթի դարը:

ՔՐՕՇԻԻՐ—Գրքոյկ:

ՔՕՄՕՆԴ—Երեսօտկրատ շրջան:

ՔՕՅԿՕՏ—Այս բառը մնացել է 1880 թւից անգլիացի կալւածատէրի կառավ. Ջեմս Բօյկօտից որ սաստիկ ճնշում էր գիւղացիներին և չէր հպատակում իրլանդական Հոգային Համայնքի որոշումներին, որի պատճառով վերջինիս կարգադրութեամբ գիւղացիները հրաժարեցին նրա հողը կապալով վերցնելուց, մշակելուց և առհասարակ նրա կալւածում աշխատելուց կամ որևէ կերպով նըրան օգնելուց: Դրանից յետոյ կալւածատէր Բօյկօտը հեռացաւ իր կալւածներից: Այդ Բօյկօտի անունից «բօյկօտ անել» ներկայումս նշանակում է մարդուն անելանելի դրութեան մէջ դնել, կտրելով նրա հետ ամեն մի յարաբերութիւն—չխօսել, առևտուր չանել, չընկերանալ, չծառայել: Բօյկօտը ներկայումս քաղաքական և տնտեսական կռի գօրեղ միջոց է, որով բանւորներն ու գիւղացիները կուում են գործարանատէրերի, կալւածատէրերի, վաշխառուների և զանազան հիմնարկութիւնների դէմ: Բօյկօտի ձևերից են նաև լիբիլի և կանտրօլի մարկաների գործադրութիւնը: Դրանք յատուկ հարլիկներ են, որ կպցնում են բանւորների պահանջներին բաւարարութիւն տւած ձեռնարկողների ապրանքներին. դա նշան է, որ բանւորները և նրանց համակրողները պէտք է դնեն միայն հարլիկաւոր ապրանքները, իսկ առանց հարլիկի ապրանքները ենթարկւած են բօյկօտի: Բօյկօտի ձեւերից է նաև լինտերրիկտը որ կայանում է նրանում, որ բանւորները հրաժարում են իրանց պահանջները չըկատարող ձեռնարկողների մտ աշխատանքի մտնելուց:

ՔՕՆԱՊԱՐՏԻՍՏՆԵՐ—Ֆրանսիայի այն քաղաքական կուսակցութեան հետևողները, որը պաշտպանում է նա-

պալէոն Բնասպարա կայսեր սերնդի գահական իրա-
ւունքները:

ԲՕՆՆԱ—Փոքր երեխաների դաստիարակչուհի, կրթւած դա-
յեակ:

ԲՕՍՏՕՆ—Թղթաղաղի մի տեսակը:

ԲՕՏԱՆԻԿԱ—Բուսաբանութիւն:

ԲՕՏԱՆԻԿԱԿԱՆ ԱՅԳԻ—Այգի, որը կազմուած և պահուած է
զուտ գիտական նպատակներով: Այդտեղ լինում են
աշխարհի բոլոր տեսակի բոյսերը:

ԲՕՔՍ—Տես «Բօքսէր»

ԲՕՔՍԷՐ—Անգլիայում կոչուած է այն ըմբիշտը, որ բուռնց-
քով է կուում: Բուռնցքամարտը կոչուած է բօքս:

Պ

ԳԱԶ—Մարմին, որը ոչ մի ձև չունի և միշտ ձգտում է
լցնել ամեն մի տարածութիւն՝ եթէ իրան սահման չէ
դրած: Օրինակ, օդը գազ է: Որոշ պայմանների մէջ
բոլոր մարմինները կարող են գազ դառնալ (խիստ
տաքութեան մէջ) և ընդհակառակը, խիստ ճնշման
տակ բոլոր գազերը կարող են հեղուկ դառնալ:

ԳԱԼԵՐԷՅ—Երկար և նեղ միջանցք: Սովորաբար պատկերնե-
րը ցուցահանդէս են դրուած այդ ձևի սենեակնե-
րում, որի պատճառով դորձածական է դարձել «պատ-
կերների գալէրէյ» արտայատութիւնը:

ԳԱՀԱԿԱՆ ՆԱՄ—Սահմանադրական երկրներում նոր հրաւիր-
ւած պարլամենտը բաց անելիս, կառավարութիւնը իր
յետագայ քաղաքականութիւնը պետական բոլոր գոր-
ծերում համառօտ կերպով պարզում է գահական ճա-
ռով, որը պատրաստում է առաջին մինիստրը (պրեմի-
երը) թագաւորի անունից և կարգում թագաւորը, կամ

նրա յանձնարարութեամբ, կարինետի (Տես «կարինետ» նախագահը: Փահական ճառին պարլամենտը պատասխանում է ուղերձով, որտեղ արտայայտում է իր ընտրողների ցանկութիւններն ու սպասելիքները կառավարութիւնից: (Տես պարլամենտ):

ԳԱՂԹ — Ազգաբնակչութեան մի մասի կամ անհասնիրի գաղթը մի տեղից միւսը բազմաթիւ պատճառներ ու նպատակներ ունի, որոնց համեմատ և գաղթն ստանում է այս կամ այն ձևը. ա) իմիգրացիա — անհատների կամ ընտանիքների ժամանակաւոր կամ մշտական հաստատութիւնը որոշ տեղում: Սուղ ազգաբնակչութիւն ունեցող երկրի տնտեսական զարգացման համար խիստ շարժական է աշխատաւոր տարրի հաստատութիւնը, ինչպէս այդ եղաւ Միացեալ-Նահանգներում՝ բայց յետոյ, երբ երկրի ազգաբնակչութիւնն աճում է, նոր գաղթականների մուտքը դառնում է մի պատիժ տեղացիների համար, մանաւանդ երբ եկտրները լինում են զանազան տեղերից փախած քրէական ոճրագործներ, որոնցից ազատ մնալու համար ամեն երկիր յատուկ օրէնքներ է հրատարակում: Հիւսիսային Աւստրալիայի գաղթականութիւնն ուղղւում է գլխաւորապէս դէպի Հիւսիս. Ամերիկա և Աւստրալիա, իսկ Հարաւային Աւստրալիայի՝ դէպի վերոյիշեալ երկրների հարաւը: Աւստրալիան երկիրներից ամենքից շատ թւով գաղթականներ ընդունում է Ֆրանսիան: բ) էմիգրացիա — գաղթ հայրենի երկրից ընդմիջտ: Այս ձևի գաղթականութեան պատճառը հայրենի երկրի բնակչութեան խտութիւնն է: էմիգրացիոններն (գաղթականներն) ուղղւում են այն երկիրները, որտեղ յոյս ունեն բարելաւելու իրանց տնտեսական դրութիւնը — Հիւս. Ամերիկա և Բրազիլիա, ինչպէս և Աւստրալիա և Հարաւ. Աֆրիկա: Ներկայ պե-

տութիւններն էմիգրացիային — արտագաղթին արգելքները չեն դնում, բայց էմիգրանտներին զանազան կեղեքումներից հեռու պահելու նպատակով գաղթականներ տեղափոխող նաւերի համար որոշ կանոններ են սահմանում: 1898 թ. գերմանական օրէնքը բացի այդ՝ էմիգրանտների վերաբերմամբ հետևում է նաև «դրական» քաղաքականութեան, այսինքն՝ միջոցներ է ձեռք առնում՝ որպէսզի էմիգրանտները պահպանեն իրանց ազգութիւնը և օտար երկրում ևս ծառայեն իրանց հին հայրենիքի շահերին. այդ նպատակը հետապնդելով, Գերմանիան իր գաղթականների հոսանքը դէպ այն երկրներն է ուղղում, որոնց գերմանացիներով բնակեցնելը Գերմանիայի շահերի տեսակէտից օգտակար է համարւում: Էմիգրացիան ամենից մեծ շափերով է կատարւում Իտալիայում, որտեղից տարեկան 150 հազար հոգի են գաղթում: Երկրորդ տեղը բռնում է Մեծ Բրիտանիան, ապա դրանց հետևում են Սպանիան, Փորթուգալիան, Աւստրիան, Գերմանիան: Ֆրանսիան իր բնակչութեան թւի համեմատ վերջին տեղն է բռնում: Ռուսաստանում էմիգրացիան, այսինքն գաղթը դէպի օտար երկրները, կատարւում է միայն արևմտեան նահանգներից, ըստ որում գաղթում են գլխաւորապէս հրէաներն ու լեհացիները: 1899 թ. Ռուսաստանից Միացեալ-Նահանգներն են գաղթել 24,350 հրէայ, 22,462 կաթոլիկ և 13,296 բողոքական: 1900 թ. Ռուսաստանից և Ֆինլանդիայից գաղթել են Ամերիկա 90,787 հոգի: Բացի այդ, Ռուսաստանում խիստ զարգացած է ներսի գաղթը, այսինքն պետութեան մի տեղից միւս տեղը գաղթելը: Գաղթողները գրեթէ բացառապէս գիւղացիներ են: Այս ձևի գաղթը զարգանում է տարէջտարի հոգի պակասութեան պատճառով

և նոր տեղում աւելի ապահով նիւթական կացութիւն ստեղծելու յուսով: Գաղթականական հոսանքն սկզբնորում ներքին Ռուսաստանից ուղղոււմ էր զլիսաւորապէս դէպի Կովկաս, իսկ յետոյ գաղթավայր դարձրին Սիբիրը: Գաղթականների ամենից մեծ տոկոսը տալիս են Կուրսկի, Տամբովի, Վարօնեթի, Պենզայի, Օրլովի, Սարկովի, Պօլտաւայի, Կազանի, Վեատկայի և Պերմի նահանգները: 1859 թւականից լինչև վերջին տարիներս գաղթողների թիւը 2 և կէս միլիոնի հասաւ: Գաղթականութիւնն առանձնապէս աճեց 90-ական թ. թ. Վերջին տարիներս գաղթողների թիւն սկսեց պակասել. 1896 թ. գաղթել էին 186 հազար հողի, 1901 թ. էին 86 հազ. հողի, իսկ 1902 թ. և 1903 թ.՝ մինչև 77 հազ. հողի: Դրա հետ միաժամանակ սկսեց աճել յետ գաղթողների թիւը: 80—90-ական թւականներին յետ դարձողները կազմում էին գաղթողների ընդհանուր թւի 3,6⁰/₀-ը: 1894—1896 թ. թ. 13,8⁰/₀, 1899—1903 թ. թ. 18,8⁰/₀: Սիբիրից յետ դառնալը բացաղբոււմ է այնտեղի հողի պակասութեամբ և գաղթականական գործի անկազմակերպ դրութեամբ:

ԳԱՂՏՆԻ ՖՕՆԴ—Տես Փօնդ:

ԳԱՃԱՃԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻԻՆ—Կոչուում է գիւղացու՝ վորբրիկ հողաբաժնի վրայ կազմակերպած տնտեսութիւնը, որի արդիւնքը հազիւ է բաւականանում տիրոջ կիսաքաղցած, կիսամուրացկան ապրուստի պահանջներին:

ԳԱՍՈՒԴԵՐՍՏՎԵՆՆԻՅ ԿԱՆՏՐՕԼ—Տես Պետական կանտրոյ:

ԳԱՍՏՐՕԼԵՕՐ—Կոչուում է այն դերասանը, որին հրաւիրում են սահմանափակ թւով ներկայացուցներ տալու օտար քաղաքում կամ օտար բեմի վրայ: Գաստրօլեօրի ներկայացուցները կոչուում են Գաստրօլ:

ԳԱՍՏՐՈԼ—Տես Գաստրօլեօր:

- ԳԱՍՏՐՕՆՈՄ**—Նրբաճաշակ, համեղ կերակուրներ ճանաչող և սիրող, խորտկասէր:
- ԳԱՍՏՐՕՆՈՄԻ**—1) կերակուրներ և ուտելիղէններ պատրաստելու և ընտրելու ամենաբարձր հմտութիւն: 2) Սանութ, ուր վաճառում են ընտրովի ուտելիղէններ:
- ԳԱՐԱՆՏԻՍ**—Երաշխաւորութիւն, ապահովութիւն:
- ԳԱՐԳԵՐՅԵ**—1) Մարդու ամբողջ հագուստը: 2) Հագուստի պահարան:
- ԳԱՐՆԻՉՅՆ**—կոչուում է այն զօրքը, որ մնում է բերդում կամ քաղաքում թէ արտաքին թշնամուց պաշտպանելու և թէ ներքին կարգապահութեանը հետևելու Ռերդապահ, քաղաքապահ զօրք:
- ԳԵԱՒՈՒՐ**—Արհամարհական անուն, որ մահմեդականները տալիս են յատկապէս քրիստոնեաներին և առհասարակ՝ ոչ մահմեդականներին: Գեալուր նշանակում է ղուն:
- ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ՌԷՍԼԻՉՄ**—Տես Ռեալիզմ:
- ԳԵՆԵՐԱԼԻՍՍԻՄՈՒՄ**—Զինւորական ամենաբարձր տիտղոս, որ տրուում է հազարգլուս դէպքերում այն զենեքալիններին, որոնք պետութեան ամբողջ զօրքի հրամանատար են նշանակուում: Ռուսաստանում բացի կայսերական ընտանիքի անդամներից, այդ տիտղոսին արժանացել են Սուլթորովը և Մենշիկովը:
- ԳԵՆԵՐԱԼԻՏԵՏ**—Զինւորական բարձր աստիճանաւորների ընդհանուր, հաւաքական անունը:
- ԳԵՆԵՐԱԼ**—Զինւորական բարձր աստիճանաւոր, որ կրում է զերազանցութիւն և բարձր զերազանցութիւն տիտղոսը: Գենեքալն ունի հետևեալ աստիճանները. գեն.-մայոր՝ 4-րդ կլասի (կարգի) չին, գեն.-լէյտէնանտ՝ 3-րդ կլասի չին, գեն.-ատ-կաւալէրիի (կավալէրիայի գենեքալ), գեն.-ատ-ինֆանտէրիի, գեն.-ատ-արտիլէրիի կամ գե-

ներաւ-ինժինէր—2-րդ կլասի չին, գեն.—Ֆէլդմարշալ—
1 կլասի չին (Տես Աստիճանների կարգ):

ԳԵՆԵՐԱԼՆԻՅ ՇՏԱԲ—Ռուսաստանում կոչուում է զինւորա-
կան մինիստրութեան վարչութեան այն մասը, որի ի-
րաւասութեան տակ են գտնուում այն բոլոր գործերը,
որոնք վերաբերում են ցամաքային զօրքերի բնակու-
թեան տեղին, շարժումներին, ռազմական պատրաս-
տութեանը և պատերազմական գործողութիւններին:

ԳԵՐՄԱՆ-ԼԻԲԵՐԱԼՆԵՐ—Տես Լիբերալիզմ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԼԵՐԻԿԱԼՆԵՐ—Տես Կլերիկալիզմ:

ԳԻԼԴԻ—Ռուսաց օրէնքներով վաճառականները բաժանուում
են գիլդիների—աստիճանների՝ ըստ իրանց դրամագլխի,
առևտրական իրաւունքների և վճարած տուրքի: 1863
թ. օրէնքի համաձայն, Ռուսաստանում երկու գիլդի
վաճառականներ կան:

ԳԻՄՆԱԶԻՈՆ—Գիմնազիա, հին յոյներն անւանում էին մար-
մնարզութեան համար շինած հիմնարկութիւնները: Այժմ
գիմնազիա կոչուում են որոշ տիպի միջնակարգ դըպ-
րոցները:

ԳԻՄՆԱՍՏԻԿԱ—Մարմնամարզութիւն:

ԳԻՏԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ—Տես Սօցիալիզմ և Քաղաքացնտե-
սութիւն:

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ—Տես Բանկ:

ԳԻՒՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԻՈՐ ԲԱՆԿ—Տես Բանկ:

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՆԿ—Տես Բանկ:

ԳՈՐԾԱԴՈՒԼ—Կամ ստաչկա, զարաստովկա, բանթոզ: Չես-
նարկողի հետ պայմանաւորւած աշխատանքի խմբական
դադարումն, աշխատանքի աւելի ձեռնտու պայմաններ
ստեղծելու նպատակով: Գործադուլները յայտնի էին
գիւ ևս միջին դարերում, բայց առանձին նշանակու-
թիւն են ստանում XIX-րդ դարում, երբ բանւորական

դասակարգը աճում է և դիտակցութեան դալիս: Մինչև XIX-րդ դարի սկիզբը գործադուլն արգելած էր բոլոր երկրներում: Անգլիայում գործադուլների ազատութիւն է տրւում 1825 թ. Ֆրանսիայում—1864 թ., Բելգիայում—1866 թ., Գերմանիայում և Շվեյցարիայում՝ 1869 թ., Աւստրիայում—1870 թ., Հոլանդիայում—1872 թ., Իտալիայում—1890 թ., Ամերիկայի Միացեալ Նահանգներում—80-ական թւականներին: Գործադուլ անելու իրաւունքից զուրկ են Գերմանիայում՝ գիւղատընտեսական բանւորները, Անգլիայում՝ գազային, ուսաւորութեան, մեքենաների և ջրանցքի վրայ աշխատող բանւորները, Աւստրիայում թէև գոյութիւն ունի գործադուլի ազատութիւնը, բայց գործադուլաւորներին ոստիկանութիւնը կարող է ուղարկել իրանց հայրենիքը, Միացեալ-Նահանգների միջանի տեղերում արգելած է երկաթուղային բանւորների գործադուլը: Անգլիայում 1893—1899 թ. տեղի է ունեցել 6,036 գործադուլ, որոնց մասնակցել են երկու միլիոնից աւելի բանւորներ: Ֆրանսիայում նոյն ժամանակամիջոցում տեղի են ունեցել 3,371 գործադուլ՝ 648 հազ. մասնակիցներով, Գերմանիայում 1893—98 թ.թ. տեղի է ունեցել 2,131 գործադուլ՝ 393 հազար մասնակցողներով: Գործադուլի սովորական պատճառներն են. 1) Աշխատավարձի քչութիւնը (գործադուլների կէսն այդ պատճառովն են եղել) 2) Աշխատաւորական օրի երկարութիւնը, 3) Բանւորական միութիւնների ձնշումը, 4) գործադուլային վարչութեան ղէմ եղած դժգոհութիւնները, 5) Համակրանքի գործադուլներ, որոնք տեղի են ունենում զրկւած ընկերներին պաշտպանելու նպատակով: Գործադուլը կարող է լինել մասնակի, եթէ գործադուլ անողները միայն մէկ ձև-

նարկութեան մէջ աշխատողներն են, խմբական, եթէ գործադուլներին մասնակցում են մի քանի ձեռնարկութիւնների բանւորներ և ընդհանուր, եթէ գործադուլը տարածւում է արդիւնաբերութեան որևէ ճիւղի բարձր գործարաններում կամ արդիւնագործութեան մի քանի ճիւղերի բոլոր գործարաններում: Գործադուլների ազատութիւն տալուց յետոյ, մեծ մասամբ գործադուլները խաղաղ են անցնում, մանաւանդ Անգլիայում: Գործադուլների հետևանքները եղել են—Անգլիայում 1894—1898 թ. թ. տեղի ունեցած գործադուլների 36,44⁰/₀-ը վերջացել են բանւորների օգտին, 35,18⁰/₀-ը՝ ձեռնարկողների օգտին և 26,38⁰/₀-ը՝ փոխադարձ զիջումներով: Ֆրանսիայում նոյն ժամանակամիջոցում տեղի ունեցած գործադուլներից բանւորների օգտին վերջացել են 22⁰/₀-ը, ձեռնարկողների օգտին՝ 46⁰/₀-ը, փոխադարձ զիջումներով՝ 32⁰/₀-ը: Միացեալ-Նահանգներում 1886—1894 թ. թ. բանւորների օգտին վերջացել են գործադուլների 44⁰/₀-ը, ձեռնարկողների օգտին՝ 46⁰/₀-ը, փոխադարձ զիջումներով՝ 10⁰/₀-ը: Գերմանիայում 1890—97 թ. թ. գործադուլների ժամանակ բանւորները 3 և կէս միլ. սուբուց աւելի են ծախսել, իսկ միայն 1904 թ. ծախսել են 3 միլ. ո., Միացեալ-Նահանգներում 1887—94 թ. թ. բանւորները գործադուլի ժամանակ ծախսել են 15 միլիոն ո. և զրկւել են 223 միլիոն ո. աշխատավարձից: Ռուսաստանում 1895—1904 թ. թ. գործարանային ինսպեկցիային ենթարկւած հմնարկութիւնների մէջ եղել են 1,765 գործադուլ որոնց մասնակցել են 471,254 հոգի: Ռուսաստանում գործադուլները տւել են հետևեալ արդիւնքը. բանւորների օգտին վերջացել են գործադուլների 28,2⁰/₀-ը, ձեռնարկողների օգտին՝

45,4⁰/₀-ը, փոխադարձ զիջումներով՝ 21,8⁰/₀-ը, անյայտ հեռանալներով—4,6⁰/₀։ Գործազուլները Ռուսաստանում արգելւած են և մասնակցողների համար սահմանւած են 4—8 ամիս բանտարկութիւն, ըստ որում՝ գործազուլի գրգռողներն աւելի խիստ են պատժուած՝ 8—16 ամսւայ բանտարկութեամբ։ Վերջին ժամանակներս նոր հրահանգ լոյս տեսաւ, որով այդ օրէնքը չէր գործադրուած։ 1905 թ. նոյեմբերի 29-ից արգելեց գործազուլը երկաթուղիների վրայ, պետական հիմնարկութիւնների մէջ, նաւերի, տելեֆօնի և առհասարակ այնպիսի ձեռնարկութիւնների մէջ, որոնց գործունէութեան դադարումը վտանգաւոր է պետութեան կամ հասարակութեան համար։ Յանցաւորները ենթարկուած են 4—16 ամիս բանտարկութեան, իսկ գործազուլի գրգռողները՝ 16—48 ամիս բանտարկութեան։ 1906 թ.ից արգելւած է զիւղատնտեսական բանւորների գործազուլը։

ԳՈՐԾԱԶՈՒԹՅԱՆ ԿԱՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ—Մեր ժամանակի սօցիալ-տնտեսական մասսայական երևոյթ, որը կախւած չլինելով անհատներից, տարերային անհրաժեշտութեամբ բղխում է կապիտալիստական արտադրութեան ժամանակակից պայմաններից (տես Կապիտալիստական արտադրութիւն) աշխատանքի բաժանումը (Տես Աշխատանքի բաժանում). գործն այնքան հեշտացրեց, որ հնարաւոր դարձաւ մեքենայի գործածութիւնը։ Մեքենան ահագին թւով բանւորների աշխատանքն աւելորդ է դարձնում և նրանց անգործ թողնում։ Երբ սկսեցին գործարաններում աշխատել կանայք և մանկահասակները, աշխատազուրկ դարձան հասակաւոր տղամարդիկ։ Արհեստաւորները, չլիմանալով գործարանի մրցութեանը, նոյնպէս գործազուրկ են դառնում կամ ցածր աշխա-

տավարձով մտնելով գործարանը, աշխատանքից զերկուս հեն այնտեղ աշխատող բանւորներին: Կապիտալիստների փոխադարձ մրցութիւնն արագօրէն զարգացնում է ադրիւնագործութիւնը, բայց իրանց արտադրած մթերքներին սպառող չգտնելով, կապիտալիստները փակում են գործարանները կամ կրճատում արգիւնագործութիւնը—որից դարձեալ փողոց են նետւում հազարաւոր բանւորներ: Արգիւնագործական կրիպիսի ժամանակ աշխատազրկութիւնը ժողովրդական աղէտ է դառնում: (Տես Կապիտալիզմ):

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԻՆՍՊԵԿՏՕՐ—Տես Գործարանային օրէնսդրութիւն:

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԱՏԵԱՆՆԵՐ—Տես Գործարանային օրէնսդրութիւն:

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՕՐԷՆՆՄԻՐՈՒԹԻՒՆ—Գործարանային բանւորները, տնտեսապէս ամբողջովին կախւած լինելով գործարանատիրոջից, (տես Փաբրիկա) բնականաբար նրա կողմից խիստ ճնշումների են ենթարկւում, որի արգիւնքը նրանց և գործարանատիրոջ փոխադարձ յարաբերութիւնների թշնամական կերպարանք ստանալը և աւելի ու աւելի սրւելն է: Կառավարութիւնը, ընդհանուր բռնկումների առաջն առնելու և իր երկիրը խաղաղ պահելու համար, միջամտում է գործարանատիրոջ և բանւորների յարաբերութիւններին և գործարանային օրէնսդրութիւն հրատարակում: Վերջնիս նպատակն է՝ պաշտպանել բանւորներին ծայրայիղ շահագործումից, որը քայքայում է բանւորի առողջութիւնը: Գործարանային օրէնսդրութիւնը բանւորական օրէնսդրութեան մի մասն է կազմում, որի նպատակն է բանւոր դասակարգի սօցիալական գրութեան ընդհանուր բարելաւումը: (Տես Սօցիալական քաղաքականութիւն և Սօցիա-

յսկան հարց: Գործարանային օրէնսդրութեան նպատակն է՝ թեթևացնել բանւորի կրած տանջանքներն ու շահագործումը արդիւնագործութեան միջոցին, իսկ բանւորական օրէնսդրութիւնը ձգտում է թեթևացնել աշխատաւոր դասակարգի ընդհանուր վիճակը: Բանւորական օրէնսդրութիւնը սովորաբար կազմւած է լինում հետևեալ կէտերից.— 1) աշխատանքի ժամանակի որոշումը (բանւորական օր), 2) Տօն օրերի հանդատութեան ապահովութիւնը, 3) Կանանց աշխատանքի պաշտպանութիւնը. 4) Երեխաների ուսման ապահովութիւնը. 5) Բանւորների առողջութեան և բարոյականութեան համար փրասակար պայմանների ոչնչացումը. 6) Աշխատանքի ժամանակ բանւորների պաշտպանութիւնը՝ դժբաղդ պատահարներից. 7) Բանւորների առողջութեան և կեանքի ապահովագրութիւն. 8) Բանւորների և տէրերի փոխադարձ յարաբերութեան հնարաւոր կարգաւորումը և բանւորների վարձն ստանալու ապահովութիւնը. 9) Բանւորներին ազատութիւն տալ՝ իրանց շահերը պաշտպանելու (բանւորական միութիւնների և գործադուլի ազատութիւն). 10) Բանւորների ապրուստի ապահովութիւնը գործազրկութեան ժամանակ (ապահովագրութիւն՝ գործազրկութիւնից): Այս օրէնսդրութեան առաջին եօթը կէտերը մտնում են գործարանային օրէնսդրութեան մէջ: Գործարանային ամենակատարեալ օրէնսդրութիւնը գոյութիւն ունի Անգլիայում, ուր առաջին գործարանային օրէնքը ընդունել տեց Ռօբերտ Պիլ Աւագը 1802 թ. Ռուսաստանում գործարանային առաջին օրէնսդրութիւնը մտցրեց 1880 թ. և այնուհետև շարունակ նոր օրէնքներ հրատարակեցին՝ համաձայն քաղաքական ընդհանուր պայմանների: Բանւորների և

գործարանատէրերի փոխադարձ յարաբերութիւնների վրայ հսկելու համար հիմնած է Ֆաբրիկոյիճ (գործարանայիճ) ինօպէկցիա և (ինսպէկտորներ) նահանգական գործարանայիճ ատեաններ:

ԳՈՒԲԵՐՆԱՏՕՐ — Նահանգապետ:

ԳՈՒՎԵՐՆԵՕՐ — Տնային վարժապետ:

ԳՈՒԼԴԷՆ — Արժաթի դրամ — Գերմանիայում և Աւստրիայում = 50 — 90 կոպ.

ԳՎԱՐԴԻԱ — Ընտրեալ զօրարածին, որը միշտ ապրում է մայրաքաղաքներում, թագաւորական ընտանիքին ծառայելու համար — Թէ իբրև պաշտպան, և թէ իբրև շքախումբ: Գվարդիայի ծառայողները միւս զօրքերի հետ համեմատած, մեծ արտօնութիւններ են վայելում:

ԳՎԱՐԴԻԱ ԱԶԳԱՅԻՆ — Գոյութիւն ունէր Ֆրանսիայում 1789 թ. — 1872 թ., կազմւած էր երկրի բնակիչներէց և գործադրում էր միայն ներքին կռիւների ժամանակ: Շատ անգամ ազգային գվարդիան կանգնել է կառավարութեան դէմ և պաշտպանել ժողովրդին:

ԳՐԱԺԴԱՆՍԿԻ ՉԻՆ — Տես Աստիճանների կարգը:

ԳՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳՐԵՐ — Միջազգային դաշնագրեր, որ պաշտպանում են հեղինակի սեփականութեան իրաւունքը (տես Հեղինակի իրաւունքը): 1886 թ. բոլոր եւրոպական պետութիւնները (բացի Ռուսաստանից, Աւստրովենգրիայից, Տօլանդիայից և Հիւսիսային պետութիւններից) Բերլինում դաշնագիր կապեցին, որով որոշեցին գրական իրաւունքի հիմնական կէտերը, մանրամասները թողնելով առանձին պետութիւններին: Թէև Ռուսաստանն էլ յետոյ մի քանի պետութիւնների հետ նոյնանման դաշնագրեր կապեց, բայց առհասարակ այստեղ թոյլ է տրւում թարգմանել և կատարել դրամատիքական և երաժշտական երկերը:

ԳՐԱԿԱՆ ՆԱՏՈՒՐԱԼԱԶՄ—Տես Նատուրալիզմ:

ԳՐԱԿԱՆ ՌԷԱԼԻԶՄ—Տես Ռեալիզմ:

ԳՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ— Հեղինակի իրաւունքը՝ իր արտադրութիւնը (նաև գեղարւեստական ու երաժշտական) տպելու, հրատարակելու, վաճառելու և կտակելու, որ Ռուսաստանում ոյժ ունի միայն 50 տարի հեղինակի մահից յետոյ և այնուհետև երկը դառնում է ընդհանուրի սեփականութիւնը: Գրական սեփականութեան վերաբերեող օրէնքները մտնում են ռուսական Օրէնսդրական Ժողովածուի X-րդ հատորի 1-ին մասի 420-րդ յօդածի յաւելածի մէջ: Գրական սեփականութիւն կարող են կազմել ոչ միայն հեղինակի սեփական արտադրութիւնները, այլ և քաղածքները, կօմմենտարիաները (լրացուցիչ բացատրութիւնները), ժողովրդական երգերի, առակների, հեքիաթների, և այլն ժողովածուները: Ուրիշի հեղինակութեան արտատպութիւնն առանց հեղինակի թոյլտուութեան, մեր օրէնքներով պատժոււմ է 8 ամսւայ բանտարկութեամբ, տպւածի գրաւումով և հեղինակին հասցրած ֆրանսերի հատուցումով: Սեփականութեան իրաւունքի խախտում չի համարոււմ որևէ հեղինակութեան $\frac{1}{3}$ -ից պակասն արտատպելը. նաև՝ քաղածներ և արտատպումներ անելը քրիստոմատիաների և դասագրքերի համար: Առհասարակ՝ մէկ տպագրական թերթից պակաս արւած արտատպութիւնները նոյնպէս մեր օրէնքով սեփականութեան իրաւունքի խախտումն չի համարոււմ: Գրական սեփականութեան իրաւունքը պաշտպանոււմ է միջազգային դաշնագրերով (կօմվենցիաներով): Տես Գրական դաշնագրեր:

ԳՐԱՄ—Ծանրութեան ֆրանսիական չափ=100 սանտիգ

դրամ=1000 միլիգրամ=սուսական 22,505 գօլ=
=0,234375 զօլօտնիկ (մսխալ)=0,00244 ֆունտ:

ԳՐԱՆ.—Ռուսական դեղատան չափ= $1/20$ սկրուպուլ= $1/60$
դրախմ:

ԳՐԱՆԴԻՕԶ — Հսկայական:

ԳՐԱՔՆՆԻՉ — Տես Յենգօր:

ԳՐԱՔՆՆՈՒԹԻԻՆ — Տես Յենգուրա:

ԳՐԱՅ — Տիարոս, որ թագաւորները շնորհում են ազնւա-
կաններին, սրանց յատուկ ծառայութիւնների համար:

ԳՐԱՅՈՒԹԻՒՆ — Այդպէզ են կոչւում շիւս. Ամերիկայի գա-
ւառները:

ԳՐՕՍՍ — Չափ, որ գործածւում է միքանի ապրանքների
վերաբերմամբ — մատիտների, գրիչների և այլն: Հաւա-
սար է 12 դիւժին=144 հատ:

ԳՕՐԴԵԱՆ ՀԱՆԳՈՅՑ — Տես Հանգոյց գորդեան:

Գ

ԴԱԼԱՅ-ԼԱՄԱ.—Բուզգիստների բարձրագոյն հոգևորականը,
որն ինչպէս հաւատում են իր հետևորդները՝ երբէք չի
մեռնում, այլ մահից յետոյ փոխադրւում է ուրիշ մար-
դոց մէջ: Դալայ-Լաման ապրում է Տիբէտում. ներկայ
Դալայ-Լաման մի մանուկ է, որ պահւում է քրմերի
(հոգևորականների) խիստ հսկողութեան տակ:

ԴԱՄՕԿԼԵԱՆ ՍՈՒՐ — Ըստ աւանդութեան՝ Սիրակուզայի
Դիոնիսիոս թագաւորը, տեսնելով թէ ինչպէս իր պալա-
տական Դամոկլը նախանձում է իրան, մի անգամ նը-
րան հասեցրեց իր գահին. Դամոկլը իրան նպատակին
հասած համարեց, բայց երբ գլուխը վեղև բարձրացը-
րեց՝ տեսաւ որ այնտեղ մի բարակ թելի վրայ կախ-
ւած էր մի սուր, որն ամեն բոպէ կարող էր ընկնել իր

գլխին, սարսափած, իսկոյն զահից ցած թուաւ: Այդ ժամանակ Դիոնիսիոսը նրան ասաց—«Եթէ թագաւորի հաճոյքը մեծ է իբրև հրամայողի ու պետի, մեծ է և այն վտանգը, որ ամեն բոպէ կախւած է նրա գլխին»: «Նրա գլխին Դամոկլեան սուր է կախւած», Դամոկլեան սրի պէս նրա գլխին մահն է կախւած» արտայայտութիւնները գործածում են ցոյց տալու, որ մարդը ենթարկւած է անխուսափելի ու մեծ վտանգի:

ԴԱՅՄԻՈՍ—Խոշոր աւատական իշխաններ Եապօնիայում:

ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ—տես Պարլամենտ:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻԻ—Տես Տնտեսական մատերիալիզմ:

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԱՆՅԻԱ—Տես Ինստանցիա:

ԴԱՐՎԻՆԻԶՄ—Անգլիայի Չարլզ Դարվինի գիտական թէօրիան, որը բացատրում է բուսականութեան և կենդանական աշխարհի ծագումը: Կենդանական և բուսական բարձր ու բարդ ձևերը ծագել ու զարգացել են ցածր ու պարզ ձևերից՝ աստիճանական դանդաղ կատարելագործութեամբ: Դարւինն աշխատում է նկարագրել այդ պրոցեսսը, որի գլխաւոր գործոնն է բնական զտումը, ջոկումը (ոչնչանում են ֆլասակարները և աճում օգտակարները), որ արդիւնք է գոյութեան կուրի և ժառանգականութեան:

ԴԵԲԱՏ—Վիճարանութիւն՝ գիտական լուրջ խնդիրների մասին:

ԴԵԲԵՏ—Եկամուտ, բառացի կերպով նշանակում է՝ ինձ պետք է տան: Այդպէս է կոչւում հաշուգրքերում այն երեսը, ուր նշանակւում է մուտքը:

ԴԵԲԻՏՕՐ—Պարտապան:

ԴԵԹԻԻՏ—Որևէ ասպարիզում ցոյց տւած առաջին հասարակական փորձը:

ԴԵԲԻԻՏԱՆՏ—Առաջին անգամ հասարակական ասպարէզ

դուրս եկող մարդ: Գործածուում է գլխաւորապէս բեմական գործիչներէ վերաբերմամբ:

ԴԵԲՕՇ—Անկարգութիւն, կեղտոտութիւն:

ԴԵԲՕՇԻՐ—Փշացած, անբարոյական, անկարգ մարդ:

ԴԵԳԵՆԵՐԱՏ—Այլասեռած մարդ կամ կենդանի: Այլանդակ:

ԴԵԳԵՆԵՐԱՏԻԱ—Այլասեռումն, այլանդակումն:

ԴԵԶԻՆՖԷԿՏԻԱ—Ախտահանութիւն, ֆլասակար գազերի կամ բացիլների ոչնչացումն:

ԴԵԶԻՏԵՐԱՏ—Թերի ֆնացած խնդիր, հարց՝ որը ցանկալի էր լրացնել:

ԴԵԼԵԳԱՏ—1) Պատգամաւոր, ներկայացուցիչ, պատւիրակ, հաւատարմատար: 2) Այն անձը, որի վրայ փոխուում է պարտքը, ուարտատիրոջ համաձայնութեամբ:

ԴԵԼԻԿԱՏԷՍ—Նրբաճաշակ ուտելիք, խորտիկ:

ԴԵԼՏԱ—1) Յունական տառի անուն (Δ). 2) Գետի եռանկիւնածև վերջաւորութիւնը, եռանկիւնածև գետաբերան:

ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐ—Այս անունով գրականութեան և պատմութեան մէջ յայտնի են առաջին ուսւ յեղափոխականները, որ 1825 թ. դեկտ. 14-ին փորձ արին զինւորական ապստամբութեամբ ոչնչացնել ուսական միապետութիւնը և հաստատել սահմանադրական կարգեր: Քաջ զիտենալով, որ միապետութիւնը սկիզբ էր առել և հաստատուել ճորտութեան շնորհիւ, զեկարբիստները իրանց հիմնական պահանջների մէջ դնում էին և ճորտութեան վերացումը: Համարեա բոլոր դե կարբիստները զինւորականներ էին: Օֆիցէրները, որ այն ժամանակ ուս հասարակութեան միակ շատ թէ քիչ լուսաւորւած մասն էին, 1812 թ. ճշմարիտ հայրենասիրական ոգևորութեան մէջ էին: Շուտով, ֆրանսիական կայսր՝ Նապոլէոնին հալածելու ժամանակ,

նրանք մտան Եւրոպա և գեղեցիկ առիթ ունեցան Ռուսաստանի սարսափելի իրականութիւնը համեմատել ֆրանսիական մեծ յեղափոխութեամբ վերանորոգած եւրոպական կեանքի հետ: Հայրենիք վերադառնալով, ինտելիգէնս օֆիցէրները, գլխաւորապէս ազնւականներ, սկսեցին աշխատել անմիջապէս կեանք մտցնել իրանց սովորածը: Հիմնոււմ է «Բարեկեցութեան Միութիւն» (Союзъ Благоустройства) գաղտնի ընկերութիւնը, որի մէջ մտնող ամեն մի անդամ պէտք է աշխատէ՜ր Ռուսաստանի համար: Նրանք պէտք է մտնէին պետական ծառայութեան մէջ և աշխատէին ձեռք բերել ամենաբարձր պաշտօնները, որպէսզի, եթէ կայսրը ժողովրդին ոչ մի իրաւունք չտայ, նրա ժառանգին գոնէ ստիպեն երկրում սահմանադրութիւն մտցնել: Այդ ընկերութեան գլխաւորներն էին պօլկովնիկ Պեստելը, Մուրավիեով չորս եղայրները, որոնցից մէկը պօլկովնիկ էր, երկուսը՝ պօդպօլկովնիկ և մէկը՝ կապիտան: Դրանց հետ էր ծառայութիւնից դուրս եկած պօրուչիկ Ռիլէեվը, պօլկովնիկ իշխան Տրուբէցկոյը, գեներալ Ֆոնվիդինը, պօլկովնիկ Դաւիդովը, գեներալ իշխան Վօլինսկին և շատ ուրիշները: Այդ գաղտնի ընկերութեան մէջ կային ընդամենը երեք գեներալ, 28 պօլկերի և բատալիոնների կօմանդիրներ և 78 օֆիցէր: Կային և ոչ-զինւորականներ — Պետական Խորհրդում ծառայող Նիկօլայ Տուրգենեվը, Իւշնեվսկին, Պուշչինը, իշխան Օգոեվսկի և ուրիշները: Դրանք գիւղերում դպրոցներ էին հիմնում, պաշտպանում էին զրկւածներին, գիւղացիներին և զինւորներին ձեծելու սովորութիւնը վերացնում էին, իրանց կալւածների գիւղացիներին տուրքերից ազատում էին, բայց նրանց գլխաւոր նպատակն էր՝ Ռուսաստանում սահմանադր-

բութիւն մտցնել և զիւղացիներին ճորտութիւնից ազատել: Կառավարութիւնը խիստ հալածանքներ է ըսկըսում այդ խաղաղ ընկերութեան դէմ և 1821 թ. ընկերութիւնը փակոււմ է և սկիզբ են առնում երկու նոր ընկերութիւններ, բայց արդէն ոչ թէ խաղաղ, այլ զուտ յեղափոխական, մէկը՝ «Հիւսիսային ընկերութիւնը» միւսը՝ «Հարաւային»: 1825 թւին սրանց միանում է երրորդը՝ «Միացեալ Սլաւոնների զաշնակցութիւնը»: Դեկարրիստները—այդ ընկերութիւնների անդամները, զինւորականներ լինելով, բնականաբար կարող էին յենւել միայն զօրքերի վրայ: 1825 թ. նոյեմբերին մեռաւ կայսր Ալէքսանդր I-ը: Ժառանգութեան հարցը որոշ չէր. նրա երկու որդիներից մէկը՝ Կոնստանտինը Վարշաւայում էր և հօր մահը լսելով, հաւատարմութեան երզում տւեց իր եղբորը՝ Նիկոլային, իսկ Վերջինս, այդ չիմանալով, Պետերբուրգում հպատակութեան երզում արեց Կոնստանտինին: Վարշաւայի Կոնստանտինի մունետիկները չէին հասել Պետերբուրգ: Այդ շփոթութիւնից օգտւելով, դեկարրիստները ապստամբեցին, բայց իրանց համար ևս Ալէքսանդրի մահը անսպասելի լինելով, պատրաստ չէին, որի պատճառով կայսր Նիկոլայը նրանց ճնշեց և ենթարկեց խիստ պատիժների. 5 հոգի կախաղան հանւեցին—Պաւել Պետելը, Կոնդրատ Ռիլէսկը, Սերգէյ Մուրավեովը, Միխայիլ Բեստուժեյ-Ռիւմինը և Պետր Կախովսկին: 88 հոգի աքսորւեցին Սիբիր՝ տաժանակիր աշխատանքի, 18 հոգի Սիբիր՝ ընդմիշտ բնակւելու և 9 հոգի՝ հասարակ զինւորութեան: Կախաղան բարձրացնելիս ևրեք հոգու թոկը կտուեց. Մուրավեովը, որ դրանց մէջն էր, բացականչեց. «Ո՞րք Ռուսաստան, նոյն իսկ մարդ կախել չեն կարողանում»:

ԴԵԿԱԴԵՆՏՆԵՐ—Գրականութեան մէջ կոչուում են ներկայացուցիչները կամ կողմնակիցներն այն ուղղութեան, որի հիմնական դրութիւնն է՝ միտքն ու կենսական ճշմարտութիւնը բանաստեղծութեան համար պարտաւորեցուցիչ չեն, ուստի ճշմարիտ բանաստեղծական արտադրութիւնը կարող է կազմել բառերի լոկ երաժըշտական դասաւորութեամբ՝ առանց տրամաբանական կապի:

ԴԵԿԱՆ—Համալսարանում ամեն մի ֆակուլտետը կազմում է մի առանձին, ինքնավար հաստատութիւն, որի նախագահը և կառավարիչը կոչուում է Դեկան:

ԴԵԿԱՐԱՅԻԱ—1) յայտարարութիւն, յայտնութիւն: 2) Դեկլարացիա իրաւունքների կոչուում է այն յայտարարութիւնը, որ 1689 թ.ի յեղափոխութիւնից յետոյ բոլոր անգլիական ժողովրդի անունից արեց Վելչելմ III-ը Թրանսցի թագաւորը՝ անգլիական գահը բարձրանալիս: Այդ դեկլարացիան յետագայում ամբողջովին մտաւ իրաւունքների Բիլլի մէջ պարլամենտում: 3) Դեկլարացիա մարդու և քաղաքացու իրաւունքների—հրատարակեց Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան սկզբին Ազգային ժողովի կողմից (1791 թ. օգոստոսի 21-ին): Այդ դեկլարացիայի մէջ պարզաբանուում է քաղաքացիական ազատութեան և ժողովրդապետութեան սկզբունքների էութիւնը:

ԴԵԿՐԵՏ—Որոշում, վճիռ, հրաման, կարգադրութիւն:

ԴԵԿՕԼՏԷ—Կանացի ազատ հագուստ, որը հազնելիս կուրծքը և յաճախ թևերը մերկ են մնում:

ԴԵԿՕՐԱՏՕՐ—1) Նկարիչ, որը դեկօրացիաներ է նկարում:

2) Բեմ, սենեակ, այգի զարդարող, կարգ ու սարքի բերող:

ԴԵԿՕՐԱՑԻԱ—1) Որևէ տեղի (սենեակի, այգու և այլն) զար-

դարանք, կարգ ու սարք: 2) Տեսարանների և առարկաների նկար, որ դրուում է բեմի վրայ՝ բնականին փոխարինելու: 3) Գեղեցիկ արտաքին, որի յետևը թագնւած է երևցածին անհամապատասխան գործ: Կեղծ արտաքին:

ԴԵԿՕՐՈՒՄ—Բարեմասնութիւնների կեղծիք, որը թագցնում է վատ ճշմարտութիւնը:

ԴԵՂԻՆ ՄԱՄՈՒԼ—Կոչուում է Եւրոպայում անսկզբունք, վարձկան մամուլը, որ մեծ մասամբ կաշառւած է լինում բուրժուազիայի փողերով: Դեղին մամուլն առանձնապէս ուժեղ է Ամերիկայում:

ԴԵՂԻՆ ՍԻՆԴԻԿԱՏ—Տես Սինդիկատ:

ԴԵՄԱԳՕԳ—1) Ռամկավար, ժողովրդին առաջնորդող, ժողովրդական ղեկավար: 2) Ամբոխի կրքերը զրգոող: 3) Սոսկարար:

ԴԵՄՕԿԻՐԱՏ—Դեմօկրատիայի կողմնակից, պաշտպան: (Տես Դեմօկրատիա):

ԴԵՄՕԿԻՐԱՏԻԱ—Ռամկավարութիւն, ռամկապետութիւն, ժողովրդապետութիւն: Հասարակական այնպիսի կարգեր, որոնց ժամանակ ժողովուրդն ինքն իր ամբողջութեամբ դառնում է իր կեանքը ղեկավարող ամեն տեսակ օրէնքներին աղբիւրը, պետական բարձրագոյն իշխանութեան կրողը և իր վիճակի միակ տնօրինողը: Լիակատար ժողովրդապետութեան իրազորման հիմնական պայմաններն են. ժողովրդի ինքնակալութիւնը, այսինքն՝ պետութիւնը կառավարելու հանրապետական ձև՝ ժողովրդական անմիջական օրէնսդրութեամբ (ինիցիատիւ—նախաձեռնութիւն, համաժողովրդական ռեֆերենդում և վէտօ), գործադիր իշխանութեան և դատական մարմնի ընտրողականութիւն, օրէնսդրական մէկ պալատ, ընտրութիւնների ժամանակ ընդհանուր, գաղտնի,

ուղղակի և հաւասար ձայնատուութիւն, համաժողովըրդական միւլիցիա—մշտական զօրքերի արձակմամբ: (Տես Կառավարութեան ձեւ, Պարլամենտ):

ԴԵՄՕԿՐԱՏԻԱ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ—Տես Սօցիալական դեմօկրատիա:

ԴԵՄՕԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ—Տես Կառավարութեան ձեւ:

ԴԵՄՕՆՍՏՐԱՑԻԱ—Յոյց. 1) ցանկութիւնների և պահանջների հրապարակական ցոյց: Քաղաքական դեմօնստրացիա—ժողովներում, միտինգներում, հանդէսների ժամանակ, և խմբական ստորագրութիւններով յայտնւած քաղաքական պահանջներ: 2) Պատերազմի ժամանակ—թշնամուն մի կարևոր դիրքից հեռացնելու նպատակով կեղծ յարձակում՝ մի այլ դիրքի վրայ: 3) Գիտական փորձ, որ արւում է ունկնդիրների ներկայութեամբ:

ԴԵՄՕՐԱԼԻԶՄ—Բարքերի ապականութիւն, լաւ յատկութիւնների անկում:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ—1) Մինիստրութեան մի մասը, որտեղ կենդրօնանում են որոշ գործեր: 2) Ֆրանսիայի նահանգը կոչւում է նոյնպէս դեպարտամենտ:

ԴԵՊՕ—1) Որոշ տեսակի ապրանքների պահեստ, 2) Կայարանների յոյն արհեստանոցները, որտեղ մաքրում և կարկատում են վագօններն ու պարաւօգները:

ԴԵՊՈՒՏԱՏ—Պատգամաւոր:

ԴԵՍԷՐՏ—Քաղցրաւենիք, որ ուտում են ճաշից յետոյ:

ԴԵՍՊՕՏԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ—Տես Կառավարութեան ձեւ:

ԴԵՍՊՕՏԻՉՄ—Բռնակալութիւն:

ԴԵՍՊՕՏ—Բռնակալ:

ԴԵՏԵԿՏ—1) Սխալ, թերի, պակաս, փասուածք: 2) Կարկանդակ կարօտ նաւի փասների ցուցակագրութիւն:

ԴԵՖԻՑԻՏ—վնաս:

ԴԷՎԻՉ—նշանաբան:

ԴԺՈՍԱՅԻՆ ՄԵԲԵՆԱՅ—Պայթուցիկ մեքենայ, որը գործածողի ցանկութեան համեմատ կարող է ինքն իրան պայթել նշանակած ժամին, ճիշտ այնպէս, ինչպէս ժամացոյցը որոշ ժամերին սկսում է զանգահարել կամ նւագել:

ԴԻԱԳՆՈՉ—Հիւանդութեան որոշումը, ճանաչելը՝ այս կամ այն նշանից: Դիագնոզ անելը համարւում է յաջող բժշկութեան առաջին պայմանը:

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ—Բժշկական գիտութեան այն մասը, որ ուսումնասիրում է հիւանդութիւնները ճանաչելու միջոցները:

ԴԻԱԼԷԿՏ—Բարբառ:

ԴԻԱԼԷԿՏԻԿ—Հմուտ վիճող, ճարտասան, ճարտարախօս:

ԴԻԱԼԷԿՏԻԿԱ ՎԻՃԱՐԱՆՈՒԹԵԱՆ, ԸՆԴՀԻՄԱԽՍՈՒԹԵԱՆ ԱՐԵՍՏԱՄ:

ԴԻԱԼԷԿՏԻՉՄ—Տես Դիալեկտիկական մտածողութիւն:

ԴԻԱԼԷԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՉՄ—Տես Տնտեսական մատերիալիզմ:

ԴԻԱԼԷԿՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՕԴ—Վիճարանութեան ձև, որի ժամանակ ամբողջութեան հասկացողութիւնը դուրս է բերւում հարցի երկու հակառակ կողմերի հակադրութեամբ:

ԴԻԱԼԷԿՏԻԿԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ—Կոչւում է փիլիսոփայական մտածողութեան այն ձևը, որ առաջին անգամ և ամենալայն չափերով գործադրեց հսկակաւոր գերմանացի փիլիսոփայ Հեգելը, իր փիլիսոփայական տեսութեան հիմնաւորութեան համար, իսկ յետոյ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը մտածողութեան նոյն ձևը գործադրեցին մարդկային պատմութեան ուսումնասիրութեան մէջ: Դիալեկտիկական մտածողութեան հիմնա-

կան սկզբունքը դտել էր դեռ ևս յոյն փրկիստփայ Հերակլիտը, որն ասում էր՝ ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոխւում և ոչ մի բան չի մնում անշարժ ու անփոփոխ: Եւ եթէ ամեն ինչ անշեղ ու անդադար փոխւում է, ուրեմն, ամեն մի առարկայ, ամեն մի երևոյթ, մեր վերցրած վայրկեանին բոլորովին այլ բան է, քան թէ նախորդ վայրկեանին: Եւ եթէ այդ այդպէս է, ուրեմն երևոյթներն ու առարկաներն ուսումնասիրելիս չի կարելի նրանց դիտողութեան նիւթ դարձնել ամեն մէկն առանձին, ինքնուրոյն կերպով, ժամանակից ու տարածութիւնից անկախ, անկախ միւսների հետ ունեցած բազմատեսակ կապերից: Եւ եթէ որ մեր ուսումնասիրութեան առարկան կախումն ունի բազմաթիւ պատճառներից, որոնք պայմանաւորում են նրա մշտական փոփոխութիւնը, ուրեմն, նրա մասին ճիշտ գիտական եզրակացութիւն անելու համար, անհրաժեշտ է ուսումնասիրել առարկան ամեն կողմից, դիտել այն բոլոր պատճառները, որ ազդում են նրա վրայ և ուսումնասիրել նրան իր անընդհատ զարգացման մէջ: Ամեն մի զարգացում՝ ձևերի փոփոխութիւն է, հնի և նրանից զարգացող նոր ձևի մշտական հակասութիւնն է:--առանց նախորդ ձևը ոչնչացնելու չի կարող առջ գալ նորը, ամեն մի նոր ձև ծագում է հնից, նրան ոչնչացնելու համար. այսպիսով, ամեն մի զարգացում կատարւում է մշտական հակասութիւնների, մի ձևի մշտապէս միւսը բացասելու ճանապարհով: Մտածողութեան դիալէկտիկական մեթոդի բնորոշ գիծը կեանքի երևոյթներն և նրանց փոփոխութիւնն ու զարգացումը պայմանաւորող ներքին հակասութիւններն ուսումնասիրելն է: (Տես Հեգելիիզմ, Մետաֆիզիքական մտածողութիւն):

ԴԻԱՊԱԶՈՆ—Տէս Կամերտօն:

ԴԻԴԱԿՏԻԿԱ.—Մանկավարժութեան այն մասը, որ ուսումնասիրում է յաջող ուսուցման եղանակները:

ԴԻԷՏ կամ ԴԻԷՏԱ.—Բժշկութիւն՝ կանոնաւոր սննդառութեան միջոցով:

ԴԻԼԵՄՄԱ.—1) Առեղծւած. 2) Դատողութիւն՝ կազմուած երկու հակադիր նախադասութիւններից, որոնք հասցնում են միևնոյն եզրակացութեանը:

ԴԻԼԼԵՏԱՆՏԻԶՄ.—Թեթև, թերի ծանօթութիւն որևէ խնդրի կամ գիտութեան ճիւղի հետ:

ԴԻԼԼԵՏԱՆՏ—Սիրող, որևէ նիւթով հետաքրքրող՝ բայց ոչ մասնագիտօրէն ծանօթ մարդ: Անձ, որը ծանօթ է այս ու այն հարցին թոուցիկ, թեթև կերպով, որը լուրջ և հիմնական կերպով չի ուսումնասիրել խնդիրը:

ԴԻԿՏԱՏՈՒՐԱ.—Դիկտատօրի իշխանութիւն, դիկտատօրի կառավարութիւն: (Տէս Դիկտատօր):

ԴԻԿՏԱՏՕՐ—Անձ, որին ժամանակաւորապէս յանձնուած է անսահման իշխանութիւն: Դիկտատօր նշանակուած է սովորաբար այն ժամանակ, երբ պետութիւնը վտանգաւոր դրութեան մէջ է գտնուում: Մեր ժամանակներում դիկտատօրները նշանակուած են գլխաւորապէս երկրի ներքին խռովութիւնները ճնշելու համար:

ԴԻՆԱՄԻՏ—Պայթուցիկ նիւթ, որ հնարել է Համբուրգում Ա. Նօրէլը 1857 թ.

ԴԻՆԱՄԻԿԱ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ—Տէս Սօցիօլօգիա:

ԴԻՆԱՍՏԻԱ.—Թագաւորոց տուն, սերունդ:

ԴԻՊԼՕՄ—1) Բարձրագոյն դպրոցի աւարտման վկայական: 2) Թուղթ, որով շնորհուած է ազնւականութեան, իշխանութեան, կոմսութեան և այլ տիտղոսներ: 3) Հին ժամանակւայ պետական կարևոր ակտերը:

ԴԻՊԼՕՄԱՏ—1) Քաղաքագէտ, գիւանագէտ մարդ: 2) Խորամանկ, ճարպիկ մարդ:

ԴԻՊԼՕՄԱՏԻԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ—Որևէ պետութեան արքունիքում գտնուող օտարերկրեայ դեսպանների համաժողով:

ԴԻՍԿԱՆՏ—Հիֆեական չորս ձայներից (բաս, տենօր, ալտ, դիսկանտ) ամենաբարձրը:

ԴԻՍԿՕՆՏ—Տես Դիսկօնտ անել:

ԴԻՍԿՕՆՏ ԱՆԵԼ—Մուրհակը վաճառել ժամանակը լրանալուց առաջ (ուչեօտ անել), ըստ որում, զեղջած սովորը կոչւում է դիսկօնտ:

ԴԻՍՊՈՒՏ—1) Գիտական վէճ. 2) Որևէ գիտական առարկայի մասին գրւած դիսսերտացիայի (տես դիսսերտացիա) հրատարակական պաշտպանութիւն՝ գիտական աստիճան ստանալու համար:

ԴԻՍՍԵՐՏԱՅԻԱ—Առաջարկւած խնդրի մասին արւած գիտական ուսումնասիրութիւն: Սովորաբար դիսսերտացիան կազմում են գիտական աստիճան ստանալու նըպատակով:

ԴԻՍՍՕՆԱՆՍ—Աններդաշնակութիւն:

ԴԻՍՅԻՊԼԻՆ կամ ԴԻՍՅԻՊԼԻՆԱ—1) Խիստ, անպայման հնազանդութիւն ստորին զինւորական կամ այլ աստիճանաւորների—բարձրերին: 2) Խիստ կարգ ու կանոն, շափւած-ձևած կարգապահութիւն: 3) Գիտութեան որևէ ճիւղը կոչւում է նոյնպէս դիսցիպլինա:

ԴԻՍՅԻՊԼԻՆԱՐ ՊԱՏԻԺ—Կոչւում է այն պատիժը, որին կարող է ենթարկել իշխանաւորն իր ստորադրեալին առանց որևէ դատարանի միջամտութեան, իր հայեցողութեամբ:

ԴԻՎԻԴԵՆՏ—Որևէ դրամական ձեռնարկութեան մէջ մտցրւած փողի օգուտը, որ ստանում է դրամատէր—բաժնետէրը:

ԴԻՎԻԶԻԱ--Զօրամաս: Հետիոտն և ձիաւոր դիվիզիան կազմւած է չորս պօլկէց, ութաձիգ (արտիլլէրիայի) դիվիզիան՝ երեք բրիգադայից:

ԴԻՎԻԶԻՈՆ—Զիաւոր զօրքի երկու էսկադրօն:

ԴԻՐԵԿՏՕՐ—1) Որևէ հիմնարկութեան գլխաւոր կառավարիչը: 2) Դիրեկտօրիայի անդամը: (Տես Դիրեկտօրիա):

ԴԻՐԵԿՏՕՐԻԱ—Յրանսիայի յեղափոխութեան ժամանակ կազմւած կառավարութիւնը, որը լուծեց Բօնապարտը 1799 թ.

ԴԻՐԵԿՏԻԱ—Վարչութիւն:

ԴԻՐԻԺԵՕՐ—Պարբերի, երգեցողութեան կամ նւագախմբի կառավարիչ:

ԴԻԻԱՆ—1) Բազկաթոռ. 2) Տաճկաստանի Պետական Խորհուրդը:

ԴԻԻՅՄ—Երկարութեան չափ, որ ընդունւած է Անգլիայում և Ռուսաստանում= $\frac{1}{12}$ ֆուտ (ոտնաչափ)=10 լինի= $\frac{1}{28}$ արշին:

ԴԻԻՇԷՍ—Տանձի ազնիւ տեսակը, որ ստացւում է Ֆրանսիայից:

ԴԻՅՖԱՄԱՅԻԱ—Որևէ մարդու պատիւն արատաւորող փաստի հրապարակ հանելը:

ԴԻՅՖԵՐԵՆՑԻԱԼ ՏԱՐԻՅ—Գոչւում է ազրանքների փոխադրութեան համար նշանակւած վճարի այն ձևը, որի համաձայն, ինչքան տարածութիւնը մեծանում է, այնքան վճարն իջնում է տարածութեան ամեն մի միւտրի (վերստի, մղոնի) համար:

ԴԻՅՖԵՐԵՆՑԻԱՅԻԱ—Ծիւղաւորումն, դտումն, ամբողջի բաժանումն՝ զանազան ճիւղերի: (Տես Մանուֆակտուրա):

ԴԻՅԻՐԱՄԲ—Գովք, դրւատ:

ԴԻՅՏԵՐԻՏ—Բզացաւ:

ԴՈՒԱԼԻԶՄ—1) Փիլիսոփայական ուսմունք, որն աշխարհում

- ընդունում է երկու սկզբունք, ինչպէս օր. ջարի և բարեոյ, նիւթականի և վերացականի: 2) Քաղաքական դուալիզմ—ա) կառավարութեան այնպիսի ձև, որի ժամանակ բարձրագոյն իշխանութիւնը գտնուում է միևնոյն պետութեան երկու ժողովուրդների ձեռքին. բ) երբ երկրի բարձրագոյն իշխանութիւնը հաւասար չափով բաժանւած է կառավարութեան և ժողովրդի միջև:
- ԴՈՒԱԼԻՍՏ**—Դուալիզմի կողմնակից: (Տես Դուալիզմ):
- ԴՈՒԲԼԻԿԱՏ**—1) Պատճէն. 2) Ամեն մի գրութիւն, որ կազմւում է երկու օրինակ:
- ԴՈՒԲԼՈՆ**—Ոսկեայ դրամ, որ ընդունւած է Սպանիայում, Փորթուգալիայում, Իտալիայում, Ֆրանսիայում և Ամերիկայում: Արժէքը տարբեր է ամեն մի երկրում և տատանւում է $3\frac{1}{2}$ ոսկւուց մինչև $20\frac{1}{2}$ ոսկւին:
- ԴՈՒԷԼ**—Մենամարտ, մենամարտութիւն:
- ԴՈՒԿԱՏ**—Ոսկեայ դրամ Հօլլանդիայում, Իտալիայում և Աւստրիայում: Արժէքը՝ 3 ո.
- ԴՈՒՄԱ**—Տես Պետական Դուճակ և Քաղաքային հասարակական հաստատութիւններ:
- ԴՈՒՈՒՄՎԻՐ**—Դուումվիրատի անդամ (Տես Դուումվիրատ):
- ԴՈՒՈՒՄՎԻՐԱՏ**—Կառավարութիւն, որ գտնուում է երկու հոգու ձեռքին:
- ԴՈՒԽԱԲՕՐՆԵՐ**—Ռուսական ազանդաւորներ, որ կրում են իրանց վրայ Պետրոս Մեծի ժամանակներում ապրող Տվերիտինովի ուսմունքի ազդեցութիւնը. այս ազանդը վերջնականապէս ձևակերպել է Սարկովի նահանգում Կօլեսնիկովը 1755—75 թւականներին, որից յետոյ տարածւեց շատ ուրիշ նահանգներում: Երբ դուխարօրները հրաժարւեցին ուսմական եկեղեցուն և կառավարութեանը հպատակել, խիստ հալածանքների ենթարկ-

ւեցին և զանազան տեղեր աքսորեցին (ի միջի այլոց նաև Կովկաս): Դուխարօրների ուսմունքը գրաւոր կերպով չէ շարադրւած, այլ մեծերից անցնում է փոքրերին՝ բերանացի: Ըստ դուխարօրների՝ Ասուած ապրում է մարդու հոգու մէջ և լուսաւորում է նրան: Սկզբնական մեղք գոյութիւն չունի: Մահից յետոյ մարդու հոգին փոխւում է ուրիշ մարմիններու մէջ: Ասուածաշնչից դուխարօրներն ընդունում են միայն այն կէտերը, որոնք օգտակար են և միաստուածութեան զաղափարը: Պասի զաղափարը հասկանում են չար մտքերից և գործերից հեռու մնալը: Պսակը խորհուրդ չեն ընդունում: Մարդիկ բոլորը հաւասար են: Երդում չեն ընդունում: Համայնքը կառավարում է մեծերի Խորհուրդը:

ԴՐԱԳՈՒՆ — Զիաւոր զօրամաս, որ կարևոր դէպքում կարող է փոխարինել հետիոտն զօրքերին:

ԴՐԱԳՕՄԱՆ — Թարգման:

ԴՐԱԽՄԱ կամ ԴՐԱՆՄ: 1) Դեղատան զօլօտնիկ = $\frac{1}{96}$ դեղատ. ֆունտ = $\frac{1}{8}$ սովորական, առևտրական ֆունտ: 2) Յունական դրամ, որ հաւասար է 22 կոպ.:

ԴՐԱԿՆԵԱՆ ՅՐԷՆՔՆԵՐ — Կոչւում են խիստ և զաժան օրէնքները աթէնական օրէնադիր Դրակոնի (624 թ. Ք. ա.) անունով:

ԴՐԱՄԱ — Կոչւում է այնպիսի բանաստեղծական արտադրութիւնը, որի մէջ անցքը ներկայացւում է իբրև ներկայումս կատարւող գործողութիւն: Դրամայի միւս յատկանիշներն են. ա) այն, որ գործող անձը կոխ է մղում կամ ինքն իր մէջ իր զգացումների, իր մտքերի դէմ, կամ արտաքին արգելքների դէմ: Այս կոխը կոչւում է յրամատիզմ: բ) Շարադրութեան դիւալօգիական ձևը: Հեղինակն իր կողմից ոչինչ չէ ասում, այլ խօսում են միայն գործող անձինք:

- ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ—1) Այն, որ վերաբերում է դրամային։
 2) Ձգացումների վրայ խիստ ազդող, ցնցող։
- ԴԾԳՄԱ—1) Այս կամ այն ուսմունքի հիմնական դրութիւնը, որից բխում են բոլոր յետագայ եզրակացութիւնները։ 2) Գիտութեան վերջնական եզրակացութիւնը։
- 3) Որևէ կրօնի հիմնաքարը, հիմնական տեսակէտը, որ մեծ ճշմարտութեամբ պահպանում է եկեղեցին։
- ԴԾԳՄԱՅԱԿԱՆ ԻԴԻԱԼԻԶՄ—Տես Իդէալիզմ։
- ԴՈՂԱՐ—Արծաթի և ուսկու դրամ Միացեալ-Նահանգներում, հաւասար է 2 ո.։
- ԴՈՂՄԱ-ԲԱԽԶԱ—Սուլթանի ամառային պարտէզը, Պօլսի արւարձանում։
- ԴԾԿՈՒՄԵՆՏ—Փաստաթուղթ, ապացուցագիր, վկայագիր։
- ԴԾԿՏՐԻՆ—Ուսմունք։
- ԴԾԿՏՐԻՆԵՅՈՐ—Ձոր, անկենդան թէօրիանների հետևող։
- ԴԾԿՏՐԻՆԵՅՈՐՈՒԹԻՒՆ—Ձոր, անկենդան թէօրիանների յամառ հետևողութիւն։
- ԴԾԿՏՐ—1) Գիտնական բարձրագոյն աստիճան, որ տրւում է գիտութեան զանազան ճիւղերում (բժշկութեան, պատմութեան, հասարակական գիտութիւնների և այլն մէջ) որոշ պատրաստութիւն ցոյց տւած մարդոց։ 2) Սովորաբար դօկտօր բժշկին են ասում։
- ԴՈՆ-ԺՈՒԱՆ—Սպանական լեզենդի հերոս, որ յետոյ անցաւ համաշխարհային գրականութեանը։ Դօն-ժուանը մարդու այն տիպն է, որի կեանքի ամբողջ բովանդակութիւնը կազմում է կինը, իբրև սիրոյ և հեշտանքի առարկայ։ Դօն-ժուանի տիպը դուրս են բերել զանազան վարիացիներով Մօլիէրը, Բայրընը, Պուշկինը և ուրիշ գրողներ։
- ԴՈՆ—ՔԻՇՈՏ—Սերվանտէսի համանուն վէպի հերոսը։ Դօն-Քիշօտը մի ազնւական էր, որ ասպետական վէպեր

կարդալով՝ մտադրուեց վերականգնել ասպետականութիւնը և ինքը դառնալ հերոս: Այժմ Դօն-Քիշօտ են ասում այն մարդկանց, որոնք կատարելապէս անօգուտ և աննպատակ կռիւ են մղում, ոգևորում, յուսահատում են երևակայական յաջողութիւններից և անյաջողութիւններից: Դօն-Քիշոտութիւն անել—անիրագործելի նպատակների ձգտել:

ԴՕՑԵՆՏ—Դիտնական կոչում:

ԴՕՖԻՆ—Երբ Ֆրանսիայի կառավարութիւնը միապետական էր, դօֆին կոչւում էր գահաժառանգը:

Ե

ՖԵՆՍԵՆԻՉՄ—Կրօնական աղանդ, որի համաձայն մարդն ազատ կամք չունի և ենթարկւած է իր ճակատագրի նախօրօք կայացրած վճիռներին: Այս աղանդի հիմնադիրը հօլլանդացի ասուածաբան Կօրնէլ Եանսենն է:

ՖԵՆՍԵՆԻՍՏԵՆԲ—Եանսենիզմի հետևորդներ: (Տես Եանսենիզմ):

ՖԵՐԼԻԿ—1) Մօնղօլական խաների հրամանագիրը, նաև գանազան արտօնութիւններ շնորհող հրովարտակը: 2) Ապրանքի վրայ կպցրած նշան, որը ցոյց է տալիս թէ այդ ապրանքն ինչ գործարանից է դուրս եկել: 3) Նըշան, որն ունեցող ապրանքներն ազատ են թողնուում մաքսերից:

ՖԵՐՈՒՍ—Կարգ, աստիճան, յարկ:

ԷՉՈՒԻՏՆԵՆԲ—Այդպէս են կոչուում Յիսուսի Ընկերութեան (Societas Iesus) անդամները: Յիսուսի Ընկերութիւնը հոգևոր միաբանութիւն է, որ հիմնել է Փարիզում 1534 թ. Իզնատրոս Լօյոլան՝ Հռոմէական կաթոլիկական կրօնը տարածելու և պապի միապետական ան-

սահման իշխանութիւնը պահպանելու նպատակով 1540 թ. միաբանութիւնը հաստատուում է Պաւել III պապի կողմից անսահման իրաւունքներով: Միաբանութեան առաջին գեներալի՝ Լօյօլայի մահից (1556 թ.) յետոյ եզուիտների միաբանութիւնն աւելի կանոնաւորեց Լայնէսը: Միաբանութեան աստիճաններն են.

- 1) Քաւոդները, որոնք երկու տարի շարունակ սովորում են խիստ դիսցիպլինայի: 2) Սխօլաստիկներ, որ հինգ տարի սովորում են ընդհանուր գիտութիւններ և փիլիսոփայութիւն: 3) Կօադիւտօրներ, որոնցից հոգեւորականները մանուկ սերնդի կրթութեամբ են պարագում և քարոզչութիւն անում, իսկ աշխարհականները կատարում են Ֆիզիքական աշխատանքները՝ ծառայի, խոհարարի կառավարչի պաշտօններում: 4) Ամենաբարձր աստիճանաւորները պրօֆեսսներն են, որոնք, բացի առաջին երեք աստիճանի պարտաւորութիւններից, երդում են տալիս անպայման հպատակել պապին: Դրանք կամ միսիօներութիւն են անում կամ խոստովանահօր պաշտօնով ապրում են թագաւորների ու իշխանների պալատներում: Պրօֆեսսներն իրանց միջից ընտրում են միաբանութեան զեներալ որն ապրում է Հռօմում: Սա է պրօֆեսսներ նշանակում ու հսկում միաբանութեան բոլոր գործերին: Եզուիտների միաբանութիւնը յաջողութեամբ կուում էր բողոքականութեան դէմ Իտալիայում, Սպանիայում, Փորթուգալիայում, Գերմանիայի կաթոլիկական մասում, Աւստրիայում, Բաւարիայում. մուտք գործեց Արևելեան Հընդկաստան, Եպսօնիա, Բրազիլիա և Պարագւայ: Եզուիտները իրանց ղեկավար ունենալով նպատակն արդարացնում է միջոցները սկզբունքը, մեծ ազդեցութիւն ձեռք բերին իշխանական ու թագաւորական պալատ-

ներում, շատ արիւնհանեղ պատերազմների դրդիչ պատճառ եղան, իրանց յետադէմ-կղերական ասմունքով մտաւոր ու հոգեկան ստրկութան ոգին մտցրին շատ երկրներ, նոյնիսկ շատ տեղեր իրանց հնազանդեցրին երկրի թագաւորներին ու իշխաններին: Եզուիտների զէմ օպոզիցիա կազմեց և առաջին անգամ նրանց հալածեցին Փորթուգալիայից (1759 թ.), այնուհետև Ֆրանսիայից՝ 1764 թ., Սպանիայից՝ 1767-ին: Ֆրանսիական թագաւոր Լիւդովիկոս XV-րդը մի մասնաժողով նշանակեց եզուիտների գործերը քննելու և նրանց գեներալ Ռիչչին առաջարկեց մի քանի փոփոխութիւններ մտցնել միաբանութեան մէջ: Ռիչչին չհամաձայնեց, 1773 թ. Կլիմենտ XIV-րդ պապը յայտարարեց եզուիտների միաբանութիւնը ոչնչացրած, բայց դրանից յետոյ էլ միաբանութիւնը շարունակեց իր գոյութիւնը, որովհետև նրանց պաշտպանում էին ռուսաց Եկատերինէ II կայսրուհին և Ֆրիդրիխ II-ը: Մի քանի երկրներում նրանց իրաւունքները վերականգնեցրին, բայց միաբանութիւնը երբէք չհասաւ իր նախկին ոյժին ու ազդեցութեանը և ընդհակառակը, աստիճանաբար թուլացաւ: Ռուսաստանից եզուիտներին հեռացրին 1820 թ. Ներկայումս եզուիտները 12,300 հոգի են, որոնց գեներալն է 1892 թ-ից՝ պատէր Մաբտէնը, որ ապրում է Սպանիայում:

ՖԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈՂԵՐ—Կոչւում են եկեղեցիներին պատկանող հողերը, որոնք Ռուսաստանում վանքական հողերի հետ միասին 2 միլ. դես. տարածութիւն են բռնում:

ՖՊԻՍԿՈՊՈՍ—Երրորդ և բարձրագոյն հոգևորական աստիճանը, որ հաստատւած է առաքեալների ժամանակից:

ՖՀՈՎԱ—այդ անունով է յիշուում Աստուածը Հին Կտակարա-

նում: Այդ անունով Աստուած առաջին անգամ յայտնու-
ում է Մովսէսին:

ԵՌԱՍՏԻՃԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ—Տես Երկաստիճան ընտրութիւն:

ԵՍԱՍԻՐՈՒԹԻՒՆ—Տես Էգոիզմ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐԹԵՐ—Թիւրքիայի քաղաքական ազատա-
միտ-լիբերալ կուսակցութիւնը, որի գլխաւոր պահանջ-
ները մօտենում են 1876 թ. Թիւրքիայում յայտարար-
արած և ապա վերացրած սահմանադրութեան պա-
հանջներին: Դրանք հետեւեալներն են. սուլթանի բոլոր
հպատակների իրաւահասարակութիւն, տեղական ին-
քնաւարութիւն, երդեալների դատարան և մամուլի
ազատութիւն: Երիտասարդ թիւրքերը պահանջում են՝
որ Թիւրքիան մտնի ընդհանուր-եւրոպական քաղաքա-
կրթութեան հոսանքի մէջ, բայց անպայման պահէ ազ-
գային առանձնայատկութիւնները և կրօնը: Երիտա-
սարդ թիւրքերի կուսակցութեան անդամները, ինչպէս
և ցոյց է տալիս կուսակցութեան անունը, գլխաւորա-
պէս երիտարդ սերնդից են և այն՝ փոքրաթիւ ին-
տելլիգէնտ շրջաններից: (Տես լիբերալիզմ):

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՇՏՈՒՆԴԻՍՏՆԵՐ—Տես Շտուկա:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԵԽԵՐ—Տես Լիբերալիզմ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՌՈՒՍՆԵՐ—Տես լիբերալիզմ:

ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ — Ընտրութիւնների այնպիսի
ձև, որի ժամանակ գիւղը, համայնքը, քաղաքը, այս կամ
այն դասակարգը կամ հասարակութիւնը զանազան պե-
տական կամ հասարակական պաշտօններ վարելու հա-
մար մարդիկ է ընտրում երկու աստիճանով. այսինքն՝
նախ ընտրում են որոշ թւով պատւիրակներ, որոնք
հաւաքելով մի տեղ՝ ընտրում են պաշտօնիային: Ըն-
տրութիւնները կարող են լինել նաև եռաստիճան, քա-
ռաստիճան և աւելի աստիճաններով: Աստիճաններով

ընտրութիւնը կատարուում է ամեն երկրներում, ուր ժողովրդի իրաւունքները սահմանափակ են. իսկ այնտեղ, ուր գոյութիւն ունի դէմօկրատիան, ուսմակաւորութիւնը, ընտրութիւնները կատարուում են ուղղակի, առանց աստիճանների, այսինքն՝ պետական կամ հասարակական պաշտօնների համար ժողովուրդը իր ձայնը տալիս է այն մարդուն, որին ինքը յարմար է համարում պահանջած պաշտօնի համար: (Տես Դեմօկրատիա, Ընտրողական իրաւունք):

ԵՐԿՊԸԱՏՏԵԱՆ ՍԻՍՏԵՄ—Տես Պարլամենտ:

ԵՐԿՐԸԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԷԼ—Տես Կօօպերացիա:

ԵՐԿՐԸԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՆՆՈՐՆԵՐ—Տես Բանուորներ երկրագործական:

Զ

ԶՄԲԱՍՏՈՎԿԱ—Տես Գործադուլ:

ԶԱ—Դահլիճ:

ԶԱՊԱԴՆԻԿՆԵՐ—Արեւմտեաններ, կոչւում են ուս հասարակական մտքի և գրականութեան այն ներկայացուցիչները՝ որոնք քարոզում էին Ռուսաստանի և արևմտեան Եւրոպայի՝ իբրև միևնոյն պատմա-քաղաքակրթութեան ամբողջութեան անբաժան մասերի, համերաշխութիւնը և համագործակցութիւնը: Գլխաւոր ներկայացուցիչներն են՝ Բէլլինսկին և 40-ական թւականների մարդիկ՝ Հերցէնը, Զերնըշտեկին, Կաւելինը և այլք: Հակառակ ուղղութիւնն է՝ Սլավեանօֆիլութիւնը (Տես Սլաւեանօֆիլ):

ԶԱՊՐՕՍ—Հարցապնդում: Պարլամենտական երկրներում կոչւում է որևէ հարց ամ դէպքի վերաբերմամբ միևնապարտութիւնից պահանջած բացատրութիւնը: Զա-

պրօսը (հարցապնդումը) ժողովրդական ներկայացուցիչներին՝ մինիստրութեան վրայ ունեցած կօնարօլի միջոցներից մէկն է: Արւած հարցապնդումի ստիժով հղած բացատրութիւններին սովորաբար մասնակցում է այն պատգամաւորը, որ արել է հարցապնդումը և այն մինիստրը, որին վերաբերւում է շոշափած խընդիրը և որի համաձայնութեամբ արւում է հարցապնդումը: Հարցապնդումը սրանով էլ տարբերւում է ինտերպելլիացիայից, որն արւում է առանց մինիստրութեան համաձայնութեանը և այդպիսով՝ հանդիսանում է իբրև մի մեղադրանք՝ ուղղւած մինիստրութեանը: Ինտերպելլիացիայի ժամանակ մանրամասնօրէն քընընւում են մինիստրութեան քայլերը շոշափուող խնդրում և վերջանում են կամ մինիստրութեան արգարացումով, կամ մեղադրանքով: Առաջին դէպքում ժողովրդական ներկայացուցիչները մինիստրութեանը յայտնում են իրանց «վստահութիւնը», որ նշանակում է, թէ մինիստրութիւնը պէտք է շարունակէ իր նախկին քաղաքականութիւնը, կամ «անվստահութիւն» — որի հետևանքը լինում է մինիստրութեան հրաժարականը:

ՉԵՄՍՏՎՈ — Կարելի է թարգմանել մօտաւորապէս «հոգապետութիւն» բառով: Չեմստվօն — «հոգի մարդոց» կառավարութիւնն է, որ մտցրած է Ռուսաստանում 1864 թւին՝ իբրև ժողովրդի ինքնավարութեան ձևերից մէկը: Չեմստվօյի իրաւասութեան տակ է դրւած նահանգի և գաւառի տնտեսական խնդիրների կարգաւորումը. — ճանապարհների անցկացնելը, դպրոցների, հիւանդանոցների կառուցումը, բնակարանների ապահովագրութիւնը, ֆրասակար միջատների դէմ միջոցներ ձեռք առնելը, երկրագործութեան բարելաւումը, և այլն, և այլն: Չեմստվօյին մարմինները կազմւում են ընտրութեամբ:

Սկզբում ընտրութիւնը համեմատաբար աւելի ռամկավարական հիմքերի վրայ էր դրւած, բայց աստիճանաբար ընտրողական իրաւունքները փոփոխութեան ենթարկելով, նշանաւոր չափով կրճատեցին ժողովըրդի իրաւունքները և գործերի զեկը յանձնեցին տնտեսապէս ապահոված գասակարգին՝ կալածատէրերին ու ազնւականներին: 1890 թւի յուլիսի 12-ի օրէնքով զեմստվոյին հաստատութիւնների կազմի կիսից աւելին պէտք է ընտրէին ազնւականներից, որով վերջնականապէս ամրապնդեց վերջիններիս գերշխանութիւնը զեմստվոյին գործերում: Նահանգի գործերը վարում է նահանգական Զեմստվոյին ժողովը, գաւառներ՝ Գաւառակաւներ:

ԶԵՄՍԿԱՅԱ ՍՏՐԱԺԱ.—Կոչւում է գիւղական ոստիկանունութիւնը Լեհաստանում և Կովկասում:

ԶԵՄՍԿԻՅ ՆԱԶԱԼՆԻԿ.—Պաշտօնեայ, որին նշանակում է նահանգապետը տեղացի ազնւականներից և որն ունի թէ գատաստանական և թէ ազմինիստրատիւ իրաւունքներ իր գաւառում: Գիւղական համայնքների ոչ մի վճիռ չի կարող իրագործւել առանց զեմսկի նաչալնիկի հաւանութեան:

ԶԵՄՍԿԻ ՍԱԲՕՐ.—Կոչւում են այն ժողովները, որ կազմում էին ուսուսաց թագաւորները բարձրաստիճան չինօթիկներից և յայտնի ազնւականներից ու վաճառականներից՝ իբրև թագաւորին խորհուրդ տւող մի մարմին: Զեմսկի Սաբօրի անդամները չէին ընտրւում, այլ նշանակւում էին թագաւորի կողմից և նրանց պաշտօնը համարւում էր ոչ թէ իրաւունք, այլ պարտականութիւն: Զեմսկի Սաբօրները գումարւում էին XVI և XVII-րդ դարերում, իսկ Պետրոս I-ի ժամանակից նրանց վերջ է դրւում, որովհետև միապետական իշ-

խանութիւնն սկսում է աւելի և աւելի ուժեղանալ:

ՁԵՒՍ—Հին յոյների գլխաւոր ասուածը, երկրի և երկնքի հայրը, ասուածների ասուածը:

ՁԻՆԻՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ—Ձինւորական դատարանը կազմւում է սպաներից և աւելի բարձր զինւորականներից՝ զինւորական ծառայութեան մէջ գտնւող անձերին դատելու: Ձինւորական դատարաններին են ենթարկւում նաև ոչ—զինւորականներն այն ժամանակ, երբ որևէ նահանգ, գաւառ, պատերազմական դրութեան մէջ է յայտարարւած: Ձինւորական դատարանը տարբերւում է սովորականից նրանով, որ զործավարութիւնը լինում է արագ, իսկ դատավճիռները՝ չափազանց խիստ: Այսպէս, օրինակ, եթէ որևէ յանցանքի համար սովորական դատարանը պէտք է յանցաւորին բանտարկութեան դատապարտէր, զինւորական դատարանը մահւան պատժի է ենթարկում:

ՁԻՆԻՈՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ—Տե՛ս Պատերազմական դրութիւն:

ՁՈՒԲԱՏՈՎՇՁԻՆԱ—Ռուս կառավարութեան բանւորական հարցում բռնած մի ուղղութիւն, որ սկիզբ առաւ 90-ական թւականներին և կոչւեց զուբատովշչինա Մոսկվայի Օխրաննիյ բաժանմունքի նաչալնիկ՝ Չուբատովի անունով: Չուբատովշչինայի էութիւնը կայանում էր նրանում, որ կառավարութիւնն աշխատում էր բանւորական շարժումները բացառապէս տնտեսական հողի վրայ դնել և հետո պահել բանւորներին քաղաքական խնդիրներից ու քաղաքական կուրից: Այդ նպատակով պետական գանձարանից բաց թողնւած միջոցներով և յատուկ մարդկանց ղեկավարութեամբ կազմակերպւում էին բանւորական միութիւններ և փոխադարձ օգնութեան ընկերութիւններ, հիմնւում էին դպրոցներ

և կրթական այլ հաստատութիւններ՝ բանւորներին կրթելու կառավարութեան ցանկալի ուղղութեամբ, կազմակերպուեմ էին պատրիօտական (հայրենասիրական) ժողովներ ու ցոյցեր: Սակայն՝ զուբատովշչինան կառավարութեան համար անսպասելի հետևանքներ ունեցաւ.—1905 թ. յունւարի 9-ին կառավարութիւնից նպաստ ստացող «Գործարանային բանւորների ընկերութիւնը» հարիւր հազար հոգով Գապօն քահանայի ղեկավարութեամբ իկօնաներով (եկեղեցական պատկերներով) ու Կայսեր պատկերներով զիմեց զէպի Պետերբուրգի Զմերային պալատը՝ Կայսերը խնդիր տալու և իրանց համար պահանջներ անելու: Այդ պահանջների մէջ կային ի միջի այլոց՝ շատ յեղափոխական-քաղաքական պահանջներ: Այդպիսով՝ զուբատովշչինան ոչ միայն չկարողացաւ բանւորներին հեռու պահել քաղաքական խնդիրներից և բանւորական շարժմանը տալ կառավարութեանը ցանկալի ուղղութիւն, այլ հասցըրեց կատարելապէս հակառակ հետևանքների: Գապօնի ղեկավարութեամբ կազմակերպւած ցոյցը ուսական յեղափոխութեան ազդանշանը դարձաւ:

ԶՕԻԼ.—Հոմերոսի յայտնի հակառակորդը, որ ապրում էր 250 տ. Ք. ա. Դրա անունից սկսեցին Զօիլ անւանել այն քննադատներին, որոնց ղեկավարողն անարդարութիւնն ու չարախնդութիւնն է:

Է

էԳՕԻԶՄ—Եսասիրութիւն: (Տես Ալտրուիզմ):

էԳՕԻՍՏ—Եսասէր: (Տես Ալտրուիզմ):

էԼԱՍՏԻԿ—Ճկուն:

էԼԵԳԻԱ.—Լիբիկական ոտսնաւոր, որով բանաստեղծն ար-

տայայտում է իր տխուր, մեղամաղձոտ տրամադրութիւնը:

ԷԼԵԿՏՐՈՆ—Սաթ, քէյրիբար:

ԷԼԵԿՏՐԻԿ Կամ ԷԼԵԿՏՐԻԿՈՍ—Էլեկտրականութեան մասնագէտ:

ԷԼԵԿՏՐՕՄԵՏՐ—Էլեկտրականութիւնը չափելու գործիք:

ԷԼԵԿՏՐՕՏԵՆՆԻԿԱ—Գիտութիւն, որն ուսումնասիրում է էլեկտրական զանազան գործիքները ու յարմարութիւնները գտնելու և գործածելու միջոցները և նշանց ներմուծումը արդիւնագործութեան այս ու այն ճիւղի մէջ:

ԷԼԵԿՏՐՕՏԵՆՆԻԿ—Էլեկտրօտեխնիկայի այս կամ այն ճիւղի մասնագէտ: (Տես էլեկտրօտեխնիկա):

ԷԼԵՄԵՆՏԱԲ—Տարրական:

ԷԼԵՄԵՆՏ—Տարր:

ԷԿՉԱՄԵՆ—Բննութիւն:

ԷԿՉԱԲԽ—Բարձրաստիճան հոգևորական, որ կառավարում է միջանի հոգևոր թեմեր:

ԷԿՉԵԿՈՒՑԻԱ — 1) Դատաստանական վճռի կատարումն:

2) Հրապարակական պատիժ՝ քրէական դատարանի վճռով: 3) Պատիժ, որ տրւում է համայնքին հրապարակօրէն:

ԷԿՉԵՄԱ—Կաշւի հիւանդութիւն: Թաց քոս:

ԷԿՉԵՄՊԼԵԱԲ—1) օրինակ, նմուշ, հատ: 2) Տարօրինակ մարդ:

ԷԿԻՊԱԺ—1) Կառք: 2) Նաւի մէջ էկիպաժ կոչւում է ծառայողների կազմը:

ԷԿԻԻ—Ֆրանսիական դրամ=3 ֆրանկ:

ԷԿԼԵԿՏԻՉՄ—Ճշմարտութիւնների ընտրութիւն՝ փիլիսոփայական բոլոր ուղղութիւններից ու զպրօցներից, առանց խստօրէն որևէ մէկին հետևելու:

ԷԿՍԿՈՒՐՍԻԱ.—Արշաւանք, գիտական կամ զւարճական ճանապարհորդութիւն:

ԷԿՍՊԵՆԴԻՏՕՐ—1) Ծառայող, որը հսկում է որևէ բան կանոնաւոր կերպով ուղարկելու վրայ: 2) Էկսպեդիտոր կոչւում է նաև այս կամ այն հիմնարկութեան որևէ բաժանմունքի գլխաւորը:

ԷԿՍՊԵՆԴԻՑԻԱ.—1) Զօրքի կամ ապրանքի յղումն: 2) Ճանապարհորդութիւն՝ գիտական նպատակով: 3) Որևէ հաստատութեան բաժանմունքը: 4) Փոստատան այն բաժանմունքը, որն ընդունում և ճանապարհում է նամակները:

ԷԿՍՊԵՐԻՄԵՆՏ—Փորձ:

ԷԿՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ—Փորձնական:

ԷԿՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ՄԵԹՕԴ—Գիտութեան մեթօդ, որ հիմնւած է փորձի վրայ:

ԷԿՍՊԵՐԻՄԵՆՏԱՏՕՐ—Փորձ կատարող:

ԷԿՍՊԵՐՏԻԶ կամ ԷԿՍՊԵՐՏԻԶԱ.—Որևէ առարկայի ուսումնասիրութիւնը՝ գիտակ, մասնագէտ անձանց կողմից:

ԷԿՍՊԵՐՏ—Գիտակ անձ, հմուտ մասնագէտ:

ԷԿՍՊԼՈՒԱՏԱՑԻԱ—Շահագործումն, որևէ ձեռնարկութիւնից ըստ հնարաւորութեան շատ օգուտ ստանալը:

ԷԿՍՊՐՕՄՏ—1) Անակնկալ: 2) Յանպարտաստից արտասանած ճառ կամ երգ:

ԷԿՍՊՐՕՊՐԻԱՑԻԱ.—1) Մասնաւոր սեփականութեան գրաւումը յարքունիս: 2) Գրաւում:

ԷԿՍՊՕՆԱՏ—Ցուցահանդէսում ցուցադրւած առարկայ:

ԷԿՍՊՕՆԵՆՏ—Ցուցահանդէսում որևէ առարկայ ցուցադրող անձ կամ հաստատութիւն:

ԷԿՍՊՕՐՏ—Արտահանութիւն:

ԷԿՍՏԱԶ—Հիւանդոտ-ոգևորւած զրութիւն, խիստ յուզմունք:

որը մարդուն նոյնիսկ ֆիզիքական տանջանքներ է պատճառում:

ԷԿՍՏԵՆՍԻԻ—Տես Ինտենսիւ:

ԷԿՍՏԵՐՆ—1) Աշակերտներ, որոնք դպրոցում կամ այլ հիմնարկութեան մէջ չեն ապրում, այլ յաճախում են որոշ ժամանակամիջոցում: 2) Դպրոցական հիմնարկութեան մէջ քննութիւն տուող կողմնակի անձ:

ԷԿՍՏՐԱՕՐԴԻՆԱՐ—Արտակարգ:

ԷԿՍՅԵՆՏՐԻԿ—մարդ, որն աչքի է ընկնում իր տարօրինակ վարմունքներով:

ԷԿՍՅԵՍՍ—Չափազանցութիւն: Չափազանց գործածութիւն՝ գինու: Սեռական յարաբերութիւնների մէջ սանձարձակութիւն:

ԷԿՎԻՎԱԼԵՆՏ—Համարժէք, համազօր, համանշանակ:

ԷԿՕՆՕՄ—Տնտես, տան կառավարիչ:

ԷԿՕՆՕՄԻԱ—Խնայողութիւն:

ԷԿՕՆՕՄԻԶՄ—Ռուսաց սօցիալ-դեմօկրատ կուսակցութեան մէջ մի ուղղութիւն, որ սկիզբ առաւ իննսունական թւականներին և որի հիմնական միտքն այն էր, որ պէտք է բանւոր դասակարգը կազմակերպել ընդդէմ կապիտալիստների՝ իբրև զուտ տնտեսական կազմակերպութիւն, այդ համարելով սօցիալիզմի միակ ճանապարհը: Վնասակար էին համարում պրօլետարիատի մասնակցութիւնը քաղաքական հարցերին, պատճառաբանելով, որ պրօլետարիատի ձեռք բերած քաղաքական ազատութիւններից կօզուի բուրժուազիան իր դասակարգային նպատակների համար, ուժեղացնելով իր անիրապետութիւնը: Սօցիալ-դեմօկրատների օրգան—«Իսկրան» այդ ուղղութեան դէմ կռիւ մղեց, իսկ կուսակցութեան Ուրդ համագումարում 1903 թ.՝ էկօնօմիզմը դատապարտուեց իբրև սխալ կարծիք և ընդունուեց՝

որ սօցիալ-դեմօկրատիան պէտք է գործէ իբրև սօցիալ-
քաղաքական կուսակցութիւն:

ԷԿՕՆՕՄԻՍ — Տնտեսագէտ:

ԷԿՕՆՕՄԿԱ — Տնտեսուհի, կառավարչուհի:

ԷՄԱՆՍԻՊԱՏՕՐ — Ազատարար, փրկիչ, ազատութեան քարո-
զիչ, ազատագրող:

ԷՄԱՆՍԻՊԱՅԻԱ — Ազատութիւն, ազատագրութիւն:

ԷՄԲԼԵՄ կամ ԷՄԲԼԵՄԱ — Նշանացոյց, նշանաբան:

ԷՄԲՐԻՕԼՕԳԻԱ — Սաղմնագիտութիւն, գիտութիւն՝ սաղմի
զարգացման մասին:

ԷՄԲՐԻՕՆ — սաղմ:

ԷՄԻԳՐԱՆՏ — Տես Գաղթ:

ԷՄԻԳՐԱՅԻԱ — Տես Գաղթ:

ԷՄԻՍՍԱՐ — Գաղտնի յանձնարարութեամբ ուղարկւած
պատւիրակ:

ԷՄԻՐ — Մահմեդական ցեղապետների և Մահմեդի ժառանգ-
ների տիտղոսը:

ԷՄՊԻՐԻԶՄ — Փիլիսոփայական ուղղութիւն, որի հիմնական
հայեցակէտն այն է, թէ փորձի միջոցով ինքնուրոյն
կերպով կարելի է ճանաչել բնութիւնը և հոգին: Գըլ-
խաւոր ներկայացուցիչներն են Արիստոտէլ, Բէկօն,
Լօկկ, Իւմ, Միլլ, Ռուսաստանում՝ Տրօյցկիյ: (Տես
Ռացիօնալիզմ):

ԷՄՊԻՐԻԿ — 1) Էմպիրիզմի կողմնակից (տես Էմպիրիզմ)
2) Փորձնական:

ԷՄՕՅԻԱ — Զգացմունք, բնազգական զգացում, գրդում, յոյզ:

ԷՆԵՐԳԻԱ — Ոյժ, եռանդ:

ԷՆՏՈՒԶԻԱԶՄ — Ոգևորութիւն:

ԷՆՅԻԿԼՕՊԵԴԻԱ — Հանրագիտութիւն, գիտութիւնների մի
ամբողջ շրջան: Հրատարակութիւն, որի մէջ սխտեմա-
տիքական կարգով զետեղւած է բոլոր գիտութիւնների

տեսութիւնը: Էնցիկլօպեդիա բառը գործածուում է նաև աւելի սահմանափակ մտքով, բովանդակելով իր մէջ որևէ գիտութեան բոլոր ճիւղերը, օրինակ՝ իրաւագիտութեան, բժշկութեան և այլն:

ԷնՅԻԿԼՕՊԵԴԻԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ — Հրատարակութիւն, որի մէջ այբբենական կարգով զետեղւած են տեղեկութիւններ ու բացատրութիւններ գիտութեան բոլոր ճիւղերից:

ԷնՅԻԿԼՕՊԵԴԻՉՄ — Հանրագիտականութիւն, գիտութեան, զարգացման բազմակողմանիութիւն, ծանօթութիւն գիտութեան բոլոր ճիւղերի հետ:

ԷնՅԻԿԼՕՊԵԴԻՍՏԵՆՐ — Կոչուում են ֆրանսիական յայտնի էնցիկլօպեդիայի հիմնադիրները և աշխատակիցները՝ Դիդրօն, Դալամբերը, Վօլտ'երը, Հելվեցին, Հօլբախը, Կօնդիլեակը, Լամետրին, Մօնտեսկիէն, Ռուսսօ՛ւ և ուրիշները: Էնցիկլօպեդիան հրատարակւեց 1751—1772 թ.թ. Դիդրօյի և Դալամբերի խմբագրութեամբ:

ԷՇԱՅՅՏ — Գլխատման շէնք, կառափնարան:

ԷՊԻԴԵՄԻԱ — Համաճարակ, տարափոխիկ հիւանդութիւն՝ որը միանգամից բռնում է շատ մարդոց:

ԷՊԻԶՕԴ — Միջնադէպ, որևէ մէկի կեանքի պատմութեան առանձին դէպքը:

ԷՊԻԼԷՊՍԻԱ — Ընկնաւորութիւն:

ԷՊԻԿՈՒՐԷԻՉՄ — Փիլիսոփ. ուսմունք, որը կեանքի նպատակը համարում է բաւականութիւնն ու հաճոյքը:

ԷՊԻԿՈՒՐԷԻՍՏ — Էպիկուրէի դժի հետևորդ: (Տես էպիկուրիստիզմ):

ԷՊՕԼԷՏ — Ուսողի բնշան, որ գործածում են զանազան պաշտօնեաներ:

ԷՊՕԽԱ — Շրջան, դարաշրջան, ժամանակամիջոց, որն աչքի է ընկնում այս ու այն խոշոր պատմական անցքով:

- էՊՊՍ կամ էՊԻՔԱԿԱՆ ԳՐԻԱԾՔ—Կոչում է այն երկը՝ որի մէջ բանաստեղծական ձևով պատմում են անցքեր և որոնց մէջ ինքը բանաստեղծը հանդիսանում է իբրև կողմնակի դիտող ու պատմող: Էպոս—յունարէն նշանակում է պատմեաժք: Էպոսը լինում է ժողովրդական կամ բանաւոր և գրական կամ գրաւոր:
- ԷՍԴԷԿՆԵՐ—Տես Սօցիալ-դեմօկրատներ:
- ԷՍԷՐՆԵՐ—Տես Սօցիալիստ-յեղափոխականներ:
- ԷՍԿԻԶ—Ուրւագիծ, նախագիծ, սուեբագիծ:
- ԷՍԿՕՐՏ—Զինւորախումբ:
- ԷՍՊԵՐԱՆՏՕ—Արհեստական լեզու, որ հնարել են զանազան ազգութիւնների յարաբերութիւնները դիւրացնելու համար:
- ԷՍԵՏԻԿԱ—Փիլիսոփայութեան այն ճիւղը, որն ուսումնասիրում է գեղեցկութիւնը, նրա արտայայտութիւնները տեսական-զգայական աշխարհում, և կապը իրականութեան հետ: Գեղագիտութիւն:
- ԷՍԵՏԻԿԱԿԱՆ—Գեղարւեստական, այն՝ որ վերաբերում է էստետիկային: (Տես էստետիկա): Գեղագիտական:
- ԷՍԵՏԻԿԱԿԱՆ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄ—Տես Նատուրալիզմ:
- ԷՍՏՐԱԴ կամ ԷՍՏՐԱԴԱ—Բարձրութիւն, գահի, ամբիոնի, երաժշտախմբի համար:
- ԷՎԴՊՄՕՆԻԶՄ—Ուսմունք, որի համաձայն մարդկային կեանքի նպատակը երջանկութիւնն է:
- ԷՎՕԼՒԻԹԻԱ—Աստիճանական զարգացում, ձևափոխութիւն, բարգաւաճում: (Տես էվօլյուցիօնիզմ):
- ԷՎՕԼՒԻԹԻՑԻՕՆԻԶՄ—Ուսմունք, որն աշխարհի ծագումը, մարդու յառաջանալն ու զարգացումը, կենդանիների և բոյսերի սկզբնաւորութիւնն ու զարգացումը բացատրում է աստիճանական դանդաղ ձևափոխութեամբ (էվօլյուցիայով), որը կատարել և կատարում է միջա-

վայրի ազդեցութեան տակ և նրան յարմարելով: Այդ զարգացումը կամ ձևափոխութիւնը-էվոլիցիան սկըւել է միլիոնաւոր տարիներ առաջ և կը շարունակւի ապագայում ևս անվերջ կերպով: (Տես Գարվիկիզմ, Տրանսֆորմիզմ):

էՎՕԼՒԻՑԻՑՆԱԿԱՆ ԹԷՕՐԻԱ—Տես էվոլիւցիոնիզմ:

էՏԱԺ—Յարկ:

էՏԱՊ—Պաշարեղէնի պահեստ և կայարան, որը յարմարեցըրած է զօրքի և աքսորականների հանգստեան համար:

էՏԻԿԱ.—1) Բարոյագիտութիւն, բարոյախօսութիւն, Փիլիսոփայութեան այն ճիւղը, որն ուսումնասիրում է բարոյականութան օրէնքներն ու նրա հետ կապ ունեցող հարցերը: 2) Բարոյականութիւն, բարոյական հասկացողութիւն:

էՏԻԿԱԿԱՆ ԻԴԷԱԼԻԶՄ—Տես Իդէալիզմ:

էՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ—Տես Մատերիալիզմ:

էՏԻԿԱԿԱՆ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄ—Տես Նատուրալիզմ:

էՏԻԿԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐ կամ կաթիլըր-սօցիալիստներ, Տես Քաղաքատնտեսութիւն:

էՏԻԿԷՏ—Նշան, որ կայցրած է ապրանքի վրայ: 2) Արքունիքների և բարձր շրջանների սովորոյթները:

էՏԻՄՕԼՕԳԻԱ.—Ստուգարանութիւն, բառազննութիւն:

էՏԻՕԼՕԳԻԱ—Բժշկական գիտութեան այն ճիւղը, որն ուսումնասիրում է հիւանդութիւնների պատճառները:

էՏԻԻԴ—Նախագիծ, սուերագիծ:

էՏՆՕԳՐԱՅԻԱ.—Ազգագրութիւն:

էՐԱ—Նշանաւոր թւական, որից սկսում են ժամանակի հաշիւը, ինչպէս օրինակ՝ Քրիստոսի ծնունդը, Մահմէդի փախուստը և այլն, և այլն:

էՐՄԻՏԱԺ—Պետերբուրգի Չմերային պալատին կից թանգարան:

- ՀԻՌՈՒԴԻՑԻԱ**—*Խորը և բազմակողմանի գիտութիւն:*
- ՀԻՑԳԵՐՑՕԳ**—*Աւստրիական թագաւորական ընտանիքին պատկանող տղամարդոց տիտղոսը:*
- ՀԻՐՕՏ**—*Յոյների սիրոյ ասուածը, որ պատ'իերացում է թեւաւոր պատանու կերպարանքով:*
- ՀԻՐՏՕՄԱՆԻԱ**—*Սեռամոլութիւն, հոգեկան հիւանդութիւն, որի ժամանակ մարդն ամբողջովին զբաղւած է լինում սեռական խնդիրներով և վերջնիս հետ կապ ունեցող առարկաներով, մոռանալով ամեն ինչ, որ կապ չունի սեռական յարաբերութեան հարցի հետ:*
- ՀԻՖՈՒՐՏԻ ԾՐԱԳԻՐԸ**—*Այն ծրագիրն է՝ որ ընդունել է գերմանական սցիալ-դեմօկրատիան Էրֆուրտի համագումարում 1891 թ. Յաճախ այդ անւան տակ հասկանում են ոչ թէ ծրագիրը, այլ այն կօմմենտարները՝ որ գրել է Կ. Կառլցկին յիշեալ ծրագրում շոշափւած հարցերի մասին: (Տես Սօցիալիզմ, Տնտեսական մատերիալիզմ):*
- ՀՅԷՆԴԻ**—*Պատուաւոր տիտղոս, որ Տաճկաստանում տրւում է չինոյիսիկներին, գիտնականներին:*
- ՀՅՖԷԿՏ**—*Ուշագրաւ, ազգու տպաւորութիւն, մեծ ազդեցութիւն:*

Ը

- ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԵՂԻՕՐԱՏԻ**—*Տես Մեղիօրատիւ բնկերութիւն:*
- ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ**—*Կոչւում է ժողովրդի կամ նրա որևէ մասի իրաւունքը՝ իր ցանկութեամբ ընտրելու ընդհանուր-պետական օրէնսդրական կամ տեղական-հասարակական ժողովի անդամներ, ինչպէս և պաշտօնեաներ՝ աղմինիստրատիւ կամ դատարանական*

հիմնարկութիւնների համար: Ժողովրդի կամքի և ազգեցութեան լիակատար արտայայտութեան համար անհրաժեշտ է, որ ընտրողական իրաւունքը լինի համաժողովրդական իրաւունք՝ առանց որևէ բացառութիւնների ու սահմանափակումների. այսինքն՝ այդ իրաւունքը պէտք է լինի ընդհանուր, նրանից օգտուեն բոլոր չափահաս քաղաքացիները—քսան տարեկանից բարձր, առանց սեռի, ազգի, կրօնի խտրութեան և առանց որևէ ցենզի: Ընտրողական իրաւունքը պէտք է լինի հաւատար, այսինքն, ամեն քաղաքացի մի ձայնից աւելի չպէտք է ունենայ և նրա ընտրողական իրաւունքը պէտք է լինի թէ՛ ակտիւ և թէ՛ պասսիւ, այսինքն՝ ամեն քաղաքացի պէտք է իրաւունք ունենայ թէ՛ ընտրելու և թէ՛ ընտրուելու: Ընտրութիւնների ժամանակ ձայնատուութիւնը պէտք է լինի գաղտնի, որպէս զի չբաւոր ու թոյլ ընտրողները հարուստներից և ուժեղներից չվախենան և իրանց ձայնը նրանց չը տան: Զայնատուութիւնը պէտք է լինի ուղղակի, այսինքն՝ ամեն քաղաքացի հարկաւոր պաշտօնիային պէտք է ինքն ուղղակի, անմիջապէս, իր ձայնը տայ և ոչ թէ պատւիրակներ ընտրէ, որպէսզի նրանք զնան և պաշտօնիային ընտրեն. ուրիշ խօսքով, ընտրութիւնը աստիճաններով չպէտք է լինի, որպէսզի արտայայտւի ժողովրդի իսկական կամքը: (Տես Դեմօկրատիա, Երկաստիճան ընտրութիւն, Կառավարութեան մե):

Թ

ԹԱԼՄՈՒԴ—Տես Տալմուդ:

ԹԵԶ—Դրութիւն, որը բացազրութեան կարօտ է:

ԹԵԶԻՍ—Տես Թեզ:

ՔԵՄԱ—Բնարան, գրեթե արտադրութեան գլխաւոր, էական միտքը, երաժշտութեան մէջ՝ գլխաւոր եղանակը:

ՔԷԻՉՄ—Աստուածականութիւն, փիլիսոփայական ուսմունք, որ ընդունում է միակ և մէկ աստուածութեան գոյութիւնը:

ՔԷԻՍՏ—Աստուած հաւատացող:

ՔԷՕԼՕԳ—Աստուածարան:

ՔԷՕԼՕԳԻԱ—Աստուածարանութիւն:

ՔԷՕԿՐԱՏԻԱ—Աստուածպետութիւն — քաղաքական ուսմունք և կառավարութեան ձև, որը հիմնուած է այն տեսութեան վրայ՝ թէ պետութիւնն աստուածազիր հաստատութիւն է և նրա կառավարութիւնը պէտք է լինի Աստուծոյ յայտնութեամբ. հետևապէս՝ հոգևորականութիւնը, որպէս Աստուծային կամքը բացազրոյ ու նրա բարեհայեցողութեանն արժանացած դասակարգ, պէտք է վայելէ երկրի բարձրագոյն իշխանութեան իրաւունքը:

ՔԷՕԿՐԱՏԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՏԵՍԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՃԵՆ:

ՔԷՕՄԱՆԻԱ—Կրօնական խելացնորութիւն:

ՔԷՕՐԵԹԻԿ—1) Տեսական, տեսականապէս: 2) Մարդ, որի գիտութիւնը թէօրիաներն են: (Տես Թեօրիա):

ՔԷՕՐԻԱ—Գիտութիւն, որ հիմնուած է վերացական սկզբունքների և դատողութիւնների վրայ:

ՔԷՕՐԵՄԱ—Մաթեմատիկայի մէջ ճշմարտութիւն, որը համոզեցուցիչ ու հասկանալի դառնալու համար բացազրորութեան կարօտ է:

Ժ

ԺԱԿԷՐԻ—Այդպէս է կոչուած 1358 թ. Ֆրանսիայում տաջացած ապստամբութիւնը որ անմիջական հետե-

ւանք էր Թաղաւոր Կարլոս Չարի կատարած աւերածութիւնների: Ապստամբութիւնը ազնւական-կալւածատէրերի դէմ էր ուղղւած: Ապստամբները աւերակ ու մոխիր էին դարձնում կալւածատէրերի ամրոցները, կոտորում էին տէրերին, ըռնաբարում էին նրանց կանանց ու աղջիկներին: Ազնւականները միացան և արեան հեղեղների մէջ խեղդեցին այդ ապստամբութիւնը:

ԺԱՆԴԱՐՄ—Միջին դարերում այդպէս էին կոչուում զրահաւորւած ասպետները: Մեր օրերում ժանդարմները կատարում են ձիաւոր և գաղտնի ոստիկանութեան պաշտօնը. Ռուսաստանի ամեն մի նահանգական, իսկ վերջին ժամանակներս՝ նաև կարևոր գաւառական քաղաքներում նշանակւում է ժանդարմների առանձին կօրպուս իր շտաբ-օֆիցէրով, որը հսկում է բնակչութեան վրայ, հետևելով նրա ամեն մի քաղաքական քայլին ու տրամադրութեանը, և քաղաքական գործերի մէջ կատարում է նախնական քննութիւնը:

ԺԱՆՐԻՍ—Նկարիչ, որ իր նկարների նիւթը վերցնում է առօրեայ կեանքից:

ԺԵՍ—Շարժում, նշան, ազդանշան:

ԺԵՐՄԻՆԱԼ—Ֆրանսիական հանրապետական օրացոյցի 7-րդ ամիսը (մարտի 21-ից մինչև ապրիլի 19-ը):

ԺԻՐՕՆԴԻՍՆԵՐ—Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ գործող քաղաքական կուսակցութիւն, որ իր անունն ստացել է Ժիրօնդա նահանգից: Ժիրօնդիստները լիբերալ-բուրժուազիայի հայացքների ու շահերի պաշտպանը հանդիսացան: Նրանք կռիւ էին մղում Մօնտանեարների դէմ, որոնք աշխատաւոր դասակարգի կուսակցութիւնն էին կազմում և որոնց, վերջ ի վերջոյ, ժիրօնդիստները զիջեցին իրանց գերիշխանութիւնը: (Տես Լիբերալիզմ, Լերան կուսակցութիւնը):

ժիւրի—1) Երզնէականների դատաստան: 2) Գիտակ անձերի խորհրդակցութիւն, որ կազմուեմ է որեւէ արտադրութեան արժանիքը գնահատելու նպատակով:

ԺՈՂՈՂԴԳԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ—1870 թ. Անգլիայում մի հոսանք սկսեց որի նպատակն էր գիտութիւնը տարածել հասարակութեան աւելի լայն խաւերի մէջ. այդ նպատակով համալսարանների պրոֆեսորներն ուղարկուեմ էին զանազան գաւառներ՝ դասախօսութիւններ կարդալու: Այս հոսանքն անցաւ Ամերիկա և Աւստրալիա: Դանիայում գիտութիւնը հանրամատչելի դարձրնելու նպատակով դիմեցին գիւղացիական կամ ժողովրդական համալսարանների հիմնարկութեանը: Վերջիններս առանձնապէս զարգացան սկանդինաւական երկրներում և Ֆինլիանդիայում: Այդտեղ երկու սեռի անձանց համար, որոնք ատարտել են ժողովրդական դրարոցը, ընդհանուր կրթական առարկաներից, ինչպէս և գործնական առարկաներից, մատչելի դասախօսութիւններ են կարդացուեմ: Ֆինլիանդիայում այդպիսի դրարոցների թիւը 21 է: 1893 թ.ին կոնգրեսում կար 152 ժողովրդական համալսարան 15,700 ուսանողներով, Յուսթոնում՝ 219 համալսարան՝ 23,300 ուսանողներով, Չիկագոյում՝ 125 համալսարան 24,822 ուսանողներով: Ռուսաստանում ժողովրդական համալսարանի գոյութիւնը հնարաւոր դարձաւ միայն 1905 թ. հոկտ. 17-ի մանիֆեստից յետոյ: Ազգարնակութեան լայն խաւերը մինչ այդ ուստիկանական միջոցներով հեռու պահեւած գիտութիւնից, ազահութեամբ սկսեցին յաճախել նոր բացւած համալսարանները: Ներկայումս աստիճանաբար սահմանափակուեմ է ժողովրդական համալսարանների գործունէութեան շրջանակը:

ԺՈՂՈՂՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ, ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ —

Տես Լիբերալիզմ:

ԺՈՒՐՆԱԼԻՍՏ—Ժուրնալական գրականութիւն: (Տես ժուրնալ):

ԺՈՒՐՆԱԼ—Նշանակում է օրագիր, օրաբերք: Ռուսաստանում ժուրնալ են կոչւում շաբաթագրերն և ամսագրերը, որոնց նպատակն է՝ մասամբ փոխարինել գրքերին: Արտասահմանում ժուրնալ են կոչւում բոլոր պարբերական հրատարակութիւնները, որոնք սակայն հրատարակում են շուտ-շուտ, որպէսզի հնարաւորութիւն տան հետեւելու ընթացիկ կեանքին: Ամենահին ժուրնալներն են՝ Ֆրանսիայում՝ «Journal des Savants», (1665 թ.), Անգլիայում՝ «Mercurius librarius» (1860 թ.), Գերմանիայում՝ «Erbauliche Monatsunterredungen» (1670 թ.), Ռուսաստանում՝ «Ежемесячное соч.» (1755 թ.) որ հրատարակում էր Գիտութիւնների Ակադեմիան:

ԺՕՐԷՄԻՍՏՆԵՐ—Կոչւում են Ֆրանսիական սօցիալիստական կուսակցութեան մի ճիւղի հետևորդները, որոնք իրանց անունն ստացել են իրանց ղեկավար Ժօրէսից: Սօցիալիզմի իրականացման գլխաւոր ուղին ժօրէսիստները համարում են խաղաղ սօցիալական ռէֆորմները: (Տես Սօցիալիզմ):

Ի

ԻԴԷԱԼ—Բարձրագոյն կատարելութիւն, որը կարող է մեր ձգտումների առարկան միայն լինել և որի նշանակութիւնը նրա իրականանալուց չէ կախւած: Գեղարեստի մէջ իդէալ նշանակում է որևէ գաղափարի լիակատար արտայայտութիւնը՝ կօնկրէտ ձևով:

ԻԴԷԱԼԻԶՄ—1) Սովորական գործածութեան մէջ նշանակում

է մարդու այնպիսի վերաբերմունքը զէպի իրականութիւնը, որի ժամանակ նա հակած է կեանքին և անհատներին վերաբերող երևոյթները զնահատել աւելի բարձր՝ քան հարկաւոր էր: 2) Մտաւոր ու բարոյական հակումների գերակշռութիւնը մասնաւոր ու նիւթական շահերից: 3) Փիլիսոփայական մտքով՝ իդէալիզմ կոչոււմ է մարդկային մտքի տեսական վերաբերմունքը զէպի արտաքին աշխարհի երևոյթները. այսպէս ըմբռնած իդէալիզմը մի քանի ուղղութիւն ունի.—

ա) Դոգմայական իդէալիզմ, որը երկու-ստորաբաժանումներ ունի—նախ՝ ւտածողութեան այն ձևը, որ ընդունում է երկու աշխարհի գոյութիւնը—մէկը՝ իդէաների, զաղափարների աշխարհը՝ իբրև անփոփոխ էութիւն, ճշմարիտ էութիւն և միւսը՝ այդ աշխարհի պատճէնը, մեզ շրջապատող երևոյթներն իրանք, որոնք ըստ այդ ուսմունքի՝ ոչ այլ ինչ են, բայց եթէ երևակայական էութիւններ (Պլատոնի ուսմունքը): Դոգմայական իդէալիզմի երկրորդ ճիւղն է այն, որն ամբողջովին բացասում է նիւթական աշխարհը. ըստ այս ուղղութեան, գոյութիւն ունին միայն ասուածութիւնը և հոգիները, եւ ասուածութիւնը ներգործելով հոգիների վրայ, նրանց մէջ ծնեցնում է զաղափարներ—իդէաներ կամ արտաքին աշխարհի պատկերացումը (Բերկլիի ուսմունքը): Բ) Քրիստոնէական իդէալիզմ, որը բացասում է ոչ թէ առարկաների էութիւնը, այլ նրանց ճանաչելու և հասկանալու հնարաւորութիւնը. մենք առարկաները ճանաչում ենք այնպէս, ինչպէս որ մեզ նրանք թւում են մեր մէջ ինքըստինքեան գոյութիւն ունեցող սուբիէկտիւ, անհատական պայմանների ոյժով: Իսկ այդ առարկաներն ստեղծող, ծնող էութիւնը մեր ճանաչողութեան սահմաններից դուրս է (Կանտ.): Քննադա-

տական կամ տրանսցենդենտալ իդէալիզմն իր զարգացման ընթացքում երեք նորագոյն ուղղութիւն ստացաւ. ա) Սուբիեկտիւ կամ էտիկական իդէալիզմ, որի ըմբռնողութեամբ՝ առարկան ինքնըստինքեան գոյութիւն չունի և արտաքին աշխարհը մեր եսի մտաւոր գործունէութեան արդիւնքն է. բայց այդ եսը անհատական չէ, այլ ընդհանրական, անեղծ և արսօլիւտ: Տիեզերական պրօցեսսը բարոյական իդէաների, հասկացողութիւնների ու ըմբռնումների մարմնացումն է, (Ֆիխտէ): բ) Օբիեկտիւ կամ ֆիզիքական իդէալիզմ, որի ուսմունքով արտաքին աշխարհը մեր եսի գործունէութեան արդիւնքն է, բայց այդ եսը միայն հոգի կամ գիտական թիւ չէ, այլ հոգու և բնութեան միութիւնն է, սուբիէկտի և օբիէկտի արսօլիւտ միացումն է (Շելլինգ): Աբսօլիւտ կամ տրամաբանական իդէալիզմ — որն ընդունում է միայն մի ճշմարիտ էութիւն, — դա մտածողութիւնն է, զազափարը, իդէան, ըմբռնողութիւնը, կամ աւելի շուտ՝ արսօլիւտ զազափարի, իդէայի ինքնայայտութիւնը, որից դուրս ոչինչ չկայ (Հեգել):

ԻՒԷՅՕԼՕԳ.—1) Կարինետային քննադատ, 2) Որևէ հասարակական խմբի կամ կուսակցութեան ձգտումների, հասկացողութիւնների ու զազափարների գիտակատայայտիչն ու մտաւոր ղեկավարը:

ԻՒԷՅՕԼՕԳԻԱ.—Լայն մտքով՝ իդէօլօգիա կոչւում է մարդոց հոգեկան ձգտումների՝ կրօնական, փիլիսոփայական, գիտական, էստէտիքական, բարոյական և հասարակական ձգտումների ամբողջութիւնը: Աւելի նեղ մտքով՝ իդէօլօգիա կոչւում է անհատի կամ այս ու այն հասարակական խմբի ընդհանուր աշխարհայացքը:

ԻԼԼԻԻԶԻԱ.—Չզացմունքների սխալանք, որն ստիպում է երևակայականն իսկականի տեղ ընդունել: Ճնորք:

ԻՄՄԻԳՐԱՑԻԱ—Տես Գաղթ:

ԻՄՊԵՐԱՏԻ ՄԱՆԴԱՏ—Տես Մանդատ:

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ—1) Կառավարութեան ձև, որը պլխաւորապէս հիմնւած է զինւորական ոյժի վրայ: 2) Ամերիկայի Միացեալ-Նահանգներում, Անգլիայում և Գերմանիայում ներկայումս իմպերիալիզմ կոչուում է այն ձգտումը, որ ունեն այդ պետութիւնները դէպի նորանոր գաղութներ հիմնելը և իրանց իշխանութիւնն ըստ հնարաւորութեան շատ տեղերում հաստատելը:

ԻՄՊՈՒԼՍ—դրդիչ պատճառ:

ԻՆԴԻՎԻԴ—Անհատ:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ—Անհատական, անձնական, մասնաւոր:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶՄ—Անհատականութիւն.—աշխարհայացք, որը պատմութեան մէջ անհատին, իբրև այդպիսին, առաջնակարգ դեր է վերագրում:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՐԽԻԶՄ—Տես Անարխիզմ:

ԻՆԴԻՖԵԻԷՆՏ—Անտարբեր, սառն:

ԻՆԴԻՖԵԻԷՆՏԻԶՄ—Անտարբերութիւն, սառնութիւն:

ԻՆՏՈՒԴԵՆՏԻԱ—Ներուժն, թողութիւն, քաւութիւն մեղքերի—որոշ վճարով: Կաթոլիկ պապերը, իրանց դրամական հասոյթն աւելացնելու նպատակով հնարեցին ինդուլգենցիան մեղքերի թողութեան վկայագրերը, որոնք ձեռք բերողն ազատուում էր իր անցեալ, ներկայ և ապագայ մեղքերից և արժանի դառնում դրախտին: Ինդուլգենցիան դրամաշորթութեան մեծ աղբիւր դարձաւ, որով բողոք առաջ բերեց կաթոլիկ հաւատացեալներին մէջ և ստեղծեց բողոքական հոսանքը:

ԻՆՏՈՒԿՏԻ—Մակածական (Տես Ինդուկցիա):

ԻՆՏՈՒԿՏԻԱ—Մակածութիւն: Հետազոտութեան կամ մտածողութեան եղանակ, որով մասնաւորից հասնում են ընդհանուրին, փաստերից ու երևոյթներից դուրս են

բերում ընդհանուր եզրակացութիւններ, օրէնքներ ու հիւպօսեղներ:

ԻՆՆՈՒՍՏՐԻԱ.—Արդիւնագործութիւն:

ԻՆՆՈՒՍՏՐԻԱԼ.—Արդիւնագործական:

ԻՆԵՐՏ.—Յարակայ: Մարմինների միկնոյն շարժման կամ անշարժութեան մէջ մնալու յատկութիւնը:

ԻՆԵՐՑԻԱ.—Յարակցութիւն, մարմինների ինքնուրոյն կերպով իրանց շարժման կամ անշարժ դրութիւնը պահելու ձգտումը:

ԻՆՏԻՆԷՐ.—Ճարտարապետ:

ԻՆԻՑԻԱՏԻԻ.—Նախաձեռնութիւն: (Տես Ինիցիատիւ օրէնդրական):

ԻՆԻՑԻԱՏԻԻ ՕՐԷՆՍՏՐԱԿԱՆ.—Տես Օրէնդրական Ինիցիատիւ:

ԻՆԻՑԻԱՏՕՐ.—Նախաձեռնող:

ԻՆԿՈՒԲԱՏՕՐ.—Արւեստական կերպով ճուտեր հանելու մեքենայ:

ԻՆԿՎԻԶԻՏՕՐ—1) Ինկվիզիցիայի անգամ: 2) Չարաշար տանջող, չարչարող: (Տես Ինկվիզիցիա):

ԻՆԿՎԻԶԻՑԻԱ.—Հողեր ատեան, որ XII-րդ դարում հիմնեցին պապերը՝ հերետիկոսներին հալածելու համար: Ինկվիզիցիան ամեն հնար գործ էր դնում տանջանքի նորանոր գործիքներ ստեղծելու: XVI-րդ դարում ինկվիզիցիան տիրապետում էր ամբողջ եւրոպային, բացի Անգլիայից: Ինկվիզիցիային էին ենթարկւած ոչ միայն հողեր գործերը, այլև գրքերը, գիտութիւնը, որի պատճառով քաղաքակրթութիւնը համեմատաբար դանդաղ քայլերով էր առաջ գնում: XVII-րդ դարում ինկվիզիցիան վերացաւ շատ տեղերում: Մպանիայում ինկվիզիցիան ոչնչացրից նապօլէոն 1-ը՝ 1809 թ. (Տես Եգիպտոս):

ԻՆԿՕՒՆԻՏՕ—Գաղտնի, ծածուկ: Իր իսկական անունը, կո-

չումը, պաշտօնը գաղտնի պահել: Այդպէս ճանապարհորդում են թագաւորները, բարձր աստիճանաւորները կամ յատուկ նպատակով որեւէ տեղ ուղարկած պաշտօնեաները, երբ հարկաւոր է լինում անյայտ մնալ, գաղտնի պահել իրանց իսկական նպատակը:

ԻՆՍԻՆՍԻՍԻՏԱ—Ամբաստանութիւն, սադրանք, քսութիւն:

ԻՆՍՊԵԿՏՕՐ—Տեսուչ, վերահսկիչ: 1) Որեւէ զօրամասի զրութիւնը քննելու գնացած պաշտօնեայ: 2) Առհասարակ պաշտօնեայ, որը նշանակուած է այս կամ այն հիմնարկութեան գործունէութեան կանոնաւորութեանը հսկելու: Այսպէս, կան դպրոցների ինսպեկտօրներ, հարկերի ինսպեկտօրներ, գործարանների, երկաթուղիների և այլն:

ԻՆՍՊԵԿՏԻԱ—1) Հսկողութիւն՝ որ անհատներն ու հիմնարկութիւնները կատարեն իրանց համար դրած կանոնները: 2) Ինսպեկտօրի պարտականութիւնները: 3) Այն շրջանը, որը ենթարկուած է ինսպեկտօրի իրաւասութեանը:

ԻՆՍՏԱՆՏԻԱ—Իրաւասութեան աստիճան: Ինստանցիա են կոչուում իրաւասութեան այն աստիճանական աստիճանները, որոնց հերթով հասնում են խնդիրները, բողոքները: Այդ արտայայտութիւնը գործածուած է սովորաբար դատարանների վերաբերմամբ, որոնք Ռուսաստանում ներկայումս բաժանուած են երեք ինստանցիայի. բնդհանուր դատաստանական հաստատութիւնների առջին ինստանցիան է նահանգական դատարանը (Օկրուժնոյ սուդ), երկրորդը՝ դատաստանական պալատը (Սուդեբնայա Պալատա), երրորդը՝ Սենատը: Հաշտարար դատարանն ունի հետեւեալ ինստանցիաները. 1) Հաշտարար դատաւոր կամ զեմսկիյ նաչախիկ,

2) Հաշտարար դատաւորների կամ զեմակիյ հաշաչնիկ-
նիկների խորհուրդը և 3) Սենատը:

ԻՆՍՏԻՆԿՏ—Բնազդ: Խելքի ամենացածր աստիճանը, որով
օժտւած են կենդանիները բնականից:

ԻՆՍՏԻՏՈՒՏ—Բառացի կերպով նշանակում է հաստատու-
թիւն: Ինստիտուտները հիմնուած են զանազան նպա-
տակներով. այսպէս՝ բարձրագոյն կամ միջնակարգ
գալրոցները, զանազան գիտական և հասարակակա՛
հիմնարկութիւնները և այլն կոչուած են ինստիտուտ:

ԻՆՎԱԼԻԴ—1) Զինւոր, որն ստացած վէրքերից ծառայու
թեան անընդունակ է դարձել: 2) Ամեն մի զառամեա
գործիչ, որն իր պարապմունքին անընդունակ է դար
ձել:

ԻՆՏԵԼԷԿՏ—Տես Ինտելեկտուալիզմ:

ԻՆՏԵԼԷԿՏՈՒԱԼԻԶՄ—Հայեացք, որն առաջնակարգ նշանա
կութիւն է տալիս խելքին, մարդու մտաւոր ընդունա-
կութիւններին—Ինտելլէկտին:

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ—Տես Ինտելլիգենցիա:

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ—Մտաւորականութիւն: Հասարակական
զանազան դասակարգերից ու խաւերից առաջ եկած ան-
հատներից կազմուած նոր հասարակական խաւ, որի
ընդհանր յատկութիւններն ու գծերն են. 1) Խորը հե-
տաքրքրութիւն դէպի հասարակական կեանքի զանա-
զան երևոյթները. 2) Ինտելլիգենցիան իր շրջապատից
մտաւորապէս բարձր է կանգնած. 3) Ինտելլիգենցիան
զեկավարում է հասարակական կեանքը և ուղղութիւն
տալիս վերջինիս: 4) Ինտելլիգենցիայի բարոյական
յատկութիւնների որպիսութիւնը կախուած է այն հա-
սարակութեան բարոյականից, որից ծագել կամ որի
մէջ գործում է նա: Ինտելլիգենցիային պատկանող ա-
մեն մի անհատ կոչուած է ինտելլիգենտ:

ԻՆՏԵՆՍԻԻ — Բեղուն, բարգաւաճ: Ինտենսիւ կոչուում է տնտեսութեան (երկրագործութեան, անասնապահութեան և այլ) այն ձևը, որի մէջ գործադրուում են ժամանակի բոլոր կատարելագործութիւնները, արւած գիւտերը, չի խնայուում ոչ մի ջանք, աշխատանք—և ստացուում է օգուտի ամենարարձր չափը: Ինտենսիւ տնտեսութիւնը կարող է լինել այնտեղ, ուր կայ կապիտալ: Ինտենսիւ տնտեսութեանը հակադրուում է ևկստենսիւ տնտեսութիւնը, որի մէջ չի դրուում ոչ մեծ աշխատանք, ոչ դրամագլուխ և ոչ էլ մտցուում են ժամանակի կատարելագործութիւնները, այլ աշխատում են օգուտի զլխաւորապէս բնութեան ոյժերից: Ինտենսիւ տնտեսութիւնը յատուկ է քաղաքակրթւած ժողովուրդներին, էկստենսիւ տնտեսութիւնը՝ անքաղաքակիրթ ժողովուրդներին:

ԻՆՏԵՐԴԻԿՏ—Արգելում, արգելք: Տես նաև Բօյկօտ:

ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼ—1) Բանւորների միջազգային միութիւն, որ 1864 թ. հիմնեցին Կ. Մարքսը և Ֆ. էնգելսը Լօնդօնում, Ինտերնացիօնալն ունէր իր ճիւղերը եւրոպական երկրների մեծ մասում: 1872 թ. Հաագայի կօնգրեսից յետոյ Ինտերնացիօնալը լուծւեց երկու հակառակ ճոսանքների՝ սօցիալ-դեմօկրատականի (Կ. Մարքս) և անարխիստականի (Բակունին) մրցութեան պատճառով: Ներկայումս Ինտերնացիօնալին փոխարինում են միջազգային կօնգրեսները: 2) Սեւ ինտերնացիօնալ կոչուում է Եզուիտների օրդէնը:

ԻՆՏԵՐՊԵՂԻԿԱՑԻԱ — Տես Չապրօ:

ԻՆՏԵՐՎԻԻ—Այց, տեսութիւն, հարցուփորձ հեղինակաւոր մարդոց՝ հասարակութեանն հետաքրքրող խնդիրների մասին:

ԻՆՏԻՄ—Մտերիմ, մօտիկ, սրտալի:

ԻՆՏՐԻԳ—Բանսարկութիւն, քսութիւն, նենդութիւն:

ԻՆՏՐԻԳԱՆ—Բանսարկու, քսու, նենդ:

ԻՆՏՐԻԵՆՏ—Դիպւած, դէպք:

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻԻՆ—Տես կա ւալարութեան ձեռ:

ԻՊՕԽՕՆԴԻՐԱ—Մաղձոտութիւն, սեամաղձութիւն: Նոյնը և
Հիպոխոսիքիա:

ԻՊՕԽՕՆԴԻՐԻԿ—Մաղձոտ, սեամաղձոտութեամբ բռնւած:

ԻՊՕՏԵԿԱ—Գրաւ, որի ժամանակ գրաւ է առնուած ոչ թէ
խկական առարկան, այլ այդ առարկայի իրա-
ւունքը:

ԻՍԼԱՄ—Միաստւածական կրօն՝ որ VІІ-րդ դարում յայ-
տարարեց Մահմեդն արաբներին իբրև Աստւածային
ներշնչում: Իսլամականութեան սկզբունքները և կա-
նոնները գրւած են Ղուրանում: Հիմնական պահանջ-
ներն են.—հաւատալ մի, ամենակարող, ամենազոր-
ւած Աստծուն—Ալլահին և Մահմեդին, որը նրա մար-
գարէն է: Աստւածային նախախնամութեան գոյու-
թիւնը, կեանք՝ հանդերձեալ աշխարհում, յարութիւն
մեռելիների և պատիժ ու վարձատրութիւն չար և բարի
գործերի համար՝ դժողբում ու դրախտում: Իսլամակա-
նութիւնը հրէական և քրիստոնէական կրօնի խառնուր-
դն է: Վճռապէս ժխտում է Յիսուսի Ասածու որդի
լինելը: Հրէականութիւնից փոխ է առնւած խոզի մսի
և գինու գործածութեան արգելքը: Ընդունուած է բազ-
մակնութիւնը: Հաւատացեալները պարտաւոր են տա-
րածել իրանց կրօնը սրով ու թրով, որովհետև Իսլա-
մը պէտք է համաշխարհային կրօն դառնայ: Իսլամա-
կան ուսմունքի աղբււրը Ղուրանն է, որտեղ գրւած
են պետական, քրէական և ծիսական հիմնական օրէնք-
ները: Իսլամականութիւնն արագութեամբ տարածեց
Ասիայում և Աֆրիկայում: Իր հիմնելուց հարիւր տա-

րի յետոյ նա գերիշխող կրօն դարձաւ՝ Սիրիայում, Պարսկաստանում, Միջին-Ասիայում, Եգիպտոսում, Աֆրիկայի Հիւսիսային ափերում և Սպանիայի մի մասում: Իսլամականն էր թիւը 250 միլիոնի է հասնում: Կան 82 իսլամական դասնութիւններ: Իսլամականութիւնն իր հիմնադրի՝ Մահմեդի անունով կոչուում է նաև Մահմեդականութիւն:

ԻԻՆԿԵՐ—Գերմանիայում առաջ կոչուում էին երկտասարդ ազնւակաները, իսկ 50-ական թւականներից այդպէս սկսեցին կոչել պարլամենտում ոչակցիօնէր-ազնւականները: Իւնկէր է կոչուում նաև այն գինւորական գարոցի աշակերտը, որտեղ աւարտողներն օֆիցէր են դառնում:

ԻԻՍՏԻՑԻԱ—Մրդարագատութիւն:

ԻԻՐԻՍԿՆՍՈՒՆԻՍ—Իրաւարան, որը ծառայում է պետական կամ մասնաւոր հաստատութեան մէջ և որի պաշտօնն է՝ խորհուրդներ ու ցուցմունքներ տալ իրաւական վիճելի հարցերի վերաբերմամբ:

ԻԻՐԻՍՊՐՈՒԳԵՆՑԻԱ—Իրաւագիտութիւն:

ԻՏԱԼԱԿԱՆ ԿԼԵՐԻԿԱԼՆԵՐ—Տես Կլերիկալիզմ:

I

ԼԱՔԻԻԻՆՔՈՍ—1) Հին շինութիւններ, որ ունեն միայն մի մուտք և բազմաթիւ սենեակներ ու ուղրապտոյտ սրահներ, որի պատճառով ներս մտնելուց յետոյ այնտեղից դուրս գալը համարեա անհնար է դառնում: 2) Ամեն մի շփոթ, խառնած, անհլանելի գրութեան հասած գործ:

ԼԱՔՐԱՆՏ—Լարօրատօրիայի կառավարիչ կամ նրա մէջ աշխատող: (Տես Լարօրատօրիա):

ԼԱՔՐԱՏՐԻԱ—Աշխատանոց, որտեղ կատարում են բիմի-

ական վերլուծութիւններ և գիտական զանազան փորձեր:

ԼԱԶԱՐԷՏ—Հիւանդանոց:

ԼԱՄԱ—Բուզղայական հոգևորականների անունը Տիրէտում:

ԼԱՄԱԻԶՄ—Տիրէտի և Կենտր. Ասիայի մօնղոլական ցեղերի մէջ տարածւած մի կրօն, որ բուդդիզմից է դուրս բերւած: Լամաիզմը կանոնաւոր կերպով կազմակերպած հոգևորականութիւն ունի: Վերջինս կուսակրօն է: Լամաիզմը քրիստոնէութեանը ծիսական շատ նմանութիւններ ունի: (Տես Բուդդիզմ):

ԼԱՆՈՆԱԿԱՆ—Հակիրճ, ազդու, կարճ, պարզ:

ԼԱԿՈՆԻԶՄ—Հակիրճ, կարճ, ազդու, պարզ ոճ:

ԼԱՆԴՀԵՐԻՍՏ—Միքանի գերմանական երկրներում և Ֆինլեանդիայում քրէական և քաղաքացիական գործերի ստորին դատարանը:

ԼԱՆԴՏԱԳ—1) Գերմանիայի առանձին պետութիւնների դասային ներկայացուցիչների ժողովը — պարլամենտը:

2) Աւստրիայում կանդտագ կոչւում է թագաւորական հոգերի դասային չորս կուրիաներում ընտրւած ժողովրդական ներկայացուցչութիւնը: (Տես նաև Պարլամենտ):

ԼԱՍՍԱԼԱԿԱՆՆԵՐ—Տես Լասսալիստներ:

ԼԱՍՍԱԼԻՍՏՆԵՐ կամ ԼԱՍՍԱԼԱԿԱՆՆԵՐ—Կոչւում են գերմանացի Ֆ. Լասսալի հետևորդները, որոնք Լասսալի հետ միասին իրանց համարում էին Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի աշակերտները, բայց որոնք տարբերւում էին գերմանական սօցիալ-դեմօկրատներին նրանով՝ որ հրահրաւոր էին համարում սօցիալիստական կարգերի իրագործումը հէնց իրանց օրով, աստիճանական փոփոխութեամբ ու ուէֆօրմներով՝ որոնք պէտք է կատարւէին պետութեան օգնութեամբ: 1891 թ. էրֆուրտի կօնգրեսում լասսալականները և սօցիալ-դեմօկրատ

- մաքքսիստները ձուլեցին և ընդունեցին միակ ծրագիրը, որով սօցիալիզմի իրականացումը հնարաւոր էր համարուում միայն սօցիալական յեղափոխութեան ճանապարհով և պրօլետարիատի դիկտատուրայի միջոցով: (Տես Սօցիալիզմ, Քաղաքական կոնսակցուքիւնցներ):
- ԱՍՍԱ. Ա. Ֆել'դի'ն ԱՆԴ**—Տես Աասսալիստներ, Սօցիալիզմ:
- ԱԵԳԱ. Ա.**—Օրէնքով թոյլատրւած, բացարձակ:
- ԱԵԳԱ. Ա. ԶԱՅԻԱ**—Օրինական թոյլտուութիւն, վարչական հաստատութիւն:
- ԱԵԳԵՆԵՒ** կամ **ԱԵԳԵՆԵՒԱ**—Աւանդութիւն, առասպել, պատմւածք, անհաւատալի, հրաշալի դէպքերի մասին:
- ԱԵԳԵՆԵՒԱՐ**—Առասպելական, անհաւատալի:
- ԱԵԳԷՅՆ**—Հին Հոմէրական ամենամեծ գօրաբաժինը (3—6 հազար հոգի): Լեզէօն բանն այժմ յգործածոււմ են՝ քանակի չափազանցութիւնը ցոյց տալու:
- ԱԵԳԻՏԻՄԻԶՄ**—Քաղաքական ուսմունք, որի համաձայն երկրի Բարձրագոյն իշխանութիւնը մի անկախ գոյութիւն է՝ ստացւած իրրև ժառանգութիւն՝ պատմական անբոնարարելի օրէնքներով. հետևապէս, փոխել բարձրագոյն իշխանութիւնը, կամ ենթարկել նրան ժողովրդի կամքին—անկարելի է և անթոյլատրելի: Բարձրագոյն իշխանութեան անձեռնմխելիութիւնը քարոզելով, լեզիտիմիզմը, բնականաբար, պէտք է պաշտպանէր թագաւորական դինաստիաների շահերը: Յիրաւի, Ֆրանսիայում, օրինակ՝ լեզիտիմիստները բուրբօնների կողմնակից էին: Լեզիտիմիզմ նշանակում է նաև օրինականութիւն, գոյութիւն ունեցող օրէնքների կողմնակցութիւն: Նոյն նշանակութիւնն ունի նաև լօյալիզմ բառը:
- ԱԵԳԻՏԻՄԻՍՏՆԵՐ**—Լեզիտիմիզմի կողմնակիցներ: (Տես Ա. Ե. զիտիմիզմ):

ԼԵՀԱԿԱՆ ԿԼՈՒԲ—Տես Կլերիկալիզմ:

ԼԵԿՏՕՐ—Դասախօս, կարդացող, ընթերցող:

ԼԵԿՑԻԱ—Դասախօսութիւն:

ԼԵՏԱՐԳԻԱ—Տես Լետարգիական քուն:

ԼԵՏԱՐԳԻԱԿԱՆ ՔՈՒՆ—Տեական, հիւանդոտ քուն, որի ժամանակ կանգ է առնում օրգանիզմի կեանքի գրեթէ ամբողջ ընթացքը, բացի արեան թեթև շրջանառութիւնից: Փոխարեբրական մտքով՝ լետարգիական քուն նշանակում է մտաւոր անշարժութիւն, անզորժունէութիւն, հոգեկան անզգայութիւն:

ԼԵՐԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ—Տես Մօնտանեարնէր:

ԼԷԲԷԼ—Տես Բօյկօտ:

ԼԷՆԴԼՐԴ—Կոչում են Անգլիայի խոշոր հողատէրերը:

ԼԷՑՏԸՆԱՆՏ—1) Ռուսական Ֆլօտի աստիճան, որ համապատասխան է Ս-րդ օրեր-օֆիցերական չինին: 2) Եւրոպայում՝ առաջին օֆիցերական չինը:

ԼԻԲԵՐԱԼ—Ազատամիտ:

ԼԻԲԵՐԱԼԻԶՄ—Ազատամտութիւն: Ուսմունք, որը հակառակ պահպանողականութեանը, կօնսերվատիզմին՝ բարոզում է մարդու ազատութիւնը թէ անհատական և թէ հասարակական կեանքի բոլոր ասպարէզներում:

Փիլիսոփայութեան և կրօնի մէջ լիբերալիզմը պահանջում է մարդկային մտքի կատարեալ ազատութիւն (այստեղից ծագում է խղճի, մտքի, խօսքի, ուսմունքի լիակատար ազատութեան պահանջը):

Քաղաքական լիբերալիզմն առաջին անգամ պաշտօնապէս յայտարարեց «Մարդու և քաղաքացու իրաւունքների ղեկավարացիա»-ի մէջ: (Տես Դեկլարացիա):

Քաղաքական լիբերալիզմը պահանջում է սահմանադրական անխախտ կարգեր՝ հակառակ անսահման միապետութեանը, տեղական ինքնավարութիւն՝ հակա-

ուակ՝ կենդրոնացման, ազատութիւն՝ ոտտիկանական հսկողութիւնից, կանանց իրաւունքների հաւասարեցումը—տղամարդոց, դասային անհաւասարութեան վերացումը, երգեաների դատարան՝ ընտրեած ժողովըրդից, հարկերի և տուրքերի արդարացի բաժանում:

Տնտեսական կեանքում լիբերալիզմն արտայտուում է իրբն պահանջ, որ պետութիւնն ամենևին չխառնւի ժոժովրդի տնտեսական կեանքի մէջ (Laissez faire, laissez passer»), որ աւետրի (Ֆրիտարէզէրներ), մրցութեան (կօնկուրենցիայի) և աշխատանքի լիակատար ազատութիւն լինի: Պետութիւնն ամենևին չխառնւի գործարանատիրոջ և բանւորի յարաբերութիւնների մէջ—որի հետևանքը՝ չթրշլատրել գործարանային որևէ օրէնսդրութիւն, որը պաշտպանէր բանւորներին կապիտալիստների շահագործութիւնից, արգելումն գործադուլների, բանւորական միութիւնների և առահասարակ՝ բոլոր այնպիսի հաստատութիւնների, որոնց նպատակն է՝ միջամտել բանւորների ու կապիտալիստների փոխադարձ յարաբերութեան գործում: Ուստի՝ զարմանալի չէ, որ լիբերալիզմը դարձաւ բուրժուազիայի գործունէութեան նշանարանը: Որքան լիբերալներն ուժեղանում են և տիրող ազգեցութիւն ձեռք բերում՝ այնքան նրանք պահպանողական են դառնում: Լիբերալ կուսակցութիւնների նպատակն է՝ լիբերալիզմը մտցնել կեանքի մէջ. այդ ձգտումը զանազան երկրներում ստանում է տարբեր նշանակութիւն. եթէ երկիրը բունապետական է, կղերական ոգով խեղդեւած, յետ մնացած, լիբերալիզմն այնտեղ ցանկալի և յառաջադէմ հոսանք է: Անգլիայում 1866 թ. ընտրողական օրէնքից յետոյ՝ լիբերալ կուսակցութիւնն աստիճանաբար զիմօկրատանում է: Գերմանիայում լիբերալ կուսակցու-

թիւններն են. նաջիօնայ լիբերայները, Ալատ ամիսները, և ժողովրդ. կոնսակցաբիւնը: Աւստրիայում՝ Գերման-
լիբերայները, նաև՝ Երևուսարդ ջեխերը և Երևուսարդ
ուսիսները: Թիւրքիայում՝ Երևուսարդ-թիւրքերը: (Տես
Կօնսերվատիզմ):

ԼիԳէ՛՛՛ — 1) Քաղաքական կուսակցութեան առաջնորդ՝ Ան-
գրլիայում: 2) Առհասարակ՝ առաջնորդ, ղեկավար,
գլխաւոր:

ԼիԿ՝ԼիԳԱՅԻԱ — Որևէ ձեռնարկութեան (գլխաւորապէս ա-
ւսարական) վերջացնելը և հաշիւներ մաքրելը:

ԼիՆԳԻԻՍՏ կամ ՖիԼՕԼՕԳ — Լեզուագէտ:

ԼիՆԳ՝ԼիՍՏԻԿԱ — Համեմատական լեզուագիտութիւն:

ԼիՆՁԻ ԴԱՏԱՍՏԱՆ — Ինքնագատաստան, որ կատարում է
ժողովուրդը, առանց որևէ օրէնքի համակերպելով:

ԼիՏՐ — Հատիկների ու հեղուկների չափ Արեմասան Եւրո-
պայում: Հաւասար է 1 խոր. ղեցիմետրին կամ 0,001
խորանարդ մետրին = 1 քիլօգրամ ջրին = 0,0813 ուուս.
վեդրօյին = 0,0381 չեովերիկին կամ $\frac{1}{3}$ գարնցին ($50^{\frac{1}{2}}$
խոր. գիւյմ):

ԼիՏՕԳՐԱՖԻԱ — 1) Վիմագրութիւն, 2) Վիմագրատուն:

ԼիՐԻՉՄ — Քնարերգական թոխչք: (Տես Լիւրիկա):

ԼիՐԻԿ — Քնարերգու, քնարերգական բանաստեղծ կամ հե-
ղինակ:

ԼիՐԻԿԱ — Քնարերգութիւն. բանաստեղծութեան ձեւերից մէ-
կը, որտեղ բանաստեղծն արտայայտում է սեփական
զգացմունքներն ու հոգու յոյզերը:

ԼիՐԻԿԱԿԱՆ — Քնարերգական:

ԼիԻԹԵՐԱԿԱՆՈՒԹԻԻՆ — Քրիստոնէական գլխաւոր դաւա-
նութիւններից մէկը, որ հիմնել է Մարտին Լիւթեր
(1483—1546 թ.) գերմանացի աէֆօրմատօրը: Լիւթե-
րականութիւնը գերիշխող դաւանութիւն է Հիւս-Գեր-

մանիայում, Սկանդինավիայում, 3) Ֆինլանդիայում և Շուրջրալտեան երկրում: Հետևորդների թիւը 30 միլիոնից աւելի է: Լիւթերականութեան գլխաւոր հիմունքներն են հետևեալ դրութիւնները՝ Սուրբ Գիրքը քրիստոնէական ուսմունքի միակ աղբիւրն է և մատչելի է ամեն մարդու հասկացողութեանը, եկեղեցական յերարխիայի բացասում, խորհուրդները լոկ ալտաքին նշաններ են, որ ցոյց են տալիս մեր կապը Բրիտտոսի հետ: Լիւթերականութեան մէջ այժմ կայ երկու հոսանք.— 1) Հին-լիւթերականները, որ ձգտում են վերականգնել Լիւթերի ուսմունքն իր նախկին ձևով: 2) Նոր-լիւթերականներ, որ իրանց անւանում են օրթօգօքս-լիւթերականներ:

ԼՈՒՄԱՅ—Հին յունական պղնձէ դրամ= $\frac{1}{2}$ կոպ.

ԼՈՒՄՊԷՆ-ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏ—Քաղաքականապէս և քաղաքացիօրէն ազատ մարդկանց դասակարգ՝ որը զուրկ լինելով ամեն տեսակ սեփականութիւնից ոչ մի մասնակցութիւն չունի հասարակական աշխատանքի—արտադրութեան մէջ, ուստի և դատապարտւած է մուրացկանութեան ու ձրիակերութեան: Լումպէն-պրօլետարիատը պրօլետարիատից նրանով է տարբերում, որ ամենևին չի աշխատում և ձրիակերութեամբ է ապրում:

ԼՈՒՄՊԷՆ-ՊՐՕԼԵՏԱՐ—Մուլրացիկ, աղքատ: (Տես Լումպէն-Պրօլետարիատ):

ԼՈՒՍԱՒՈՐԻԱՄՄ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ—Տես Կոնավարուքեան ձեռ:

ԼԻԻԴՕՐ կամ ԼՈՒԻ—Ֆրանսիական ոսկի դրամ= $\frac{20}{100}$ ֆրանկ:

ԼՐԱԳԻՐ—Պարբերաբար լոյս տեսնող հրատարակութիւն՝ որ նւիրւած է լինում գլխաւորապէս օրւայ խնդիրներին:

109ԻԿԱ—Տէս Տրամաբանութիւն:

102ՈԻՆԳ—Տէս նշանաբան:

103ԱԼԻԶՄ—Տէս Լեզիտիմիզմ:

104ԱԼԻԶԱՅԻՆ—Սահմանափակումն, առանձնացումն:

104ԱՈԻՏ—Բանւորների արձակումն՝ երբ նրանք հրաժարուում են աշխատել հին պայմաններով կամ ձեռնարկողի առջարկած նոր պայմաններով: Լօկաուտը նոյն տեսակ զէնք է կապիտալիստ-ձեռնարկողների ձեռքին՝ ինչպէս գործադուլը՝ բանւորների: Ինչպէս գործադուլը, այնպէս էլ լօկաուտը լինում է. 1) Առանձնակի, 2) Խմբական (կօլլեկտիւ): Կօլլեկտիւ լօկաուտը յայտարարում են սովորաբար ձեռնարկողների միութեան անդամ-կապիտալիստները: Հէնց որ բանւորները գործադուլ են սկսում որևէ ձեռնարկողի գործարանում, անմիջապէս ձեռնարկողների միութեան բոլոր անդամ-գործարանատէրերը լօկաուտ են յայտարարում և արձակում են բոլոր բանւորներին: 1897—98 թ.թ. երբ Անգլիայի մեքենագործ բանւորները գործադուլ սկսեցին, 600-ից աւելի գործարանատէրեր իրանց կողմից լօկաուտ յայտարարեցին: Երբ Համբուրգի բեռնակիր բանւորները 1896—97 թ.թ. գործադուլ սկսեցին, նրանց զէմ լօկաուտ յայտարարեցին կապիտալիստների, քսանից աւելի, միութիւններ, թէև ոչ մի կապ չունէին բեռնակիր գործադուլաւորների հետ: 1905 թ. Բերլինում 300—400 բանւորների գործադուլի պատճառով՝ 40 հազար բանւորների գործարանատէրերը լօկաուտի ենթարկեցին:

105ԲԱՐԴ—Հիմնարկութիւն, որը դրամ է տալիս, գրաւ վերցնելով շարժական գոյքը (ոսկեղէն, հագուստեղէն, կասասիք, և այլն, և այլն):

103ԵԱԼ—Տէս Լեզիտիմիզմ:

ԼՕՎԵԼԱՍ կամ ԼՕՂԼԱՍ—Անգլիացի գրող Ռիչարդսոնի՝ Կլարիսսա Հարլով վէպի հերոսը, որն աչքի է ընկնում, ինչպէս Գօն-Ժուանը, իր սիրային արկածներով: Լօվելաս բառով բնորոշում են հեշտասէր, սեռական բաւականութիւնների ու սիրային արկածների անձնատուր եղած մարդոց: (Տես Գօն-Ժուան):

ԼՕՏ—Ծանրութեան չափ. ուսական լօտը= $\frac{1}{32}$ ֆունտին, կամ 3 զօլօտնիկին (մսխալ): Գերմանական լօտը= $\frac{1}{30}$ գերմ. ֆունտին կամ 16,6 գրամմին: 2) Կօնաձև արճիճ, որը թոկի ծայրին կապած՝ ծառայում է իբրև ջրի խորութիւնը չափելու գործիք:

ԼՕՐՂ—Տէր: Ժառանգական պատւաւոր տիտղոս, որ արւում է անգլիական բարձր ազնւականներին: Բացի այդ, լօրդ բառն աւելացնում են իբրև նախդիր միջանի բարձր պաշտօնեաների տիտղոսին:

ԼՕՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ—Տես Պարլամենտ:

Խ

ԽԱԼԻՅ—Փսխանորդ: Մահճեղականների պետը, որ միացնում է իր մէջ թէ՛ աշխարհական և թէ՛ հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը: Խալիֆը համարւում է Մահմեդի փոխանորդը: Մինչև 1538 թ. խալիֆները մահմեդական արաբներից էին, իսկ այդ թւականից՝ Խալիֆի տիտղոսն անցնում է Տաճկաստանի սուլթանին:

ԽԱՆ—Թաթարական և մօնղօլական իշխանների տիտղոսը՝ որ գործածութեան մէջ է մտել Չինգիզխանի օրերից:

ԽԱՐԱԿԻՐԻ—Եապօնական հնաւանդ սովորութիւն, որի համաձայն, երբ Եապօնիայի ազնւականներին կամ բարձրաստիճան մարդոց մահւան էին դատապարտում, իրանք՝ դատապարտւածները սրով պատռում էին իրանց

փորը, որից յետոյ մերձաւորներից մէկը կտրոււմ էր նրանց գլուխը:

ԽԱՐԱԶ—Տաճկաստանում կոչուում է պետական այն տուրքը, որ բաժանւած է մարդոց շնչերի վրայ:

ԽԱՐԱԶՉԻ—Տաճկական հարկահաւար:

ԽԻՉԱՆ—կոչուում են այն զիւղացիները, որ Վրաստանում ապրում են կալւածատէրների հողի վրայ յաւիտենական արհնդատօրի իրաւունքով և հողի վրայ մշտապէս ապրելու պարտաւորութիւնով: Խիզանները վճարում են հողատիրոջն իրանց ցանքսերի $\frac{1}{5}$ -ից մինչև $\frac{1}{2}$ -ը, խոտատեղերից ստացւած խոտի կէսը, խաղողի $\frac{1}{4}$ — $\frac{1}{3}$ -ը, մրգի այգիներից՝ պտուղների կէսը, պարտաւոր են վարել հողատիրոջ սեփական հողաբաժինը—ըստ որում՝ բանւորների թւի վերաբերմամբ զալիս են փոխադարձ համաձայնութեան: Եթէ խիզանը կալւածատիրոջ հողի վրայ այգի է տնկում՝ 5—10 տարի յետոյ այդ այգիների կէսն անցնում է կալւածատիրոջը կամ 10—12 տարի յետոյ՝ ամբողջ այգին դառնում է վերջինիս սեփականութիւնը: Խիզանութիւնը իրապէս ճորտութիւն է՝ մեղմացած ձևերով: (Տես ճորտութիւն):

ԽԻՄԵՐԱ—1) Յոյն առասպելական հրեք-գլխանի հրէշ՝ կէս առիւծի, կէս-այծի մարմնով և օձի պոչով 2) Անիրագործելի ցնորք:

ԽԻՆԻՆ—Տես Խիւննա:

ԽԻՆՆԱ—Անգոյն կրիստալներ (բիւրեղներ), որ պատրաստում են խիննայի ծառի կճեպից, դառնահամ և ջրի մէջ դժւար լուծւող: Գործածւում է իբրև միջոց ջերմի, զանազան բորբոքումների, սուղ ու վամատիզմի և ջգային ցաւերի դէմ:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Տես Բանկ:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՍՍԱՆԵՐ—Պետական Բանկի ընդհանուր

հսկողութեան տակ գտնւող կիսաանկախ հիմնարկութիւններ, Պետական Գանձարաններին, մաքսատներին, փոստատներին, կայարաններին կից: Կասսաներին պատակն է քաղաքացիներին դրամական խնայողութիւն անելու հնարաւորութիւն տալ: Խնայողական պետական կասսաներում ընդունւում է մասնաւոր մարդկանցից մինչև 1000 ռ. և հիմնարկութիւններից ու հասարակութիւններից՝ մինչև 3000 ռ. Ռուսաստանում Պետական խնայողական կասսաների թիւը 1901 թ. 5406 էր, իսկ կլիէնտների թիւը՝ երեք և կէս միլիոն: Ամեն մի կլիէնտին ընկնում էր 185 ռ. Գերմանիայում Պետական խնայողական կասսաների կլիէնտները մօտ 15 միլիոն էին և ամեն մի կլիէնտին ընկնում էր 585 մարկ: Բացի պետական խնայողական կասսաներից՝ գոյութիւն ունեն նաև մասնաւոր փոխատու-խնայողական կասսաներ: (Տես Բանկ):

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՓՈԽԱՍՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ—Տես Բանկ:
 ԽՈՇՈՐ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ — Տես Գալլիտալիզմ, Տրնտեսական մատերիալիզմ, Քաղաքատնտեսութիւն:

ԽՈՒՆԽՈՒԶՆԵՐ—Զինական ծառայողութիւնից փախած զինւորներ կամ աքսորականներ, որ աւազակութեամբ էին պարապում Չինաստանի արևմտեան՝ ռուսաց սահմանին կից, մասում: Խուսխուզներին կարելի է համեմատել տաճկական բաշիրողուկների հետ:

ԽՕԼԵՐԻԿ—Տես Տեմպերամենտ:

ԽՕԶԱ—Մահմեդականներն անւանում են ռուսաճական, դարպացած մարդուն: Պարսկերէն նշանակում է տեր:

Կ

ԿԱԲԻՆԷՏ—Առաձնասենեակ: 1) Այն սենեակը, որ դրադարաններում յատկացւում է ընթերցարանի. 2) Շինու-

թիւն, ուր պահւում են գիտական կամ դեղարւեստական հազազիււտ իրեր: 3) Որևէ պետութեան մինիստրութիւնները, միասին վերցրած: 5) Պետութեան կառավարութիւնը նոյնպէս անւանւում է կարինէտ:

ԿԱՅԻՆԷՏ-ՄԻՆԻՍՏՐ — կամ մինիստր առանց պօրտֆէյլի կոչւում է այն մինիստրը, որ իր իրաւասութեան տակ առանձին մինիստրութիւն չունի, բայց ձայն ունի մինիստրների խորհրդաժողովում—կարինէտում:

ԿԱՅԻՆԷՏԻ ՀՈՂԵՐ — կոչւում են Ռուսաստանի այն հողերը, որ կազմում են Թագաւոր Կայսեր անձնական սեփականութիւնը: Բռնում են 42 միլ. դես. տարածութիւն:

ԿԱԴԷՏ — 1) Կադէտների կորպուսի (միջնակարգ զինւորական ուսումնարան) աշակերտ: 2) Միքանի եւրոպական երկրներում կադէտ են կոչւում ազնւական ունտէրօֆիցէրները: (Տես Սանմանադիր Բամիալար կուսակցութիւն):

ԿԱԴՐԻՆ — Պարի մի տեսակը:

ԿԱԶԵՅՆՆԻՅ ՀՈՂԵՐ — Տես Պետական հողեր:

ԿԱԶՈՒԻՍ — Կազուիստիկայով պարագող (Տես Կազուիստիկա):

ԿԱԶՈՒԻՍՏԻԿԱ — 1) Ընդհանուր օրէնքների գործադրութիւնը կօնկրէտ խնդիրների վերաբերմամբ: 2) Իրաւաբանական, աստուածաբանական և փիլիսոփայական բարդ հարցերի դիտաւորեալ շփոթումն, մթնացումն:

ԿԱԶՈՒՍ — Արտասովոր դէպք:

ԿԱԹԷԳՕՐԻԱ — Կարգ, դասակարգ: Փիլիսոփայութեան մէջ կաթէգօրիա կոչւում են հասկացողութիւնները միևնոյն կարգի՝ որի մէջ իրանց նշաններով կարող են մտնել ուսումնասիրութեան ենթակայ առարկաների ամբողջ դրուպականեր: Ըստ Կանտի՝ այդպիսի կաթէգօրիաները չորս են:

- ԿԱԹՈՒՆԳՕՐԻԿ—Կտրուկ, վճռական, վճռականօրէն:
- ԿԱԹՈՒՆԳՕՐԻԿ ԻՄՊԵՐԱՏՐԻ—Ըստ Կանտի՝ կաթէգօրիկ իմպերատիւը բարոյական օրէնք է, որը ոչ միայն մարդու կամքից չէ կախած, այլև իշխում է նրան:
- ԿԱԹՈՒՆԴՐՐ-ՍՕՑԻԱԼԻԶՄ—Բառացի կերպով՝ ամբիոնի սօցիալիզմ կոչուում է քաղաքատնտեսութեան այն ուղղութիւնը, որ քարոզուում էր համալսարանական ամբիոնից: Կաթէղըր-սօցիալիզմի հիմնական գաղափարն այն է՝ որ պետութիւնն ինքը պէտք է խստուելի երկրի տնտեսական յարաբերութիւնների մէջ և կանոնաւորէ քանւորների դրութիւնը: Կաթէղըր-սօցիալիզմը ծաղրական արտայայտութիւն է, որ տւին իսկական սօցիալիստները պետական սօցիալիզմ քարոզող պրօֆեսսորների ուսմունքին: Կաթէղըր-սօցիալիստներից զըլխաւորներն են՝ Շէֆլէ՛ն, Ադ. Վազնէրը, Շմօլլէրը, Լ. Բրենտանօն և ուրիշները: (Տես Քաղաքատնտեսութիւն):
- ԿԱԹՈՒՆԴՐՐ-ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐ—Կաթէղըր-սօցիալիզմի կողմնակիցներ: (Տես Կաթէղըր-սօցիալիզմ):
- ԿԱԹՈՒՆԿ ԿԱՄ ՀՌՕՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ—Ընդունում է իբրև պետ Պապին, որ նստում է Հոմոմ-Իտալիայի մայրաքաղաքում: Աստուածային ուսմունքի ազդիւր է ընդունում, բացի Սուրբ Գրքից, նաև քանաւոր աւանդութիւնները, ինքն իրան համարում է անսխալական, ընդունելով որ իր մէջ մշտապէս բնակւում է Ս. Հոգին, որից եզրակացնում է, որ անսխալական է նաև իր պետը, Պետրոս Առաքեալի հոգևոր ժառանգը՝ Հոմի Պապը: Հոգևորականութիւնը կուսակրօն է և խիստ բարդ յերարխական կազմութիւն ունի: Ներկայումս 1200 իրական և 2000 անւանական արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ ունի, որոնք կառավարում են ամ-

- բողջ կաթուղիկ հօտը: Բոլոր կաթուղիկների թիւը ներկայումս 320 միլ. է հաշուում: (Տես Եզրխոնքեր):
- ԿԱԹՈՒՂԻԿ—Տիեզերական: (Տես Կաթուղիկ եկեղեցի):
- ԿԱԹՈՒՂԻԿԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ—Նոյնն է, ինչ որ քրիստոնէական սօցիալիզմը: (Տես Սօցիալիզմ):
- ԿԱԹՈՒՂԻԿ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ—Տես Կլերիկալիզմ:
- ԿԱԹՈՒՂԻԿ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ—Տես Կլերիկալիզմ:
- ԿԱԹՈՒՂԻԿՈՍ—Տիեզերական, Հայ և վրաց եկեղեցիների հոգևոր բարձրագոյն պետի տիտղոսը: Վրացիներն իրանց կաթողիկոսութիւնը կորցրին 1811 թւին:
- ԿԱՆԵՑԴՈՍԿՈՊ—Մողովակաձև գործիք, որի մէջ դէպի իրար թեքած երկու հայելի է յարմարեցրած և լցրած է գոյնըզգոյն հուլունքներ: Մողովակն իր առանցքի շուրջը պտտեցնելիս երևում են զանազան նկարներ:
- ԿԱԿԱՍ—Ծառ, որի պտուղները սուրճի ձևով պատրաստելով՝ սաահում են անդաբար խմիչք:
- ԿԱՀԱԼ—Այդպէս է կոչւում հրէական համայնքների ներկայացուցիչների ժողովը, որը մինչև 1893 թ. Ռուսաստանում ընդունւած էր իբրև օրինական մարմին և միջնորդ էր հանդիսանում իշխանութեան ու հրէական համայնքի մէջ—հաւաքում էր հարկերը, տուրքերը, խնամում էր աղքատներին, և այլն, և այլն: Կահալները ձգտում էին հրէաներին առանձնացած պահել, որպէսզի չկորցնեն իրանց ազգային-կրօնական առանձնայատկութիւնը և չձուլին շրջապատող ժողովուրդների հետ: Կահալները ոչնչացրւեցին 1893 թ.
- ԿԱՄԱՐԻՒԼԱ—Միապետին շրջապատող պալատականներ, որոնք իրանց ազդեցութեան տակ են պահում նրան և

պետական գործերը ղեկավարում ըստ իրանց ցանկութեան ու շահերի:

ԿԱՄԱԻՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ—Տես Ապահովագրութիւն:

ԿԱՄԵՐԳԵՐ—Պալատական պատուաւոր տիտղոս. Մեմեկապետ:

ԿԱՄԵՐՏՈՆ կամ ԻԻԱՊԱԶՈՆ—Երկօտտեայ պողպատէ գործիք, որը պինդ մարմինների դիպչելիս՝ հնչիւն ձայն է հանում: Կամերտոնը գործածուում է երաժշտական զանազան գործիքներ լարելու կամ երգիչներին ձայն տալու:

ԿԱՄԻՆԱԿԵ—Պատուաւոր գլխարկ, որ տրւում է քահանաներին իբրև վարձատրութիւն առանձին արժանիքների համար:

ԿԱՄՕՐՐԱ—Աւազակային գաղտնի ընկերութիւն նախկիննէ-ապօլիտանական թագաւորութեան մէջ. այդ ընկերութիւնը գտնւում էր Բուրբօն թագաւորներին հովանաւորութեան տակ, ծառայելով նրանց քաղաքական նպատակներին: Ընկերութիւնն իր ճիւղերն ունէր երկրի բոլոր մասերում, կապւած էր ռատիկանութեան և նոյնիսկ պետական բարձր պաշտօնեաների հետ և կանոնաւոր տուրքեր էր հաւաքում ճանապարհորդներից, առևտրականներից, հարուստներից: Փողով պատուէրներ էր վերցնում զանազան մարդոց սպանելու, սպանում էր և իր հակառակորդներին: Նէապօլիտանական թագաւորութիւնն Իտալիային միացնելուց յետոյ՝ Կամօրբան հալածանքների ենթարկեց, բայց ոչ մեծ յաջողութեամբ: Ներկայումս էլ այդ ընկերութիւնն իր շահատակութիւնները շարունակում է շարաւային Իտալիայում: (Տես Մաֆիա):

ԿԱՅՄ ԱԿԱՄ—Տեղակալ, այդպէս են կոչւում Տաճկաստանում գաւառապէտները:

ԿԸՆԸՆՅ ԱՇՆԱՏԸՆՔԸ—Մանկահասակների և անչափահաս

ների աշխատանքի հետ պետական օրէնսդրութեան հովանաւորութիւնն է վայելում այն երկրներում, ուր կայ գործարանային օրէնսդրութիւն: Կանանց արգելում են ծանր աշխատանքները, որոնք կարող են վնասել նրանց թոյլ կազմաւածքին: Բացի այդ, գործարանային օրէնսդրութիւնն աշխատուած է նրանց այնպիսի պայմաններ ապահովել, որ կարողանան հսկել տան տնտեսութեանը և երեխաներին: Առանձին արգելքների տակ է դրւած կանանց աշխատանքը գիշերները և ստորերկրեայ ձեւնարկութիւններին մէջ:

ԿԱՆԴԻՏԱՏ—1) Թեկնածու: 2) Գիտնական ամենացածր աստիճան, որից յետոյ հերթով գալիս են՝ մագիստրոսի և դոկտորի աստիճանները.

ԿԱՆՆԻԲԱԼԻՉՄ—Մարդակերութիւն, վայրագութիւն, գազանութիւն:

ԿԱՆՏՕՆ—1) Կանտոն Շվեյցարիայում կոչւում են հասարակապետութեան անբաժան մասը կազմող ինքնավար նահանգները: 2) Ֆրանսիայում կանտոն կոչւում է նահանգի մասը, որ հաւասար է մօտաւորապէս մեր գաւառին:

ԿԱՆՏՐԱԿՏ—Վերահսկիչ, վերաքննիչ:

ԿԱՆՏՐՕԼ—Վերաստուգութիւն, վերահսկողութիւն: (Տես Պետական կանտրօլ):

ԿԱՆՏՕՐԱ կամ ԿԱՆՏՕՐ—Գրասենեակ:

ԿԱՆՑԵԼԵԱՐ—1) Պաշտօնատուն: 2) Պատասխանատու պետական պաշտօն վարող չինովնիկի կամ պետական հաստատութեան գործերը վարող ծառայողների շտաբը (կազմը) կոչւում է այդ պաշտօնեայի կամ հաստատութեան կանցելեարը:

ԿԱՆՑԼԷՐ—1) Արտաքին գործոց նախարար: 2) Արտասահմանում՝ համալսարանի վերատեսուչը կոչւում է նոյն.

պէս կանցլէր: 3) Ընդլիայում՝ կանցլէր կոչուում է Լօրդերի Պալատի նախագահը և արշարադատութեան մինիստրը: 4) Ռուսաստանում՝ կանցլէրը բարձրագոյն տիտղոս է, որ տրւում է միայն արտաքին գործոց նախարարին և համապատասխանում է զինւորական գեներալիսիմոսի աստիճանին:

ԿԱՊԻՏԱԼ.—Կոչուում է բոլոր այն առարկաների ամբողջութիւնը, որոնք նշանակւած են ոչ թէ տիրոջ անձնական գործածութեան համար, այլ արտադրութեան շարունակութեան և ուրիշների աշխատանքի միջոցով նրանից օգուտ ստանալու համար: (Տես Սօցիալիզմ):

ԿԱՊԻՏԱԼԻԶՄ — Հասարակական տնտեսական կազմւածք, որի մէջ ամբողջ արդիւնագործական արտադրութիւնը կենդրոնանում է փոքրաթիւ կապիտալիստների ձեռքին, որոնք իրանց գործերը վարում են վարձկան բանւորների միջոցով: (Տես Սօցիալիզմ):

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ — Դրամատէր, սեփականատէր բոլոր արտադրւողական միջոցների, բոլոր կապիտալներին:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԿԵՆ ԵՐՏԵՂԻՍՈՒԹԻՒՆ.— Մթերքների արտադրութիւն ոչ թէ անձնական գործածութեան, այլ բացառապէս շուկայում վաճառելու և դրամական օգուտ ստանալու համար: (Տես Սօցիալիզմ):

ԿԱՊԻՏԵՆ— 1) Նաւապետ: 2) Ճամաքային զօրքի մէջ օրէրօֆիցէրի ամենաբարձր չինը: Կապիտանին է յանձնւում ոստայի հրամանատարութիւնը:

ԿԱՊԻՏՈՒԼ.— 1) Ռուսական պետական հաստատութիւն, ուր կենդրոնանում են շքանշաններ շնորհելուն վերաբերող գործերը: 2) Միևնոյն մայր եկեղեցում ծառայող կաթօլիկ հոգևորականութեան կազմը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՉԵՒ — Պետութիւնների կառավարութեան ձևը լինում է երեք տեսակ. 1) Արսօլիւտ կամ

անսահման միապետութիւն-ինքնակալութիւն, արսօ-
լիւտ-մօծնարխիա, արսօլիւտիզմ: 2) Սահմանադրական
միապետութիւն և 3) Հանրապետութիւն: 1) Անսահման
միապետութեան մէջ Բարձրագոյն իշխանութիւնը գլխա-
նրում է մի մարդու ձեռքին, որը և կառավարում է
(արսօլիւտիզմ) երկիրն իր ենթակայ օրգաններով (մար-
միններով): Անսահման միապետութեան կամ ինքնա-
կալութեան այս կամ այն ձևը կախած է երկրի ազ-
գարնակութեան կուլտուրայի աստիճանից: Ինքնա-
կալութիւնները լինում են քեօկրատական, պատրիար-
քական (նահապետական) դեսպօտական (բռնապետական)
և լուսաւորւած կամ օրինական: Բոլոր ինքնակալու-
թիւնների մէջ բարձրագոյն իշխանութիւնը պատկա-
նում է մի անհատի, բայց քեօկրատական (ասուած-
պետական) ինքնակալութեան մէջ ինքնակալը հա-
մարում է ինքը՝ Ասուած, որը կանոնաւորում է երկի-
րըն իր փոխանորդների՝ քրմերի միջոցով: Ուրեմն,
իրապէս ասուածպետական միապետութեան մէջ
բարձրագոյն իշխանութիւնը հոգևորականութեան ձեռ-
քին է. պատրիարքական (նահապետական) ինքնակա-
լութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնը պատկա-
նում է մի անհատի, որը համարում է ընտանիքի
պետը, իսկ ժողովուրդը՝ նրա ընտանիքը: Նա պէտք է
կառավարէ այնպէս, ինչպէս հայրը կառավարում է իր
ընտանիքը: Բռնապետական ինքնակալութեան մէջ,
ինչպէս և պատրիարքական միապետութեան ժամա-
նակ, բարձրագոյն իշխանութիւնը մի անհատի ձեռքին
է, բայց նա երկիրը կառավարում է ոչ թէ որպէս
հայր, մտածելով իր հպատակ ժողովրդի բարիքի մա-
սին, այլ զեկավարելով լոկ իր անձնական հաճոյքնե-
րով ու ցանկութիւններով: Վերջապէս, այսպէս ասած՝

«լուսաւորւած» կամ օրինական ինքնակալութիւնների մէջ միապետն իր կամքով հրատարակում է օրէնքներ և շատ թէ քիչ երկար ժամանակ երկիրը կառավարում է այդ օրէնքներով: 2) Սահմանադրական միապետութիւնն անսահման ինքնակալութիւնից դէպի հասարակապետութիւնը տանող անցողական շրջանն է: Սահմանադրական միապետութեան մէջ հաշտեցրած են իրար հետ երկու հակառակ սկզբունքներ՝ ինքնակալական միապետութիւնը և ժողովրդական ներկայացուցչութիւնը: Առաջինի կրողը թագաւորական իշխանութեան ներկայացուցիչն է, երկրորդինը՝ ընտրւած ժողովրդական ներկայացուցչութիւնը: Պետութեան սահմանադրական ձևն ստեղծել է իբրև արդիւնք այն մշտական պայքարի, որ մղել են իրար դէմ ինքնակալ պետական իշխանութիւնը և ժողովուրդն, ի դէմս իր յառաջագէմ տարրերի: Այդ պայքարի մէջ ինքնակալական թագաւորական իշխանութիւնը հրապարակից չի իջնում, այլ դիմում է զիջումների և վերջիվերջոյ իբրև մի անհրաժեշտ տարր՝ մտցնում է իր ներկայացուցչին բարձրագոյն իշխանութեան նոր կազմակերպութեան մէջ, որն ինչպէս ասացինք՝ միապետական և ժողովրդական ներկայացուցչութեան համաչափ միութիւնն է: Երբ թագաւորը և ժողովրդական ներկայացուցչութիւնը գործում են համերաշխ, ստացւում է բարձրագոյն իշխանութեան սահմանադրական-միապետական ձևը, հետևապէս՝ ոչ թագաւորը և ոչ ժողովրդական ներկայացուցչութիւնը առանձին վերցրած՝ բարձրագոյն իշխանութիւն չեն կարող համարուել: Ընթացիկ կեանքի զանազան պայմանները կարող են կամ ժողովրդական ներկայացուցչութիւնը կամ թագաւորական իշխանութիւնը զննել աւելի նպաստաւոր պայմանների մէջ, ո-

րից և կարող են առաջ գալ տատանումներ, անհաստատութիւն: Եթէ ժողովրդական ներկայացուցչութիւնը կառավարութեան մէջ ուժեղ գերակշռութիւն ձեռք բերէ, բարձրագոյն իշխանութեան սահմանադիր-միապետական ձևը փաստօրէն դառնում է հասարակապետական կամ դեմօկրատական. իսկ եթէ գերակշռութիւնն անցնի ինքնակալութեան կողմը, սահմանադրական միապետութիւնը փաստօրէն դառնում է ինքնակալ միապետութիւն: Սահմանադրական միապետութիւններէ մեծամասնութիւնն ունի ներկայացուցչութեան երկպալատեան սիստեմը, ըստ որում պալատներից մէկը՝ ներքինը, ներկայանում է իբրև իսկական ժողովրդական ներկայացուցչութիւն, իսկ միւսը՝ վերինը, կազմւած է լինում թագաւորական իշխանութեան նշանակած մարդկանցից կամ այդ իրաւունքն իրանց ծագումով՝ ձեռք բերածներից և կամ նոյն իսկ ընտրւած անդամներից: Առաջին պալատը կոչւում է Պատգամաւորների Պալատ, Համայնքների Պալատ, Լիազօրների Պալատ. երկրորդը՝ Լօրդերի Պալատ. Տէրերի Պալատ: Ստորին Պալատի կազմը կախւած է երկրի ընտրողական սիստեմից: Որքան վերջինս մօտ է ընտրողական բառանդամ սիստեմին, այնքան պալատը ռամկավարական է. (Տես Ընտրողական իրաւունք): Վերին Պալատը կազմւում է սովորաբար դասային կամ դասակարգային հիմունքներով, ուստի և մեծ մասամբ արխատոկրատ կերպարանք է ընդունում՝ բացառութիւն թողնելով Բելգիան և Նորվեգիան, որտեղ վերին պալատն ևս ընտրովի է: Եթէ երկպալատեան սիստեմը բնորոշ է մեծ պետութիւններին համար, փոքրերի համար բնորոշ է մէկ պալատեան սիստեմը, ինչպէս օրինակ՝ գերմանական մի քանի պետութիւնները,

- Յունաստանը, Սերբիան: Սահմ.-միապետական կազմն ընդունւած է առաւելապէս արևմտեան Եւրոպայում, որպէս և միապետական ինքնակալութիւնն իր համար աւելի նպաստաւոր հող է դառնում Ասիայում և Աֆրիկայում: 3) Հասարակապետութիւն (հանրապետութիւն) կամ դեմօկրատիա: Հանրապետութեան կամ դեմօկրատիայի հիմնական և էական արժէքն այն է, որ բարձրագոյն իշխանութիւնը պատկանում է ոչ թէ թագաւորին, այլ ժողովրդին: Գործադիր իշխանութեան զլխաւորը հանրապետութեան նախագահն է: Հանրապետութեան նախագահին ընտրում է կամ ուղղակի ինքը, ժողովուրդը, կամ պարլամենտը. այն ղէպքերում, երբ պարլամենտը փոքր է՝ հանրապետութիւնը կարող է անմիջական դեմօկրատիայի ձև ընդունել, որի ժամանակ հասարակութիւնն ինքը հրապարակ է գալիս իրրև բարձ. իշխանութեան մի օրգանը: Ժամանակակից դեմօկրատիաները (ռամկապետութիւնները) կարելի է բաժանել 1) Քաղաքների, որոնք միաժամանակ հանդիսանում են իրրև անկախ հասարակապետութիւններ (Համբուրգ, Բրեմէն, Լիւբէկ): 2) Պարզ հասարակապետութիւններ և 3) Ֆեդերատիւ (դաշնակցական) հասարակապետութիւններ (Շվէյցարիա, Միացեալ-Նահանգներ, Բրազիլիա, Մեքսիկա, Արգենտինա, Վենեսուէլա):
- ՅԱՍՍԱ.—1) Պետական կամ մասնաւոր հիմնարկութիւն, որ ընդունում և դուրս է տալիս դրամ: 2) Գանձարան 3) Տպարանում կասսա կոչւում է սեղանի արկղը, որտեղ պահւում են տուները:
- ՅԱՍՍԱՅԻԱ.—Դատաստանական վճռի բեկանումը, օրէնքի սխալ գործադրութեան կամ դատաւարութեան կանոնները խախտելու պատճառով (առանց գործն ըստ էութեան քննելու):

ԿԱՍՍԱՅԻՕՆԵԱՅԱ ԺԱԼՈՒԱ—Վճարեկ բողոք: (Տես Կասսացիա):

ԿԱՍՍԻՐ—Գանձապահ:

ԿԱՍՏԱ—Ըռանձնացած, մէկուսացած դասակարգ: (Տես Քրամանիզմ):

ԿԱՍԱԼՕԳ—Ցուցակ:

ԿԱՍԱԿԼԻՉՄ—Հսկայական հեղեղ, իր չափերով ահեղի անցք:

ԿԱՍԱԿՕՄԲ—Ըպառածի մէջ փորած այրեր, ուր թաղում էին մեռելներին և որտեղ քրիստոնէութեան նախնական տարիներում գաղանի ժողովներ ու կրօնական արարողութիւններ էին կատարում:

ԿԱՍԱՍՏՐՅՈՅ—անսպասելի կերպով տեղի ունեցած անցք, դժբախտութիւն:

ԿԱՐԴԻՆԱԼ—1) Գաթնիկ եկեղեցու ամենաբարձր հոգևոր աստիճանը՝ պապից յետոյ: Բոլոր կարգինալների թիւը 70 է: Նրանք են ընտրում պապին իբրանց ընդհանուր ժողովում, որ կոչւում է կօնկլաւ: Միաժամանակ կարգինալների խորհուրդը պապի օգնական մարմինն է, տեղի է ունենում վերջինիս նախագահութեամբ և կոչւում է կօնսիստօրիա, իսկ կօնսիստօրիաների մասնա-ժողովները՝ կոչւում են կօնգրեգալիա: Կարգինալները հազնում են կարմիր պտտմուճան և ծածկում կարմիր գլխարկ: 2) Կարգինալ հարց—հիմնական, գլխաւոր, ծանրակշիւ հարց:

ԿԱՐԻԷՐ—Ասպարէզ (ծառայութեան կամ այլ):

ԿԱՐՆԱՎԱԼ—Բարեկենդան, բարեկենդանային հրապարակական հանդէսներ, դիմակներով և երաժշտութեամբ:

ԿԱՐՏԷՉԵԱՆՆԵՐ—Դեկարտի փիլիսոփայութեան հետևողներ: (Տես Փիլիսոփայութիւն):

ԿԱՐՏԷՉԻՆԻՉՄ—Դեկարտի փիլիսոփայական ուսմունքը: (Տես Փիլիսոփայութիւն):

- ԿՍՐՏԷԼ—Տես Մինդիկատ:
- ԿԱՐՐԻԿԱՏՈՒՐ—Ծաղրանկար: Անձի կամ առարկայի որևէ կողմը ծիծաղելի դուրս բերել, նկարող կամ խօսքով:
- ԿԱԻԱԼԷՐ—1) Պարակից աղամարդ, կնոջ հետ պարող: 2) Որևէ շքանշան կրող:
- ԿԱԻԱԼԷՐԻԱ—Զիաւոր զօրք:
- ԿԱԻԱԼԷՐԻՍ—Զիաւոր զինւոր:
- ԿԱԻԱՍ—Թուրք ոստիկան, ժանդարմ, օտար դեսպանատան պահապան:
- ԿԵՂԾ ԿԼԱՍՍԻՑԻՉՄ—Տես Կլասսիցիզմ:
- ԿԵՐՕՍԻՆ—Մաքրած, գտած նաւթ:
- ԿԻՆԵՏՕԳՐԱՅ ԿԱՄ ԿԻՆԵՄԱՏՕԳՐԱՅ, ՍԻՆԵՏՕԳՐԱՅ, ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՅ—Գործիք, որի գիւտն արել է էդիսսօնը: Նոյն տեսարանն էլը կամ անձերին իրանց զանազան դիրքով ու գործողութիւններով նկարելոց յետոյ՝ յարմարեցնում են այնպէս, որ իրար յետեից դուրս են գալիս կտաւի վրայ (ինչպէս մօզական լապտերով ցոյց տալիս) և արագութեամբ շարժելով, կենդանի ու շարժուն առարկաների տպատրութիւն են թողնում:
- ԿԻՐԱՍԻՐ—Զիաւոր զօրաբաժին, ծանր սպառազինւած:
- ԿԼԱԿԵՕՐՆԵՐ—Վարձկան մարդիկ, որոնք յաճախում են թատրոններ և հասարակական դանազան տեղեր, իրանց վարձող դերասանին կամ ճառախօսին ծափահարելու և այդպիսով կեղծ հասարակական կարծիք ստեղծելու:
- ԿԼԱՍՍԻԿ—1) Հին յունական և լատինական հեղինակները: 2) Օրինակելի գրող: (Տես Կլասսիցիզմ):
- ԿԼԱՍՍԻԿԱԿԱՆ—Օրինակելի: (Տես Կլասսիցիզմ):
- ԿԼԱՍՍԻԿԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ—Հին յունական և լատինական լեզուները: (Տես Կլասսիցիզմ):
- ԿԼԱՍՍԻԿԱԿԱՆ ՇԿՕԼԱ ՔԱՂԱՔԱՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ—Տես Քաղաքատնտեսութիւն:

ԿԼԱՍՍԻՅԻԶՄ—Դասականութիւն: 1) Գրականութեան մէջ կլասսիկական (դասական) են կոչուում հին յունական և լատինական յայտնի հեղինակների արտադրութիւնները: Ֆրանսիական գրականութեան մէջ կեղծ-կլասսիկական է կոչուում XVՈ-րդ դարի գրաման որ հին յունական տրագեդիայի տրագիցիաններին էր հետևում: Ֆրանսիական կլասսիկները, հետևելով յունական ֆորմուլներին, չէին կորցնում իրանց ազգային ոգին և յունական հերոսներին դուրս բերելով, նրանց մէջ պատկերացնում էին ֆրանսիական կիանքը, բնավորութիւնը և բարոյական իդէալները: Նրանց կլասսիցիզմի ձևը լիովին համապատասխանում էր բովանդակութեանը: Ֆրանսիական կլասսիցիզմի լաւագոյն ներկայացուցիչներն են՝ դրամատուրգներ Կօրնէլլը, Ռասինը և Մօլիէրը, բանաստեղծ Բուալօն, իսկ XVՈ-րդ դարում՝ Վօլտէրը: XIX-րդ դարի սկզբին կլասսիցիզմն սկսեց տեղի տալ Ռօմանտիզմին: Անգլիայում կեղծ-կլասսիցիզմը հետևորդներ գտաւ XVՈ-րդ դարում (Պօպ, Դրայդէն և ուրիշները), նաև Գերմանիայում և Ռուսաստանում: Ռուսաստանի առաջին կեղծ-կլասսիկները—Լօմոնօսովն և Սումարոկովն են: Կլասսիցիզմին վերջ տւին Կարամզինը և Ժուկովսկին: Կլասսիցիզմը մանկավարժութեան մեջ—կրթութեան ձև, որի մէջ հին լեզուները՝ յունարէնն ու լատիններէնը բարձրագոյն կրթութեան հիմքն են համարուում, ուստի և դպրոցներում ամենից մեծ ուշադրութիւն է դարձուած այդ լեզուների ուսուցման և այն՝ չոր քերականական ձևերի ուսուցման վրայ, կցելով դրանց նաև մաթեմատիկան: Միւս առարկաները երկրորդական նշանակութիւն են ստանում: Այդ սխտեմը մտցրեց ռուս դպրոցները 70-կան թւականների սկզբին գրաֆ Դ. Տօլստօյը, յայտ-

նի ունակցիօնէր կատկովի աջակցութեամբ: Կլասսիցիզմին ուսական դպրոցներում առաջին հարածները հասան 1905 թ. ազատագրական շարժումների ժամանակ և պետական. դպրոցներում, դոնէ փոքր շափով, աշակերտների վրայից թուլացաւ կլասսիցիզմի հեղձուցիչ ճընշումը:

ԿԼԱՍՍԻԻՑԻԶՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—Տես Կլասսիցիզմ:

ԿԼԱՐՆԷՏ—Երաժշտական գործիք:

ԿԼԵՊՏՕՄԱՆԻԱ—Գողամոլութիւն: Գողութիւնը յաճախ հիւանդութիւն է դառնում, իրրև հետեանք ջղայնութեան, թուլամտութեան, ընկնաւորութեան: Կլեպտոմանիային յաճախ ենթարկուում են յղի և իստերիկայով բռնաձկանայք:

ԿԼԵՐԻԿԱԼ—Կլերիկալիզմի կողմնակից: (Տես Կլերիկալիզմ):

ԿԼԵՐԻԿԱԼԻԶՄ—Կղերականութիւն: Հոգևորականութեան հայեացքների կողմնակից լինել և նրանց շահերը պաշտպանել՝ իրրև մի առանձին դասակարգի, որը պէտք է իշխէ աշխարհականների մտքի ու հասկացողութիւնների վրայ և նրանց առաջնորդէ իր ցանկութեամբ: Գիտակցաբար՝ կլերիկալիզմի (կղերականութեան) կողմնակից են տիրող դասակարգերը, ազնւականները, բիւրօկրատիան և բուրժուազիան, որոնք յաճախ իրանց իշխանութեան հաստատուն սիւներից զլիսաւորն են համարում կղերը: Կլերիկալիզմն իր բազմաթիւ պաշտպաններն ունի նաև աշխատաւոր դասակարգի մէջ, որ արդիւնք է վերջինս տգիտութեան և անգիտակցութեան: Գրեթէ ամին երկրում կայ կղերական կուսակցութիւն, որը մեծ մասամբ գործում է միւս տիրող դասակարգերի շահերը պաշտպանող կուսակցութիւնների հետ միացած: Աւստրիայում կղերական կուսակցութիւնը բաժանուում է մի քանի ֆրակցիայի: 1) Ազգային, 2) Կա-

բոլիկ ժողովրդի կուսակցութիւն, 3) Գերմանական կղերականներ, 4) Իտալական կղերականներ, 5) Լեհական կուսակցութիւն: Վենգրիայում կոչուում է կաթոլիկ ժողովրդական կուսակցութիւն: Բելգիայում կղերական կուսակցութիւն գոյութիւն ունի 1790 թ. Գերմանիայում կղերական կուսակցութիւնը բռնում է կենտրոնը: Իտալիայում՝ իբրև առանձին կուսակցութիւն հրապարակ չգալով՝ կղերականներն այնուամենայնիւ՝ մեծ դեր են խաղում: Ճերանսիայում կղերական ձգտումներ ունեն մօտաբար խիստներն ու բօնապարտիստները և նոյնիսկ՝ ջախարհային հանրապետականները: Ռուսաստանում ասպարէզ չունենալով իբրև քաղաքական կուսակցութիւն դուրս գալու, կղերականները գործել են իբրև անհատներ՝ գանազան ասպարէզներում: Բացի այդ, կղերականութիւնը Ռուսաստանում իբրև ինքնուրոյն ուղղութիւն ուժեղ չէ եղել, այլ միշտ ենթարկւած է եղել անսաման միապետականութեան գաղափարին, հանդէս գալով իբրև նրա լրացուցիչ և օգնական մասը: 1905 թ. ազատագրական շարժումներից յետոյ՝ ուսև կղերն ևս փորձեր է անում կազմակերպւելու իբրև անկախ կղերական-քաղաքական կուսակցութիւն:

ԿՈՒԼՏՈՒՐՏՐԷԳԷԼ—Քաղաքակրթութիւն տարածող, կրող:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ—Տես Քաղաքական կուսակցութիւն:

ԿՈՒՐՍ—1) Բիրժայի թղթերի, վէկսելների և օտարերկրեայ գրամների միջին արժէքը, որի համաձայն կայանում են բիրժային փոխանակութիւնները: Բիրժային թղթերի կուրսը որոշուում է տոկոսով, իսկ օտարերկրեայ գրամները՝ հատով: 2) Այն ուղղութիւնը, որով գնում է նաւը: 3) Ամբողջ գիտութեան կամ նրա մի մասի լիակատար աւանդութիւնը, նաև՝ դրա համար նշանակւած ժամանակամիջոցը: 4) Մի քանի բարձրա-

- գոյն, յատկապէս՝ կանանց դպրոցների անուանը: 5) ժամանակակար ռուսացական պարագմունքներ: (Տես Բիրժա):
- ԿՎԱՐՏԱԼ—Թագ:
- ԿՎԱՐՏԵՐ—Հացահատիկի չափ Անգլիայում=8 բուժել=8 հալլոն=1,38 չհալներտ:
- ԿՎԻՆՏԱԼ—Ծանրութեան չափ Անգլիայում և Հիւս. Ամերիկայում=110¹/₂ Ֆ., Ֆրանսիայում և Սպանիայում Կըվինտալը=100 բիլօգրամ. (6 փութ), Փորթուգալիայում և Բրազիլիայում կվինտ.=58,75 բիլօգր. (3¹/₂ փութ.):
- ԿԼԻՆԷՏ—1) Փաստարանի կլինիկոն է կոչուում այն մարդը, որ իր դատի պաշտպանութիւնը նրան է յանձնել: 2) Մշտական պատէր տուղ, յաճախորդ. մուշտարի: 3) Հոռոմէացիք կլինիկոն էին ասում այն մարդուն, որը վայելում էր որակէ հարուստ կամ բարձր դիրք ունեցողի հովանաւորութիւնը: Հովանաւորողը կոչուում էր նրա պատրոնը:
- ԿԼԻՆԻԿԱ—Համալսարաններին և ակադեմիաներին կից հիւանդանոց, որտեղ բժշկութիւնն աւանդուում է ուսանողներին գործնականապէս:
- ԿԼԻՇԷ—Փայտէ, պղնձէ կամ պողպատէ տախտակ, որի վրայ տառեր կամ նկարներ են փորագրած՝ թղթի վրայ արտատպելու համար:
- ԿԼՈՒԲ—Հասարակական ժողովարան, ուր հաւաքուում են ժամանակ անցկացնելու կամ փոխադարձ շփման ու զանազան քաղաքական և այլ հարցերով զբաղելու համար:
- ԿՂԵՐ—Հոգևորականութիւն: (Տես Կլերիկալիզմ):
- ԿՂԵՐԱԿԱՆ—Տես Կլերիկալ:
- ԿՂԵՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ—Տես Կլերիկալիզմ:

ԿՈՒԼԻ—Զինաստանում և Հնդկաստանում ցածր դասակարգի մարդիկ:

ԿՈՒԼՏՈՒՐԱ—Քաղաքակրթութիւն, զարգացում, լուսաւորութիւն, մշակութիւն:

ԿՐԵԴԻՏ—Վարկ, պարտք:

ԿՐԵԴԻՏ ՄԱՆՐ—Տես Բանկ:

ԿՐԵԴԻՏԻԻ—Վկայական, որ տալիս են բանկիրները.—այդ վկայականով ուրիշ քաղաքների բանկիրներից կարելի է դրամ ստանալ 'ի հաշիւ կրեդիտիւր տւողի:

ԿՐԵՏԻՆԻԶՄ—Ապուշութեան մի տեսակը, որով հիւանդացողն այլանդակութիւններ է ունենում նաև մարմնի վրայ:

ԿՐԷՅՍԵՐ—Մարտանաւ: Արագասլաց զինանաւ, որ հեռաւոր լողի է յարմարեցրած:

ԿՐԷՅՑԷՐ—Աւստրիական դրամ= $\frac{3}{4}$ կոպ.

ԿՐԻԶԻՍ—Ճգնաժամ: 1) Բժշկութեան մէջ կոչւում է հիւանդութեան վախճանը, որ հասնում է արագութեամբ. կրիզիսի ժամանակ հիւանդի տաքութիւնը պակասում է, քրտինք և այլ նշաններ են երևում, որոնք ցոյց են տալիս, որ հիւանդութիւնը փոխում է դէպի լաւը: Կրիզիսը կարող է անցնել նաև հակառակ հետևանքների՝ հիւանդի մահւանը: 2) Քաղաքականութեան մէջ կրիզիս կոչւում է գործերի այնպիսի դրութիւնը, որից յետոյ անխուսափելի են քաղաքականութեան և գործիչների փոփոխութիւնը: 3) Տնտեսագիտութեան մէջ կրիզիս կոչւում են այն՝ զանազան տեսակ տնտեսական ցնցումները, որ կրկնւում են կանոնաւոր կերպով վերջին տարիները՝ սկսւած XIX-րդ դարից, կախւած լինելով ապրանքների և դրամագլուխների պահանջի ու սպառման հաւասարակշռութեան խանգարումից: Կրիզիսները լինում են՝ դրամային, կրե-

դիտային (վարկային), առևտրա-արդիւնաբերական և գիւղատնտեսական: Ամենից խոշոր նշանակութիւն ունին արդիւնագործական կրիզիսները, որ պատճառ են հանդիսանում նաև տնտեսական կեանքի բոլոր մնացեալ ճիւղերի ցնցումներին ու կրիզիսներին: (Տես կրիզիս արդիւնագործական):

ԿՐԻԶԻՍ ԱՐԴԻԻՆ ԱԳՈՐԾԱԿԱՆ—Ապրանքների շատութիւնից և նրանց գնի անկումից յառաջացած արդիւնագործական կեանքի ընդհանուր խանգարումն, ընդհանուր ճգնաժամ: Կրիզիսի հիմնական պատճառն այն մրցութիւնն է, որ գոյութիւն ունի արդիւնագործների մէջ: Ամեն մի արդիւնագործող աշխատում է որքան կարելի է շատ մթերքներ պատրաստել՝ շատ օգտուելու համար: Այդպիսով շուկայում ամբարուում է աւելի ապրանք, քան թէ պահանջ կայ և ապրանքների գինն արագութեամբ ընկնում է: Արդիւնագործները կանգնեցնում են իրանց գործարանները որով թէ իրանք են տնտեսապէս քայքայւում և թէ հազարաւոր բանւորների գործազուրկ դարձնում կամ նրանց ստիպում, որ աւելի ու աւելի վատ պայմաններով աշխատեն: Կրիզիսը սովի ճանկն է գցում հազարաւոր բանւորների և այլասեռում ամբողջ բանւորութիւնը թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս: Նկատւած է, որ արդիւնագործական կրիզիսները կանոնաւոր կերպով կրկնւում են ամեն 10 տարին: Վերջին ժամանակներս համաշխարհային կրիզիսներ եղել են՝ 1857 թ. և 1870—1880 թւականներին: (Տես Տնտեսական մատերիալիզմ, Սօցիալիզմ, Կրիզիս):

ԿՐԻՄԻՆԱԼԻՍ—Քրէական իրաւունքի մասնագէտ:

ԿՐԻՏԷՐԻՍԻՄ—Յայտանշան, որոշող նշան, ճշմարտութեան նշան, չափ:

- ԿՐԻՏԻԿԱ.—Քննադատութիւն: (Տես Մատենագրութիւն):
- ԿՐԻՏԻԿ կամ ԿՐԻՏԻԿՈՍ—Քննադատ:
- ԿՐՕՆԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄ—Տես Լիբերալիզմ:
- ԿՕԱԼԻՑԻԱ.—Դաշնակցութիւն պետութիւնների մէջ՝ որոշ նպատակով:
- ԿՕԴԷԳՍ—Օրէնսգիրք, օրէնքների ժողովածու:
- ԿՕԶԱԿՆԵՐԻ ՀՈՂԵՐ—Վոչուում հն կօղակ զօրքերին յանձնուած հողերը, որ բնում են 55 միլ. դեսետարին:
- ԿՕԼԼԷԳԱ.—Պաշտօնակից, արհեստակից, միևնոյն զբաղմունքի տէր:
- ԿՕԼԼԷԳԻԱ.—Ընկերութիւն, խմբակցութիւն:
- ԿՕԼԼԷԿՏԻ.—Հաւաքական, խմբական:
- ԿՕԼԼԷԿՏԻԻԶՄ—Տես Անարխիզմ:
- ԿՕԼԼԷԿՑԻԱ.—Ժողովածու, հաւաքածու:
- ԿՕԼԼԻԶԻԱ.—Ընդհարում:
- ԿՕՄԲԻՆԱՑԻԱ.—Դասաւորութիւն, զուգաւորում:
- ԿՕՄԵԴԻԱ.—Կատակերգութիւն, դրամատիքական արտադրութիւն, որտեղ դուրս են բերւած մարդկային բարքերի, բնաւորութեան, նիստ ու կացի, հասկացողութիւնների ծիծաղելի կողմերը:
- ԿՕՄԵԴԻԱՆՏ.—Կատակերգու:
- ԿՕՄԵՆԴԱՆՏ.—Ամրոցապետ, ամրոցի հրամանատար:
- ԿՕՄԻԿ.—Կատակերգու:
- ԿՕՄԻՍՍԱՐ.—Հաւատարմատար:
- ԿՕՄԻՍՍԻԱ.—Մասնաժողով:
- ԿՕՄԻՍՍԻՈՆԷՐ.—Միջնորդ: Անձ, որի պարտականութիւնն է որոշ վարձատրութեամբ առևտրական յանձնարարութիւններ կատարել:
- ԿՕՄԻՏԵՏ կամ ԿՕՄԻՏԷ.—Սորհրդաժողով:
- ԿՕՄՄԱՆԴԻՏ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.—Կամ փոխադարձ վարկի, առևտրական, վարկային կամ արդիւնա զործական ըն

կերութիւն, որի անդամները երկու կարգի են բա-
ժանուում. 1) Նրանք, որ վարում են ընկերութեան
դործերը և անյաջութեան դէպքում պատասխանատու
են իրանց ամբողջ ունեցւածքով: 2) Նրանք, որոնք
ձեռնարկութեան մէջ չեն մասնակցում, այլ վերցնում
են միայն փայեր—բաժիժններ և կոչւում են փայա-
աէր—բաժնետէր:

ԿՕՄՄԵՐՉԵՍԿԻՅ ԲՍՆԿ—Տես Բանկ:

ԿՕՄՄԵՐՍԱՆՏ—Առևտրական, մեծ վաճառական:

ԿՕՄՄԵՐՑԻԱ—Առևտուր:

ԿՕՄՄՈՒՆԱ.—1) Համայնք: 2) Մարդոց խումբ, որոնց սե-
փականութիւնն ընդհանուր է:

ԿՕՄՄՈՒՆԻԻՉՄ—Տես Անարխիզմ:

ԿՕՄՄՈՒՆԻՍՏ—Կոմմունիզմի կողմնակից:

ԿՕՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՐԽԻՉՄ—Տես Անարխիզմ:

ԿՕՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ—Կոչւում է Կ. Մարքսի և
Ֆ. էնգելսի 1847 թ. հեղինակած գրութիւնը, որը սը-
րանք կազմեցին «Կոմմունիստներէ Միութեան» յան-
ձնարարութեամբ և որը պէտք է այդ Միութեան հա-
մար իբրև ծրագիր ծառայէր: Այս Մանիֆեստի մէջ
առաջին անգամ բացատրել է տնտեսական մատեր-
իալիզմի հիմնական սկզբունքները (Տես Տնտեսական
մատերիալիզմ, Սօցիալիզմ, Քաղաքական կոնսակցութիւն-
ներ):

ԿՕՄՊԵՏԵՆՏ—Գիտակ, տեղեակ, հեղինակաւոր:

ԿՕՄՊԻԼԵՍՑԻԱ—Գիրք կամ յօդւած, որ կազմւած են ոչ թէ
սեփական ուսումնասիրութեամբ, այլ ուրիշներէ աշ-
խատանքից օգտուելով:

ԿՕՄՊԻԼԵՍՐ—Կոմպիլեացիա անող:

ԿՕՄՊԼԷԿՏ—Լիակատար ժողովածու, լիակատար կազմ:

ԿՕՄՊԻՄԵՆՏ—Հաճոյախօսութիւն, սիրախօսութիւն:

ԿՕՄՊՐԵՍՍ—Ջրի, քացախի կամ հեղուկի մէջ թացացրած քաթան, որ դրուած է մարմնի զանազան տեղերին՝ սառցնելու կամ տաքացնելու համար:

ԿՕՄՊՐՕՄԻՍՍ—Ջիջուած:

ԿՕՆԳԼՕՄԵՐԱՏ—Մարմին, որ կազմուած է բազմազան տարրերից:

ԿՕՆԳՐԵԳԱՅԻԱ—Տես Կարդինալ:

ԿՕՆԳՐԵԳԱՅԻՕՆԱԼԻՍՏ—Տես Կօնգրեգացիօնալիստների կուսակցութիւն:

ԿՕՆԳՐԵԳԱՅԻՕՆԱԼԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ—Անգլիայում գոյութիւն ունեցող այդ կուսակցութիւնը պահանջուած է, որ եկեղեցու ամեն մի ծխական մասնակցութիւն ունենայ կրօնական գործերի կառավարութեան մէջ և ամեն մի ծխական համայնք լիապէս անկախ լինի:

ԿՕՆԳՐԷՍ—1) Պետութիւնների ներկայացուցիչները համաժողովուրդ: 2) Գիտութեան միևնոյն ճիւղն ուսումնասիրող անձերի համագումար: 3) Ֆրանսիական Դեպուտատները Պալատի և Սենատի միացեալ նիստը: 4) Ամերիկայում կօնգրէս է կոչուած Օրէնսդիր ժողովը: (Տես նաև Պարլամենտ):

ԿՕՆԴԱԿ—1) Եկեղեցական երգ, որի մէջ համառօտութեամբ բացատրուած են տօնի նշանակութիւնը և որևէ սրբի գովքն անուամբ: 2) Հայոց կաթողիկոսի պաշտօնական գրութիւնը ծանրակշիռ հարցերի վերաբերմամբ, ուղղուած զանազան հաստատութիւնների կամ անհատներին:

ԿՕՆԿԼԱԻ—Տես Կարդինալ:

ԿՕՆԿՈՒՐԵՆՏ—Մրցակից, հակառակորդ:

ԿՕՆԿՈՒՐԵՆՏԻԱ—Մրցումն, մրցութիւն: (Տես Կապիտալիզմ,

Սօցիալիզմ, ՏՅԵտեսական մատերիալիզմ, Քաղաքատնտեսութիւն:

ԿՕՆԿՕՐԴԱՏ—Պայմանագիր՝ Պապի և աշխարհիկ իշխանութեան միջև:

ԿՕՇՄԱՐ—Երազական տաղնապ, ծանր ու անհանդիստ քուն՝ սարսափեցնող երազներով ու զգացումներով: Ղառաղոռա:

ԿՕՆՍԵՐՎԱՏԻԻ—Պահպանողական: (Տես Կօնսերվատիզմ):

ԿՕՆՍԵՐՎԱՏԻԶՄ—Պահպանողականութիւն, ուսմունք, որ քարոզում է գոյութիւն ունեցող հասկացողութիւնների՝ գաղափարների, կարգերի ու հիմնարկութիւնների պահպանութեան ու անփոփոխութեան նպատակադրմարութիւնը: Պահպանողական կուսակցութիւնները բոլոր երկրների քաղաքական կեանքում հրապարակ են իջնում պահպանելու անփոփոխ՝ գոյութիւն ունեցող պետական ու հասարակական կարգերը, որքան էլ որ սրանք պակասաւոր ու թերի լինեն՝ հակառակ լիբերալ-ազատամիտ (տես Լիբերալիզմ) կուսակցութիւններին, որոնք պահանջում են ռէֆորմներ ու բարեփոխութիւններ: Պարլամենտական կօնսերվատի կուսակցութիւնն ամենից առաջ սկիզբ առաւ Անգլիայում XV[-րդ դարում՝ Տօրիների անւան տակ, որը 1832 թւականի ռէֆորմից յետոյ սկսեց կոչւել պանպանողակաց կուսակցութիւն:

ԿՕՆՍԵՐՎԱՏՕՐ—Պահպանողական մարդ: (Տես Կօնսերվատիզմ):

ԿՕՆՍԵՐՎԱՏՕՐԻԱ—Հասարակական հիմնարկութիւն՝ բարձրագոյն երաժշտական կրթութիւն ձեռք բերելու համար: Պետերբուրգի կօնսերվատօրիան հիմնւած է 1861 թ., Մոսկվայինը՝ 1866 թ.:

ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱ—Հոգևոր կառավարութիւն: Հիմնարկութիւն,

որտեղ հոգևորականութեան հսկողութեան տակ կենտրոնացած են հոգևոր գործերը: (Տես նաև Կարդիխալ):

ԿՕՆՍՍՈՒԼ—1) Հին Հոսոմում կոնսուլ կոչւում էին այն պաշտօնեաները, որոնց յանձնւում էր երկրի բարձրագոյն իշխանութիւնը: 2) Հիւպատոս, պետութեան ներկայացուցիչն ուրիշ պետութիւնների առևտրաշահ քաղաքներում՝ իր հայրենակիցների առևտրական շահերը պաշտպանելու համար: 3) 1799 թ. Ֆրանսիայում հաստատուած կառավարութեան ամեն մի անդամը:

ԿՕՆՍՍՈՒԼԻ ԻՐԱՒԱՍՍՈՒԹԻՒՆ—Կոչւում է հիւպատոսի իրաւունքը՝ դատելու իր այն հայրենակիցներին, որոնք յանցանք են գործել օտար պետութեան սահմանում: Կոնսուլի իրաւասութեանն են ենթարկւում ոչ միայն նրա հայրենակիցներն՝ իրարից պահանջ ունենալիս, այլև՝ յաճախ տեղացիները՝ երբ պահանջն օտարեերկրացիներից է: Մի քանի թոյլ պետութիւնների մէջ, ինչպէս Տաճկաստան, Չինաստան և այլն, հիւպատոսները վարում են նոյն իսկ քրէական գործեր—թէկուզ յանձաւորը տեղացի լինի:

ԿՕՆՍՊԷԿՏ—Ծրագիր: Բովանդակութեան համառօտ ամփոփումն:

ԿՕՆՍՏԻՏՈՒՑԻԱ—Տես Սահմանադրութիւն:

ԿՕՆՎԵՆՏ—1) Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ ժողովրդական պատգամաւորներից կազմւած օրէնսդիր ժողով, որ հաւաքւեց 1792 թ. սեպտ. 21-ին և ցրւեց 1795 թ. հոկտ. 26-ին: 2) Կաթոլիկ հոգևորականների ժողով:

ԿՕՆՏՕԳԻԻՍ—Տես Սօցիօլօգիա:

ԿՕՆՏԻՆԵՆՏ—Մայր ցամաք:

ԿՕՆՏՐՕԼԻ ՄԱՐԿԱ—Տես Բօլկօտ:

ԿՕՆՑԵՆՏՐԱՑԻԱ—Կենտրոնացում, խտացումն:

- ՊՅՆՑԵՊՑԻԱ—Ըմբռնում, իւրացում, հասկացողութեան, ըմբռնողութեան եղանակը:
- ՊՅՆՑԵՐՏ—1) Համերգ, 2) Համերաշխութիւն, համաձայնութիւն, համերաշխ գործունէութիւն:
- ՊՅՆՖԷՐԵՆՑԻԱ—Համազումար:
- ՊՅՆՖԻՍԿԱՅԻԱ—Գրաւումն:
- ՊՅՆՖԼԻԿՏ—Ընդհարում, հակառակութիւն:
- ՊՍՄՕՂՕԳԻԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ—Տես Մատերիալիզմ:
- ՊՍՄՕՊՕԼԻԵՏ—Կօմսօլիտիզմի հետևորդ:
- ՊՍՄՕՊՕԼԻԵՏԻԶՄ—Աշխարհաքաղաքացիութիւն: Հայացք, որի համաձայն մարդու հայրենիքը ամբողջ աշխարհն է և ոչ թէ մի որևէ երկիր: Կօմսօլիտիզմը հայրենասիրութեան գաղափարի ամենալայն ըմբռնումն է: Կօմսօլիտիզմի հասկացողութիւնը գոյութիւն ունէր դեռ ևս հին յոյների մէջ:
- ՊՕՐԻՖԷՅ—Վոթող, գիտութեան, գեղարեստի կամ այլ ասպարէզների պարծանք, ականաւոր ներկայացուցիչ, վաստակաւոր գործիչ:
- ՊՕՐՊՕՐԱՅԻԱ—Ընկերակցութիւն, որի անդամները միատեսակ պարտականութիւններ ունենալով՝ իրար հետ կապած են ընդհանուր շահերով: Սովորաբար՝ կօրպօրացիան կազմակերպ ձևի է վերածուում և օգտուում է սուանձին իրաւունքներով: Կօրպօրացիաները լինում են բազմատեսակ, բժիշկների, արհեստաւորների, վաստաբանների, ուսանողների և այլն, և այլն:
- ՊՕՐՐԷԿՏՕՐ—Սրբազրիչ:
- ՊՕՊԵՐԱՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻԻՆՆԵՐ—Տես Կօօպերացիա:
- ՊՕՊԵՐԱՏԻԱ կամ ԱՍՍՕՑԻԱՅԻԱ—Մի քանի մարդոց աշխատակցութիւնը՝ ընդհանուր նպատակների համար: Կօօպերացիան լինում է պարզ, երբ մարդիկ իրար օգնում են միևնոյն աշխատանքի մէջ և բարդ, երբ ընդ-

հանուր գործի մէջ ամեն մէկը կատարում է որևէ առանձին աշխատանք: Կօօպերացիայի տնտեսական նշանակութիւնն այն է, որ աշխատանքը դարձնում է աւելի արդիւնաւէտ և հնարաւորութիւն է տալիս կատարելու այն աշխատանքը, որը չէր կարող գլուխ բերել անհատը՝ մենակ: Կօօպերացիաները լինում են զանազան տեսակի, նայելով թէ ի՞նչ նպատակով են կազմւած. ա) Արտադրողական. բ) Սպառողական. գ) Շինարարական և այլն: Արտադրողական կօօպերացիաների նպատակն է՝ ընդհանուր սեփականութիւն կազմող գործարանների միջոցով ապրանքներ արտադրել: Սպառողական կօօպերացիաներն ընկերական հիմունքներով էժան գնով ձեռք են բերում զանազան մթերքներ և մատակարարում են կօօպերացիայի — ընկերութեան անդամներին: Շինարարական կօօպերիցիաները, որ Ռուսաստանում կոչւում են նաև արտել, անդամների համար էժան ընակարաններ, ճաշարաններ, թէյարաններ են շինում: Այդպիսով՝ կօօպերատիւ հիմքերով կազմւում են փոխադարձ վարկի ընկերութիւններ, խնայողական կասսաներ, սպառողական, արտադրողական և այլ ընկերութիւններ: Կօօպերացիայի ընդհանուր նպատակն է՝ վերացնել միջնորդներին և անմիջական կապ հաստատել սպառողի ու արտադրողի մէջ:



ՀԱԶԱՎԱԹ—Մահմեդական սրբազան պատերազմ:

ՀԱԼԻԻՄԷՏ—Խաղաղութեան ջիբուխ, որ ծախում են հրնդիկները, որպէս բարեկամութեան ու հաշտութեան նշան:

ՀԱԼԼԻԻՑԻՆԱՑԻԱ—զգայանքների շփոթ գործողութիւն, որի պատճառով հալլիցիւնացիայի ենթարկւածը տեսնում

է իրականութեանը չհամապատասխանող պատկերները: Հալլիւցիինացիան պատահում է հոգեկան, ջղային, արեան պակասութեան և այլ հիւանդութիւններ ժամանակ:

ՀԱՄԱՄ—Տաճկերէն՝ բաղնիք:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԱԻՏՕՆՅՄԻԱ կամ **ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ**
—Տես Ակադեմիական ինքնավարութիւն:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ—Համալսարաններն սկիզբ են առել XII և XIII-րդ դարերում Իտալիայում (Բօլօնիա, Սալէրնօ, Պադուա), Ֆրանսիայում (Փարիզ), Սպանիայում (Սալամանկա, Սեվիլիա) և Անգլիայում (Օքսֆորդ, Կէմբրիջ): Սկզբում ուսուցիչների և աշակերտների կօրպորացիայի կերպարանք ունէին և կազմակերպւած էին լիակատար ինքնավար հիմունքներով: Ապա՝ համալսարանները բարձրագոյն ընդհանուր-կրթական հիմնարկութեան են վերածւում, ունենալով իրանց մէջ մի քանի ֆակուլտետ (մասնաճիւղ)՝ որտեղ աւանդում են զանազան մասնագիտական առարկաներ: Ժամանակակից համալսարանների մեծամասնութեան նպատակն է ոչ այնքան մասնագիտական պատրաստութիւն տալը, որքան ընդհանուր բարձրագոյն կրթութիւն, որը կարողանար հիմք ծառայել ապագայ հասարակական գործունէութեան համար: Պատմականօրէն Եւրոպայում համալսարանների երկու տիպ է մշակւել.—1) ուսմանական-կաթոլիկական պետութիւնների մէջ համալսարանին նայում են իբրև մի հիմնարկութեան, որ երիտասարդներին գործնական-մասնագիտական պատրաստութիւն տալով՝ պէտք է նրանց ընդունակ դարձնէ գործնական ձեռնարկութիւնների, ուստի և այս տիպի համալսարաններում ծրագիրը սահմանափակ է: 2) Երկրորդ տիպի համալսարանները գերմանական-բողոքական (պրօտեստանտական) երկրներինն է, որտեղ համալսարանը

համարուում է գիտութիւնը պահպանող և զարգացնող և իր ունկրդիւրներէ մտաւոր ու բարոյական աշխարհայացքը լայնացնող հիմնարկութիւն: Ազատ համալսարանները գոյութիւն ունեն Թրանսիայում (5 կաթողիկական համալսարաններ) և Բելգիայում: Ազատ են կոչուում այդ համալսարանները՝ որովհետև մասնաւոր ընկերութիւնների հաշուով են պահուում: Ռուսաստանում առաջին համալսարանը բացուում է Մոսկվայում (1755 թ. յունվ. 12-ին), ապա Վիլնայում (1803-ին) և վերաբացուում է Դորպատում-Իւրիևում (1803-ին), Պարկովում և Կազանում՝ 1804-ին, Պետերբուրգում՝ 1819-ին: Համալսարանական առաջին կանոնադրութիւնը լոյս տեսաւ 1894-ին. այս կանոնադրութեամբ Ռուսաստանի համալսարանները վայելում են ամենալայն աւտոնոմիայի իրաւունքները.— համալսարանին էին ենթարկած շրջանի բոլոր միջնակարգ և ստորին դպրոցները: XIX-րդ դարի առաջին քառամեակում սկսուում է ունկրդիւրան և համալսարանները դառնում են վանքեր կամ կանցելիարներ: 1863 թւին համալսարանները կրկին լայն ինքնավարութիւն են ստանում և կարճ ժամանակից՝ նորից ճնշուում՝ երբ 1884-ին լոյս է տեսնում նոր կանոնադրութիւն, որի համաձայն համալսարանը պահում է ինքնավարութեան միայն թեթեւ սուէրը: Վերջին տարիների հասարակական շարժման հետ՝ համալսարաններն ստանում են կրկին լայն ինքնավարութիւն, բայց 1906-ի ունկրդիւրանի օրով՝ աստիճանաբար սկսում են սահմանափակել նրանց իրաւունքները: Երկայումս գոյութիւն ունեն համալսարաններ՝ Պետերբուրգ, Մոսկվայ, Կիև, Պարկով, Օդեսսա, Վարշավա, Դորպատ, Կազան, Տոմսկ: Համալսարաններն ունեն հետեւեալ ֆակուլտետները, իրաւաբանական, բժշկական, ֆիզիկո-մատեմատիկական, պատմա-լիզ-

ւարանական և Պետերբուրգի համալսարանը՝ նաև արևելեան լիզուների ֆակուլտետ: Վերոյիշեալ մի քանի քաղաքների համալսարանները դեռ ևս չունեն բոլոր ֆակուլտետները: Համալսարան ժողովրդական: (Տես ժողովրդական համալսարան):

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ — Հողատիրութեան ձև, որի ժամանակ հողը կազմում է ամբողջ երկրագործական համայնքի ընդհանուր սեփականութիւնը, ըստ որում՝ համայնքի բոլոր անդամները հողից օգտելու հարցում հաւասար իրաւունքներ ունեն: Ներկայումս համայնական հողատիրութիւնը գրեթէ բոլորովին ուլնչացել է Արևմտեան Եւրոպայում և լայն չափերով պահել է միայն Ռուսաստանում, որտեղ զիւղացիական հողատիրութեան գերակշռող ձևն է կազմում: Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգներում բոլոր զիւղացիական հողերի $\frac{1}{5}$ մասը համայնական է: Համայնական հողատիրութեան հիմունքները հեռեեայն են. համայնքին պատկանող ամբողջ հողը բաժանւում է համայնքի անդամների մէջ (գլխաւորապէս հասակաւոր տղամարդ աշխատաւորների թւով կամ շնչերի թւով), ըստ որում՝ ուշադրութեան է առնւում հողի որակը (արդիւնաւէտութիւնը): Բաժանւում է թէ՛ վարելահողը, թէ՛ խոտատեղը և թէ՛ տնատեղը, իբրև համայնքին անբաժանելի սեփականութիւն մնում է արօտը: Որոշ ժամանակամիջոցում (ըստ 1893 թ. օրէնքի ոչ վաղ քան 12 տարին մի անգամ) հողի նոր բաժանում է տեղի ունենում որին իբրև հիմք ծառայում են ընտանիքների անդամների աւելանալը և տնտեսական պայմանների փոփոխումը կամ նոր պայմանների յառաջանալը: (Տես Հողային համայնք):

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՂԱՏ — Տես Պարլամենտ:

- ՀԱՅԳՈՒԿ—Վենգրիայում այդպէս էին կոչուում այն կամաւորները, որոնք XVII-րդ դարում պարտիզանական կռիւ էին մղում տաճիկների դէմ: Գերմանիայում և Ռուսաստանում XVIII-րդ դարում հայդուկ էին կոչուում բարձրաստիճան մարդոց լաքէյները: Ապա Տաճկաստանում սկսեցին հայդուկ անւանել այն քրիստոնէաներին, որոնք թողնում են տուն-տեղ և յեռները քաշւելով՝ կոււում են տաճիկ կառավարութեան դէմ՝ իրանց վրէժը լուծելու համար:
- ՀԱՆԳՈՅՑ ԳՕՐԴԵԱՆ—Հանգոյց՝ որով ըստ աւանդութեան՝ Գօրդիոսի կառքը կապւած էր Իւպիտերի տաճարում: Տաճարի պատգամախօսը գուշակել էր, որ նա՝ ով կը քանդէ այդ հանգոյցը, Փոքր-Ասիայի տէրը կը դառնայ: Աղէքսանդր Մակեդոնացին իր սցովը կտրեց այդ հանգոյցը: Ամեն մի խճճւած գործ ներկայումս կոչուում է Գօրդեան Հանգոյց: Քանզի Գօրդեան Հանգոյցը—նշանակում է վճռել մի ծանր լուծելի խնդիր:
- ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ—Տես էնցիկլօպեդիական բառարան:
- ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ—Տես էնցիկլօպեդիզմ, էնցիկլօպեդիա:
- ՀԱՆՐԱՀԱՇԻՒ—Տես Այգեբրա:
- ՀԱԶԻ—Կոչուում է՝ 1) ամեն մի մահմեդական, որ այցելել է Մեկկան՝ Մահմեդի գերեզմանին երկրպագելու: 2) Ամեն մի քրիստոնէայ, որ ուխտ է գնացել Երուսաղէմ:
- ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ—Տես Սօցիալական գիտութիւններ:
- ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ—Տես Կառավարութեան մե:
- ՀԱՐԵՄ—Մահմեդականների տան այն մասը, որտեղ ապրում են կանայք:
- ՀԱՐԿԵՐ—Կոչուում են այն վճարները, որ ամեն քաղաքացի օրինական ճանապարհով որոշւած չափով վճարում է

Պետական Գանձարանին, պետական ծախսերի համար: Բոլոր պետութիւնների մէջ ներկայումս հարկերը պետութեան գլխաւոր եկամուտն են կազմում: Հարկերը լինում են երկու տեսակ—սւղղ սկի և անուղղակի: Ուղղակի հարկերը նրանք են, որ հարկատուները վճարում են անմիջապէս իրանք—դրանք են՝ տների տուրքը, անցազրային տուրքերը, անձնա՛լան-եկամտային, կայքերի-եկամտային, ժառանգութեան վրայ նշանակւած և այլ տուրքերը: Անուղղակի հարկերը վճարւում են միջնորդների ձեռքով, ինչպէս օրինակ՝ բնակարանային տուրքը, զանազան մթերքների վրայ նշանակւած տուրքը, ծխախոտի, խմիչքների, շաքարի, լուցկու ակցիզային տուրքերը: Անուղղակի հարկերը ծանրանում են գլխաւորապէս հասարակութեան չքատուր դասակարգերի վրայ, որովհետև նրանք ազգաբնակչութեան մեծ մասը կազմելով, շատ ապրանքներ են սպառում, որոնց վրայ տուրքեր են նշանակւած:

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ—Տես Չապրօս:

ՀԵԲԵՐՏԻՍՏՆԵՐ—Ֆրանսիական յղափոխութեան գործիչ՝ Հերերի կողմնակիցները: Հերերտիստները ժիրօնդիստների հակառակորդներն էին: Պահանջում էին քրիստոնէութեան վերացումը և բանականութեան պաշտամունքի ներմուծումը: Տերրօրին դէմ լինելու և Ռօբէսպիերի ու Դանտօնի վրայ յարձակելու պատճառով հալածանքների ենթարկւեցին, իսկ Հերերը 1794 թ. գլխատւեց: (Տես Ժիրօնդիստներ):

ՀԵԲՐԱԻՍ—Հին եգիպտական լեզուն, գրականութիւնն և կեանքն ուսումնասիրող ու գիտեցող:

ՀԵԳԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ—Տես Հեգելիզմ:

ՀԵԳԵԼԻԶՄ—Գոչւում է գերմանացի փիլիսոփայ Հեգելի ուսմունքը, որի համաձայն այն ամենը, որ գոյութիւն

ունի՝ հիմնւած է Ամբասօլիւտ Գաղափարի վրայ: Բոլոր իրական գոյութիւնները, ամբողջ զգայական և տեսական աշխարհը Արսօլիւտ Գաղափարի արտայայտութիւնը և իրականացումն են: Տիեզերական զարգացման պրօցէսսը Գաղափարի ինքնազատութեան պրօցէսն է, որ կատարւում է ճշմարիտ ու լիակատար ինքնաճանաչութեան ճանապարհին: Ի դէմս ամեն մի փրկիսօփայի՝ Գաղափարը ճանաչում է ինքն իրան, զարգացման ամենաբարձր աստիճանին է հասնում: Հեզելի փրկիսօփայութեան մէջ աւելի խոշոր գիտական նշանակութիւն ունի նրա մտածողութեան՝ դիալէկտիկական ձևը: (Տես Գիալիկտիլով):

ՀԵԳԵՄՕՆԻԱ—Գերիշխանութիւն:

ՀԵԼԼԵՍՊՕՆՏ—Գարդանել նեղուցի հին անունը: Այդ նեղուցը միացնում է Սև և Մարմարիա ծովերը:

ՀԵԿՆՏՕՄԲ—Հասարակական զոհ, որ բերում էին յոյները, սովորաբար հարիւր եզ միասին:

ՀԵԿՈՒԻԱ—Տրօյական թագաւոր Պրիամոսի կինը, տւօյացի ամենաքաջ հերոս Հեկտորի մայրը:

ՀԵԿՏԱՐ—Հողի Ֆրանսիական չափ, որ հաւասար է $1\frac{1}{12}$ դես. կամ 2197 քառ. սաժէնին:

ՀԵԿՏՕՐ—Տրօյական թագաւոր Պրիամոսի որդին, Տրօյայի ամենաքաջ պաշտպանը:

ՀԵԿՏՑ—Մասնիկ, որ աւելացւում է Ֆրանսիական չափերի սկզբին և ցոյց է տալիս, որ այդ չափից վերցրած է հարիւր. օր. հեկտօլիտր=հարիւր լիտր, հեկտօմետր=հարիւր մետր և այլն:

ՀԵԿՏՕԳՐԱՄ—Մանրութեան չափ Ֆրանսիայում, հաւասար է $23\frac{1}{2}$ զօլտնիկին:

ՀԵԿՏՕԳՐԱՖ—Տպագրութեան գործիք: Լայն և տափակ վաննի մէջ լցւում է որոշ բաղադրութեամբ խառնուրդ (սո-

սինձ, գլխերին): Քրիմիական թանաքով գրածը ճշգրտով դուրս են բերում սոսինձի վրայ և ապա մաքուր թղթերը սեղմելով սոսինձին՝ ստանում են գրածն՝ արտատպւած:

ՀեկՏՕԼԻՏՏ — Հեղուկի և կարծր մարմինների ֆրանսիական չափ, հաւասար է 8 վեդրոյին կամ 4 չետվերիկին:

Հեղինակի ԻՐԱԿՈՒՆՔ — Գրական-երաժշտական և գեղարվեստական աւտագրութիւնների սեփականութեան իրաւունքը, որ Ռուսաստանում սահմանափակուած է 50 տարով.— այս ժամանակամիջոցն անցնելուց յետոյ երկը դառնում է ընդհանուրի սեփականութիւնը և ամեն մարդ կարող է հրատարակել ու օգտուել նրանից: Հեղինակի իրաւունքը պաշտպանուած է միջազգային դաշնագրերով, որոնք չէ ընդունում Ռուսաստանը: (Տես Գրական դաշնագրեր, և Գրական սեփականութիւն):

Հեղինակի ԻԹԻԻՆ — 1) Երբ մի մարդ կամ հիմնարկութիւն իր արժանիքների, խելքի, ընդունակութիւնների, նիւթական կարողութեան և առհասարակ՝ որևէ առաւելութեան համար արժանանում է յարգանքի ու պատուի, ասում են որ այդ մարդը, հիմնարկութիւնը «հեղինակութիւն է վայելում», «աւտօրիտէտունի»: 2) Մարդկային մտքի կամ զգացմունքի արդիւնքը՝ արտայայտւած գրական զանազան ձևերով (վէպ, բանաստեղծութիւն, գիտական ուսումնասիրութիւն), կամ երաժշտութեան միջոցով (երգ և այլն), կամ նկարչութեան, ճարտարապետութեան, մեքենագիտութեան միջոցով (շէնքեր, արձաններ, նկարներ, մեքենաներ և այլն), կոչւում է նրա հեղինակութիւնը. իսկ ինքը՝ արտագրողը կոչւում է հեղինակ: (Տես Հեղինակի իրաւունք):

ՀենեքիՍ — Ծագում, սկիզբն:

ՀԵԶՐԱ կամ ՓԱՆՈՒՍՏ—Մահմեդի փախուստը Մեկկայից Մեդինա՝ 622 թ. յուլիսի 3-ին (Ք. Մ. յ.), Այդ օրից է սկսուում մահմեդականների տարեթիւը:

ՀԵՏԵՐԱ—Ընկերուհի, սիրուհի, պոռնիկ կին:

ՀԵՏԵՐԻՉՄ—Ամուսնութեան նախնական ձևը, երբ ամեն մարդ և կին կարող էին սեռական յարաբերութեան մէջ մտնել:

ՀԵՏԵՐՕԺԷՆ—Այլատարր:

ՀԵՐԵՏԻԿՈՍ—կոչուում է այն մարդը, որ կրօնական կամ այլ խնդիրների մասին ունեցած համոզմունքներով դէմ է մեծամասնութեան համոզմունքներին:

ՀԵՐՄԷՍ կամ ՄԵՐԿՈՒՐԻՈՍ—Հին յունական ասանդութիւնների մէջ յայտնի է իբրև աստուածների պատւիրակը, առևտրի, գիւտերի, արօտների և հօտերի աստուածը:

ՀԵՐՈՍ—1) Քաջ մարդ: 2) Մարդ, որ ընդունակ է բարձր սխրագործութիւնների: 3) Հերոս կոչուում է նաև վէպի, պատկերի, դրամատիկական գրեածքի, պօէմայի գործող գլխաւոր անձը: 4) Սխրալի մարդիկ, որոնց հին ժամանակները համարում էին աստուածներից սերած և աստուածային յարգանքներ էին մատուցանում:

ՀԵՐՔՈՒԼԷՍ—Ըստ յունական հին ասանդութիւնների՝ ուժեղ և ամեն բարեմասնութիւններով օժտած հերոս: Այժմ հերքուլէս ասում են Ֆիզիքական մեծ ոյժի տէր մարդոց:

ՀԵՐՕՍՏՐԱՏ—Ըստ ասանդութեան՝ այդ անունով մի մարդ՝ իր անունն ապագայ սերունդների մէջ անմահ պահելու համար՝ հրդեհեց Դիանայի (Մահահիտի) հոջակաւոր տաճարը 356 թ. Ք. ա. որով և նրա անունը յիշուում է մինչև մեր օրերը:

ՀԵՅԶԷՐ—Հանքային տաք աղբիւրներ Իսլանդիայում, Հիւս. Ամերիկայում և Նոր Զելանդիայում:

ՀԻՄՆ—Օրհնեցող, հանդիսաւոր երգ:

ՀԻՅՆ—Ծանրութեան չինական չափ որ հաւասար է 1 Ֆ⁴
84 դ-լօտնիկին:

ՀԻՊԵՐԲՕԼ — Չափազանցութիւն, հաւանականից և կարե-
լիից դուրս բան:

ՀԻՊԵՆՈՉ — Մարդիկ ենթարկուում են որոշ հոգեկան դրութեան՝
որը նման է քնին, բայց վերջինիցս տարբերող գծեր
ունի. այդ դրութիւնը կոչուում է հիպնօզ, Հիպնօզի ժա-
մանակ մարդու կամքը ճնշւած է, նա գործում է ու-
րիշների ներշնչմամբ, զգում է, լսում և տեսնում նոյն-
պէս ուրիշների ներշնչմամբ: Հիպնօտիզմը ներկայումս
աշխատում են գործադրել բժշկութեան և այլ նպա-
տակներով:

ՀԻՊԵՆՕՏԻՉՄ — Տես Հիպնօզ:

ՀԻՊՕԹԷՉ — Ենթադրութիւն, որը կարելի է շատ թէ քիչ
հաւանական համարել:

ՀԻՊՕԽՕՆԴՐԻԱ կամ ԻՊՕԽՕՆԴՐԻԱ — Սեւամաղձութիւն:

ՀԻՊՊՕԴՐՕՄ — Հրապարակ, ուր հին ժամանակները կատար-
ւում էին ձիարշաւներ, բմբշամարտ և այլն:

ՀԻԻՊԱՏՈՍ — Տես Կօնստանդ:

ՀԻՐՇ-ԴՈՒՆԿԵՐԵԱՆ ՄԻՈՒԹԻՆՆԵՐ — Տես Բանօրական
միութիւններ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻՉՄ — Տես Մատերիալիզմ:

ՀՈԳԵԻՈՐ ՅԵՆՉՈՒՐԱ — Տես Յենզօւրա:

ՀՈՂԱՅԻՆ ԲԱՆԿ — Տես Բանկ:

ՀՈՂԱՅԻՆ ԳԻՒՂԱՅԻԱԿԱՆ ԲԱՆԿ — Տես Բանկ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ — Տես Ազգային հարց:

ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿ — Տես Բանկ:

ՀՈՂԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Տես Ազգային քաղաքա-
կանութիւն:

ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ — Իբրև սեփականատէր հողից օգտուելու ի-

բաւունք: Ռուսաստանում հողատիրութիւնը կոչւում է պետական՝ երբ հողը պատկանում է պետութեանը, ուղեյնի՝ երբ հողը պատկանում է թագաւորական ընտանիքի անդամներին, կաբինետսկի՝ երբ հողը պատկանում է անձնապէս թագաւորին, մասնաւոր՝ երբ հողատէրը մասնաւոր անհատ է, վանքատկան և եկեղեցադան՝ երբ հողը վանքերի կամ եկեղեցիների սեփականութիւնն է կազմում, քաղաքային՝ երբ հողատէրը քաղաքն է (կամ ինչպէս ասում են՝ մունիցիպալիտետը) ազնւական և զինդաջիական՝ երբ հողը պատկանում է ազնւականներին կամ զինդաջիներին: Հողի սեփականութեան իրաւունքը կարող է լինել անձնական՝ երբ պատկանում է մի անհատի կամ ընտանիքի, իսկ երբ հողը կազմում է մի քանի իրաւահաւասար անհատների սեփականութիւնը՝ կոչւում է համայնական: Համայնական հողատիրութեան ժամանակ համայնքի ամէն մի անդամըն ստանում է իր բաժին վարելահողը՝ նրանից օգտուելու համար, իսկ արօտը մնում է ընդհանրութեանը: Հողատիրութիւնն իր ծաւալով լինում է խոշոր, միջակ և մանր: Ռուսաստանում խոշոր է համարւում 1000 դես. աւելի տարածութիւն ունեցող հողաբաժինը, միջակ՝ 100—1000 դես. և մանր՝ մինչև 100 դես.:

ՀՈՂԻ ՆԱՅԻՕՆԱԼԻԶԱՑԻԱ—Տես նացիօնալիզացիա:

ՀՈՄՕԺԷՆ—միատարր:

ՀՈՆՈՐԱՐ—Վարձատրութիւն: Հոնորար անւանում են պատուաւոր վարձատրութիւնը:

ՀՈՐԻԶՈՆ—Երկրագնդի մակերևոյթի այն մասը, որ երևում է մեր աչքին, նաև՝ այդ տարածութեան սահմանագիծը, որ մեզ թւում է երկնքին կպած:

ՀՈՒԳԵՆՆՕՏԵՆԲ—անւանում էին Ֆրանսիայում բողոքականներին: Վերջիններս խիստ հալածանքների էին ենթարկ-

ւում թէ կաթողիկ հոգևորականութեան և թէ կաթողիկ
 թագաւորների կողմից (տես Բարդուղիմէոսեան գիշեր),
 բայց մի շարք պատերազմներից յետոյ՝ Նանտի էզիկ-
 տով (տես Էդիկտ) 1598 թ.՝ դաւանութեան ազատու-
 թիւն ստացան: Հենրիկոս IV թագաւորի մահից յետոյ
 հալածանքները և պատերազմը վերսկսեցին, իսկ Լիւ-
 դովիկոս XIV-րդը 1685 թ. ոչնչացրեց Նանտի էզիկտը:
 Միայն Նապօլէոնն իր օրէնսդրութեամբ բողոքականնե-
 րին տւեց թէ քաղաքական և թէ քաղաքացիական ա-
 մեն տեսակ իրաւունքներ:

ՀՈՒՄԱՆԻԶՄ կամ ՎԵՐՄՇՆՈՒԹԻՒՆ — կոչւում է այն շար-
 ժումը, որ արևմտեան եւրոպայում ազատեց մարդկա-
 յին անձնաւորութիւնը և քաղաքակրթութիւնը կա-
 թողիկ եկեղեցու սարկութիւնից և անկախ գիտութեան,
 գրականութեան ու արւեստի հաստատուն հիմքը դրեց:
 Հումանիզմի հայրենիքը Իտալիան է և առաջին հու-
 մանիստն է Պետրարքան: Շարժումն սկսեց պապի
 կուրիայում՝ Նէպօլում, Ֆլօրէնցիայում և Հիւս. Իտա-
 լիայում: Հումանիստների մէջ կային միջանի յոյներ,
 բայց նրանք իրանք ևս ընդհանուր հոսանքին հե-
 տևողներ էին և ոչ թէ ստեղծագործողներ: Գերմանի-
 այում հումանիզմը ծագկում է XV-րդ դարի վերջում:
 Գերմանական հումանիզմի աչքի ընկնող կենդրոննե-
 րըն էին՝ Ստրասբուրգը, Աւսթրուրգը և Նիւրնբերգը:
 Մարտին Լիւթերի ուսմունքը հումանիստների մէջ
 պառակտում առաջացրեց: Հումանիզմի առանձնակի
 ներկայացուցիչներ երևում են նաև Անգլիայում, Վեն-
 գըրիայում, Ֆրանսիայում, Սպանիայում, Փորթուգա-
 լիայում և Լեհաստանում: Իբրև ինքնուրոյն շարժում,
 անկախ կրօնական և այլ մօտիւններից՝ հումանիզմը
 դոյութիւն ունէր միայն Իտալիայում և Գերմանիայում:

Հումանիզմը կեանքի միջնադարեան հիմքերը քննադատելով միայն չբաւականացաւ, այլև աշխատեց նոր աշխարհայեցողութիւն ստեղծել, որը հիմնւած լինէր զարգացած անհատի նոր պահանջների վրայ: Հումանիստական ինդիվիդուալիզմը բնորոշուում է. — 1) Մարդու հետաքրքրութեամբ դէպ իր ներքին աշխարհը, դէպի ինքը: 2) Հետաքրքրութեամբ դէպ արտաքին աշխարհը, յատկապէս դէպի մարդը: 3) Հաւատով դէպի մարդկային բնոյթի բարձր արժանիքներն ընդհանրապէս և մասնաւորապէս այն հասկացողութեամբ, որ մարդն անժխտելի իրաւունք ունի զարգացնել իր ընդունակութիւնները և բաւարարել իր պահանջները: 4) Հետաքրքրութեամբ դէպի շրջապատը, որքան որ վերջինս ազդում է մարդու վրայ: Հումանիզմը բնորոշուում է նաև խորը և վառ հետաքրքրութեամբ դէպի կլասիքական հնութիւնը. — հումանիստները ոչ միայն ուսումնասիրում են յունական և լատինական լեզուները, անթիբ գրականութիւնն ու պատմութիւնը, իբրև գիտութեան մի սովորական օբիեկտ, այլ այդ հնութեան մէջ դէնք են որոնում միջնադարեան հասկացողութիւնների դէմ կուելու և իրանց ուսմունքի հեղինակութիւնը բարձրացնելու: Հումանիզմի անհերքելի ծառայութիւնը պէտք է համարել այն, որ բարոյագիտութիւնն առանձին ուսումնասիրութեան առարկայ դարձրեց և ճանաչեց անհատի իրաւունքը բազմակողմանի կերպով զարգանալու՝ համաձայն գործնական բարոյագիտութեան ցուցմունքներին: Ըստ հումանիզմի՝ կրթութիւնը պէտք է հիմնւած լինի մանկան անհատական ընդունակութիւնների ուսումնասիրութեան վրայ, պէտք է պատրաստէ մանկանը կեանքի համար, պէտք է զարգացնէ նրա բնոյթի հոգեկան ու ֆիզի-

քական բոլոր կողմերը: Հումանիստների քաղաքական դաւանածքները հիմնւած էին հաւատի վրայ դէպի անհատի ոյժը՝ հասարակական կարգեր հաստատելու և ժամանակակից իրականութիւնը դիտելու: Հումանիստների քաղաքական տրակտատները հիմք դրին քաղաքականութեանը (պօլիտիկային)՝ իբրև գիտութեան և իբրև արւեստի, իսկ նրանց կռիւը արխայտոկրատիայի և դասային առանձնաշնորհումների դէմ ընդհանրապէս—ներկայանում են իբրև քաղաքական հաւասարութեան թէօրետիկ (տեսական) հիմնաւորութեան առաջին փորձը: Հումանիզմն ստեղծեց ինքնուրոյն, ասուածաբանութիւնից անկախ՝ ազատ գիտութիւնը: Հումանիստների համար գիտական մեթոդներ մշակելու առաջին շկօլա հանդիսացաւ կլասիքական հնութեան ուսումնասիրութիւնը—գիտական քերականութեան մշակութիւնը, հեղինակների կրիտական հրատարակութիւնը, առաջին խիստ գիտական թարգմանութիւնները: Հումանիստներն առանձին հետաքրքրութեամբ զբաղեցին պատմութեամբ. — այս ասպարիզում նրանց աշխատանքների մէջ նկատոււմ են սոր գիտական պատմագրութեան բոլոր տարրերը: Բանաստեղծութեան մէջ հումանիստները երևան հանեցին իրանց աշխարհայացքի ինդիվիդուալիստական հիմքը— որ նրանց հիմնովին տարբերում է միջնադարեան բանաստեղծներից: Հասարակական կեանքի կենդրոնացմանը խիստ կերպով նպաստեցին հումանիստների հրապարակական ճառերը և պամֆլետները, որ սոր հրապարակախօսութեան հիմքը դարձան: Կըրթւած հասարակութեան աշխարհայացքը յեղաշրջելով, հումանիզմը մաստանների մէջ չը թափանցեց և ինտելիգենցիայի ու ժողովրդի մէջ կապ չհաստատեց

--ուստի հումանիզմն Իտալիայում կորաւ XVI-րդ դարում, իսկ Գերմանիայում յեախն տեղը գրաւեց ուէֆօրմացիայի համեմատութեամբ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ—Կոչւում է այն, որ նպատակ ունի զարգացնել ժարդկային բարձր յատկութիւնները, ազնւացնել միտքն ու զգացմունքը:

ՀՈՕՄԷԼԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ—Տես Կաթոլիկ եկեղեցի:

ՀՈՕՄԷԼԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ—Հին Հոսմի իրաւունքը, որի մի մասը, քաղաքացիական իրաւունքը առանձին ուսումնասիրութիւնների առարկայ դարձաւ և հիմք ծառայեց եւրոպական ժողովրդների նոր իրաւունքին:

ՀՕՏՏԵՆՏՈՏ—Նեգրական մի ցեղ, որն ապրում է հարաւային Աֆրիկայում և իր ֆիզիքական ու մտաւոր զարգացմամբ հափազանց ստոր աստիճանի վրայ է զըտնւում:

ՀՕՖՄԵՐՇԱԼ—III-րդ կարգի պալատական աստիճանաւոր:

ՀՕՖՄԷՅՍՏԷՐ—III-րդ կարգի պալատական աստիճանաւոր՝ որի պաշտօնն է հսկել պալատական չինովնիկներին և ծառայողներին վրայ:

Ղ

ՂՈՒՐԱՆ—Մահմեդականների սրբազան գիրքը, որ բովանդակում է նրանց կրօնի ուսմունքը: Ղուրանը կազմել է Մահմէդի յաջորդ Աբուբեկրը աւանդութիւններից և յիշատակարաններից: (Տես Իսլամ):

Ճ

ՃԳՆԵԺԵՄ—Տես Կրիզիս:

ՃՈՐՏՈՒԹԻՒՆ կամ ՍՏՐԿՈՒԹԻՒՆ — Կախումն ունենալու

ծայրայեղ աստիճանը՝ երբ մի մարդը համարուում է միւսի լիակատար սեփականութիւնը: Հին ժամանակ ստրկութիւնը գոյութիւն ունէր բոլոր ժողովուրդների մէջ, ըստ որում՝ ստրուկ դառնում էին պատերազմի դաշտից բերած գերիները: Հռոմում ստրկութիւնն ամենամեծ չափերն ընդունեց, շնորհիւ լատիֆունդական սիստեմի, երբ Հռոմական քաղաքացիները իբրև ազնիւ ծագումի մարդիկ, իրանց հողերի, լատիֆունդների վրայ չէին կարող աշխատել, այլ պէտք է հարկաւոր թւով ստրուկներ ունենային, որոնց մշակել տային իրանց կալւածները և իրանք շարունակէին ազատ քաղաքացու կեանք վարել: Ստրուկների վերաբերմամբ օրէնքներ չկային, այլ կային սովորոյթներ: Ստրուկը կարող էր սեփականութիւն ունենալ տիրոջ հաճութեամբ. ստրուկի ազատելուց յետոյ ևս տիրոջ իրաւունքները նրա վրայից բոլորովին չէին վերանում: Գրիստունէութիւնը համեմատաբար թեթևացնում է ստրուկների վիճակը: XIII-րդ դարից ստրկութիւնը եւրոպայում բոլորովին վերանում է: Նորից առաջ է գալիս ճորտատիրութիւնը XIV-րդ դարում՝ Ամերիկայի գիւտից յետոյ: Նեգր (սևամորթ) ստրուկների վաճառումն Անգլիայում վերանում է 1808 թ., Ֆրանսիայում՝ 1816 թ., Սպանիայում՝ 1817 թ., Փորթուգալիայում՝ 1823 թ. ըստ որում՝ վերջին երկու երկրները ստրուկներ վաճառելը վերացրին առանձին վճար ստանալով: Բրիտանական կալւածներում 1833 թ., իսկ Ֆրանսիական գաղութներում 1848 թ. նեգրերն ազատ յայտարարեցին: Հիւսիսային Ամերիկայում 1820 թ. ճորտութիւնը վերացեց մասամբ: Հանրապետական կուսակցութեան ազիտացիան և Լինկոլնի նախագահ ընտրելը քաղաքացիական պատերազմի առիթ

դարձան, իսկ 1863 թ. յունվարի 1-ին թուուցիկ հրատարակեց, որով ապստամբւած շտատներէ բոլոր նեգրերը ազատ էին յայտարարում: Բրազիլիայում նեգրերն ազատեցին 1888 թ. Ներկայումս ստրկատիրութիւնը գոյութիւն ունի մասամբ Արարիայում և Աֆրիկայում: 1889 և 1890 թ.թ. տասնևեօթը պետութիւնների կօնֆերենցիայում (Ֆրանսիան չէր մասնակցում) Բրիտանացիում վճռական արգելքներ դրեցին ստրկատիրութեան դէմ: Ռուսաստանում ճորտութիւնը վերացաւ 1861 թ. փետրւարի 19-ին, Աղէքսանրը II կայսեր օրով:

Մ

ՄԱԳԻՍՏՐՈՍ—1) Միջին դարերում կուսակրօն և ասպետական միաբանութիւնների գլխաւորի տիտղոսը, 2) Ռուսաստանում մագիստրոսութիւնն առաջին գիտական աստիճանն է, որ ստանում են քննութեամբ և որն IX-րդ կլասի չին և միաժամանակ բարձրագոյն դպրոցներում դասախօսելու իրաւունք է տալիս:

ՄԱԳՆԻՏԻԶՄ—Մագնիսականութիւն, մի քանի առարկաների ձգողական յատկութիւնը:

ՄԱԴՕՆՆԱ—Իմ տիրուհի, կաթողիկները մագօննա անւանում են Աստուածածնի պատկերներն ու արձանները:

ՄԱԹԵՄԱԹԻԿԱ—Գիտութիւն՝ մեծութիւնների, նրանց յատկութիւնների և միացման օրէնքների մասին:

ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ— Մաթեմատիկան իր մասնագիտութիւնը դարձրած մարդ: Մաթեմատիկան հմտօրէն ուսուցնասիրած մարդ:

ՄԱԺՕՐԻՏԱՐ ՆԵՐԿԱՅՆՅՈՒՑՁՈՒԹԻՒՆ— Այսպէս է կոչւում ներկայացուցչութեան ժամանակակից սիստեմը, որ

հիմնւած է ձայների մեծամասնութեան վրայ: Այս սխտեմով, ժողովրդի ներկայացուցիչը համարուում է նա, ով ստանում է ձայների մեծամասնութիւն, թէև այդ մեծամասնութիւնը չնչին լինի: Այս սխտեմի թերութիւնն այն է, որ փոքրամասնութիւնը, որքան էլ նա մեծ լինի, զրկուում է ներկայացուցչութեան իրաւունքից: Մաժորիտար ներկայացուցչութեան թերութիւնները վերացնում է պրօպօրցիօնալ ներկայացուցչութիւնը որի ժամանակ պարլամենտում իրանց ներկայացուցիչը կարող են ունենալ բոլոր, շատ թէ քիչ աչքի ընկնող խմբերն ու կուսակցութիւններն իրանց անդամների թւի համեմատ: (Տես Չնտրողական իրաւունք):

ՄԱԿԼԷՐ—Միջնորդ, գործակալ: Տես (Բիրժա):

ՄԱՀՄԷԴ—Արաբերէն նշանակում է զովտբանւած, 571—632 թ., հմնել է մահմեդական կրօնը (տես Իսլամ): Իսկական անունն է՝ Աբու-Կադիմ-Բին-Աբդուլլահ: Մեքկայում հրապարակ եկաւ իբրև Մարգարէ, սկզբում յաջողութիւն չունեցաւ և իր բարեկամ Աբու-Բեկրի հետ փախաւ Մեդինա 632 թ. (այս թիւը կոչւում է Հեջրայի տարի. մահմեդականներն իրանց տարեթիւն այստեղից են հաշուում): Մեդինայից իր հետևորդների հետ արշաւանք սկսեց զանազան կողմեր և տարածեց իր կրօնը:

ՄԱՀՄԵԴԱԿԱՆՈՒԹԻԻՒՆ—Տես Իսլամ:

ՄԱՄՈՆՆԱՅ—1) Հին սիրիացիների ու հրէաների հարստութեան ասուածքը: 2) Հարստութիւն, փող, ոսկի, ամեն տեսակ աշխարհային բարիք:

ՄԱՄՈՆՏ—Փղի նման, բայց աւելի խոշոր կենդանի, որ գոյութիւն է ունեցել ջրհեղեղից առաջ և որի մասին մարդիկ հասկացողութիւն են կազմել գետնի տակ գտնւած կմաղքներից:

ՄԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ—Մարդկային հասարակութեան նախնական ձևերից մէկը՝ երբ ընտանիքի մեծը համարուում էր ոչ թէ հայրը, այլ մայրը: Մայրապետութիւնը մեծ մասամբ կապած է եղել բազմամուսնութեան հետ, այսինքն՝ մի կինը պահելիս է եղել մի քանի ամուսին: **ՄԱՆԴԵՏ**—Լիազօրութիւն, հրաման, պատուէր, յանձնարարութիւն:

ՄԱՆԴԵՐՈՒՆ—1) Ազնւականները և չինօթիկները Չինաստանում: 2) Նարնջի (տպելսինի) մի տեսակը:

ՄԱՆԵՕՎՐ—Զօրախաղ, փորձնական զինավարժութիւններ, կռիւներ: 2) Պագ՝ որով աշխատում են որևէ մէկին շփոթութեան մէջ գցել, մոլորեցնելու համար կատարած գործողութիւն:

ՄԱՆԻՖԵՍՏ—Հրովարտակ, թագաւորի հանդիսաւոր գրութիւնը՝ ուղղւած իր հպատակներին:

ՄԱՆՈՒՖԵԿՏՈՒՐ—Կապիտալիստական արտադրութեան սկզբնական ձևը, երբ գեռ ևս միջինանների գործածութիւնը չկար, բայց երբ արհեստաւորներն արդէն սկսել էին տեղի տալ կապիտալիստին. վերջինս տեղի լաւ մթերքներ ստանալու նպատակով, սկսեց արհեստաւորներին հումքիւթ տալ, մտծելով որ արհեստաւորներն իրանք միջոց չունենալու պատճառով՝ վատ նիւթից կը պատրաստէին ապրանքը: Ապա կապիտալիստն սկսեց տալ արհեստաւորներին նաև իր գործիքները, զրանից յետոյ, առանձին շէնք կառուցեց, որի մէջ պէտք է աշխատէին արհեստաւորները կապիտալիստի հում նիւթից, կապիտալիստի գործիքներով, կապիտալիստի համար, ստանալով միայն իրանց աշխատավարձը: Սակայն, արհեստանոցում փորձը ցոյց տւեց, որ աւելի հեշտ է և արդիւնաւէտ՝ երբ ամեն մի արհեստաւոր պատրաստող ապրանքի որևէ մասն է շինում,

որովհետև վարժուում է, փորձուում և այդ իր մասնա-
 գիտութիւնն է դարձնում: Այդպիսով՝ առաջ է գալիս
 աշխատանքի բաժանումը կամ դիֆֆերենցիալացիան: Մա-
 կայն՝ այդ արհեստանոցը զործարան (Ֆարբիկա) չէ,
 որովհետև զործարանում աշխատանքը կատարուում է
 մեքենայի միջոցով, մինչդեռ կապիտալիստական ար-
 հեստանոցում ըստ ար աշխատանքները ձեռքով են կա-
 տարուում (մանուֆակտուրա նշանակուում է ձեռագործ,
 ձեռակերտ): Բայց դա նախկին արհեստանոցն էլ չէ,
 որովհետև՝ 1) Տէրն անձնապէս չի մասնակցուում աշխա-
 տանքներին, այլ միայն կառավարուում ու ղեկավարուում
 է գործը. 2) Որ բանւորներն աշխատուում են ոչ թէ ի-
 շանց համար, այլ՝ կապիտալիստի, և աշխատուում են
 իրրև վարձկաններ. 3) Որ այստեղ տեղի է ունենուում
 աշխատանքի լիակատար բաժանումն: Չէնց այդպիսի
 բնորոշ պայմաններով արտադրող ապրանքները կոչ-
 ւուում են մանուֆակտուրա: (Տէս Մանուֆակտուրայի
 արդիւնագործութիւն):

ՄԱՆՁԵՍՏՐԱԿԱՆՆԵՐ—Այն անտեսական-քաղաքական ուս-
 մունքի հետևողները, որ պահանջուում էր առևտրի լիակա-
 տար ազատութիւն, այսինքն, որ պետութիւնն ամենևին
 չխառնուի արդիւնագործական հարցերի մէջ: Այդ ա-
 նունն առաջ է եկել Մանչեսթր քաղաքից 30-ական
 թւականներին՝ երբ քարոզուում էր հացի առևտրի ա-
 զատութիւն: Հիմնադիրը Կորդէնն է: (Տես Քաղաքա-
 արցնատեսութիւն):

ՄԱՆԿԷՆՍԵԿՆԵՐԻ ՆՇԽԱՍԵՆՔՆ—Սկսեց մեծ չափեր ընդու-
 նել XIX-րդ դարի սկզբից, երբ զարգացաւ խոշոր
 արդիւնագործութիւնը և առաջ եկաւ աշխատանքի
 բաժանումը՝ շնորհիւ զործածութեան մէջ մտած մեքե-
 նաների: Վերջիններս բանեցնելու համար հարկաւոր

չէր առանձին պատրաստութիւն կամ ոյժ, ուստի հասակաւոր բանւորներէ փոխարէն սկսեցին ընդունել մանկահասակներին՝ իբրև աւելի էժան աշխատողներ: Սակայն՝ գործարանային պայմանների ֆուսսակար ազդեցութիւնը մանկահասակների առողջութեան վրայ դրաւեց պետութիւնների ուշադրութիւնը և հիմք դարձաւ որոշ օրէնքներ սահմանելու մանկահասակներին աշխատեցնելու վերաբերմամբ: Գործարանային օրէնսդրութեան առաջին քայլն եղաւ՝ սահմանափակել մանկահասակների աշխատանքի ժամերը: Ընդհանրապէս՝ մանկահասակների և նրանց աշխատանքի վերաբերմամբ գործարանային օրէնսդրութիւնը հետեւեալ պայմաններն է մշակել. ա) որոշել է թէ՛ ռքքանից փոքր տարիք ունեցողները գործարաններում չը պէտք է ընդունեն, բ) նրանց աշխատանքի սահմանափակումն և կտրական արգելումն, եթէ աշխատանքի այս կամ այն ճիւղը բացարձակապէս ֆուսսակար է մանկահասակների առողջութեանը, գ) աշխատանքի ժամերի որոշումը, դ) դպրոցական կրթութեան ապահովութիւն: Ռուսաստանում օրէնսդրութիւնը սահմանափակումներ է անում միայն այն մանկահասակների վերաբերմամբ, որոնք աշխատում են գործարաններում իսկ արհեստանոցներում աշխատող աշակերտները դուրս են այս օրէնսդրութիւնից: Գործարանային աշխատանքի թոյլատրում են 12 տարեկանից բարձր տարիք ունեցողները, իսկ արդիւնագործութեան մի քանի ճիւղերի վերաբերմամբ՝ ֆինանսների մինիստրը կարող է արգելել մինչև 15 տարեկանների աշխատանքը: Մանկահասակների աշխատանքը եթէ անընդհատ է՝ 6 ժամից աւելի չպէտք է տևէ, իսկ եթէ միջոցներով է, կարող է տևել 8 ժամ, ամեն 4 ժամից յետոյ հան-

զըստանալու պայմանով: Գհտնի տակ կատարուող աշխատանքներն արգելւած են: Գիշերային աշխատանքը թույլատրուում է միայն ապակու գործարաններում և այն՝ 6 ժամով: 1902 թ. բացի լեւնային գործարաններից ու հանքերից՝ Ռուսաստանի ըստը գործարաններում աշխատող մանկահասակների թիւը 40 հազար էր որից 60⁰/₁₀ տղաներ և 40⁰/₁₀ աղջիկներ:

ՄԱՆՐ ԿՐԵԴԻՏ—Տես Փոխատու խնայողական բնկերութիւններ, Վարկային բնկերութիւններ, Գիւղացիական բանկ:

ՄԱՆՐ ՎԱՐԿ—Տես Մանր կրեդիտ:

ՄԱՍԿԱ—Դիմակ:

ՄԱՍԿԱՐԱԴ—Դիմակահանդէս, պարերեկոյթ, ուր ըստը յաճախորդները դիմակներով են:

ՄԱՍՇՏԱՒ—Չափ: Նկարների մէջ համաչափութիւն պահպանելու համար, իրական, մեծ չափերի փոխարէն վերցնում են՝ փոքր գծեր, որոնք կոչւում են այդ նրկարի մասշտաբը: Յրինակ՝ երբ ասում են, որ քարտէզի մասշտաբը մէկ վերստին 1 դիւյմ է, նշանակում է՝ որ այնտեղ, ուր իրականութեան մէջ տարածութիւնը մէկ վերստ է՝ քարտէզի վրայ, դրա փոխարէնը մէկ դիւյմ է միայն:

ՄԱՍՍԱ—1) Որեւէ առարկայի նիւթի քանակը: 2) Բազմութիւն:

ՄԱՍՕՆՆԵՐ—Կամ Ազատ քարտայներ կոչւում են կրօնական-միստիքական ընկերութիւնների անդամները: Մասօնական ընկերութիւնների նպատակը՝ ընդհանուր հաւասարութեան և եզրայրութեան հիմունքների վրայ մարդոց բարոյական կատարելագործութիւնն է:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ—Նոյնն է, ինչ որ զրականութիւնը և մասնաւորապէս գեղեցիկ զրականութիւնը, այսինքն՝

այն գեղարուեստական արտադրութիւնների ամբողջութիւնը, որոնք ձգտում են ազդել ընթերցողի էմօցիօնալ կողմի վրայ և որոնք, հետևապէս, էստէտիկական գնահատութեան ենթակայ են: Տարբերելով կրիտիկայից, որն ուսումնասիրում և գնահատում է առանձին հեղինակներին ու նրանց արտադրութիւնները, ինչպէս և պօետիկայից, որն ուսումնասիրում է բանաստեղծական արտադրութիւնների ձևերն ու հոգեբանութիւնը, գրականութեան պատմութիւնը հաւաքում և ուսումնասիրում է գրական յաջորդականութեան փաստերը՝ գրականութեան զարգացման օրէնքները պարզելու համար:

ՄԱՏԵՐԻԱԼԻՉՄ—Փիլիսոփայական ուսմունք՝ ըստ որի բոլոր էութիւնների, նոյնիսկ՝ հոգեկան երևոյթների միակ հիմքը կազմում է նիւթը, մատերիան: Կօսմօլօգիական (տիեզերախօսական) մատերիալիզմն ամբողջ աշխարհն ընդունում է իբրև մի մեծ մեխանիզմ, իսկ նրա մէջ կատարւող բոլոր երևոյթները համարում է նիւթական մասնիկների զանազան շարժումներ: Հոգեբանական մատերիալիզմը բոլոր հոգեկան երևոյթները համարում է ծնունդ՝ մատերիայի-նիւթի, որին տւած է որոշ ձև և որին մենք ուղեղ ենք ասում: Էտիկական մատերիալիզմը մարդկային կեանքի միակ նպատակը գտնում է բարեկեցութեան ու հաճոյքների մէջ: Տլնտեոական մատերիալիզմը մեր կուլտուրական կեանքի մտաւոր ու բարոյական բոլոր երևոյթները համարում է բացառապէս տնտեսական ֆակտօրների արդիւնք: (Տես Տնտեսական մատերիալիզմ):

ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏ—Մատերիալիզմը դաւանող: (Տես Մատերիալիզմ):

ՄԱՐԻՆԻՍՏ—Ծովանկարիչ, Ծովի տեսարաններ նկարող:

ՄԱՐԿԱ—1) Միջին դարերում մարկա կոչւում էին երկրի

սահմանները, իսկ յետոյ՝ նաև երկիրը: 2) Դրօշմած թուղթ, որը կպցնում են ծրարներին իբրև նշան՝ որ պահանջուող դրամը վճարւած է (փոստային, գերբովի և այլն): 3) Նշան՝ պահ տւած իրը յետ ստանալու համար: 4) Թղթէ կամ մետաղի նշան՝ որը ցոյց է սալիս թէ ապրանքն ինչ գործարանում է պատրաստւած:

ՄԱՐՇ—1) Զօրքերի հանդիսաւոր, կանոնաւոր ընթացք: 2) Երաժշտութիւն՝ հանդիսաւոր քայլելու համար: Քայլերգ: ՄԱՐՇՐՈՒՏ—Առաջուց որոշւած ճանապարհ, նախորոշած ուղի:

ՄԱՐՍԷԼԻԷԶԱ կամ ՄԱՐՍԷԼԻԷԶ—Ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ Մարսէլցի կամաւոր յեղափոխական զինւորների առաջին անգամ երգած երգը, որ յետոյ դարձաւ Ֆրանսիական ազգային օրհներգը և աւելի ուշ՝ միջազգային յեղափոխական երգ: Մարսելիէզան հնարել է կապիտան-ինժիներ Ռուժ-դը-Լիլը 1792 թւին Ստրասբուրգում:

ՄԱՐՔՄ ԿԱՐԼ—Տես Սօցիալիզմ, Մարքսիզմ:

ՄԱՐՔՍԻԶՄ—Կարլ-Մարքսի ուսմունքը, որ լրացրել է նրա գործակից ընկեր Ֆր. էնգէլսը: Այս ուսմունքը յայտնի է նաև Տնտեսական մատերիալիզմ և դիալեկտիկական մատերիալիզմ անունով: (Տես Տնտեսական մատերիալիզմ):

ՄԱՐՔՍԻՍՏ—Մարքսիզմի կողմակից: (Տես Մարքսիզմ և Տնտեսական մատերիալիզմ):

ՄԱՔՍԱՏՈՒՆ—Տես Տամօմէա:

ՄԱՔՍԻՄԱԼԻՍՏՆԵՐ—Տես Քաղաքական կուսակցութիւններ:

ՄԱՔՍԻՄԱՅԻԱՅԻ ԹԷՕՐԻԱ—Տես Ուտիլիտարիզմ:

ՄԱՔՍԻՄՈՒՄ—Ամենաշատը, ամենամեծ չափը, ծայրայեղ աստիճանը:

ՄԱՖԻԱ—Գաղտնի ընկերութիւն Սիցիլիայում, որ նպատակ

էր դրել պաշտպանել հասարակութեան ճնշւած մասերին անարդարութիւններից ու զրկանքներից, ոստիկանութիւնից ու պետական դատարանից: Ընկերութիւնն իր նպատակին ծառայելու համար՝ ոչ մի միջոցի առաջ չէր կանգ առնում, սկսած զաղտագողի սպանութիւններից և թունաւորումներից մինչև բացարձակ ատաղակութիւնը, որի պատճառով աստիճանաբար սրիկայական կազմակերպութեան գոյն ստացաւ և հեռացաւ նոյնիսկ իր սկզբնական նպատակից:

ՄԵԼԱՄԵՒ—Ուսուցիչ հրէական դպր-ցում:

ՄԵԼԱՆՆՈՒԿ—Մելամաղձոտ, սկամաղձոտ: (Տես Տեմպերամենտ):

ՄԵԼԻՕՐԱՏԻԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ—Հողատէրերի ընկերութիւնը՝ որ կազմւում է իրանց հողաբաժինների վրայ խոշոր բարեկարգութիւններ մտցնելու համար, քանի որ անհատական ձեռնարկութիւնն անբաւարար է համարւում այդպիսի խոշոր գործը գլուխ բերելու: Մելիօրատիւ ընկերութեան մէջ բոլոր ծախսերը կատարւում են հողաբաժնի տարածութեան և սպասելիք օգուտի համաձայն: (Տես Մելիօրացիա):

ՄԵԼԻՕՐԱՏԻԻ ԿՐԵՂԻՏ (Փոխառութիւն)—Ամեն պետութիւն, աչքի առաջ առնելով հողի մշակութեան ու խոշոր բարելաման (միլիօրացիայի) խոշոր տնտեսական նշանակութիւնը, շրամական միջոցներ է բաց թողնում պետական գանձարանից, որպէսզի հողատէրերն իրանց հողաբաժինը բարեկարգեն—կամուրջներ շինեն, ճանապարհներ անցկացնեն, ճահիճները չորացնեն և այլ նման կատարելագործութիւններով բարձրացնեն հողի եկամուտը: Միլիօրացիան (խոշոր բարելաւումները) անհատական ոյժերից ու միջոցներից բարձր է համարւում ուստի և պետութիւնն է փոխառութիւն բաց

Թողնում շատ երկար ժամանակով, որպէսզի հողատէ-
րը կարողանայ իր խոշոր պարտքը վերադարձնել: Յա-
ճախ մեկիօրատիւ փոխառութիւնը տրւում է ոչ թէ
հողատիրոջը, այլ անմիջապէս մեկիօրացիան կատա-
րողին (ճարտարապետներին, բանւորներին): Տես Բանկ:
ՄԵԼԻՕՐԱՅԻԱ.—Տես Մեկիօրատիւ կրեդիտ և Միլիօրատիւ ըն-
կերութիւն:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՕԳԻԱ.—Տես Տեխնօլօգիա:

ՄԵԿԵՆԱՍ—Հոսմէական կայսր Յզոստոսի ժամանակակից
քաղաքական գործիչ՝ որ յայտնի էր իբրև գիտութիւն-
ների ու արհեստների հովանաւոր: Մեկեցաս բառը
դարձաւ անւանական, որով արտայայտում են բարձր
նովանաւոր միտքը:

ՄԵՄՕՐԱՆԴՈՒՄ—1) Յիշատակագիր, յայտագիր: Այն՝ ինչ
որ պետք է լիղել: 2) Դիպլօմատիական գրութիւն, որ-
տեղ յայտարարում է գործերի իսկական դրութիւնը
և այս կամ այն պետութեան բռնելիք դիրքը:

ՄԵՆԻՆԳԻՏ—Հիւանդութիւն, որ արտայայտում է ուղեղա-
մաշկի բորբոքումով:

ՄԵՍՍԻԱ—Հրէական բառ է, որ նշանակում է օծեալ, յունա-
րէն՝ Քրիստոս:

ՄԵՍՍԻԱՆԻԶՄ—Կոչւում է որևէ ժողովրդի այն համոզմուն-
քը, թէ ինքը որպէս ընտրեալ ժողովուրդ՝ կոչւում ու-
նի մարդկային պատմութեան մէջ զեկավարող դեր
կատարելու և միև ազգերի մէջ առաջին տեղը բռնե-
լու: Մեսսիանիզմը շատ յաճախ փոխւում է նեղ նա-
ցիօնալիզմի և շօվինիզմի:

ՄԵՏԱՖԻԶԻԿ—Մետաֆիզիցիզմի կողմնակից: (Տես Մետաֆի-
զիքական մտածողութիւն, Մետաֆիզիկա):

ՄԵՏԱՖԻԶԻԿԱ—Բնազանցութիւն, բնազանցական գիտու-
թիւն: Դիտութիւն՝ որի առարկան վեր է ու ան-

մատչելի մարդկային զգացմունքներին և փորձին և մատչելի՝ միայն մարդու մտածողութեանը: (Տես Մետաֆիզիքական մտածողութիւն):

ՄԵՏԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ—Հակառակ դիալեկտիքականի, կոչուում է մտածողութեան և իմացականութեան այն ձևը, որի ժամանակ իրերը, առարկաները, բնութեան և մարդկային կեանքի երևոյթները ուսումնասիրութեան և դիտողութեան նիւթ են դառնում առանձնակի, առանց իրար մէջ եղած փոխադարկապերի, իբրև մշտական ու անփոփոխ և ոչ թէ շարժուն ու փոփոխւող երևոյթներ: Մետաֆիզիկի համար բնութիւնը և մարդկային աշխարհը առանձին, ինքնուրոյն, իրարից անկախ երևոյթների ու առարկաների գումարն է,—երևոյթներ, որոնք երևան են զալիս՝ անյայտութիւնից, շփուում են իրար հետ և կորչում անյայտութեան մէջ: (Տես Դիալեկտիկական մտածողութիւն, Մետաֆիզիկա):

ՄԵՏԱՖԻԶԻԿԻԿԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ—Տես Մետաֆիզիքական մտածողութիւն:

ՄԵՏՐ—Երկայնութեան չափ= $0,_{4687}$ սաժ.= $1,_{4061}$ արշին= $=3,_{2809}$ ֆուտ= $22,_{4976}$ վերշոկ= $39,_{3808}$ դիւյմ:

ՄԵՏՐԻՔԱԿԱՆ ԳԻՐՔ կամ **ՅՈՒՑԱԿ**—Ցուցակ, որի մէջ նըշանակուում են մարդոց ծննդեան, ամուսնութեան և մահւան օրերը:

ՄԵՏՐԻՔԱԿԱՆ ՍԻՍՏԵՄ—Տես Չափերի մետրիքական սիստեմ:
ՄԵՏՐՕՊՈՒԻԱ—Մայր-երկիր:

ՄԵՏՐԻ ԿԱՄ ՄԵՏՐԻԱ—Ընդհանուր կարգ, որևէ ուսումնասիրութեան կամ գործողութեան միջոցին՝ որոշ ձև, որևէ նպատակի հասնելու համար:

ՄԵՏՐԻԿԱ ԿԱՄ ՄԵՏՐՕՂՕԳԻԱ—Գիտութիւն՝ մետոդների, առարկաներ աւանդելու և երևոյթներ ուսումնասիրելու ընդհանուր կանոնների մասին:

ՄԵՐԿԱՆՏԻԼ ՍԻՍՏԵՄ—Տես Մերկանտիլիզմ:

ՄԵՐԿԱՆՏԻԼԻԶՄ—Տնտեսագէտների զբաղան շօլա և քաղաքատնտեսութեան մէջ՝ սիստեմ, որը գերիշխում էր Եւրոպայում Միջին դարերի վերջերից մինչև XVIII-դ դարի երկրորդ կէսը: Մերկանտիլիստները ժողովրդի հարստութիւնը համարում էին բացառապէս փողը, որի գումարումը պէտք է պետութեան գլխաւոր նպատակը լինի: Դրա համար կառավարութիւնը պէտք է արգելէր դրամ արտահանելը, հովանաւորէր առևտրի և արդիւնագործութեան զարգացումը, ձեռք բերէր էժան գնով հում նիւթեր, որպէսզի յետոյ մշակէր և աւելի շատ դրամով վաճառէր, մաքսային տուրքեր հաստատէր, մոնօպօլիաներ ու պրիվիլեգիաներ տար: Կրօմվելն՝ Անգլիայում և Կօլբէրը՝ Ֆրանսիայում փորձ արին իրագործել այդ քաղաքականութիւնը: Սակայն, առևտրի և արդիւնագործութեան միակողմանի զարգացումն ի վնաս երկրագործութեան և հովանաւորող տարիքը կուի պատճառ դարձան, տնտեսական կրիզիս առաջ բերին և ցոյց տւին մերկանտիլիզմի մի քանի թերի կողմերը (Տես Քաղաքատնտեսութիւն):

ՄԷԴԻՆՏԷ—Մահմեդական հոգևոր զպրոց:

ՄԷԿԹԷԲԷ—Մահմեդական ստորին դպրոց:

ՄԷԶԻԴԻԱ—1) Տաճկական պատանշան, որ մտցրած է 1852 թւից. ունի 5 աստիճան: 2) Տաճկական դրամ, որ=100 պիաստրին=ուսական 5—6 ուրլուն:

ՄԷՏԷՕԼՕԼՕԳԻԱ—Տես Օղերեւոյրաբանութիւն:

ՄԻԳՐԵՆ—Չղայնութիւնից առաջացած գլխացաւ, որը չի բժշկւում, այլ անցնում է ինքն իրան, տարիներ ընթացքում:

ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ կամ **ՄՕՆԱԲԽԻԱ**—Տես Գառավարութեան ձեւ:

ՄԻԼ կամ ՄՂՈՆ—Գերմանական աշխարհագրական մղոնը = 6,⁹⁵⁶ վերստ = 7420,⁴⁴ մետր, ռուսական մղոնը = 7469 մետր, պրուսական և դանիական մղոնը = 7,⁰⁶ վերստ = 7532,⁴⁸ մետր, աւստրիական մղոնը = 7,¹¹¹ վերստ = 7586,⁹⁴ մետր, Ֆրանսիական մղոնը (լիէ) = 4,¹⁶⁸ վերստ = 4451,⁹ մետր, անգլիական և Միացեալ-Նահանգների մղոնը = 1,⁵⁰⁹ վերստ = 1609,³³ մետր, բուրբ ազգերի ծովային մղոնը = 1,⁷⁹ վերստ = 1854,⁹⁶⁵ մետր:

ՄԻԼԻՏԱՐԻՉՄ—Չինուրութիւն, զօրամուլութիւն, ձգտումն՝ աւելացնելու զօրքերի թիւնը: Միլիտարիզմն սկսեց առանձնապէս զարգանալ Ֆրանս-պրուսական պատերազմից (1870 – 1871 թ.) յետոյ, երբ գերմանացիները տիրեցին Ֆրանսիական էլզաս-Լոտարինդիային և երբ Ֆրանսիացիք մտադրեցին պատրաստել ռէվանշի (վերադարձնելու), յետ խլիլու իրանց երկիրը, որի համար սկսեցին աւելացնել զօրքի և նաւատորմի թիւը: Գերմանացիք ևս՝ իրանց հերթում սկսեցին պատրաստել զիմազրելու Ֆրանսիական ապագայ յարձակումներին: Եւրոպական միւս պետութիւններն այդ տեսնելով և երկիւղ կրելով, որ Ֆրանսիան և Գերմանիան իրանցից գերակշռող կլինեն զինուորական ոյժով, իրանք ևս սկսեցին պատրաստել և այդպիսով՝ ամեն տեղ զարգացաւ միլիտարիզմը:

ՄԻԼԻՑԻԱ—կոչում է այն զօրքը, որ զէնքի է կանչում միայն պատերազմի ժամանակ: Այդպէս է Շվեյցարիայում և Միացեալ-Նահանգներում, որտեղ մշտական զօրքը խիստ փոքրաթիւ է և որտեղ ամեն քաղաքացի համարուում է զինուոր՝ երբ հարկ լինի հայրենիքը պաշտպանել:

ՄԻԼԻԱՐԻ կամ ԲԻԼԻՕՆ = հազար միլիոն:

ՄԻԿԱԴՅՈ — Եւպոնական կայսրը կոչուեմ է միկադո՝ ինչպէս

Տաճկաստանըին՝ սուլթան, ուսսականը՝ ցար, և այլն:

ՄԻԿՐՕՍՄԿՕՊ—Քոչորացոյց:

ՄԻՄԻԿԱ.—1) Մտքերի արտայայտութիւնը դիմակներով:

2) Այդ կերպով մտքերի արտայտութեան ձևը:

ՄԻՆ, ՄԻՆԱ.—1) Ական, լաղում, լաղմա: 2) Ծանրութեան հին-
յունական չափ=100 դրախմ: 3) Հին յունական դրամ
= $\frac{1}{60}$ տաղանդին:

ՄԻՆԻՍՏՐ—Նախարար: Պետական կառավարութիւնը բա-
ժանուեմ է զանազան ճիւղերի և ամեն մի ճիւղի
կառավարութիւնը յանձնուեմ է մի մարդու, որը կոչուեմ
է մինիստր: Ռուսաստանում գոյութիւն ունին հետևեալ
մինիստրութիւնները.—զինւորական, ծովային, արտա-
քին գործոց, ֆինանսների, արդարադատութեան, ներ-
քին գործոց, ժողովրդական լուսաւորութեան, ճանա-
պարհների հաղորդակցութեան, երկրագործութեան և
պետական կայքերի, կայսերական պալատի, առևտրի:

ՄԻՉՄԱՆ—Ռուսական նաւատորմի առաջին օֆիցերական աս-
տիճանը:

ՄԻՉԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐ—Տես Բան-
ւորական միութիւններ:

ՄԻՉԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔ — Կոչուեմ է սովորոյթներով
և պայմանագրերով հաստատուած օրէնքների այն ամբող-
ջութիւնը, որը որոշուեմ է ինչպէս զանազան պետու-
թիւնների փոխադարձ յարաբերութիւնները, այնպէս և
տարբեր պետութիւնների քաղաքացիների փոխադարձ
յարաբերութիւնը: Միջազգային իրաւունք կոչուեմ է
նաև իրաւագիտութեան այն ճիւղը, որն ուսումնասի-
րուեմ է վերոյիշեալ յարաբերութիւնները որոշ կարգի
տակ զնոյ օրէնքները:

ՄԻՉԻՆ ԴԱՐԵՐ—Կոչուեմ է 467 թւականից մինչև 1492 թ.

տևող հազարամեակը որ սկսուում է Արևմտեան Հոսմէական կայսրութեան անկումից և վերջանում Ամերիկայի գիւտով:

ՄԻՍՄԻԱ.— 1) Քարոզչութիւն, քարոզիչներ խումբ: 2) Պատգամաւորութիւն, որ ուղարկուում է որոշ նպատակով: 3) Կոչում, դեր, նշանակութիւն, պաշտօն, պարտականութիւն:

ՄԻՍՄԻՕՆԷՐ.— Քարոզիչ:

ՄԻՍՏԻՑԻԶՄ.— Մարդկային մտքին ու հասկացողութեանն անմատչելի գաղտնիքների ու երևոյթների ըմբռնողութեան ձգտումն՝ զանազան միջոցներով—ինքնակատարելագործութեամբ, ճգնութեամբ և այլն, և այլն:

ՄԻՍՏԻՖԻԿԱՑԻԱ.— Մոլորութիւն, խաբեբայութիւն, ծաղր, խաղ:

ՄԻՏԿԱԼ.— Բամբակի գործածք:

ՄԻՏՐՕՊՈԼԻՏ.— Հոգևորականների բարձր տիտղոս՝ որ տըրուում է միջանի թեմերի արքեպիսկոպոս առաջնորդներին (Պետերբուրգի, Մոսկվայի, Կիևի և այլն):

ՄԻՐԶԱ.— Պարսից թագաւորական տան անդամների տիտղոսը, որ յաճախ տալիս են մարդոց՝ իբրև պատու նշան, արտայայտում է պարոն միտքը:

ՄՂՈՆ.— Տես Միլ:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ.— Տես Սօցիալիզմ:

ՄՈՒՐՀԱԿ.— Տես Վեկսել:

ՄՕԲԻԼԻԶԱՑԻԱ.— Զօրքի պատրաստութիւնը՝ պատերազմի համար: Ընդհանուր մտքով՝ մօբիլիզացիա նշանակում է պատրաստութիւն, շարժում:

ՄՕԼՕԿԱՆՆԵՐ.— Կարճակերներ: Ռուս աղանդաւորների մի ճիւղը, որ դուխարներէց բաժանել է XVIII-րդ դարի երկրորդ կիսին: Այս աղանդի հիմնադիրն է Սեմեօն Ուկլէյնը որն օգտուել է Տվերիտինովի, Տամբովի նա-

հանգում տարածւած բողոքական աղանդից: Բացի Սուրբ Գրքից չկայ այլ ճշմարտութիւն, ասում են մօլօկանները: Չեն ընդունում ռուսադաւան եկեղեցին, սովորութիւնները, խորհուրդները, սրբերի պաշտամունքը: Սուրբ Գիրքը բացատրում են այլաբանութեամբ: Եկեղեցական արարողութիւններ չեն ընդունում բացի Ս. Գրքի ընթերցումից և հոգևոր երգերից: Կաթը պաս չեն համարում որից և ստացել են մօլօկան (МОЛОКО բառից) անունը: Մօլօկանների մէջ արգելւած են՝ հարբեցողութիւնը, ծխախոտի գործածութիւնը, հայնօյանքը: Մօլօկանները համարեա բոլորը գրազէտ են: Ապրում են մեծ մասամբ Սարատովի և Տավրիկեան նահանգներում, նաև Կովկասում: (Տես Գաւալարուներ):

ՄՕՄԵՆՏ—Վայրկեան, ամենակարճ ժամանակ:

ՄՕՆԱՐԽԻՍ—Մօնարխիայի կողմակից: (Տես Կառավարութեան ձեռք):

ՄՕՆԻՉՄ—Փիլիսոփայական ուղղութիւն, որը երևոյթների բացատրութեան համար ընդունում է միայն մի սկզբունք, լինի սա նիւթը, մատերիան (մատերիալիզմ) կամ հոգին (սպիրիտուալիզմ) կամ աբսօլյուտը (անսկիզբը, ինքնազոյը), որի տարբեր կողմերն են հանդիսանում հոգին և նիւթը: Ժամանակակից նատուրալիստական մօնիզմը երևոյթների աշխարհն ընդունում է իբրև հոգեկան և նիւթական սկզբունքների անխզելի միացումը: (Տես նատուրալիզմ):

ՄՕՆՏԱՆԵԱՐԽԵՐ կամ **ԼԵՐԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ** — Կոչւում է Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ գործող քաղաքական կուսակցութիւններից մէկը: Իր անունն այս կուսակցութիւնն ստացել է նրանից, որ Օրէնսդրական ժողովում նրաներկայացուցիչները բռնել էին նստարանների բարձր շարքերը: Մօնտանեար-

ները պաշտպանում էին մանր բուրժուազիայի, պրո-
լետարիատի և առհասարակ աղքատ ու չքաւոր, ճընշ-
ւած դասակարգերի շահերը: Մօնտանեարները ֆրան-
սիական հին կարգերը քանդելում ամենաեռանդուն
ու վճռական դերը խաղացին և ֆրանսիական յեղափո-
խութեան ամենայայտնի ղեկավարները հանդիսացան:
Նրանք լայն չափերով գործադրեցին քաղաքական տեր-
րորը: Այս կուսակցութեան գլխաւոր ղեկավարները
Դանտոնն ու Մարատն էին: Մօնտանեարների դէմ
կռիւ էին մղում ժիրօնդիստները: (Տես ժիրօնդիստ-
ներ):

ՄՕՆՕՊՕԼԻԱ—Արտոնութիւն, մինաչնորհ:

ՄՕՆՕԹԷԻԶՄ—Միասոււածութիւն:

ՄՕՏԻԻ—1) Դրդում, պատճառարանութիւն: 2) Երաժշտու-
թեան եղանակ:

ՄՕՐԱԼԻՍՏ—Բարոյախօս:

Յ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ—Հիմնական փոփոխութիւն, որ կատար-
ւում է միանգամից: Յեղափոխութիւնը կարող է
կատարել խաղաղ ձևով, բայց երբ այն դասա-
կարգը, կազմակերպութիւնը, կամ անհատը, որի դէմ
ուղղւած է յեղափոխութիւնը, իր ձեռքին զինւորական
ոյժ ունենալով՝ աշխատում է դրանով դէմ կանգնել յի-
ղափոխութեանը, առաջ է գալիս արիւնահեղ ընդհա-
րում և կռիւ յեղափոխութեան կողմնակիցների և հակա-
ռակորդների միջև: Յեղափոխութիւնը կարող է լինել-
1) Քաղաքական, երբ աշխատում է փոխել գոյութիւն
ունեցող քաղաքական կարգերը: 2) Սօցիալական, երբ
ձգտում է հիմնովին քանդել գոյութիւն ունեցող սօ-

ցիալական կարգերը և հաստատել բոլորովին նոր կարգեր: (Տես Սօցիալիզմ և Կառավարութեան ձեւ):



ՆԱԴԷԼ—Քաժին: Սովորաբար նազել կոչուում է մէկ շնչի հողաբաժինը, որը տալիս է նրան գիւղական համայնքը: Նազել ստանալու իրաւունք ունի միայն համայնքի անդամը, որն այդ իրաւունքի հետ յանձն է առնում նաև որոշ պարտականութիւններ (տուրքեր և այլն): Նազելի չափը կախած է համայնքի հողի քանակից: (Տես Համայնական ճողատիրութիւն):

ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԱՏԵԱՆՆԵՐ—Տես Գործարանային արեւոյնքութիւն):

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ — Տես Կառավարութեան ձեւ:

ՆԱԽՆԱԿԱՆ ՅԵՆԶՈՒՐԱ—Տես Յենգութիւն:

ՆԱՏՈՒՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ—Տես Ֆեակական տնտեսութիւն:

ՆԱՏՈՒՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔ, որ սերտ կերպով կապուած է ռէալիզմի հետ (տես Ռեալիզմ), Նատուրալիզմը պատկերացնում է կեանքն առանց գեղեցկացնելու, առաւելապէս՝ կանգ առնելով նրա մութ կողմերի վրայ: Նատուրալիզմն ուժեղ հոսանքով զարգացաւ Ֆրանսիայում: Առաջին նատուրալիստներն են Ֆլօբէրն ու Հօնկուրը: Նատուրալիզմի ամենայայտնի ներկայացուցիչներն են, Զօլան և Մօպասանը: Նորագոյն նատուրալիստները հրաժարեցին կեանքի մութ կողմերին յատկապէս կոպիտ գոյներ տալուց և մօտեցան ռէալիստներին: 2) Փիլիսոփայութեան մէջ՝ նատուրալիզմը ձգտում է մարդու հոգեկան կողմը բացատրել իբրև բնութեան մի պրօցեսսը կամ նրա անմիջական

շարունակութիւնը: Էտիքական նատուրալիզմը մարդու բարոյական հակումները համարում է բնութեան մի ձգտում, որի նպատակն է ինքնապաշտպանութիւնը (Հօրբէս): Էստէտիքական նատուրալիզմը զեղարւեստի կոչումը համարում է իրականի ճշմարիտ պատկերացումը իր իսկական գոյնով, որքան էլ որ նա տըզեղ ու անդուրեկան լինի:

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՏ—Բնագէտ. Տես Նատուրալիզմ:

ՆԱՅԻՑՆԱԼ ԼԻԲԵՐԱԼԻՆԵՐ—Ազգային ազատամիտներ, քաղաքական կուսակցութիւն գերմանական ունիստագում (տես Ռեյխտագ), հանդիսանում է չափաւոր-ազատամիտ (լիբերալ) բուրժուազիայի ներկայացուցիչը: (Տես Լիբերալիզմ):

ՆԱՅԻՑՆԱԼԻԶԱՑԻԱ ՀՈՂԻ—Հողի վերաբերմամբ մասնաւոր սեփականութեան ոչնչացումը և նրան պետութեան սեփականութիւն դարձնելը: Հողի նացիօնալիզացիայի սկզբունքն արծարծեց Թոմաս Սպենսը մեզնից 130 տարի առաջ և ապա մշակեց ամերիկացի տնտեսագէտ Հենրի Ջօրջը (1839—1897) որի անւան հետ սովորաբար կապում է այդ գաղափարը: Հենրի Ջօրջի ուսմունքի էութիւնը հետեւեալն է.—բոլոր մարդիկ իրաւունք ունեն հողի վրայ ճիշտ այնպէս՝ ինչպէս և բնութեան միւս պարզէների՝ օդի, լոյսի, տաքութեան վրայ: Հողը չպէտք է պատկանի այն մարդոց, որոնք իրանք չեն մշակում, եւ ընդհակառակը, ամեն մարդ իրաւունք ունի այնքան հող ստանալու, որքան կարող է մշակել սեփական աշխատանքով: Այս սկզբունքը թէև շատ առարկութիւնների տեղիք է տւել, բայց յաջողութեամբ իրագործւել է Անգլիայի Աստորալիական գաղութներում, Կապի Երկրում և Հիւս. Ամերիկայի մի քանի շտատներում:

ՆՇՐԲԻՆ ՊԱԼԱՏ — Տես Պարլամենտ:

ՆԻԶԱՄ — Եւրոպական ձևով վարժեցրած կանոնաւոր զօրք՝
Տաճկաստանում:

ՆԻՀԻԼԻԶՄ — Այս բառը գործածուած է գանազան մտքով և
ընդհանրութեան կողմից ընդունուած նշանակութիւն
չէ ստացել: Նշանակում է ոչնչականութիւն: Մի քանիսը
նիհիլիստ են անւանում այն մարդոց, որոնք չեն ըն-
դունում ո՛չ մի օրէնք, կանոն, սովորութիւն, ո՛չ ըն-
տանեկան, ո՛չ հասարակական: 16—20-ական թւակա-
կաններին նիհիլիստ բառը գործածուած էր յոռետես,
վատատես նշանակութեամբ: Յայտնի ոուս վիպասան
Տուրգենեֆը իր մի հերոսին, Բազարովին նիհիլիստ
էր անւանում, ուստի նրա հակառակորդներն սկսեցին
նիհիլիստ բառը գործածել փշաջած, անբարոյական,
ընկած մարդոց վերաբերմամբ: 70-ական թւականնե-
րից ոուս գրականութիւնից այդ բառը դուրս է ընկ-
նում և սկսում է գործածուել Արեւմտեան Եւրոպայում,
որտեղ բոլոր յեղափոխականներին սկսեցին նիհիլիստ
անւանել:

ՆԻՐՎԱՆԱ — Հանգուցն, երջանկութիւն: Բուդդայի ուսմուն-
քով՝ մարդկային ձգտումների բարձրագոյն նպատակն է
հոգու երջանիկ, յաւիտենական, անխախտ խաղաղու-
թիւնը, որ հասնում է մահից յետոյ, երբ ընդմիջու դա-
դարում են մարդկային բոլոր տանջանքները: (Տես
Քուդդիզմ):

ՆՇԱՆԱԲԱՆ — Լօզունգ: 1) Բառ, որ պատերազմների ժամա-
նակ զօրքի մէջ պայմանական նշան է համարուած, ի-
րար ճանաչելու համար: 2) Միտք կամ առարկայ, որը
այս կամ այն կուսակցութեան պատկանելու նշան է
ծառայում: 3) Այն գլխաւոր պահանջները, որ յայտա-
բարում են կուսակցութիւնները և որոնցով տանում

են իրանց յետևից ժողովրդական փոքր կամ սուլաբ մասսաներ:

ՆՈՐ ՈՒՆԻՑՆԻԶՄ—Այսպէս է կոչուում XIX-րդ դարի վերջում Անգլիայում առաջ եկած բանւորական շարժման նոր ուղղութիւնը, որը պահանջում է բոլոր բանւորների միացումը՝ ընդհանուր-բանւորական կազմակերպութեան մէջ և վերջինիս եռանդուն մասնակցութիւնը՝ երկրի քաղաքական կեանքում: Առաջ Անգլիայի բանւորական միութիւնները (տրէդ-ունիոնները) բնորոշուում էին իրանց մէջ միայն վարժած բանւորներին, որոնք շաբաթական 15 ուրլուց պակաս չէին աշխատում, միութիւնների նպատակն էլ բացառապէս փոխադարձ օգնութիւնը և զուտ-տնտեսական կռիւն էր կապիտալիստների դէմ, առանց որևէ քաղաքական պահանջի: (Տես Բանւորական միութիւններ):

ՆՕՄԱԳՆԵՐ—Թափառական կիսավայրերի ցեղեր, որոնց միակ պարապմունքն անասնապահութիւնն է:

ՆՕՄԻՆԱԼ—Անւանական:

ՆՕՄԻՆԱԼԻԶՄ—Սխալաստիքական փիլիսոփայական ուսմունք միջին դարերում (XI-րդ դ.) որ պնդում էր, թէ մեր խելքից—հասկացողութիւնից դուրս գոյութիւն չունի ոչ մի իրական բան, որը համապատասխան էլ մեր ունեցած ընդհանուր հասկացողութիւններին: Նօմինալիզմի հակառակ ուղղութիւնն է ռէալիզմը: (Տես Ռեալիզմ):

ՆՕՏԱՐ—Տես Նօտարիատ:

ՆՕՏԱՐԻԱՏ—Դատաստանական հիմնարկութիւններին կից հաստատութիւն, որի գլխաւորը՝ նօտարը համարուում է դատաստանական մարմնի անդամը և որը լիազօրւած է լինում կատարելու հաստատել իրաւաբանական ակտեր, որոնք դրանից յետոյ ստանում են հասարա-

կական ակտերի նշանակութիւն: Նօտարները լինում են երկու կարգի. աւագ և կրտսեր: Աւագները պաշտօնավարում են նահանգական դատարանների (օկրուժնօյ սուդ) նօտարական արխիւներում և նահանգական դատարանի անդամի իրաւունքներն են վայելում: Կրտսեր նօտարներն ստանում են իրանց պաշտօնը նահանգական դատարանում որոշ քննութիւն տալուց յետոյ և պաշտօնավարում են քաղաքներում, գիւղերում և աւաններում: Այնտեղ, ուր նօտար չկայ, իրանց պաշտօնը կատարում են հաշտարար դատաւորները կամ նահանգական դատարանի պաւառական անդամները: Նօտարներն իրանց պաշտօնն ստանձնելիս 2—10 հազար ռուբլի գրաւական են ներկայացնում և համարում են պետական ծառայութեան մէջ, բայց չին և կենսաթոշակ չեն ստանում: Իրանց աշխատանքների համար վարձատրութիւն են ստանում որոշ սակագներով:

ՆՕՐՄԱ.—1) Չափ: 2) Բնական դրութիւն: 3) Կարգ ու կանոն՝ որոշւած ծրագրով: 4) Ընդունւած, որոշւած ձև:

ՆՕՐՄԱԼ.—1) Բնական, սովորական, կանոնաւոր: 2) Ընդունւած և հաւանութիւն գտած՝ իբրև համապատասխան սոսջադրւած նպատակին:

Շ

ՇԱՖԼՕՆ—Սովորական, յայտնի, պատրաստի ձև:

ՇԱԹԷՆ—Շագանակազոյն մագերով և պայծառ աչքերով այր կամ կին:

ՇԱՀ—Պարսկական թագաւորի տիտղոսը:

ՇԱՀ-ՆԱՄԷ—Պարսկական հոշակաւոր վէպի անունը, որի հեղինակը համարում է Ֆիրդուսին:

ՇԱՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ—Տես Շամանիզմ:

ՇԱՄԱՆԻԶՄ—Կուսպաշտական կրօն, որն ընդունում է բարի ու չար ոգիների գոյութիւնը: Շամանները, այսինքն՝ քրմերը յարգում են իբրև հոգիների հետ անմիջական կապ ունեցողներ, որի պատճառով այս կրօնի հետևորդները շամանականներ են կոչւում, իսկ կրօնը՝ շամանիզմ կամ շամանականութիւն: Տարածւած է գլխաւորապէս Սիբիրում՝ օստեակների, սամօեդների, թաթարների, տոււնգուզների, կամչադացիների և այլ ցեղերի մէջ:

ՇԱՄՊԱՆԵԱՆ ԳԻՆԻ կամ **ՇԱՄՊԱՆ** — Կոչւում է նախկին ֆրանսիական նահանգ Շամպանի գիւնին, որ ամենաազնիւ գիւններից է:

ՇԱՆՍ— Հաւանականութիւն:

ՇԱՆՏԱԺ — Դրամաշորթութիւն, մէկից սպանալիքներով կամ բռնի միջոցներով դրամ կամ այլ բաներ կորզելը:

ՇԱՆՏԱԺԻՍՏ— Շանտաժով պարապող:

ՇԱՐԺ— Այլանդակութեան, անհաւատալիութեան հասցնելու չափ չափազանցնելը:

ՇԱՐԻԱԹ— Ղուրանից և մասամբ աւանդութիւններից վերցրւած կրօնական և քաղաքացիական օրէնքների ժողովածու: (Տես Իսլամ, Ղուրան):

ՇԱՐԼԱՏԱՆ— Խաբերայ, սրիկայ, լօթի:

ՇԱՔՈՒ— Ենպոնական երկարութեան չափ= $\frac{1}{6}$ կենգ= $\frac{1}{2}$ արշ:

ՇԷՅՔԱՆ կամ **ՇԱՅՔԱՆ**— Շամանականների հաւատքով՝ չարութեան ասուածը: (Տես Շամանականութիւն): Սատանայ:

ՇԷՅԽ— Արաբական ցեղապետ:

ՇԷՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ— Թիւրքիայում և Կովկասում կոչւում է սիւննիների կրօնապետը, որը համարւում է օրէնքների

ու սովորոյթներէ բացադրողն ու նրանց պահպանութեան վրայ հսկողը:

Շէ՛ՐԻՖ—1) Անգլիական նահանգում բարձրագոյն պաշտօնեայ՝ որը գործադրում է դատարանի վճիռները, Կրղւեալներէ ցուցակ է կազմում, պարլամենտական ընտրութիւններն է ղեկավարում և քաղաքացիական մանր գործեր քննում: 2) Մահմեդի Ֆաթմայ աղջկանից սերած մարդոց տիտղոսը, որ նշանակում է սուրբ:

Շէ՛Ֆ—1) Պատուաւոր տիտղոս, որ Ռուսաստանում տրւում է կայսերական ընտանիքի անդամներին և առանձին արժանիքներ ցոյց տւած զեներալներին: 2) Ֆրանսիայում զօրամասի իշխանաւորը, որ հսկում է իր զօրամասի տնտեսականին: 3) Մեծաւոր, իշխանաւոր, գլխաւոր:

Շէ՛ՖՖէ՛Լ—Հացահատիկների չափ Գերմանիայում՝ մինչև 1884 թ.: Պրուսիայում=55 լիտր, Սաքսոնիայում=104 լիտր, Վիւրտեմբերգում=177 լիտր:

ՇԻՒՆԵՐ—Մահմեդականութեան երկու գլխաւոր դաւանութիւններից մէկը, որ ընդունում է միայն զուրանը և հերքում սխնիները (աւանդութիւնները): Սիննիներ ընդունող դաւանութիւնը կոչւում է սիննիական: Շիաներն ընդունում են չորրորդ խալիֆ Մահմեդի փեսայ Ալիին՝ իբրև նրա օրինական յաջորդը իսկ Սուլթանին չեն ընդունում իբրև այդպիսին: Շիաները մեծամասնութիւն են կազմում Պարսկաստանում, սիննիները՝ Տաճկաստանում: Շիաները կազմում են բոլոր մահմեդականների $\frac{1}{10}$ -ը:

ՇԼէ՛ՅՖ—Կանացի հագուստի պոչը:

ՇՈՒՂԷ՛Ր—1) Թղթախաղի ժամանակ կեղծիքներ կատարող, խաղանկնգ: 2) Ճարպիկ խաբեբայ:

ՇՊԱԼԷՐ—Ծաղկաթուղթ, պաստառ:

ՇՊԻՅՆ—Լրտես, մատնիչ:

ՇՎԷՅՑՊՐ—դոնապան, բարապան:

ՇՏԱԲ—1) Որևէ զօրամասի կառավարչատուն: 2) Որևէ զօրամասի ծառայողները: 3) Գլխավոր շտաբ, կենտրոնական վարչութիւն, որը կառավարում է պետութեան բոլոր զօրքերը:

ՇՏԱԲ-ՌՕՏՄԻՍՏՐ—Տես Աստիճանների կարգ:

ՇՏԱԲ-ՕՖԻՑԷՐ—Տես Աստիճանների կարգ:

ՇՏԱԲՍ-ԿԱՊԻՏԱՆ—Տես Աստիճանների կարգ:

ՇՏԱԼՄԷՅՍՏՐ—3-րդ կլասի պալատական, որ նշանակում է ախոռապետ:

ՇՏԱՏ—1) Պաշտօնեանների ցանկ, որ հաստատւած է պաշտաճաւոր իշխանութեան կողմից և որի մէջ ճշտութեամբ որոշւած է ամեն մի պաշտօնեայի ոտճիկը և այդ հիմնարկութեան ծախսերը: 2) Ֆեդերատիւ (զաշնակից) պետութիւններ, որոնք կազմում են հասարակապետութիւնը, օրինակ՝ Միացեալ Նահանգների շտատները: 3) Նիդերլանդիայի եօթը նահանգների համայնական ժողովը:

ՇՏԷՄՊԵԼ—Գնիք, դրօշմ:

ՇՏՈՒՆԴԱ—Ռացիօնալիստական ազանդ, որ ծագել է Հարաւային Ռուսաստանում XVІІІ-րդ դարի կիսում գաղթական բապտիստների (տես Բապտիստներ) ազդեցութեան տակ: Ազանդը տարածւած է Ռուսաստանի հարաւարեմտեան նահանգներում և յատկապէս՝ Խերսօնի նահանգում, նաև Գովկասում: Շտունդիզմի տարածմանն առանձնապէս նպաստեց նրա հետևորդների մաքուր վարք ու բարքը: Ժամանակի ընթացքում առաջ եկաւ երիտասարդ-շտունդիստների ազանդը, որը հերքում է բոլոր կրօնական խորհուրդներն ու ծիսակատարու-

թիւնները: Շտունդիստների ուսմունքի մէջ կան նաև սօցիալ-քաղաքական տարրեր: 1894 թ. հրամանով շտունդիզմը հալածանքների է ենթարկում իբրև առանձնապէս վնասակար աղանդ:

ՇՏՈՒՆԴԻԶՄ—Տես Չտունդա:

ՇՏՈՒՆԴԻՍՏՆԵՐ—Տես Չտունդա:

ՇՏՐԱՖ—Տուգանք:

ՇՏՐԷՅԿԻՐԷԽԷՐ—Գործադուլ տալովոյդ—կոչուում են այն բանւորները, որոնք, հակառակ իրանց ընկերների ընդհանուր որոշմանը՝ գործադուլ անել, շարունակում են աշխատել և այդպիսով խանգարում են գործադուլի յաջողութեանը: (Տես Զաբաստովկա):

ՇՕՍՍԷ—Խճուղի:

ՇՕՎԻՆԻԶՄ—Պեղծ ազգասիրութիւն, որի հիմքը կազմում է իր ազգի լաւ կողմերը շափազանցնելու և վատերը փոքրացնելու հակումը: Շօվինիզմն աւելի շուտ՝ ատելութիւն է դէպի այլազգիները, քան սէր դէպ իր ազգը: Շօվինիզմը յատուկ է հասարակութեան տգէտ խաւերին կամ այն դասակարգերին ու անհատներին, որոնք ազգասիրութեան դիմակի տակ աշխատում են առաջ տանել իրանց սեփական շահերը և մոլորեցնել խաւար ամբոխը:

Ո

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ—Տես Քաղաքական կուսակցութիւն, Կառավարութեան ձեւ:

ՈՒԴԵԼԻ ԸՈՂԵՐ—Կոչուում են Ռուսաստանում կայսերական ընտանիքի անդամներին պատկանող հողերը: Սրանց ընդհանուր քանակն է 8,025 հազար դես., որից 5,940 հազ. անտառ է և 1,996 հազ. դես. մշակութեան յար-

մար հող: Ուղեւի հողերի 90 տոկոսը գիւղացիներին կապալով է տրւած:

ՈՒԶՈՒՐՊԱՏՐ—Յափշտակիչ, բռնութեամբ կամ այլ միջոցներով իշխանութեան և այլ իրաւունքների տէր դարձած մարդ:

ՈՒԶՈՒՐՊԱՏԻԱ—Յափշտակութիւն:

ՈՒԺԵՂԱՑՐԱԾ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ—Ռուսաց կառավարութիւնը ուժեղացրած պահպանութեան մէջ է յայտարարուած այս կամ այն զաւառը, նահանգը այն դէպքում՝ երբ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող կարգերից անբաւականութիւն է նկատուում և ժողովրդական մասսաների մէջ յուզումներ է առաջ գալիս: Ուժեղացրած պահպանութեան տակ յայտարարելու իրաւունքը վայելում են գնհերալ-գուբերնատորները՝ ներքին գործոց մինիստրի թոյլտուութեամբ, ինչպէս և ինքը՝ մինիստրը, որն այդ մասին տեղեկացնում է Սենատին և կայսերը: Ուժեղացրած պահպանութիւնը սովորաբար մի տարի ժամանակով է յայտարարուում. մինիստրն իրաւունք ունի այդ ժամանակամիջոցը երկարացնել՝ Մինիստրների Խորհրդի թոյլտուութեամբ: Ուժեղացրած պահպանութիւնը կայանում է հետեւեալում. — գնհերալ-նահանգապետը, նահանգապետը և գրադօնաչափիկը (քաղաքապետը) իրաւունք են ստանում՝ 1) Ազգաբնակչութեան համար պարտադիր կանոններ հրատարակել և այս կանոնները խախտելու համար պատժել մինչև 3 ամիս բանտարկութեան և 500ռուբլի տուգանքի ենթարկելով: 2) Արգելել ամեն տեսակ ժողովուհի: 3) Փակել առևտրական և արդիւնագործական հիմնարկութիւնները: 4) Այս կամ այն անհատին արգելել ապրելու որոշ տեղում Գնհերալ-նահանգապետը կամ մինիստրը իրաւունք ունեն ստանձին քրէական գործերը զինւորական դա-

տարանի յանձնել՝ պատերազմական ժամանակի օրէնքով դատելու, ոստիկանութեան և ժանդարմերիայի տեղական իշխանաւորներն իրաւունք են ստանում կալանաւորելու իրանց կասկածելի թւացող մարդոց մինչև երկու շաբաթ և նոյն իսկ աւելի, խուզարկութիւններ կատարել ամեն ժամանակ և ամեն տեղ:

ՈՒԼԵՄ—Տաճկաստանում՝ մէզրէսէն (տես Մեղրեւե) աւարտածների գիտական աստիճան, որին արժանացածները կազմակերպւած են իբրև առանձին կօրպօրացիա (տես Կօրպօրացիա), գլուխ ունենալով Շէյխ-Ուլ-Իսլամին:

ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄ—Վերջնական պայման, վերջնական խօսք, պահանջ: Ուլտիմատումը գործածական է քաղաքական աշխարհում, երբ երկու պետութիւնների մէջ յարաբերութիւնները սուր կերպարանք են ստանում, կողմերից մէկը ուլտիմատում է դնում, այսինքն՝ դնում է իր վերջնական պահանջը, որը մերժելուց յետոյ՝ ընդհատում է նրանց յարաբերութիւնները և մեծ մասամբ պատերազմ սկսում:

ՈՒՂՂԱԿԻ ՀՆՐԿԵՐ—Տես Հարկեր:

ՈՒՆԻԱ—Միութիւն: 1) Երկու անկախ, սուվերէն պետութիւնների միութիւն, որ արտայայտւում է մօնարխի (Տես Մօնարխ) անձնական միութեամբ: Ունիան լինում է անձնական և ուեայ: Երբ մօնարխի մահից յետոյ նրա երկիրը ժողովրդապետ անցնում է իր ազգական մօնարխին, երկու պետութիւնների մէջ առաջ է գալիս անձնական ունիա, որը տևում է այնքան ժամանակ, որքան թագաւորում է այդ ղինաստիան, վերջինիս կտրուելով՝ վերանում է և երկու պետութիւնների անձնական ունիան: Ռեալ ունիան առաջ է գալիս երկու պետութիւնների մշտական միութեամբ: Այս դէպքում՝ միացած պետութիւններն ունենում են մի քանի

ընդհանուր պետական հիմնարկութիւններ և առհասարակ նրանց կեանքն աւելի մօտ է լինում իրար՝ քան անձնական ունիայի ժամանակ: Ռէալ ունիայով միացած պետութիւններն ուրիշ պետութիւնների հետ բանակցութիւններ վարելիս՝ հանդէս են գալիս իրրև մէկ պետութիւն: 2) Եկեղեցական ունիա կատարում է երկու կամ Վաւելի եկեղեցիների միջև, ըստ որում՝ նրանցից ամեն մէկը կարող է ունենալ իր առանձին ծիսակատարութիւնը: Եկեղեցական ունիայի բազմաթիւ փորձեր հղել են քրիստոնէական զանազան զաւանուութիւնների մէջ:

ՌԻՆԻՏԱՐԻԶՄ — Հակառակ Ֆեդերալիզմին՝ ունիտարիզմը պետական կազմակերպութեան միութեան կողմնակից է: Ունիտար պետութիւնը, հակառակ Ֆեդերատիւ պետութեանը, իրանից ներկայացնում է մէկ և անբաժան պետութիւն, որն ունի մէկ ընդհանուր կառավարութիւն և պետական մի իշխանութիւն: (Տես Ֆեդերալիզմ):

ՌԻՆԻՎԵՐՍԱԼ — Հանրական, ընդհանուր:

ՌԻՆԻՏԱՐ ՊԵՏՈՒԹԻՒՆ — Տես Աւնիտարիզմ:

ՌԻՆՏԷՐ-ՕՖԻՑԷՐ — Հասարակ զինւորի երկրորդ չիւնը (էֆրէյտօր, սևտեր-օֆրիցեր, ֆելդֆերել):

ՌԻՆՅԻ — Դեղատան ֆունտի $\frac{1}{12}$ -ըղը = 8 զրահմ = 7 զօլօտնիկ:

ՌԻՏԻԼԻՏԱՐԻԶՄ — 1) Միստեմ, որ մշակել է Բենտամը և որի կողմնակիցն է նաև Ջ. Ստ. Միլլը: Հիմնական ըսկըզբունք ընդունում է օգուտը, որը հաւասարակշռեցնում է բազմատեսակ ինտերեսներ և հասարակական կեանքի բոլոր աստիճանների վրայ ծառայում է իբրև ինքնապահպանութեան ամենաուժեղ զրդիչ-ստիմուլ: Օգուտի սկզբունքն է նոյնպէս՝ որ ընդունւում է մարդկային վարմունքների իբրև ամենալաւ չափը: Երբան կարելի է շատ երջանկութիւն — որքան կարելի է շատ

մարդոց համար»—ըստ Բենտամի՝ այդ է պետութեան վերջնական նպատակը: Բենտամն իր թէօրիան անւանում է Մաքսիմացիայի րեօրիա:

ՈՒՏՕՊԻԱ—Անիրագործելի ծրագիր: Թօմաս Մօր'ն Ուտօպիա անունով մի գիրք ունի, որտեղ նկարագրում է Ուտօպիա երևակայական կղզու այն իդէալական հասարակակարգը, որն ինքը ցանկալի է համարում: Այստեղից ուտօպիա բառով սկսեցին արտայայտել ամեն մի անիրագործելի միտք, գաղափար, ծրագիր, առաջարկութիւն:

ՈՒՏՕՊԻԱՎԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ—Տես Սօցիալիզմ:

ՈՒՊՐԱՎԱ—Տես Քաղաքային հասարակական հիմնարկութիւններ և Զեմստլօ:

2

ՉԱՐՏԻԶՄ—Այդ անունով յայտնի են 1832—1848 թւականներին բանւորական շարժումներն Անգլիայում՝ որ արդիւնք էին բանւորների խղճալի դրութեանը և նրանց փորձերին՝ օրէնսդրական կարգով բարելաւել իրանց վիճակը: Շարժումներին առիթ ծառայեց այն հանգամանքը, որ պարլամենտը մերժեց լայնացնել ընտրողական իրաւունքները, որով բանւորները գրկեցին պարլամենտում ներկայացուցիչ ունենալուց: Բանւորները պարլամենտի մի քանի ռադիկալ անդամների զեկալարութեամբ կազմեցին իրանց ծրագիրը—ջարտը (այդ խօսքից առաջ եկաւ ջարտիստ անունը) որի մէջ գրին հետևեալ պահանջները. 1) Լ'նդհանուր ընտրողական իրաւունք. 2) Պարլամենտի անդամներն ընտրուում են մէկ տարով. 3) Գաղտնի քւէտրկութիւն. 4) Պարլամենտի անդամներին ոտճիկ և 6) Լ'նտրողական հաւա-

սար շրջաններ: Այս ջարտի տակ ստորագրեցին մօտ
 վեց միլիոն հոգի և ներկայացրին պարլամենտին: Պար-
 լամենտը մերժեց խնդիրը, որից յետոյ Անգլիայի զա-
 նազան քաղաքներում բանւորները զինւած ապստամ-
 բութիւն յայտարարեցին: Զօրքը միջամտեց և բան-
 ւորներին յաղթեց: Ապստամբութիւնը ճնշեցին, 300 հո-
 գի աչքի ընկնող ղեկավարներից աքսորեցին կամ
 բանտարկեցին: Սակայն, շատ ժամանակ չանցած՝ բան-
 ւորական ապստամբութիւնը նորից բռնկւեց և այսան-
 գամ՝ աւելի ուժեղ թափով: 1842-ին պարլամենտին
 նոր ջարտ ներկայացրին: Պատասխանը դարձեալ բա-
 ցասական եղաւ: Մանչեստրի բանւորները գործադուլ
 յայտարարեցին, որը շուտով տարածւեց ամբողջ Լոն-
 կաշիրում: Յուզումը քանի գնում՝ լայն չափեր էր ըն-
 դունում, սակայն՝ յաղթութիւնը կրկին կառավարու-
 թեան կողմը եղաւ, որովհետև բանւորները նիւթական
 միջոցներից զուրկ լինելով՝ ստիպւած էին գործի կանգ-
 նել: 1848-ին չարտիստական շարժումը նորից է բը-
 ուրնկուած, այս անգամ՝ փետրվարեան յեղափոխութեան
 ազդեցութեան տակ: Շարժման գլուխ է անցնում
 Օ'Կոննօրը, որը կարողացաւ իր շուրջը հարիւր հազա-
 րաւոր բանւորներ համախմբել: 1848 թ. ապրիլի 10-ին
 պէտք է տեղի ունենար բանւորական մի հակայական
 ցոյց՝ 300 հազարից աւելի բանւորների մասնակցու-
 թեամբ: Ցոյցը պէտք է կայանար նրանում՝ որ այդ ա-
 հազին ամբոխը հանդիսաւոր ընթացքով պէտք է գը-
 նար պարլամենտ՝ նոր պահանջներ անելու: Սակայն,
 կառավարութիւնը տեղեկութիւն ունենալով այդ ցոյցի
 մասին և երկիւղ կրելով, որ խաղաղ ցոյցը կը փոխի
 յեղափոխութեան, ժողովը յայտարարեց ապօրինի և
 վճռեց զինւորական ոյժի դիմել: Օ'Կոննօրը զոհեր տա-

լուց վախենալով՝ յետ կանգնեց իր մտադրութիւնից, որից յետոյ կորցրեց իր ազդեցութիւնը չարտիստներէ վրայ: Վերջիններիս մէջ էլ ներքին տարածայնութիւններ ծագեցին, որոնք աստիճանաբար թուլացրին բանւորներին և վերջ դրին չարտիստական շարժումներին: Վերջին չարտիստական միտինգը տեղի ունեցաւ 1875 թւին՝ Ռօչդէլում:

ՉԱՓԵՐԻ ՄԵՏՐԻԲԱՊԱՆ ՄԻՍՏԵՄ—1779 թւից մտցրած է Ֆրանսիայում իսկ յետոյ՝ նաև բոլոր քաղաքակրթւած երկրներում: Այդ սխտեմի համաձայն, հիմնական չափն ընդունւում է մետրը, որը հաւասար է երկրագնդի միջօրէականի մէկ քառորդի $\frac{1}{10000000}$ -րդ բաժնին: Մետրը երկարութեան չափ է: Մէկ խորանարդ դեցիմետրը (դեցիմետրը = $\frac{1}{10}$ մետրին) կոչւում է լիտր և համարւում է հեղուկների ու հատիկների սկզբնական չափ: 100 քառ. մետր տարածութիւնը կոչւում է ար և համարւում է տարածութեան սկզբնական չափ, մէկ խորանարդ սանտիմետր (սանտիմետրը = $\frac{1}{100}$ մետր) զտած ջրի (ցելսի + 4⁰ տաքութեամբ) ծանրութիւնը կոչւում է գրամմ և համարւում է ծանրութեան սկզբնական չափ: Սկզբնական չափերից 10, 100 և 1000 անգամ մեծ չափերը նշանակելու համար սկզբնական չափը որոշող բառի սկզբին աւելացնում են յունական դեկա (տասը), հեկտո (հարիւր) և քիլո (հազար) բառերը (դեկա-մետր, հեկտո-մետր, քիլո-մետր և այլն): Սկզբնական չափից 10-ը 100 և 1000 անգամ փոքր չափերը նշանակելու համար աւելացնում են լատինական դեցի (տասը), սանտի (հարիւր) և միլի (հազար) բառերը (դեցի-մետր, սանտի-մետր, և այլն, որ նշանակում են $\frac{1}{10}$ մետր, $\frac{1}{100}$ մետր և այլն): Չափերի մետրիքական սխտեմն ամենքից յարմարն է և ճիշտը:

Չեկ—Գրքից կտրւած թերթ, որը ներկայացնողը բանկերից ստանում է թերթի վրայ նշանակւած գումարը: Այս գումարի համար պատասխանատու է այն անձը, որը ստորագրել է չեկին. բնականաբար, այն մարդոց չեկն է ընդունւում բանկում, որոնք յայտնի են իբրև նիւթապէս ապահովւած ու բարեյոյս մարդիկ և որոնք վարկ ունեն: Սովորաբար չեկի ոյժը տեւում է 5 օրից ոչ աւելի:

Չեկ01—Շապիկ որևէ առարկայի համար (կարասիքի, լամպի և այլն):

ՉեՍՈՒՆՉԱ կամ ՉԻՍՈՒՆՉԱ — մետաքսէ գործւածք, որ պատրաստւում է գլխաւորապէս Չինաստանում և մասամբ էլ Կովկասում:

ՉեՍՏէՐ—Անգլիական Չեստէր քաղաքի և նահանգի պանիրը:

ՉԻՆԵՐԻ ԿԱՐԳ—Տես Աստիճանների կարգ:

ՉԻՍՈՒՆՉԱ—Տես Չեսուեւջա:

ՉՐԲԱՋԻ—Պատւաւոր մարդ, որ Բօլգարիայում ընտրւում են քաղաքացիական և քրէական դատարանի անդամ:

ՉՈՒ—Չինական պղնձէ դրամ = $\frac{1}{6}$ կոպ:

Պ

ՊԱԳՕՆ—Ուսադիր: Նշաններ, որ զինւորականները և ծառայողները կրում են իրանց ուսերին:

ՊԱԼԱՏ—Տես Պարլամենտ:

ՊԱԼԱՏԱԿԱՆ ՅԵՆՉՈՒՐԱ—Տես Յենգուերա:

ՊԱԼԷՒԱՏԻԻ—Պալիտաիւ բժշկութիւնն աշխատում է վերացնել ոչ թէ հիւանդութեան հիմնական պատճառները, այլ կուում է նրանց հետևանքների դէմ: 2) Պալիտաիւ է կոչւում ամեն մի միջոց, որ արմատական չէ:

- այլ կրում է ժամանակաւոր, թեթև բնոյթ:
- ՊԱՄՅԼԵՏ**—Գրաւոր կամ բանաւոր արտադրութիւն, որ բանակուելի ձևով շոշափում է քաղաքական զանազան խնդիրներ կամ յարձակում է անհատների վրայ:
- ՊԱՄՅԼԵՏԻՍ**—Պամֆլետ գրող: (Տես Պամֆլետ):
- ՊԱՆ...**—Նախդիր, որ համապատասխանում է հայերէն «համա» նախդիրին. այսպէս՝ պանիսլամիզմ, պանսլաւիզմ — նշանակում է՝ համիսլամականութիւն, համասլաւոնականութիւն:
- ՊԱՆԱՄԱ**—Պարանոց, որ միացնում է Աֆրիկայի երկու մայր-ցամաքները: 1881 թ. Լեսոսպսի հիմնած ակցիոներական ընկերութիւնը ձեռնարկում է այդ պարանոցը կտրելուն և ջրանցք բանալուն, բայց 1889 թ. աշխատանքները կանգ են առնում ընկերութեան նիւթական միջոցներն սպառելու պատճառով: Բացում են հսկայական զեղծումներ, պարզում է, որ ծախսել է 1,171 միլլիոն ֆր., բայց աշխատանքների կէսն անգամ չէ կատարւած, որովհետև ահագին միլլիոններ են եղել ծախսած պատգամաւորների, մինիստրների և ժուրնալիստների կաշառելու համար: Պանամայի գործը յայտնի դարձաւ ամբողջ աշխարհին և պակսմա խօսքը հսկայական զեղծում, խայտառակութիւն նշանակութիւնն ստացաւ:
- ՊԱՆՏԵՆՅԱ**—1) Առողջացող հիւանդների ասուածուհին: 2) Ամեն հիւանդութիւն բուժող դեղ կամ միջոց:
- ՊԱՆԳԵՐՄԱՆԻՉՄ**—Համադերմանականութիւն, քաղաքական թէօրիա, որի համաձայն դերմանական ծագում ունեցող բոլոր ժողովուրդները պէտք է մէկ պետութիւն կազմեն, ըստ որում ընդունւում է՝ որ ղեկավարող դերն այդ գործում պէտք է խաղայ Պրուսիան:
- ՊԱՆԹԻԻՉՄ**—Փիլ. ուսմունք, որ քարոզում է թէ աշխարհը

և Աստուած անբաժան են իրարից, ըստ որում՝ առաջինը երկրորդի արտաքին, երկացող կողմն է, նրա յայտնութիւնը, պատկերն է: (Հին հնդկական փիլիսոփաներ, ստոյիկներ, նոր-պլատոնիստներ, Սպինոզա, Շելլինգ, Հեգել):

ՊԱՆԹԷԻՍՏ—Պանթէիզմի կողմնակից: (Տես Պանթիզմ):

ՊԱՆԹԷՕՆ—1) Տաճար, որ նւիրւած է բոլոր աստուածներին:

2) Շինութիւն, որ նւիրւած է երեկի մարդոց յիշատակին: Փառաց տաճար:

ՊԱՆՍԻՅՆ—1) Գիշերօթիկ դպրոց: 2) Հիմնարկութիւն, որ տեղ բոշ վճարով ապրում են մարդիկ, ստանալով իրանց սննդի բոլոր պիտոյքները:

ՊԱՆՍԼԵԻԻԶՄ—Համասլաւոնականութիւն: Ուսմունք, որը քարոզում է բոլոր սլաւոնացիների միացումը: Գրականութեան մէջ առաջին անգամ այդ միտքը յայտնել է սլովակ Կոլարը, որից օգտւեցին յետագայում ռուս սլաւեանօփիւնները: (Տես Սլաւեանօփիլ):

ՊԱՆՏՕՄԻՄ, **ՊԱՆՏՕՄԻՄԱ**—Ներկայացում, որի ժամանակ դերակատարը ոչ խօսում է, ոչ երգում, այլ իր գործողութիւններն ու զգացմունքներն արտայայտում է շարժումներով ու դիմադժերով:

ՊԱՊ—Հոսմէական-կաթոլիկ եկեղեցու պետի տիտղոսը, որին կաթոլիկները համարում են Պետրոս առաքեալի տեղակալը: (Տես Պապիզմ):

ՊԱՊԻԶՄ—1) Ուսմունք, որի համաձայն պապն անսխալական է, քանի որ Յիսուս Քրիստոսի տեղակալն է երկրի վրայ: 2) Կաթոլիկ եկեղեցու ուսմունքը: (Տես Պապոլիկ եկեղեցի):

ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԻ ՊԱՆԱՏ—Տես Պարլամենտ:

ՊԱՏԵՔԻԿ—Սբտաշարժ, սզդու, զգացւած:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ—Կառավարութիւնը յայտա-

բարում է արտաքին պատերազմի կամ ժողովրդական ապստամբութեան ժամանակ: Առաջին դէպքում պատերազմական դրութիւն է յայտարարուում պատերազմի բեմին մօտիկ կամ կից նահանգներում, իսկ երկրորդ դէպքում՝ ժողովրդական ապստամբութիւն ծագած նահանգներում: Պատերազմական դրութեան էութիւնը կայանում է նրանում, որ սովորական քաղաքացիական ու քրէական օրէնքները դադար են առնում, քաղաքացիները զրկուում են ազատութեան և ապահովութեան ամեն մի օրինական երաշխաւորութիւնից, բոլոր յանցագործները ենթարկուում են զինուորական դատարանին, իշխանութիւնը յանձնուում է զինուորական նահանգապետին, որն իրան յանձնուած շրջանում զիկտատօրական լիազօրութիւններ է ստանում: (Տես Զինուորական դատարան):

ՊԱՏԵՆՏ—Վկայաթուղթ, արտօնագիր:

ՊԱՏԺՈՂԱԿԱՆ ՅԵՆԶՈՒՐԱ.—Տես Յենզուրա:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՕՑԻԱԼԱԿԱՆ.—Տես Սօցիալական պատմութիւն:

ՊԱՏՐՈՆ—Փամփուշտ: Տես նաև Կլիեկտ:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՄԻԸՊԵՏՈՒԹԻՒՆ — Տես Կառավարութեան ձեռ:

ՊԱՏՈՂՕԳԻԱ — Հիւանդարանութիւն, հիւանդախօսութիւն: Պատօլօգիական—հիւանդոտ:

ՊԱՏՈՂՕԳԻԵԿԱՆ—Տես «Պատօլօգիա»:

ՊԱՐԱԳՐԱՑ—հատուած, բաժանմունք:

ՊԱՐԱԴՕՔՍ—Տարօրինակ միտք:

ՊԱՐԵԶԻՏ—Բուսական կամ կենդանական ստորին օրգանիզմներ, որոնք ապրում են ուրիշ օրգանիզմների վրայ և կերակրուում նրանց հիւթով: 2) Զրիակեր, ֆնասակար կենդանի կամ մարդ:

ՊԱՐԱԶԻՏԻԶՄ—Զրիակերութիւն: (Տես «Պարազիտ»):

ՊԱՐԼԱՄԵՆՏ—Սահմանադրական երկրներում պարլամենտ կոչուում է այն բարձրագոյն հաստատութիւնը, որ մըշակուում է երկրի համար օրէնքներ, հսկում է մինիստրների գործնէութեանը, հաստատում է պետական բիւջէն, (տես «բիւջէ») և առհասարակ, հանդիսանում է երկիրը կառավարող մարմինը: Պարլամենտը լինում է երկու կարգի՝ 1) որ կազմւած է երկու մասից կամ ինչպէս ասում են, երկու պալատից. 2) որ կազմւած է մէկ մասից կամ պալատից: Առաջին դէպքում պարլամենտը կոչուում է երկպալատեան, երկրորդ դէպքում՝ միպալատեան: Երկպալատեան պարլամենտի մի պալատը կոչուում է վերին պալատ, իսկ միւսը՝ ներքին պալատ: Այդ պալատները զանազան երկրներում տարբեր անուններ ունեն, այսպէս՝ Անգլիայում վերին պալատը կոչուում է Լորդերի պալատ որ կազմւում է երկրի ժառանգական բարձր ազնւականութիւնից, Փրանսիայում կոչուում է Սենատ և ընտրւում է ազգաբնակչութեան կողմից, Իտալիայում նոյնպէս կոչուում է Սենատ, Գերմանիայում կոչուում է Գաշնակցական խորհուրդ և կազմւում է գերմանական դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներից, Աւստրիայում և Եապոնիայում կոչուում է Տերերի պալատ: Ներքին պալատն ընտրւում է ամեն տեղ ազգաբնակչութեան կողմից և ամեն երկրում ունի իր յատուկ անունը, այսպէս՝ Անգլիայում ներքին պալատը կոչուում է Համայնքների պալատ, Գերմանիայում կոչուում է Ռեյխտագ, Փրանսիայում, Իտալիայում, Աւստրիայում և Եապոնիայում—Պատգամաւորների պալատ: Դեռ Երբին պալատները միասին, այսինքն՝ պարլամենտը զանազան երկրներում նոյնպէս տարբեր անուններ ունի, այսպէս՝ Աւստրիայում

յում՝ Ռեյխսպատ, Գերմանիայում Լանդտագ (զաշնակից պետութիւնների պարլամենտը), Ամերիկայում՝ Կոնգրես և այլն, և այլն: Բոլոր երկրներում զլխաւոր դերը կատարում է ներքին պալատը՝ իբրև ժողովրդի կողմից ընտրւած մարմին: Ռուսաստանում վերին պալատ համարոււմ է Պետական խորհուրդը իսկ ներքին պալատ՝ Պետական դուման: Մեծ մասամբ միապետական երկրների վերին պալատի անդամներին նշանակում է թագաւորը, իսկ հանրապետութիւնների մէջ՝ վերին պալատն ևս ինչպէս և ներքինը՝ ընտրոււմ է ժողովրդի կողմից: (Տես Կառավարութեան ձեւ, Պետական դումա, Պետական խորհուրդ, Սանմանադրութիւն, Պարլամենտարիզմ): Միպալատեան պարլամենտի բոլոր անդամները սովորաբար ընտրովի են լինում: (Յունաստան, Սերբիա, Բոլգարիա):

ՊԱՐԼԱՄԵՆՏԱՐԻԶՄ—Կառավարութեան ձև՝ որի ժամանակ պարլամենտն անմիջապէս ազդում է մինիստրներ նշանակելուն և հեռացնելուն, նրանց պատասխանատութեան է ենթարկում և առհասարակ անմիջական հրահրութիւն ունի երկրի կառավարութեան վրայ: (Տես Կառավարութեան ձեւ, Պարլամենտ, Սանմանադրութիւն):

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎՄԳՐՈՒԹԻՒՆ.—տես Ազատովապրութիւն:

ՊԱՐՏԵՐ—Թատրոնական դահլիճի այն մասը՝ որ բռնում է լսժաների (օթեակների) և բեմի միջի տարածութիւնը:

ՊԱՐՏԻԶԱՆ—1) Պարտիզանական խմբի (տես Պարտիզանական կռիւ) ղիււոր: 2) Որևէ կուսակցութեան կողմնակից:

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ԿՌԻՒ—կռիւ՝ որը մղւում է փոքր խումբերով և որի նպատակն է թոյլ ոյժերով պայքարել ուժեղ հակառակորդների դէմ՝ նրա վրայ յանկարծակի

յարձակումներ գործելով և անսպասելի փնտաներ հաս-
ցրնելով:

ՊԱՍԿՎԻԼ—Տպագրւած կամ գրաւոր արտադրութիւն, որ
շօշափում է որևէ մէկի պատիւը:

ՊԱՍՊՕՐՏ—Անցագիր:

ՊԱՍՍԱԺ—Երկու փողոցն իրար հետ կապող ապակեծածկ-
անցք, որի երկու կողմում խանութներ են շինած:

ՊԱՍՍԱԺԻՐ—Ճանապարհորդ, ուղորդ:

ՊԱՍՍԻԻ—1) Կրաւորական, 2) Որևէ անետրական ձեռնար-
կութեան ձախորդ կողմը, պակասը, թերին, որի հա-
կառակն է ակտիւքը, այսինքն՝ ունեցած կարողութիւնը,
կայքը, դրամը:

ՊԱՅԻՆՆՏ—Հիւանդը կոչւում է այն բժշկի պացիենտը, որի
մօտ ինքը բժշկւում է:

ՊԵՒԱՆՏ—Բժախնդիր, մանրակրկիտ մարդ:

ՊԵՒԱՆՏԻԶՄ—Բժախնդրութիւն, մանրակրկիտութիւն:

ՊԵՆՍԻԱ—Կենսաթոշակ:

ՊԵՆՍՆԷ—Ահնոց՝ որն ամրացւում է քթի վրայ:

ՊԵՍՍԻՄԻԶՄ—1) Յոռետեսութիւն, վատատեսութիւն: 2)
Փրկիս. ուսմունք, որն ամբողջ աշխարհը և մարդկային
կեանքը համարում է վատ ու անպէտք (Բուդդիստներ,
Շօպէնհաուէր, Հարտման):

ՊԵՍՍԻՄԻՍ—Յոռետես, վատատես, պեսսիմիզմը դաւանող:
(Տես Պեսսիմիզմ):

ՊԵՏԱԿԱՆ ԱԶՆԻԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՆԿ—տես Բանկ, Ազրա-
բային քաղաքականութիւն:

ՊԵՏԱԿԱՆ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԲԱՆԿ—տես Բանկ:

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿ—տես Բանկ:

ՊԵՏԱԿԱՆ ԲԻԻՋԷ—տես Բիւջէ:

ՊԵՏԵԿԱՆ ԴՈՒՄԱ—Եյսպէս է կոչւում է Ռուսաստանի բար-
ձրագոյն տետական հաստատութիւնը—ժողովրդակազ

ներկայացուցչութիւնը: 1905 թ. օգոստ. 6-ի օրէնքով
 Պետական Դումայի իրաւունքները լայն չէին: Նոյն
 տարւայ հոկտ. 17-ի մանիֆեստով, ղեկտ. 11-ի ուկա-
 ղով և 1906 թ. ապրիլի 23-ի հիմնական օրէնքներով
 Դումայի իրաւունքներն ընդլայնեցին, Դուման իրա-
 ւունք է ստանում մշակելու օրէնքներ, որոնք անցնում
 են Պետական Խորհրդի քննութեանը և Քաղաքացայսեր
 հաստատութեանը: Ըստ վերոյիշեալ հիմնական օրէնքի՝
 ոչ մի օրէնսդրութիւն չի ընդունւում առանց Պետական
 Դումայի հաստատութեանը և ոչ ոք չէ կարող վտխել Դու-
 մայի մասին եղած օրէնքները, բացի իրանից՝ Պետական
 Դումայից (Հիմն. Օր. յօդ. 44 և 45): Դուման մասնակ-
 ցում է պետական բիջէի հաստատութեանը, ունի զապ-
 բոսի իրաւունք: Դումայի անդամների թիւը 412 է, բա-
 ցիլեհաստանի, Կովկասի և Սիբիրի պատգաւորները:
 Դումայի իրաւունքները յետագայում զգալապէս կրճատ-
 ւեցին: Պետական Դուման համարւում է Ռուսաստանում
 ստորին կամ ներքին պալատը: (Տես Պարլամենտ):

ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆԷՔ—Կոչւում է իրաւագիտութեան մի
 ճիւղը, որ որոշ նօրմաների տակ է դնում բոլոր այն
 խնդիրները, որոնք վերաբերւում են պետութեան
 տէրրիտօրիային, ազգաբնակչութեան զանազան խաւերի
 իրաւական դրութեանը և պետական կազմին:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՏՐՕՒ—Ռուսաստանի պետական բարձրագոյն
 հաստատութիւններից մէկը՝ որի պարտականութիւնն
 է, ինչպէս ստում է օրէնքը, հսկել պետական զանազան
 հիմնարկութիւնների կառարած ել և մուտքի կանոնա-
 ւորութեան և օրինակատեթեան վրայ, նաև իր շի-
 տողութիւններն անիլ պետական անտեսութեան
 կամ այն ճիւղի օգտակարութեան վրայ վնասութե-
 թեան վերաբերմամբ: Վերաքննչական արարձրագոյն

ատեանը, որը միաժամանակ վճռում է այդ խնդրին վերաբերեալ բոլոր տարաձայնութիւնները, Պետական կանտորօրի Պորհուրդն է: Ամեն մի նահանգում Պետական Կանտորին ունի իր ճիւղը՝ Կանտորօրնայա պալատա անունով, որը հսկում է պետական դանձարանի տեղական ճիւղերի վրայ, անակնկալ ուզիզիա է կատարում, ստուգում է ծախսի և մուտքի օրինականութիւնը: Կան նահանգներ, որոնք Կանտորնայա Պալատա չունեն, դրանց վրայ հսկում է հարեան նահանգիները: Ամբողջ Անդրկովկասի համար կայ միայն մի պալատ—Քիֆլիսում:

ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԵՐ—Կաղեօննիյ կամ պետական հողեր կոչւում են այն հողերը, որոնք պետութեան սեփականութիւնն են կազմում: Եւր. Ռուսաստանում պետական հողերի քանակը 124 միլ. դես. է, որից 107 միլ. դես. հատինն սնտառ է և 4,176 հազ. դես.՝ մշակութեան համար յարմար: Կովկասում պետական հողերը, որոնք մշակութեան համար յարմար են, համարւում են 2 և կէս միլ. դես.: Ահագին քանակութեամբ պետական հողեր կան Սիրիւում, բայց նրանց ճիշտ քանակը յայտնի չէ:

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ — Ռուսական պարլամենտի վերին պալատն է համարւում: Վերակազմեց 1906 թ. փետրվարի 20-ին: Անդամների կէսը նշանակում է թագաւոր Կայսրը, իսկ միւս կէսն ընտրւում է դասերի կողմից, ըստ որում՝ ազնւականներն ընտրւում են 18 անգամ, վաճառականները՝ 12, հոգևորականները՝ 6, նահանգական ղեմատօյին ժողովները՝ մէկական հողի, Գիտութիւնների Ակադեմիան և համալսարանները՝ 6: Անդամներն ընտրւում են 5 տարով: Պետական Պորհուրդը քննում է Պետական Դումայի ընդունած օրինագծերը և իր կողմից նոր օրէնքներ առաջարկում

Դուժային: Պետական Խորհրդի քննութեանը ենթարկւելուց և ընդունելուց յետոյ՝ օրէնքներն անցնում են Թագաւոր Վասիւր հաստատութեանը:

ՊԵՏԵԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ—Տես Սօցիալիզմ:

ՊԵՏԵԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐ—Տես Սօցիալիզմ:

ՊԵՏԵԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ—Տես Ազգարային քաղաքականութիւն:

ՊԵՏԻՑԻԱ—Հանրական խնդիր, որ տրւում է բարձրագոյն իշխանութեանը: Պետիցիա տալը համարւում է առանձին իրաւունք, որ տրւում է անհատներին կամ հաստատութիւններին, իբրև արտօնութիւն, որովհետև սովորաբար պետիցիայով հարց են բարձրացնում խոշոր բարենորոգութիւնների մասին, որ պէտք է իրագործւեն հերկում: Այսպէս օրինակ՝ Պրուսական և Աւստրիական սահմանադրութեամբ ժողովուրդը չի կարող կօլլեկտիւ, միացած պետիցիա տալ, այլ այդ իրաւունքը վերապահւած է միայն առանձին անհատներին, հաստատութիւններին և իշխանութեան օրգաններին:

ՊԻԱՆԻՆՑ—Դա շնամուր (երաժշտական գործիք):

ՊԻԱՆԻՍ—Դա շնամուր աժող:

ՊԻԷՍ—1) Գրական կամ երաժշտական երկ: 2) Դրամատիքական գրւածք:

ՊԻԿԱՆՏ—1) Սուր, կծու: 2) Գրգռիչ, գրաւիչ, զգացմունքները գրգռող:

ՊԻԿՆԻԿ—Զարճալի դրօսանք, խնճոք՝ դրօսանքի հետ:

ՊԻՐՕԿԱՍԵԼԻՆ—Պայթուցիկ բամբակ, որ պատրաստւում է սովորական բամբակից և ուրիշ բոյսերից, աղօտի թթւութի օգնութեամբ:

ՊԼԵԳԻԱՏ—Գրագործութիւն, գրւածքի, որն է գիւտի, երաժը-

տական, մտաւոր կամ դեղարւեստական արտադրութեան գոյութիւն:

ՊԼԵԳԻԱՏՈՐ—Պլագիատով պարագող: (տես Պլագիատ):

ՊԼԱՆ—1) Շինութեան, տարածութեան ուրւագիծը, հանւած որոշ մաշտարով (տես մաշտաբ) մակարդակով: 2) Որևէ արտադրութեան (վէպի, պատմութեան, դրամատիքական գրւածքի) ծրագիրը: 3) Գործնէութեան եղանակը (պատերազմում, և այլն): 4) Մտադրութիւն, խորհուրդ, դիտաւորութիւն:

ՊԼԱՏՈՆԵԿԱՆ—Հոգեկան, նիւթականից դորս, գաղափարական:

ՊԼԱՏՅՅՈՐՄԱ—Ծրագիր, նախագիծ:

ՊԼԱՅԳՆՐՏ—Տոմսակ՝ երկաթուղու վագոնում յատուկ տեղի համար, որը բռնելու իրաւունքը միայն տոմսակը գրնողինն է:

ՊԼԻԻՍ—Մատեմատիկայում գումարման նշանը (+) կոչւում է պլիւս: Թւերի առաջ պլիւսը դրւում է ցոյց տալու համար, որ նրանք դրական են և ոչ բացասական:

ՊԼՈՒՏՕԿՐԱՏԻՍ—Հարուստների, մեծատունների իշխանութիւն, հարստապետութիւն:

ՊԼՕՄԲ—1) Սրճիճի վրայ հանւած կնիք, որը թելով կապւում է գործարանի ապրանքին, ցոյց տալու համար թէ ում և ո՞ր գործարանում է պատրաստւած ապրանքը: 2) Քարացող նիւթ, որը լցնում են փշացածութեան պատճառով փորւած ատամների մէջ յետագայ փշացումի առաջն առնելու համար:

ՊՈՌՆՕԳՐԱՖԻՍ—Պոռնագրութիւն, նկարագրութիւն պոռնիկների կեանքի, մանրամասն նկարագրութիւն պոռնիկական գործողութիւնների:

ՊՈՌՆՕԿՐԱՏԻՍ—Պոռնապետութիւն, այնպիսի կառավարութիւն, որի ներկայացուցիչը գտնւում է պոռնիկները

ազդեցութեան տակ և նրանց ցուցումներով է կառավարում երկիրը:

ՊՈՒԲԼԻՑԻՍՏ—Հրապարակախօս, դրող, որ զբաղում է հասարակական և ընդհանուր պետական հարցերի պարզարանութեամբ:

ՊՍԵՎԴՈՆԻՄ—Կեղծանուն, ծածկանուն:

ՊՐԵՄԻԷՐ—Առաջին մինիստրը, որ սահմանադրական երկրներում ղեկավարում է բոլոր պետական գործերը և իր ընկեր-մինիստրներին հետ կառավարում երկիրը: (Տես Պարլամենտ):

ՊՐԵՍՏԻժ—Վարկ, պատիւ, անուն, հեղինակութիւն, հմայք:

ՊՐԵՑԷԴԵՆՏ—Դատաստանական պրակտիկայի մէջ պրեցէդենտ կոչւում է գործի այնպիսի վճիռը կամ օրէնքի այնպիսի բացատրութիւնը, որն ապագայում նման դէպքերի համար օրինակ է ծառայում: Առհասարակ, պրեցէդենտ կոչւում է հարցի այնպիսի լուծումը կամ որևէ գործում բռնած այնպիսի ընթացքը, որն ապագայում նման դէպքերում իբր ղեկավարող օրինակ է ծառայում:

ՊՐԷՄԻԱ—Պարգև, նւէր:

ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏ—Յուցակ, որի մէջ նշանակւած են ապրանքների տեսակները և գները:

ՊՐԷՖԵՐԱՆՍ—Թղթախաղի մի ձևը:

ՊՐԻՋ— 1) Վարձատրութիւն, պարգև, ընծայ, 2) Աւար վերցրած նաւ, աւար:

ՊՐԻՆՅ—Արքայորդի:

ՊՐԻՆՑԻՊ—Սկզբունք, հիմնական դրութիւն, ղեկավարող գաղափար:

ՊՐԻՎԱՏ-ԴՕՅԵՆՏ—Դիտնական, որն արդէն դասախօսում է համալսարանում, բայց պրօֆէսսօրի կոչումը դեռ ևս չէ ստացել:

ՊՐՕՔԼԵՄ—Հարց, խնդիր, առեղծւած. չը լուծւած հարց՝
դիտութեան որևէ ճիւղում:

ՊՐՕՔԼԵՄԱՏԻՔ—Առեղծւածային, կասկածելի, մութ, վի-
ճելի:

ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱ—Գալոց, որն ունի գիժնազիական 4 կամ
6 դասարան:

ՊՐՕԳՐԵՍՍ—Յառաջադիմութիւն:

ՊՐՕԳՐԵՍՍԻՍ—Յառաջադիմական:

ՊՐՕԳՐԵՍՍԻՒ ՏՈՒՐՔ—Աստիճանաբար բարձրացող տուրք:
Որքան մի մարդու եկամուտը մեծ է, այնքան նրա
վճարած տուրքն աւելանում է. այսպէս, եթէ տարե-
կան 1000 ու. եկամուտ ունեցողը վճարում է 1⁰/₁₀₀, այ-
սինքն՝ 10 ու. տուրք, 10000 ու. եկամուտ ունեցողը
վճարում է ո՛չ թէ 1⁰/₁₀₀ (100 ուրլի,) այլ օրինակ՝ 3⁰/₁₀₀
(300 ու.), 20,000 ու. եկամուտ ունեցողը՝ 5⁰/₁₀₀ (1000 ու.)
և այդպիսով՝ եկամուտի հետ աճում է և տուրքի տո-
կոսը: Իսկ որոշ չափից պակաս եկամուտ ունեցողը, օ-
րինակ՝ տարեկան 100 ու., ամենևին տուրք չի վճա-
րում: Տուրքերի բաշխման այս եղանակը ամենաար-
դարն է համարուում:

ՊՐՕԶԱ—Մովորաբար պրօզա ասում են արձակ գրածքին,
սակայն դա ճիշտ հասկացողութիւն չէ: Պրօզան մտա-
ծողութեան ու խօսքի այն ձևն է, որ հակառակ է պօ-
էզիային: Պրօզայի էութիւնը կայանում է նրանում,
որ պարզում է փաստերի և հասկացողութիւնների յա-
րաբերութիւնը և ներկայացնում է նրանց օրինակաբար
կապը վերացական ֆօրմուլի ձևով: Պրօզա տերմինի
ձևական հասկացողութիւնը, որով պրօզա համարուում
է ամեն մի արտադրութիւն, որ չափարեքական ձևով
չէ գրւած—չի կարող գիտական բացատրութիւն հա-
մարուել, որովհետև շատ ոտանաւորներ կան, որոնք ի-

րապէս պրօզա են և ընդհակառակը, շատ արձակ գրք-
ւածքներ բանաստեղծութիւն-պօէզիա են: Պրօզան լի-
նում է՝ պատմութիւն, ճառ, նկարագրութիւն, դատու-
ղութիւն: (Տես Պօեզիա):

ՊՐՕԶԱԻԿ—Պրօզայով գրող: Ոչ-բանաստեղծական: Սովորա-
կան, առօրեայ: (Տես Պրօզա, Պօեզիա):

ՊՐՕՋԿՏ—Ծրագիր, նախագիծ:

ՊՐՕԼԵՏԱՐ--Տես Պրօլետարիատ:

ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏ—Կոչուում է քաղաքականապէս և քաղաքա-
ցիօրէն ազատ մարդոց, պրօլետարների դասակարգը,
որը զուրկ է սեփականութիւնից և արտադրութեան
միջոցներից և ստիպւած է իր գոյութիւնը պահպանե-
լու համար ծախել իր ֆիզիքական ոյժը՝ իբրև բանւոր:
(Տես Լուսնային-պրօլետարիատ):

ՊՐՕԼԵՏԱՐԻԶՄԻԱ—Ժողովրդական լայն մասսաների սե-
փականութիւնից և արտադրութեան միջոցներից զր-
կըւելը և վարձկան բանւոր դառնալը: Պրօլետարիզա-
ցիան արդիւնագործութեան կապիտալիստական ձևի
հետևանքն է: Կապիտալիստների փոխադարձ մրցումը
և արդիւնագործութեան միջոցների ու տեխնիկայի
կատարելագործումը, արդիւնագործական կրիզիսները
—ահա դրանք են այն երևոյթները, որ բազմաթիւ
մանր սեփականատէրերի պրօլետար են դարձնում:
(Տես Պրօլետար, Կապիտալիզմ):

ՊՐՕԿԼԵՄԵՆՏԻԱ—Թոուցիկ թերթ, կոչ:

ՊՐՕԿՈՒՐՍՐ—Դատախազ, պաշտօնեայ, որի պարտականու-
թիւնն է պաշտպանել օրէնքը:

ՊՐՕՊԱԳԱՆԴ—Քարոզ, քարոզչութիւն, պրօպագանդ անել—
քարոզել, տարածել որևէ գաղափար: (Տես Ազգիտացիա):

ՊՐՕՊԵԳԱՆԴԻՍՏ—Քարոզիչ, պրօպագանդով պարապող: (Տես
Պրօպագանդ):

ՊՐՕՊՕՐՑԻՕՆԱԼ ԵՆՐԿԱՅԱՅՈՒՅՁՈՒԹԻՒՆ — Ժողովրդական ներկայացուցչութեան այնպիսի ձև, որի ժամանակ պարլամենտի մէջ կարող են ներկայացուցչութիւն ունենալ երկրի բոլոր՝ շատ թէ քիչ տէքի ընկնող ազգերը, քաղաքական հոսանքներն ու կուսակցութիւնները՝ իրանց կողմնակիցների թիւի համեմատ: Պրօպօրցիօնալ ընտրութեան մի քանի ձևեր կան:

ՊՐՕՍՊԵԿՏ—1) Պողոտայ, երկար, լայն և ուղիղ փողոց:
2) Ծրագիր, թռուցիկ ակնարկ:

ՊՐՕՍՏԻՏՈՒՏԿԱ—Պոռնիկ կին,

ՊՐՕՍՏԻՏՈՒՑԻԱ—Պոռնկութիւն:

ՊՐՕՎԻԴԵՆՑԻԱԼԻԶՄ նախախնամականութիւն. պատմա-փիլիսոփայական ուղղութիւն, որը պատմական երևոյթները բացատրում է նախախնամութեան անմիջական մասնակցութեամբ: Գլխաւոր ներկայացուցիչներն են՝ Բօսսիէտ, Հեգել, Լօրան:

ՊՐՕՎԻԶՕՐ — Դեղագործական գիտութիւնները սովորած անձ, որն իրաւունք ունի դեղատուն պահելու: Պրօվիզօրի կոչումը տրւում է որոշ պատրաստութիւնից և քննութիւնից յետոյ:

ՊՐՕՎՅԱՅԻԱ—Գրգռում:

ՊՐՕՏԵԿՏՐ—Հովանաւոր, պաշտպան:

ՊՐՕՏԵԿՏՐԱՏ—Հովանաւորութիւն, գերիշխանութիւն:

ՊՐՕՏԵԿՑԻԱ—Հովանաւորութիւն, պաշտպանութիւն:

ՊՏՕՏԵԿՑԻՕՆԻԶՄ—Հովանաւորութեան սիստեմ. կառավարութիւնն իր երկրում արդիւնագործութեան որևէ ճիւղը զարգացնելու համար դրսից բերւած այդ ճիւղի ապրանքների վրայ խոշոր մաքս է դնում, կամ իր երկրից արտահանող հում նիւթերի վրայ է մաքս դնում՝ որպէսզի տեղացի արդիւնագործներն աւելի հեշտութիւն ունենան հում նիւթերն էժան ձեռք բերելու և մշակելու: Կառավարութեան այդ քաղաքականութիւնը

կոչուում է պրօտեկցիօնիզմ: (Տես Բաղարատնութեան-
րիւն):

ՊՐՕՏԵԿՑԻՅՆԻՍ—Պրօտեկցիօնիզմի կողմնակից:

ՊՐՕՏԵՍՏԱՆՏԻԶՄ—Բողոքականութիւն:

ՊՐՕՏՕԿՕԼ—Արձանագրութիւն:

ՊՐՕՐԵԿՏՕՐ—Ռէկտօրի (համալսարանի տեսչի) օգնականը:

ՊՐՕՅԵՆՏ—Տոկոս, շահ:

ՊՐՕՅԵՍՍ—Ընթացք, գործողութիւն:

ՊՐՕՅԱՆ—Անտեղեակ մարդ, տգէտ, անծանօթ:

ՊՐՕՅԱՆԱՅԻԱ—Տգիտութիւնից առաջ եկած անպատկառ,
թեթե վերաբերմունք՝ դէպի որեւէ գաղափար, դէպք,
առարկայ և աւհասարակ՝ բարձր բան:

ՊՐՕՅԵՍՍԻ Կ—Արհեստ, մասնագիտութիւն, պաշտօն, մշտա-
կան զբաղմունք, գործ:

ՊՐՕՅԵՍՍԻՕՆԱԼ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ—Տես Բաներական միու-
րիւններ:

ՊՐՕՅԵՍՍՕՐ—Ուսուցչապետ. գիտական կոչում, որ ունեն
բարձրագոյն դպրոցների դասատուները:

ՊՕԶԻՏԻՒԶՄ—Փիլիս. ուսմունք, որը ճշմարիտ գիտութեան
միակ միջոցը և աղբիւրը համարում է փորձով տեսած
փաստերը, իսկ գիտութեան միակ առարկան՝ երևոյթ-
ները և նրանց կանոնաւոր, որոշ օրէնքով իրար յա-
ջորդող կապը: Պօզիտիւ (գրական) փիլիսոփայութեան
դերը պէտք է կայանայ նրանում, որ նա միացնէ բո-
լոր բնական գիտութիւնների արդիւնքը և տայ նրանց
ամբողջական պատկերը: Այդ ուղղութեան հիմնադիրը
Օգիլստ Կօնտն է: (Տես Փիլիսոփայութիւն):

ՊՕԷԻԱ—Բանաստեղծութիւն, արւեստի մի ճիւղը, որի
նիւթն ու միջոցը հանդիսանում է խօսքը, իսկ էութե-
թիւնը՝ պատկերաւոր մտածողութիւնը — բառերով
(մինչդեռ պրօզան մտածողութիւնն է՝ արստրակցիանս-

րով, սիստեմներով ու ֆորմուլներով): Պօէտիկական (բանաստեղծական) պատկերները վերարտադրութիւնն են կօնկրէտ, եզակի դէպքի, որը մի շարք երևոյթների սիմվօլն է հանդիսանում:

ՊՕԷԶԻԱ— Բանաստեղծութիւն, ստեղծագործութիւն:

ՊՕԷՏ— Բանաստեղծ, ստեղծագործող:

ՊՕԷՏԻԿԱ— Տես Մատենագրութիւն:

ՊՕԼԵՄԻԿԱ— Բանակուր:

ՊՕԼԻԹԷԻԶՄ— Բազմաստուածութիւն:

ՊՕԼԻԹԷԻՍՏ— Մի քանի աստուած ընդունող, բազմաստուածութեան կողմնակից:

ՊՕԼԻՏԵԽՆԻԿ— Բազմարեւստեան դպրոցն աւարտած մարդ:

ՊՕԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ— Բազմարեւստեան դպրոց:

ՊՕԼԻՄ— Ապահովագրութեան վկայական:

ՊՕԼԻՄԷՆ— Ոստիկանական ստորին աստիճանաւոր, գաւազամօյ:

ՊՕԼԻՏԻԿԱ— Քաղաքականութիւն:

ՊՕԼԻՏԻԿՈՍ— Քաղաքագէտ:

ՊՕՊՈՒԼԵՆՏԻԶՄ ՏՕՐ— Ժողովրդականացնող, գիտութիւնը ժողովրդի լայն խաւերին մատչելի, հասկանալի դարձնող:

ՊՕՍՈՒԼԱՏ— 1) Պահանջ: 2) Բառ՝ որով գիտութեան և փիլիսոփայութեան մէջ նշանակում են այնքան հաւանական դրութիւնները, որոնք առանց խիստ ապացոյցների ընդունում են ճշմարտութեան տեղ թէև նրանք սքոփօմաների չափ բացայայտ ու հասկանալի չեն:

ՊՕՐՏՎԷՅՆ— Պօրտուգալիայի գինի, որ յայտնի է իբրև ամենաթուր գինիներից մէկը:

ՊՕՐՏՕ-ՖԻԱԼԿՅՕ— Նաւահանգիստ, ուր օտարերկրեայ արքանքները մուտք են գործում առանց մաքսի: Նաւահանգիստը Պօրտօ-Ֆրանկօ է յայտարարուում իրացառիկ դէպքերում— սովի և ժանդարների ժամանակ, սխտերապ:

մից յետոյ, որպէսզի օտար առևտրականները մուտք գործելով, ազգաբնակութեանը մթերքներ հասցնեն և ծաղկեցնեն երկիրը:

ՊՕՐՏՖԷՅԼ—1) Թղթակալ, պայուսակ՝ թղթերի և նամակների համար: 2) Խմբագրական պօրտֆէյլ կոչուում են բոլոր ձեռագիրները միասին, որ յանձնուած են խմբագրութեանը՝ տպելու համար: 3) Մինիստրական պօրտֆէյլ—մինիստրական պաշտօն՝ սահմանադրական երկրներում:



ՋԵՆՏԼՄԷՆ—Չարգացած և շնորհալի մարդ:

ՋԵՆՏՐԻ—Անգլիայի մանրագն. աղանները:

ՋՕՆ-ԲՈՒԼ—Տիպիկ անգլիացի:



ՌԱԲԲԻ—Հրէական բառ, որ նշանակում է սուսցիչ: Վարդապետ:

ՌԱԴԻԿԱԼ—1) Ռադիկալիզմի կողմնակից: 2) Հիմնական, արմատական:

ՌԵԴԻԿԵԼԻՉՄ — Արմատականութիւն, մտածողութեան և գործողութեան եղանակ, որն աշխատում է պաշտպանել իր համոզմունքները և գործել ամենայն հետևողականութեամբ, առանց որևէ զիջում անելու և համակերպուելու շրջապատին: Ռադիկալիզմի հակառակ ուղղութիւնն է՝ օպպօրտիւնիզմը: (Տես Օպպօրտիւնիզմ):

ՌԱՄԱՋԱՆ—Կոչուում է մահմեդականների պատը, որը տեւում է նրանց տարւայ ամբողջ 9-րդ ամիսը:

ՌԵՄԿԵՊԵՏՈՒԹԻՒՆ—Ցես Կառավարութեան ձեռ:

ՌԵՄԿԵՎԵՐՈՒԹԻՒՆ—Տես Կառավարութեան ձեռ:

ԲԱՄԿԱՎԱՐ-ՍԸՀՄԵՆԵՂԵԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ.—ՏԵՍ Քաղաքական կուսակցութիւններ, Կառավարութեան ձեռնարկներ—Շրջան:

ԲԱՆԴԷՂՈՒ—Տեսակցութիւն:

ԲԱՊՕՐՏ—Ձեկուցում, ստորագրեալ անձի զեկուցումն իր իշխանութեանը:

ԲԱՍԱ—Ցեղ: Բլիւմենբախն ամբողջ մարդկութիւնը բաժանում է հինգ ռասայի. 1) Կովկասեան ռասա՝ սլաւոններ, սեմիտներ, հնդեւրոպացիներ, 2) Մոնղոլեան ռասա (Ասիայի բնիկները), 3) Էֆիօպների ռասա (միջին և հարաւային Աֆրիկայի բնիկները), 4) Ամերիկական ռասա (Ամերիկայի կարմրամորթ բնիկները) և 5) Մալայեան ռասա (Աւստրալիայի և Արևելեան Հնդկական կղզիների բնակիչները):

ԲԱՅԻՕՆԱԼ—Այն, որ հակառակ չէ մարդկային բնականութեանը և խելքին, խելացի, ճշմարիտ, գիտութեան համապատասխան,

ԲԱՅԻՕՆԱԼԻԶՄ—1) Փիլիսոփայական ուղղութիւն՝ XVI և XVII-րդ դարերում: Հիմնադիրն է Դեկարտը, ապա Սպինոզան և Լէյբնիցը: Ռացիօնալիզմի հիմնական հայեցակէտն այն էր, որ բոլոր ոէալ կապերն ու յարաբերութիւնները (այսինքն՝ այն կապերն ու յարաբերութիւնները, որ գոյութիւն ունեն իրանց, առարկաների միջև) նոյնացնում է տրամաբանական կապերի հետ, որոնք արդիւնք են մեր խելքին (բնականութեանը), այդ իսկ պատճառով՝ գիտութիւն ձեռք բերելու գործում փորձին երկրորդական նշանակութիւն է տրուում, իսկ գլխաւոր մետօգը համարուում է երկրաչափականը, այսինքն՝ արդէն ինքնըստինքեան հասկանալի ճշմարտութիւններէք եզրակացութիւններ հանելը: Ռացիօնալիզմին յատկանիշ է նաև սուբստան-

ցիօնալ մօնիդմբ (տես սուբստանցիա և մօնիզմ) և ճրգ-տումբ՝ բոլոր որակական տարբերութիւնները քանակական համարել: Ռացիօնալիզմի հակառակ ուղղութիւնն է եմպիրիզմը (Տես էմպիրիզմ): 2) Աստուածաբանական ռացիօնալիզմ կոչուում է կրօնի մէջ այն ուղղութիւնը, որ գլխաւոր նշանակութիւնը տալիս է ոչ թէ աստուածային ներշնչմանը, այլ մարդկային բանականութեանը, որին ոչ միայն թոյլատրուում է, այլ որից պահանջուում է՝ քննադատաբար վերաբերել ներշնչմանը: Հակառակ ուղղութիւնն է՝ սուպրանատուրալիզմը: 3) Մասնաւորապէս՝ ռացիօնալիզմ է կոչուում բողոքական—գերմանական աստուածաբանութեան այն ուղղութիւնը, որ սկիզբ է առել (XVIII-րդ) ս. Գրքի քննադատութեան ուսումնասիրութեամբ:

ՌԱՅԻՕՆԱԼԻՍՏ—Ռացիօնալիզմի կողմնակից (Տես Ռացիօնալիզմ):

ՌԷԼԼ—Իրական.

ՌԷԼԼ ՌԻՆԻՍ—Տես Ռեցիա:

ՌԷԼԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Ռէալ քաղաքականութիւնը կարելի է հասկանալ երկու տեսակ. 1) Քաղաքականութիւն, որը հիմնւած է պատմական փաստերի և իրականութեան խիստ ուսումնասիրութեան վրայ, որն իր իրէալներն ու նրանց հասնելու միջոցներն ընտրելիս՝ հետևում է պատմական անհրճելի օրէնքների ցուցումներին: Այսպիսի քաղաքականութեան ժամանակ հնարաւոր են սխալներն ու պարտութիւնները, որովհետև մարդուց մեծ պարտաստութիւն է պահանջում պատմական իրականութեան խորքերը թափանցելը և նրանից կղրակացութիւններ հանելը: 2) Երկրորդ տեսակի քաղաքականութիւնը, որ սովորաբար աւելի յաճախ է կոչուում

ուիայ բաղաբախականութիւն—այն է՝ որ անմիջական նըպատակները է հետապնդում և աշխատում է որքան հնարաւոր է շատ նւաճումներ անել ներկայումս, զոհ բերելով այդ ժամանակաւոր ու թեթեւ յաղթութիւններին հիմնական սկզբունքներն ու իղէալները: Որքան հնար է՝ թեթեւ կռիւ, պակաս զոհեր և անմիջական շատ յաղթութիւններ—այդ է երկրորդ տեսակի ուշալքադաքականութեան ձգտումը:

ՌէԱԱԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐ—Ռուսաստանում միջնակարգ զըպրոցներ, որտեղ աւանդում են գլխաւորապէս բնական գիտութիւններ, մաթեմատիկա, նոր լեզուներ, որպէս զի աւարտողները կարողանան պիտանի լինել գործնական կեանքում:

ՌէԱԼԻԶՄՅԻՄ—1) Իրագործումն, իրականացումը: 2) Կայքը առձեռն դրամի փոխանակելը:

ՌէԱԼԻԶՄ—1) Փիլիսոփայութեան մէջ ուղղութիւն է, որ հակառակ է իղէալիզմին (տես Իղեալիզմ), ընդունում է արտաքին աշխարհի գոյութիւնը, անկախ մարդկային բանական սուբիէկտի գիտակցութիւնից: 2) Գրականութեան և արւեստի մէջ ուշալիստական ուղղութիւնն այն է, որ ձգտում է պատկերացնել իրակա նութիւնն ամենայն ճշտութեամբ, առանց նրան լրացնելու իղէալական զծերով, ինչպէս անում է իղէալիստական ուղղութիւնը: Գործնական կեանքում ուշալիզմը հակադրում է ակադէմիական բուտինային (աւանդամոլութեանը), պայմանական շինծուութեանը, պատրաստի գրական ձևերի հետևողութեանը, որոնց բոլորի դէմ կուում է ռացիօնալիզմը յանուն բնականութեան, ճշմարտութեան և պարզութեան, որ արդիւնք են բնութեան մէջ կատարւած գիտողութիւնների: Ամեն մի գրական նոր շիջլա կուում է հնի դէմ յանուն

այդ իսկ բնականութեան, ուստի և ուէալիզմի պատմութիւնն անել՝ կնշանակէ տալ գեղարւեստի պատմութիւնը: 3) Շատ անգամ ուէալիզմ բառով արտայայտուած է նկարիչների և հեղինակների ձգտումը. իրանց ստեղծագործութիւնների սիւժետն ընտրել առօրեայ շրջապատից, սովորական մարդկանց կեանքից և բնութեան պատկերներից, սուանց գեղեցկացնելու կամ որևէ բան աւելացնելու:

ՌէԱԼԻՍՏ—Ռէալիզմի կողմնակից: (Տես Ռեալիզմ):

ՌէԱԿՅԻԱ—Յետադարձ շարժում, հակառակ շարժում:

ՌէԱԿՅԻՕՆԷՐ Յետագէժ մարդ, յառաջադիմութեան թշնամի:

ՌէԳԻԷՍ—Յետադիմութիւն, անկումն, յետադարձ ընթացք:

ՌէԶԻԴԷՆՅԻԱ—Պաշտօնատեղ, քաղաք, որտեղ ապրում է բարձրաստիճան պաշտօնեան:

ՌէԶԻԻՄԷ—Նմոտփում:

ՌէՉՕԼԻԻՅԻՍ—Բանաձև, վճիռ, եզրակացութիւն:

ՌէժԻՄ—1) Կառավարութեան ձև, պետական ընդհանուր կարգ: 2) Հիւանդի համար բժշկի որոշած կարգերը: 3) Ապրուստի, նիստ ու կացի ձև, կարգ:

ՌէժԻՍՍՅՕՐ—Թատրոնական բեմի կառավարիչ, անձ, որը հետևում է ներկայացման կանոնաւորութեանը, գերերի լաւ կատարելուն, բեմի կարգ ու սարքին և դեկավարում է դերասաններին:

ՌէԿԼԱՄ—Յայտարարութիւն, որի նպատակն է ամեն կերպ աշխատել ուշադրութիւն գրաւել դէպի ուէկլամի առարկան, ուստի և դիմում են զանազան միջոցների ու ձևերի. յայտարարութիւնը տպում են գունաւոր պատկերներով, շրջեցնում են ձիւրով, խայտաճամուկ հագուստ հագած մարդկանց ձեռքով, դիմում են ելեքտրական լոյսի օգնութեանը և այլն, և այլն: Ռէկլամի ամենից շատ զարգացած է Ամերիկայում:

ՌէԿՏՐ—Տեսուչ:

ՌէՄՕՆՏ—կարկատան, նորոգութիւն, վերանորոգութիւն:

ՌէՅԽՄՏԱԳ—Տես Պարլամենտ:

ՌէՅԽՄՐԱՏ—Տես Պարլամենտ:

ՌէՆԵԳԱՏ—Հաւատափոխ, հաւատուրաց, իր համոզմունքներին դաւաճանած մարդ:

ՌէՆԵՍՍԱՆՍ—Նշանակում է վերածնութիւն: 1) Ռէնեսսանսի (վերածնութեան) դար կոչւում է XV-րդ դարի ըսկըզրից մինչև XVI-րդ դարի վերջը, երբ Իտալիայից սկսելով ամեն տեղ տարածւեց հին կլասիքական (յունական և հռոմէական) գիտութիւնը, գեղարւեստը, գրականութիւն ուսումնասիրելու և նրանց հետեւելու ձգտումը, որի հետեանքն եղաւ միջնադարեան կաստայական և համքարական կազմի տապալումը և անհատի ազատութեան գաղափարի տիրապետութիւնը: Այդ ուղղութիւնն արտայայտեց թէ գիտութեան, թէ գրականութեան և թէ հասարակական կեանքի մէջ: (Տես Հումանիզմ):

ՌէՆՏԱ—Մշտական եկամուտ, արդիւնք, որ ստանում է ձեռնարկողն իր աշխատանքի և կապիտալի օգուտից դուրս: 2) Պետական փոխառութեան մի ձևն է, որի համար պետութիւնը որոշ տոկոս է վճարում, առանց որոշելու, թէ երբ պէտք է վերջնականապէս հատուցանէ իր փոխառութիւնը: Ռուսաստանում այդ տեսակի 4⁰/₀-եան ունտան հաստատուել է 1894 թւին:

ՌէՊէՐՏՈՒԱՐ—Պիէսների ցուցակ, որոնք պէտք է խաղացւեն որոշ ժամանակամիջոցում:

ՌէՊՏԻԼԻՆ—Ստորաքարշ սողուն:

ՌէՊՏԻԼ ՖՕՆԴ—Յատուկ դրամագլուխ, որ պետութիւնները յատկացնում են լրագիրները կաշառելու: Առաջին անգամ ուստիլ Ֆոնդ կազմեց Բիսմարկը: (Տես Ֆոնդ):

ՌէՊՐԵՍՍԻԻԻ—Բանի, ճնշողական:

ՌէՍԿՐԻՊՏ—Արքայական գրութիւն:

ՌէՍՍՈՒՐՍ—Նիւթականի աղբիւր, նպաստի միջոց:

ՌէՍՏԱՎՐԱՅԻՆ—Վերահաստատութիւն, վերանորոգութիւն:

ՌէՍՏՐԱՆ—Պանդոկ:

ՌէՏՐՕԳՐԱԿ—Յետադէմ մարդ, սևահոգի, յառաջադիմութեան թշնամի:

ՌէՎԱՆՇ—Վրէժխնդրութիւն, հատուցում, բաւարարութիւն, փոխադարձ հատուցում:

ՌէՎԻԶԻՏՈՆԻԶՄ—Վերաքննականութիւն: Եւրոպական սօցիալ-դեմոկրատիայի և յատկապէս գերմանական սօցիալ-դեմոկրատիայի այն ուղղութիւնն է, որը պահանջում է Մարքսի և Էնգէլսի հիմնաւորած գիտական սօցիալիզմի (տես Սօցիալիզմ) վերաքննութիւնը, որովհետև ներկայումս շատ բան Մարքսի և Էնգէլսի ժամանակից փոխւած է: Պէտք է փոփոխութիւն մտցնել թէ՛ ծրագրի և թէ՛ տակտիկայի մէջ (տես Տակտիկա): ՌէՎիզիոնիզմը զիջողաբար է վերաբերում դէպի գոյութիւն ունեցող կարգերը, ընդունում է գործունէութեան խաղաղ և աստիճանական ձևը (ոչ Ֆօրմներ), հակառակ յեղափոխական ձևին: ՌէՎիզիոնիզմն ընդունում է ոչ թէ պայքար ժամանակակից բուրժուական կարգերի դէմ, այլ համերաշխ գործակցութիւն բուրժուական կուսակցութիւնների հետ, աստիճանական բարեփոխութիւններ մտցնելու համար: ՌէՎիզիոնիզմի գլխաւոր ներկայացուցիչներն են. Գերմանիայում՝ Բէրնշտէյնը, Ֆօլմարը, Դաւիդը և ուրիշները, Ֆրանսիայում՝ Ժօրէսը, Բէլգիայում՝ Վանդերվելդը, Աւստրիայում՝ Ադլերը:

ՌէՎԻԶՕՐ—Վերաքննիչ:

ՌէՎՕԼՒԻՅԻԱ—Տես Յեղափոխութիւն:

ՌէՑէնԶԻՆ—Քննադատութիւն, բանադատութիւն, գնահատութիւն:

ՌէՑէնԶէնՏ—Քննադատ, բանադատ:

ՌէՑէՊՏ—Դեղատոմս, ցուցում որևէ բան պատրաստելու (կերակուր, դեղ, և այլն):

ՌէՑէՐԱՏ—Չեկուցում, բացատրութիւն որևէ գիտական նութի կամ որևէ հարցի մասին:

ՌէՑէՐէնԴՈՒՄ—Օրէնքների հաստատութիւն ժողովրդական ընդհանուր քննարկութեամբ: ՌէՑէրէնդումը ժողովրդապետութեան (առավարութեան, առկապետութեան, դեմօկրատիայի) մի ձևն է: ՌէՑէրէնդումը լինում է պարտաւորական և ֆակուլտատիւ (հնարաւոր, պայմանական): Պարտաւորական կոչում է ուէՑէրէնդումն այն ժամանակ, երբ որոշ հարցեր վճռելու իրաւունքը վերապահած է միայն իրան՝ ժողովրդին, ինչպէս՝ օրինակ՝ սահմանադրութիւնը փոփոխելու հարցը: Ֆակուլտատիւ կոչում է ուէՑէրէնդումը երբ որոշ օրէնք արդէն ընդունել է երկրի օրէնադիր մարմինը, բայց այդ օրէնքը չի իրագործում մինչև որ ուէՑէրէնդումի միջոցով չի ստացւում քաղաքացիների ձայների որոշ թիւը: ՌէՑէրէնդումն իր գործադրութեամբ լինում է. 1) Սահմանադրական (երբ հարցը վերաբերում է սահմանադրութիւնը փոփոխելուն), 2) Օրէնսդրական (երբ հարցը զանազան օրէնքների մասին է) և 3) Բիւջետային (երբ ժողովրդի ձայնատուութիւնը վերաբերում է պետութեան բիւջէին): Ամենից լայն շահերով ուէՑէրէնդում գործադրում է Շվէյցարիայում և Հիւսիս-Ամերիկայի Միացեալ-Նահանգներում: (Տես Դեմօկրատիա):

ՌէՑՐՄ—Բարեփոխութիւն:

ՌէՑՐՄԱՏ ԵՎԵՂԵՑԻ—Հիմնեցին Մ. Լիւթերի հետևողները—

Տվինգլին և Կալւինը Շվէյցարիայում: Ընդունում է արտաքին պարզութիւն, եպիսկոպոսութեան վերացումն, հաղորդութիւնը՝ հոգու, հաւատի միջոցով և ոչ Քրիստոսի մարմնով և այլն, և այլն:

Ռէֆորմատիւս—Բարեփոխիչ:

Ռէֆորմատիւս—XVI-րդ դարի կրօնական շարժումը, որը նպատակն էր քանդել կեանքի միջնադարեան ձևերը և բարեփոխութիւններ մտցնել գլխաւորապէս կրօնական ասպարէզում: Այդ շարժման արդիւնքն եղաւ քրիստոնէական մի նոր դաւանանք՝ բողոքականութիւնը (տես Պրօտէստանտիզմ) իր երկու ճիւղերով (լիւթերականութիւնը և ռէֆորմատ եկեղեցին): Այս շարժումն առաջ եկաւ շնորհիւ տիրող կարգերի, երբ Հռօմի պապը՝ առանց միջոցների մէջ խտրութիւն դնելու՝ փող էր կորզում ժողովրդից, բռնանում էր նրա վրայ. երբ Ֆէօդալիզմի (տես Ֆեօդալիզմ) ճնշումներէ տակ ժողովրդի լայն խաւերում տիրում էր ընդհանուր դժգոհութիւն և, վերջապէս, երբ մի շարք մեծ գիւտեր արեցին, որոնք նպաստեցին քննադատական մտքի զարգացմանը: Ռէֆորմատ շարժման գլուխը կանգնած էր ըսկզբում Մ. Լիւթերը և ապա նրա աշակերտները:

Ռիթմ—Յանգ, ոտ:

Ռոմիտիւս կամ **Ռոմիտիւս**—Սովորոյթ, որ ձեռք է բերում յաճախակի վարժութեամբ, առանց հասկանալու և գիտակցաբար ըմբռնելու իր արածը:

Ռոմիտիւս—Հնամուլ, աւանդամուլ:

Ռոմիտ—Արևել.-Հնդկ. դրամ=80 կոպ.:

Ռօպիտ—Ոչխարի պանրի մի տեսակը, որ խիտ սուր համունի:

Ռօպանակ ժողովրդիչներ—Կոչւում են արևմտեան և հարաւային Եւրօպայի բնակիչները, որ միկնոյն ծա-

գումն ունեն, այն է՝ ֆրանսացիք, սպանացիք, փորթոգալացիք, իտալացիք, ռումինացիք:

ՌՕՄԱՆԻՍ—1) Վիպագրող: 2) Ռօմանական լեզուներն ու պատմութիւններն ուսումնասիրող մարդ:

ՌՕՄԵՆՍ—1) Դիւցազներգական (էպիքական) արտադրութիւն, որի մէջ գերակշռում է լիբրօմը (տես Լիբրօմ) հակառակ բալլադային, որտեղ գերակշռում է դրամատիկօմը: 2) Լիբրօական երգ՝ սիրային բովանդակութեամբ:

ՌՕՄԱՆՏԻԶՄ—Գեղարեստի մէջ ուղղութիւն, որը յանուն ստեղծագործութեան ազատութեան և անկեղծ ոգևորութեան, քանդում է գոյութիւն ունեցող ձևերը (հակառակ կլասսիցիզմին): Բնորոշ գծերն են՝ ծայրահեղ սուբիէկտիւիզմ (տես Սուբիէկտիւիզմ), զժգոհութիւն ներկայից և անբաւարարութիւն երկրային բոլոր շնորհներից, ձգտում դէպի վսեմը, բարձրը, սքանչելին, գերբնականը, խորհրդաւորը, սէր դէպի պարզութիւնը: Գրականութեան մէջ ուսմանտիկներն են. Գերմանիայում՝ Ժան-Պօլ-Ռիխտէրը, Շլէգէլ հղբայրները, Տիքը և ուրիշները, Անգլիայում՝ Վօրդսվօրտը, Բայրընը, Ֆրանսիայում՝ Շատոբրիանը, տիկ. Ստալը, Հիօֆօն, Ռուսաստանում՝ Ժուկովսկին:

ՌՕՄԱՆՏԻԿ—Ռօմանտիզմի հետևորդ, կողմնակից:

ՌՕՅԵԱԼ—Դաշնամուր:

ՌՕՅԱԼԻՍՏՆԵՐ—Թագաւորի անսահման իշխանութեան կողմնակիցներ: Ֆրանսիայում ուսուցիչները պաշտպանում էին Բուրբօններին: (Տես Լեգիտիմիզմ):

Ս

ՍԱԴԻԶՄ—Պոսիկապրական հեղինակ մարկիզ Սադ-Դօնասիէն Ալֆօնս—Ֆրանսուայի (1740—1814) անունից: Սադիզմ

անգլթութեան, վայրագութեան և զգայնութեան միացումը, սեռական յարաբերութիւնների ժամանակ, երբ մասնակցողներէց մէկը խոշոր բաւականութիւն է ըստանում, ֆիզիքական ցաւ պատճառելով միւսին: Ընթր Սաղը սողմակաւ ախաի (տես Սողմակաւ ախա) և նման ոճիրների համար բազմաթիւ անգամ դատի է ենթարկուել և մահուան դատապարտուել, բայց ներումն ստանալով բանտարկուել է Բաստիլիայում:

ՍԱԼԻԻՏ—Ողջոյն՝ թնդանօթաձգութեամբ:

ՍԱԼՏՕ—ՄՕՐՏԱԼ — Կեանքի համար վտանգաւոր թռիչք, ճարպիկ թռիչք, խաղ:

ՍԵԼՕՆ—1) Հիւրասենեակ: 2) Քաղաքական և զբաղան գործիչների ժողովատեղի: 3) Տարեկան գեղարուեստական ցուցահանդէս Փարիզում:

ՍԵԿՎՅՅԵ—Ճանապարհորդական պայուսակ:

ՍԵՀՄԵՆԱԴԻՐ-ՌԱՄԿԱՎԵՐ ԿՈՒՍԵԿՑՈՒԹԻԻՆ—Տես Կառուավարութեան ձեւ, Քաղաքական կուսակցութիւններ:

ՍԱՀՄԱՆԵՐՐԱԿԱՆ ՌԷՖԷՐԷՆԴՈՒՄ—Տես Ռեֆերենդում:

ՍԵՀՄԵՆԱԴՐՈՒԹԻՆ կամ **ԿՕՆՍՏԻՏՈՒՑԻԱ**—Կոչում է այն սահմանադիր օրէնքը, որ երկրի պետական կազմի համար հիմքեր է սահմանում և որոշում է միջոցներ, որոնք պէտք է ապահովեն հիմնական օրէնքների անխախտութիւնը զանանան կամայականութիւններէ դէմ:

ՍԱՄԵՐԱ—Եսպոնական հին վասսալներ, որ կախում ունէին խոշոր ֆեոդալներից (տես Ֆեոդալ)—զայմօսներէ:

ՍԵՆԱՏՕՐԻԱ—Բուժարան, բուժանոց:

ՍԵՆԳՎԻՆԻԿ—Ուրախարարոյ մարդ:

ՍԵՆԻՏԱՐ ԲԺԻՇԿ—Բժիշկ, որի պարտականութիւնն է միջոցներ ձեռք առնել, որ հիւանդութիւնը չզարգանայ—այդ միջոցներն են՝ փողոցների, ջրերի մաքրութիւ-

նը, մթերքների թարմութիւնը և այլն, և այլն:

ՍԱՆԿԻԻԼՕՏ—Վարտեքափ, անփոխան, տկլոր: Ֆրանսիական
յեղափոխութեան սկզբում այդ ծաղրական անունը տա-
լիս էին ժողովրդի ստոր խաւերին և նրանց ներկայա-
ցուցիչներին: Ապա այդ անունը սկսեցին տալ ֆրան-
սիական յեղափոխականներին:

ՍԱՆԿՑԻԱ—Բարձրագոյն հաստատութիւն, բարեհաճութիւն,
սրբագործութիւն, հաւանութիւն:

ՍԱՆՁԱԳ—Տաճկական դաւառ:

ՍԱՆՁԱԲ-ՇԷՐԻՖ—Մահճեղական սրբութիւն — Մանմեղի դրօ-
շակը, որ պահւում է Կ. Պօլսում:

ՍԱՆՏԻԳՐԱՄ — Ծանրութեան չափ= $0,01$ գրամմի= $0,00234$
գօլօտնիկի:

ՍԱՆՏԻՄ—Ֆրանսիական գրամ= $0,01$ ֆրանկի:

ՍԱՆՏԻՄԵՆՏԱԼ—Չգայուն, լալկան:

ՍԱՆՏԻՄԵՆՏԱԼԻՉՄ—Տես Սենտիմենտալիզմ:

ՍԱՆՏԻՄԵՆՏՐ—Երկարութեան չափ= $0,01$ մետրի= $0,3937$
դիւմի= $0,2245$ վերջոկի= $0,0047$ սաժ.:

ՍԱՐԲԱՉ—Պարսկական հետիոտն զինուոր:

ՍԱՐԴԱՐ—Չօրքի գլխաւոր հրամանատար Տաճկաստանում,
Պարսկաստանում և Եգիպտոսում:

ՍԵՉՕՆ—Որոշ ժամանակամիջոց, օրինակ՝ ամառայ սեզօն
—ամառայ շրջանը, դպրոցների սեզօն—այն ժամա-
նակամիջոցը, երբ ուսում կայ դպրոցներում և այլն,
և այլն:

ՍԵԿՈՒԼԵԱՐԻՉԱՑԻԱ—Եկեղեցական կալւածների գրաւումն
յօգուտ պիտութեան:

ՍԵԿՈՒՆԴԱՆՏ—Վկայ՝ մինամարտի ժամանակ:

ՍԵԿՏԱ կամ ՍԵԿՏ—Աղանդ:

ՍԵԿՏԱՆՏ—Աղանդաւոր:

ՍԵԿՐԵՏ—1) Գաղանփք: 2) Զինուորական խմբակ, որ յա-

տուկ յանձնարարութեամբ որևէ տեղ է ուղարկուամ:

ՍԵԿՐԵՏԱՐ—Քարտուղար:

ՍԵԿՑԻԱ—Ճիւղ, բաժանմունք:

ՍԵՄԵՍՏՐ—Կիսամեակ, ուսումնական տարւայ կէսը:

ՍԵՄԻՆԱՐԻԱ—Միջնակարգ դպրոց, հոգևորականներ կամ ժողովրդական ուսուցիչներ պատրաստելու համար:

ՍԵՆ-ՍԻՄՕՆ—XVIII-րդ դարում հրապարակ եկաւ իր ծրագրով, որի մէջ առաջարկուած էր մասնաւոր սեփականութեան, ժառանգութեան, դասային բաժանման ու չընչացումը, կանանց իրաւահաւասարութիւնը, մանուկ սերնդի հասարակական կրթութիւնը—այդ բոլորը կը հասցնեն հասարակական կազմի իդէալական ձեւին: Սեն-Սիմօնի աչքի ընկնող հետևորդներն են. Օվէն, Ռօզբրիգէյ, Բազար, Անֆանտէն: (Տես նաև Սօցիալիզմ):

ՍԵՆ-ՍԻՄՕՆԻԶՄ—Տես ՍԵՆ-ՍԻՄՕՆ:

ՍԵՆԱՏ—1) Ռուսաստանում բարձրագոյն հաստատութիւն է, որը դուրս լինելով բարձրագոյն իշխանութեան մասը կազմող հիմնարկութիւններից, ինչպէս Պետական Խորհուրդն է, Մինիստրների Կօմիտեաը և այլն, գործում է որոշ լիազօրութիւններով (օրէնքներով), իրան յատկացրած սահմաններում: Սենատի իրաւասութիւնը տարածւում է ամենաբարձր ատեանի, ադմինիստրատիւ և դատաստանական խնդիրների վրայ, նոյնպէս և նրան է վերապահւած օրէնքների միտքը լրացնող բացատրութիւններ տալը: Սենատը ներկայումս բաժանւում է վեց դեպարտամենտների, որոնց մէջ բաժանւած են բոլոր գործերը: Բացի դեպարտամենտներից, Սենատն ունի ընդհանուր նիստեր և զանազան խնդիրների համար կոչւած յատուկ հիմնարկութիւններ—ատեաններ (присутствія): 2) Ֆրանսիայում և Ամերիկայում Սենատը Պարլամենտի վերին պալատն է: (Տես Պարլամենտ):

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼԻՉՄ—Գրական ուղղութիւն XVՅՅ-րդ դա-
րում և XIX-րդի սկզբներում: Հակառակ կեղծ կլաս-
սիքականութեանը, առաջին տեղը տալիս էր սուրբէկ-
տիւ զգացմունքներին և հոգեբանական անալիզին,
ընդգծելով այն բոլորը, ինչ որ սրտաշարժ է. ձգտում
էր ընթերցողների մէջ ընուծիւնը հասկանալու և նը-
րան սիրելու ընդունակութիւններ զարգացնել, միա-
ժամանակ մարդասէր վերաբերմունք զարթեցնել դէպի
բոլոր թոյլերն ու հալածւածները: Սենտիմենտալիզմը
սկիզբ առաւ Անգլիայում՝ Ջ. Տոմսոն (1730), Թ. Գրէյ-
իւնգ, Ռիչարդսոն, և Ստերն: Անգլիայից սենտիմեն-
տալիզմը տարածւեց ամբողջ Եւրոպայում: Ֆրանսիա-
նէրէն սենտիմենտալիստներ են՝ Բուսսսի, Ռուսսօ, Գեր-
մանիայում՝ Վլոպշտօկ, Լեսսինգ, Վիլանդ, Լարօշ,
Գեթէ (Վերթեր), Ռուսաստանում՝ Ռադիշչև, Կարամզին:

ՍԵՊԱՐԱՏ—Առանձնակի, ջոկ, անկախ:

ՍԵՊԱՐԱՏԻՉՄ—Բաժանման ձգտումն:

ՍԵՊԱՐԱՏՐԻԿԱՄ ի կամ ՅԵՆՏՐՈՖՈՒԳ—Գործիք է, որի օգնու-
թեամբ զանազան խառնուրդներ բաժանուում են իրանց
բաղադրիչ մասերին, կենտրոնախոյս ոյժի ազդեցու-
թեամբ: Սեպարատորները լայն գործադրութիւն են
գտել կաթնատնտեսութեան մէջ, ծառայելով իրրև սեր-
զատիչներ:

ՍԵՍՍԻԱ—Նստաշրջան, որև է ժողովի, նիստերի շրջան:

ՍԵՍՏԵՐՑԻՅ—Հին հռոմէական արծաթեայ դրամ= $\frac{1}{4}$ դի-
նար= $2\frac{1}{2}$ ասամ.= 5կոպ.:

ՍԵՐԱԼ—Սուլթանի պալատը, որը շինւած է Մարմարեա ծո-
վի և Բօսֆօրի միջատեղում, Պօլսի մօտ: Բաղկացած է
բազմաթիւ շինութիւններից, որոնց մէջ է նաև հարեմը:

ՍԵՐԱՍՔԵԱՐ—Կոչւում է Տաճկաստանի գինւորական մի-
նիստորը:

ՍԵՐԲԱԶ—Տես Սարբազ:

ՍԵՐՂԻԶ—Թէյի, ճաշի, սուրճի և այլն բոլոր պիտոյքները:

ՍԵՐՂԻԼԻԶՄ—Ստրկահոգութիւն, ստրկամտութիւն, գեազա-
յութիւն:

ՍԵՒ ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼ—Տես Ինտերնացիօնալ:

ՍԵՒ ՀՆՐԻԻՐԱԿՆԵՐ—Ռուսաստանում կոչուում են ազգաբը-
նակութեան այն խմբերը. որոնք միապետական-ոստի-
կանական կարգերի անսպասան կողմնակիցներն են: Սև հարիւրակները ղեկավարները և սգևորիչները յա-
ճախ բարձր բւերօկրատիայի ներկայացուցիչներն էին
հանդիսանում կամ այն դասակարգերը, որոնց ձեռնու-
տու են միապետական-ոստիկանական կարգերը:

ՍԷՅՄ—Դասային ներկայացուցչութիւն: Սէյմը ներկայա-
ցուցչական մարմին է, որ կազմւած է զանազան դա-
սերից և պետական պաշտօնեաներից ընտրւած ներկա-
յացուցիչներից: Այդպիսի սէյմը գոյութիւն ունէր մի-
ջին դարերում Լեհաստանում և մինչև 1905 թ. Ֆինլեանդ-
դիայում: Այժմ Ֆինլեանդիայի սէյմը կազմուում է ընդ-
հանուր ձայնատուութեամբ, առանց դասային հիմունք-
ների:

ՍԻԲԱՐԻՏ—Հաճոյամու:

ՍԻԳՆԱԼ—Ազդանշան:

ՍԻԶԻՖԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ—Ծանր, բայց անօգուտ աշխա-
տանք: Ըստ հին յունական աւանդութեան, Սիզիֆն իր
մահից յետոյ հանդերձեալ աշխարհում պարտաւոր էր
մի ահազին քար քաշ տալ լիբան վրայ, որը կրկին
յետ էր զլորւում:

ՍԻԿՕՑԵՆՏ—1) Աթէնքում այդպէս էին կոչուում այն մար-
դիկ, որոնք պարտաւոր էին հսկել, որ ոչ ոք Ատտիկա-
յից թուղ չարտահանէր օտար երկրներ: 2) Լրտես,
մատնիչ, զրպարտիչ: 3) Զեռուն:

ՍԻԿՍՏԻ ՄԱԴՅՆԱՆ—Ասուածամօր պատկերը, իտալացի հոշակաւոր նկարիչ Ռաֆայէլի ամենայայտնի նկարը: ՍԻՄՈՒԼԷԱՑԻԱ.—Ընդօրինակութիւն, նմանողութիւն, կեղծիք: ՍԻՄՊԱՏԻԱ.—1) Համակրութիւն: 2) Համակրութեան առարկայ:

ՍԻՄՊՏՕՄ—Նշան:

ՍԻՄՎՕԼԻՉՄ—Գրական ուղղութիւն, որ սկիզբ առաւ Ֆրանսիայում: Այս ուղղութեան հիմնական գծերն են՝ գեղեցկութեան պաշտամունքը, ճաշակի նրբութիւնը, պօէզիայի, պրօզիայի և կրօնական տրամադրութիւններէ համար նոր ձևերի որոնումը, կեանքից կտրուած մնալու ձգտումը: (Տես Դեկադենտներ):

ՍԻՄՅՅՈՆԻԱ.—Օրկեստրի համար ձայնագրուած՝ հրաժշտական արտադրութիւն:

ՍԻՆԴԻԿԱՏ—Ընկերութիւն, դաշնակցութիւն: 1) Արդիւնաբերութեան միևնոյն ճիւղի ձեռնարկող-կապիտալիստների միութիւն, որի նպատակն է սիրով ու խաղաղութեամբ բաժանել իրանց մէջ շուկան, բարձրացնել իրանց ապրանքների գինը, վերացնել կօնկուրէնցիան—մրցումը, որը փաստում է կապիտալիստներին: Կապիտալիստների սինդիկատները խիստ տարածւած են Ամերիկայում: Ռուսաստանում զարգացած են շաքարային սինդիկատները, շնորհիւ կառավարութեան հովանաւորող սիստեմի (արտասահմանից ներմուծող շաքարի վրայ ծանր մաքսեր են նշանակւած): Կապիտալիստների սինդիկատը կոչւում է նաև Կարտել: 2) Սինդիկատ են կոչւում նաև բանւորների փոխադարձ օգնութեան ընկերութիւնները և միութիւնները: Բանւորական միութիւնները սկիզբն առան դեղին սինդիկատ անւան տակ առաջին անգամ Ֆրանսիայում: Այս սինդիկատների նպատակն է խաղաղութեամբ վերջ

դնել կապիտալիստների և բանւորների վէճերին: Դե-
զին սինդիկատների կանոնադրութեամբ գործադուլ
կարելի է յայտարարել միայն ծայրահեղ դէպքում, երբ
վէճը լուծելու բոլոր խաղաղ միջոցներն անհետևանք
կանցնեն: Բացի այդ՝ պահանջում է, որ բանւորական
ընդհանուր ժողովում գործադուլ յայտարարելուն ձայն
տան սինդիկատի: Բոլոր անդամների $\frac{2}{3}$ -ը: Վերջին ժա-
մանակներս առանձնապէս զարգանում է սինդիկալիզմը,
որն աշխատում է բանւորներին հեռու պահել քաղա-
քական խնդիրներից և կազմակերպել նրանց զուտ-
տնտեսական շահերի շուրջը:

ՄԻՆԴԻԿԱԼԻԶՄ—Տես Սինդիկատ:

ՄԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ—Տես Կինեմատոգրաֆ:

ՄԻՆԵՏՕԳՐԱՖ—Տես Կինետոգրաֆ:

ՄԻՆՕԻ—1) Ռուսաց եկեղեցական վարչութեան ամենաբարձր
ատեանը, որ օգտւում է նոյն իրաւունքներով և ունի
նոյն նշանակութիւնը, ինչ որ Սենատը՝ աշխարհիկ
գործերում: Սինօզը թագաւոր Կայսեր հետ իր կապը
պահպանում է Սերբ-Պրօկուբօրի միջոցով, որն աշխար-
հիկ իշխանութեան ներկայացուցիչն է և օգտւում է
ամենալայն իրաւունքներով, ուղղութիւն տալով Սի-
նօզին: 2) Հայ-Լուսաւորչական եկեղեցու բարձրագոյն
ատեանը, որ օգնական է հանդիսանում կաթողիկոսին:
Կառավարութեան կողմից Հայ-Լուսաւորչական Սինօ-
զի նիստերին մասնակցում է պրօկուբօրը:

ՄԻՆԹԵԶ—1) Տրամաբանութեան մէջ դատողութեան եղա-
նակ, որի ժամանակ պարզ հասկացողութիւններից հաս-
նում են բարդին: Մինթեզի հակառակն է անալիզը
(տես Անալիզ), 2) Քիմիայի մէջ սինթեզ կոչւում է
պարզ տարրերից բարդ մարմիններ կազմելը:

ՄԻՆԹԵԹԻԿ—Սինթեզի միջոցով ստացւած: (Տես Սինթեզ):

ՄԻՊՆՅՅ ՏԻՖ — Տէս Տիֆ:

ՄԻՍՏԵՄ — Հասկացողութիւնների կարգ, որ կազմւած է մի-
կնոյն հիմունքներով ու սկզբունքներով և զարգացած
է ամենախիստ հետևողականութեամբ:

ՄԻՍՏԵՄԱՏԻՔ — Կանոնաւոր, մտածւած: (Տէս Սիստեմ):

ՄԻՎԱ — Տէս Բրամանիզմ:

ՄԻՏՈՒԱՅԻԱ — Կազմ, նկարագիր, կազմութիւն:

ՄԻԻՓԷՏ — Գրական, գեղարւեստական և երաժշտական ար-
տադրութեան նիւթը, առարկան:

ՄԻԻՆՆԻՆԵՐ — Ուղղափառ մահմեդականներ, որոնք առաջին
երեք խալիֆներին (Աբու-Բէկիր, Օմար, Օսման) ճանա-
չում են Մահմեդի օրինական յաջորդներ և ընդունում
են այն սիւննիները (այսինքն՝ աւանգութիւնները), որ
կան Մահմեդի մասին: Մահմեդականների մեծամաս-
նութիւնը սիւննիներ են: (Տէս Իսլամ, Շիաիէր):

ՄԻԻՐՊՐԻԶ — Անսպասելի, անակնկալ հաճոյք, նւէր:

ՄԻՕՆԻԶՄ — Ազգային շարժում հրէաների մէջ, որի նպա-
տակն է հրէաներին վերաբնակեցնել Պալեստին և
ծաղկեցնել հրէական միապաղաղ ազգաբնակչութեան
դրութիւնը երկրագործութեամբ և այլ միջոցներով:
1890-ական թւականներին սիօնիզմը քաղաքական բը-
նոյթ է ստանում: Առաջին կօնգրէսը 1897-ին: Ղեկա-
վարներն են Հերցլը, Մաքս Նօրդաուեն և այլն:

ՄԻՕՆԻՍ — Սիօնիզմի կողմնակից: (Տէս Սիօնիզմ):

ՄԻՖԻԼԻՍ — Վիեննական հիւանդութիւն, վատ ցաւ, սխւմա:

ՄԼԱՎԵՆՆՕՖԻԼ — Սլաւոնասէր: Ռուս հասարակական մտաւոր
շարժում, որ ստեղծւեց իրրև հակառակ ոյժ Պետրոս
I-ի օրերից Ռուսաստան մտած եւրօպասիրութեանը:
Սլաւոնասիրութիւնն հիմք ընդունելով արևելեան միս-
տիքների ազգային ինքնուրոյնութեան պատմա-փիլի-
սօփայական թէօրիան, միացրեց վերջինս Շելլինգի և

Հեզելի փիլիսոփայական սիստեմներին, ընդունելով մասամբ նաև պանսլաւիտական մտքեր: Ըստ Սլավեանօֆիլների, եւրօպական կուլտուրան հիմնւելով հոօմէականի վրայ և լոկ մտածողութեան ուղիով ընթանալով, արդէն ներքին հակասութիւնների մէջ է ընկել: Արևելքն ընթանում է ամբողջական (բազմակողմանի) ճանապարհով և անշուշտ կեանքի ու կրօնի ամենաբարձր բմբոնողութեանը պէտք է հասնի, իսկ Ռուսաստանը իր քաղաքակրթութիւնն անմիջապէս Արևելքից ստանալով՝ կոչուին ունի համաշխարհային պատմական զարգացման մէջ նոր սկզբունք մտցնել: Այդ նոր ըսկզբունքը համայնքի սկզբունքն է, որը կրօնի արևելեան ձևի հետ ներդաշնակում է և միաժամանակ արեւելեան ու արևմտեան աշխարհին իրարից տարբերող զլիսաւոր գիծն է կազմում: Այդ ուսմունքը 1840-ական թւականներին ձևակերպեցին Ի. Կիրէեվսկին, Սօմաւկովը, բայց խիստ քննադատութեան ենթարկեցին Ջապարնիկների (տես Ջապաղնիկներ) — Բէլինսկու, Գրանովսկու և Հերցէնի կողմից: Սլավեանօֆիլութեան ժողովրդականացնողները հանդիսացան Ի. Սամարինը, Ա. Գրիգորիէվը և Հ. Դանիլիսկին, որոնք միաժամանակ աշխատեցին Սլավեանօֆիլութիւնից դուրս գցել համաշխարհային-պատմական տեսակէտը և մտքրին ծայրահեղ նացիօնալիստական հասկացողութիւններ, պնդելով որ ոռուսական քաղաքակրթութիւնն ամենից բարձր է ամբողջ աշխարհում: Սլաւեանօֆիլութիւնը իր վերջնական քայքայմանը հասաւ Կ. Լէօնտիեվի պընդունեցողութիւնից: Թէ ոռուսական ինքնատիպ կուլտուրայի պահպանումը միակ նպատակը պէտք է լինի:

ՍԼԱՎՕՆԱՍԷՐ — Տես Սլավեանօֆիլ:

ՍԼԱՎՈՆԱՖԻԼ — Տես Սլավեանօֆիլ:

ՍԽՕԼԱՍՏԻԿ—Սխօլաստիկայի հետևորդ:

ՍԽՕԼԱՍՏԻՔ—Չոր ու ցամաք, ձևական, անբովանդակ, դատարկ:

ՍԽՕԼԱՍՏԻՔԱ—Փիլիսոփայական ուղղութիւն միջին դարերում: Սխօլաստիքան գիտական ուսուցնա սիրութիւններին պատակը համարում է հաստատուն և ամեն տեսակ խնդիրներին վերաբերմամբ գործադրելու յարմար սխեմաներին (տես Սխեմա) կազմելը, որից չափազանց մեծ նշանակութիւն է տրուում ընդհանուր հասկացողութիւններին, ապանակ՝ այդ հասկացողութիւնները նշանակող բառերին, որից յետոյ արդէն փաստերին ու նրանցից գուրս բերած կզրակացութիւններին փոխարինում է դատարկ բառախաղը, բառամոլութիւնը: Սխօլաստիքան լայն գործադրութիւն գտաւ կրօնական խնդիրներին մէջ, վերջիններին փիլիսոփայական-գիտական գոյն տալու նպատակով: Սկիզբ տաւ սխօլաստիքան IX-րդ դարում և դարգացման գագաթնակէտին հասաւ երբ հրէաների, արաբների ու յոյների միջոցով ծանօթացաւ Արիստոտէլի ուսմունքին և տիրապետող ուղղութիւն հանդիսացաւ մինչև XV-րդ դարը: Գլխաւոր ներկայացուցիչներն են՝ էրիզէնա, Աբըլար, Թօմա Ակուինացի, Դունս Սկոտ, Բօնավիկտուր, Ալբերտ Մեծն և այլն: Սխօլաստիքայի գլխաւոր ուղղութիւններն են՝ Ռէալիզմն ու Նօմինալիզմը: (Տես Ռեալիզմ, Նօմինալիզմ):

ՍԿԱՆԴԻՆ—Խայտառակութիւն, խստակցութիւն, ամօթանք անկարգութիւն:

ՍԿԱՆԴԻՆՍ—Խայտառակիչ, խստանակիչ, անկարգութիւն սարքող:

ՍԿԱՐԼԱՏԻՆԱ—Քութէշ:

ՍԿԵՊՏԻԿ—Յուստես, վատատես:

ՍՈՒ—Ֆրանսիական դրամ= $\frac{1}{20}$ ֆրանկի=5 սանտիմի:

ՍՈՒՔ-ԻՆՍՊԵԿՏՕՐ—Ինսպեկտորի օգնական:

ՍՈՒԲԻԷԿՏ—Տրամաբանութեան մէջ կոչուում է դատողութեան ենթական: Հոգեբանութեան մէջ՝ սուբիէկտը կոչուում է հոգեկան կեանքի ինքնազդիտակից ակտիւ էութիւնը, որն ինքն իրան հակադրում է արտաքին աշխարհին և սեփական, տարբեր դրութիւններին, վերջիններս իբրև օբիէկտ ընդունելով:

ՍՈՒԲԻԷԿՏԻԻ ԻԴԷԱԼԻԶՄ—Տես Իդեալիզմ:

ՍՈՒԲԻԷԿՏԻԻԶՄ—Ուսմունք, որը մարդկային պատմութեան մէջ խոշոր նշանակութիւն է տալիս անհատին, հակառակ այն ուղղութիւններին, որոնք պատմական պրօցեսը բացատրում են տարբերային ոյժերի գործողութեամբ:

ՍՈՒԲՍԻԴԻԱ—Նպաստ, օժանդակութիւն:

ՍՈՒԲՍՏԱՆՅԻԱ—Անփոփոխ ու մշտական էութիւն, որ հիմք է ծառայում այլ առարկաների և հակադրում է փոփոխականին ու պատահականին:

ՍՈՒԴՐԱ—Տես Բրամանիլմ:

ՍՈՒՊՐԱՆՍՈՒՐԱԼԻԶՄ—Հաւատ դէպի գերբնականը, գերզգայականը: Մասնաւորապէս՝ ուսմունք այն մասին, թէ կրօնական ճշմարտութիւնների հիմունքն աստուածային յայտնութիւններն են: Հակառակը՝ ոացիօնալիզմ է: (Տես Ռացիօնալիզմ):

ՍՈՒՎԷՐԷՆ—Գերիշխան, ինքնազուլս, անկախ:

ՍՈՒՎԷՐԷՆԻՏԷՏ—Գերիշխանութիւն:

ՍՈՒՐՐՕԳԱՏ—Փոխանիւթ. այն բոլորը, որ փոխարինում է իսկականին:

ՍՊԵՑԻԱԼԻՍ—Մասնագէտ:

ՍՊԵՑԻՖԻԿ—Առանձնայատուկ, ինքնատիպ, բնորոշ:

ՍՊԻԿԵՐ—Համայնքների պալատի նախագահն Անգլիայում:

ՍՊԻՐԻՏՈՒԱԼԻԶՄ—Փիլիսոփայական ուղղութիւն, որը հա-

- կառակ մատերիալիզմին, ընդունում է հոգեկան աշխարհի անկախ գոյութիւնը: (Տես Փիլիսոփայութիւն):
- ՄՏԱԶԿԱ**—Տես Դործադուլ:
- ՄՏԱՏԻԿԱ**—Միխանիկայի (մեքենագիտութեան) մի մասը, որ ուսումնասիրում է մարմինների հաւասարակշռութեան օրէնքները:
- ՄՏԱՏԻԿԱ ՍՕՑԻԱԼԵԿԱՆ**—Տես Սօցիօլօգիա:
- ՄՏԱՏԻՍ**—Դերասան, որի դերը միայն բեմ դուրս գալն է, առանց խօսելու:
- ՄՏԱՏԻՍՏԻԿԱ**—Գիտութիւն, որն ուսումնասիրում է մասսայական (խմբական) երևոյթների վրայ կատարւած սիստեմատիկ դիտողութեան ձևերը: Մարդու հասարակական կեանքի, բուսական և կենդանական աշխարհի և այլ կարգի երևոյթները ստատիստիկայի նիւթն են կազմում: Այստեղից առաջ է գալիս դպրոցական, առողջապահական ստատիստիկան, որը հնարաւորութիւն է տալիս պարզել այս ու այն գործօնի իսկական դերը, մեզ հետաքրքրող ասպարէզում:
- ՄՏԵՆՕԳԻՄՖԻՆ**—Սղազրութիւն:
- ՄՏԵՆՕԳԻՄՖ**—Սղազրոյ:
- ՄՏԵՐԼԻՆԳ**—Անգլիական արծաթէ դրամ. 1 ֆունտ ստերլինգ = սօլերինին = 20 շիլինգի = 240 պենսի = 96. 50 կ.:
- ՄՏԻՊԵՆԴԻՆ**—Թոշակ:
- ՄՏՈՒԴԵՆՏ**—Բարձրագոյն դպրոցի ուսանող:
- ՄՏՐՈՒՆՏՈՒՐՆ**—Կառուցւածք, կազմ, շինւածք:
- ՄՏՐՐՏԻՆԳ**—Նօրվեգիայի պարլամենտը, որ կազմւած է երկու պալատից՝ Լանդստինգից և Յդելստինգից: (Տես Պարլամենտ):
- ՄՕԴՕՄԵԿԱՆ ԱՅՏ** Հակաբնական սեռական յարաբերութիւն երկու տղամարդկանց մէջ կամ սեռական յարաբերութիւն կենդանիների հետ: Ռուսական օրէնքով սօղօմական ախ-

տը պատժուում է արքայորով (Պատժ. 997-րդ յօդ.)։ Քրէական նոր օրէնսդրութիւնը սօղօմական ախտը համարում է պատօլօզիական (տես Պատօլօզիա) երևոյթ, որը քրէական պատասխանատուութիւնից դուրս է։

ՍՕԴՕՄԱԿԱՆՈՒԹԻԻՆ—Տես Սօղօմական ախտ։

ՍՕԴՕՄԻԱ կամ ՍՕԴՕՄԱԿԱՆՈՒԹԻԻՆ—Տես Սօղօմական ախտ։

ՍՕԼԻԴԱՐ—Համելուաշխ։

ՍՕԼՕ—Պար, երգ կամ նւագածութիւն, որը կատարում է մէկը մեկակ։

ՍՕՄՆԱԲՈՒԼ—Լուսնոտ։

ՍՕՄՆԱԲՈՒԼԻՉՄ—Լուսնոտութիւն։

ՍՕՏԵՐՆ—Սպիտակ գինի, որ արտադրւում է Ֆրանսիայի Սօտերն գաւառից։

ՍՕՐԲՕՆ—Փարիզի համալսարանին կից աստուածաբանական բարձրագոյն դպրոց, որ հիմնւած էր 1257 թ. և որն իր գոյութիւնը պահպանեց մինչև 1791 թ.։ Ներկայումս Սօրբօնի շինութեան մէջ տեղաւորւած են աստուածաբանական, պատմա-փիլիսոփայական և պատմա-բնագիտական ֆակուլտէտները։

ՍՕՅԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏԻԱ—Տես Քաղաքական կոնսակցութիւններ։

ՍՕՅԻԱԼ-ԷՏԻՔԱԿԱՆ ՇԿՕԼԱ—Տես Քաղաքատնտեսութիւն։

ՍՕՅԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՆՆԵՐ—Հասարակական գիտութիւններ։ Գիտութիւններ, որոնք մարդու կեանքի հասարակական կողմերն են ուսումնասիրում (քաղաքատնտեսութիւն, իրաւաբանական գիտութիւններ, ստատիստիկա, պետական գիտութիւններ, պատմութիւն և այլն, և այլն)։

ՍՕՅԻԱԼԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ—Տես Սօցիօլօգիա։

ՍՕՅԻԱԼԱԿԱՆ ԴԵՄՕԿՐԱՏԻԱ—Կոչւում է այն հասարակակարգը, որի մէջ աւրում է բոլոր մարդկանց լիակատար հաւա-

սարութիւնը և որի մէջ ոչնչացրած են տնտեսական անհաւասարութիւնը և տնտեսական դասակարգերը: (Տես Դեմօկրատիա):

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑ—Սօցիալական հարցը հասարակական կարգի վերակազմութեան հարցն է յօգուտ այն դասակարգերի, որոնք գլխաւորապէս ստեղծում են հասարակական հարստութիւնները: Այս հարցի լուծմանը կարելի է երկու տեսակէտով մօտենալ: 1) Աշխատաւոր դասակարգէ անմխիթար վիճակն արդիւնք է այն պայմանի, որ ներկայ պետական և հասարակական կազմը սխալ ճիւղերի վրայ է դրւած. հետեւապէս, հարցի բաւարար լուծման միակ ճանապարհն է՝ քանդել այդ հիմքը, այսինքն՝ կատարել յեղափոխութիւն: Այս տեսակէտի վրայ են կանգնած սօցիալիստական կուսակցութիւնները, կօմմունիստները և անարխիստները: 2) Երկրորդ տեսակէտն այն է՝ որ աշխատաւոր դասակարգի անմխիթար վիճակն արդիւնք է ներկայ կարգի մասնաւոր պակասութիւնների, որոնց կարելի է ուղղել՝ թեթև բարեփոխութիւններ մտցնելով հասարակական կարգերի մէջ, առանց նրանց հիմքերին դիպչելու: Այդ միջոցները կարող է իրագործել պետութիւնն ինքը:

Սօցիալական հարցի լուծման համար առաջարկւած այդ երկու կարգի միջոցները կազմում են սօցիալական քաղաքականութիւնը: (Տես Սօցիալիզմ, Քաղաքական կուսակցութիւններ, Քաղաքատնտեսութիւն, Յեղափոխութիւն, Տնտեսական մատերիալիզմ, Սօցիալական քաղաքականութիւն):

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԻՒՆ—Տես Սօցիալիզմ, Տնտեսական մատերիալիզմ, Յեղափոխութիւն:

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ—Հասարակական կարգի, նրա

դասային կամ դասակարգային կազմի, սօցիալական դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնների, նրանց հասարակական և քաղաքական դրութեան, ձգտումների և գործողութիւնների պատմութիւնը: Սօցիալական պատմութեան ուսումնասիրութիւնը միայն նորագոյն ժամանակներս է սկսել:

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ կամ **ՀՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ**—կոչուում են այն գիտութիւնները, որ ուսումնասիրում են մարդու հասարակական կեանքի զանազան կողմերը և նիւթ պատրաստում սօցիոլոգիայի համար: Սօցիալական գիտութիւններն են. քաղաքատնտեսութիւնը, ստատիստիկան, իրաւաբանական և պետական գիտութիւնները, պատմութիւնը և այլն, և այլն: (Տես Սօցիոլոգիա):

ՍՕՑԻԱԼԵԿԱՆ ՄՏԱՏԻԿԱ—Տես Սօցիոլոգիա:

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ—Պետութեան սօցիալական քաղաքականութիւնը կոչուում է բոլոր այն միջոցների և բարեփոխութիւնների ընդհանուր ուղղութիւնը, որոնցով նա նպատակ է ունենում բարելաւել աշխատաւոր դասակարգի տնտեսական, քաղաքական և ընդհանուր-կուլտուրական դրութիւնը: (Տես Սօցիալական ճարգ):

ՍՕՑԻԱԼԻՉՄ—Ուսմունք, որը բարոգում է գոյութիւն ունեցող հասարակական-տնտեսական կարգերի հիմնական փոփոխութիւն, վերացնելով մասնաւոր սեփականութիւնը և արդիւնագործական կեանքում վերջ դնելով ազատ մրցութեանը (կօնկուրէնցիային): Մասնաւոր սեփականութեան անսահման իրաւունքը փոքրաթիւ կապիտալիստներին հնարաւորութիւն տալով արտադրութեան բոլոր գործիքները և միջոցները (հող, երկաթուղիներ, գործարաններ, մեքենաներ, հում նիւթեր և այլն) խլելու՝ ծառայում է նրանց մասնաւոր

հարստութեանը, առանց բարեխաբելու աշխատաւոր դասակարգի նիւթական գրութիւնը: Աշխատաւորները՝ իրանց սեփական ձեռքով հսկայական հարստութիւններ ստեղծելով՝ ստանում են (աշխատավարձի ձեւով) հարստութիւնների միայն չնչին մասը, որը հազիւ է բաւարարութիւն տալիս իրանց կենսական ամենուսանհրաժեշտ պահանջներին: Այդպիսով աշխատաւոր դասակարգը տնտեսապէս ենթարկւած է կապիտալիստների կամքին: Մինչդեռ աւելի ու աւելի զարգացող մրցումը (կօնկուրէնցիան) իրանց՝ կապիտալիստներին ևս հանգիստ ապրուստ չի ապահովում: Սոչոր արդիւնագործութեան առաւելութիւններն ստիպում են ներանց աւելի ու աւելի լայնացնելու իրանց ձեռնարկութիւնները, իսկ դա հասցնում է խրօնիքական (պարբերական) գերարտադրութեան և առաջ է բերում արդիւնագործական կրիզիսներ (ճգնաժամ), որո՞ք քայքայում, և սնանկացնում են հէնց իրանց՝ արդիւնագործողներին և առանց աշխատանքի թողնում բազմահազար բանւորներ: Սօցիալիստների ուսմունքի համաձայն, այդ գրութիւնից գուրս գալու միակ ելքը կարող է լինել՝ արտադրութեան գործիքների ընդհանուր սեփականութիւն դառնալը, ըստ որում պէտք է աշխատեն ամենքը, աշխատանքի արդիւնքը պէտք է արդարութեամբ բաժանւեն ամենքի մէջ, իսկ աշխատանքը կանոնաւորւի որոշ օրէնքներով: Այդ հասարակական կազմի՝ սօցիալիզմի իրականացման միջոցների վերաբերմամբ սօցիալիստները բաժանւում են տարբեր կարծիքների, որոնց համեմատ և կազմւում են առանձին կուսակցութիւններ: (Տես Քաղաքական կուսակցութիւններ): XIX-րդ դարի առաջին կիսի սօցիալիստները, այսպէս ասած՝ ուտօպիական սօցիալիզմի ներկայացուցիչները—

Սեն-Սիմօնը, Տուրիէն, Կարէն, Օվէնը և ուրիշները—
 ւօցիալիստական կարգերին համեմու համար առաջարկում էին սօցիալիստական սկզբունքներով օրինակելի ասսօցիացիաներ (միութիւններ) կազմել, որոնք իրանց օրինակով նոր կարգերի առաւելութիւններն ապացուցէին և դրանով ամբողջ մարդկութեանն ստիպէին աստիճանաբար սօցիալիզմին անցնել: Լուի Բլանը (1811—1882) և Լասսալը (1825—1864) սօցիալիզմի իրականացման գործօնը համարում էին պետութիւնը, որն ընդհանուր-պետական միջոցներով պէտք է կազմակերպէ բանւորական ասսօցիացիաներ և այդպիսով աստիճանաբար դուրս քշէ բոլոր մասնաւոր ձեռնարկութիւնները: Վերջապէս Մարքսը (1818—1883) և էնգէլսը (1820—1895), գիտական սօցիալիզմի հիմնադիրները, իբրանց հետևորդ օրթօդօրո մարքսիստներով (Կաուցկի, Բէրէլ, Լիբկնէխտ, Լաֆարգ և ուրիշները), ժամանակակից կապիտալիստական արտադրութեան մէջ այնպիսի սաղմեր են տեսնում, որոնք անխուսափելի կերպով պէտք է հասցնեն հասարակական հիմունքների վրայ դուած տնտեսական նոր կարգերի յաղթանակին: Արդիւնագործութիւնն աւելի ու աւելի կենտրոնանում է փոքրաթիւ անհատների ձեռքին և միաժամանակ նպաստում է պրօլետարիատի (տես Պրօլետարիատ) թւական աճեցմանն ու միութեանը մի հսկայական բանակի մէջ: Այդ պրօցեսի որոշ աստիճանի վրայ պրօլետարիատին կը մնայ միայն մի թեթև քայլ անել, որպէսզի կապիտալիստական կարգերը քանդեն իրանք իրանց և տեղի տան սօցիալիզմին: Ուստի բոլոր բանւորները պէտք է ամեն ջանք գործ դնեն կապիտալիզմի այդ ընթացքն արագացնելու և՛ իրանցից կուռ կազմակերպութիւններ ստեղծելով՝ ապահովեն ապա-

գայ սօցիալական յեղափոխութեան յաղթութիւնը: Վերջին ժամանակներս գիտական սօցիալիզմի մէջ մի նոր, բաւական ուժեղ հոսանք առաջ եկաւ — օ. Կլիքիօնիզմ, բէնըշտէյնականականութիւն կամ քննադատական սօցիալիզմ (տես Ռեվիզիօնիզմ), որի ներկայացուցիչները՝ Բէրնըշտէյնը, Ֆօլմարը, Դաւիդը՝ Գերմանիայում, Ժօրէսը՝ Ֆրանսիայում, Վանդերվելդը՝ Բէլգիայում և Ադլէրը՝ Աւստրիայում, հերքելով սօցիալական յեղափոխութեան շուտափոյթ և արագ իրականացման հնարաւորութիւնը գոնէ մօտիկ ժամանակներում՝ առաջարկում են աստիճանական և դանդաղ բարեփոխութիւններով կապիտալիստական կարգերը վերափոխել սօցիալիստականի: Սօցիալիզմի անւան տակ յիշուում են նաև մի քանի այլ ուսմունքներ՝ կարեղըր-սօցիալիզմ, մոնիցիպալական սօցիալիզմ, պետական սօցիալիզմ և քրիստոնէական սօցիալիզմ, որոնք բոլորն էլ հասարակական կեանքի և քաղաքականութեան մէջ որոշ հոսանքներ լինելով և նպատակ ունենալով աշխատաւոր դասակարգի վիճակի բարելաւումը՝ իրանց համար կարուկ նպատակ չեն դնում սօցիալիզմի իրականացումը: Այսպէս՝ կաթէղըր-սօցիալիստները բանւորական հարցի լուծման համար առաջարկում են աշխատաւոր դասակարգի նիւթական դրութիւնը բարելաւել ուժօրմներով գործարանային օրէնսդրութեան մէջ և բանւորական ասսօցիացիաների կազմակերպութիւնը խրախուսելով, առանց գոյութիւն ունեցող տնտեսական կարգերին դիպչելու: Մ'ունիցիպալական սօցիալիզմ անւանում են քաղաքային ինքնավարութիւնների ջանքերը՝ քաղաքային այն բոլոր ձեռնարկութիւնները (տրամւայ, լուսաւորութիւն, ջրանցք և այլն), որ ամբողջ քաղաքի պէտքերին են ծառայում, դարձնել հասարակական սեփականու-

թիւն և առհասարակ բարեխաւել քաղաքի ազգաբնակութեան աղքատ դասակարգի վիճակը: Պետական սօցիալիզմի բովանդակութիւնը կազմում են պետութեան այն բոլոր ձեռնարկութիւնները, որ արւում են աշխատաւորական հարցի վերաբերմամբ: Պետական սօցիալիզմը հրապարակ է գալիս իբրև հակադիր հոսանք իսկական սօցիալիզմին: Նրա նպատակն է՝ պետական իշխանութեան միջամտութեամբ՝ պետութեան կօնտրօլին ենթարկել երկրի անտեսական կեանքը և դասակարգային հակասութիւններն ու ներհակութիւնը վերացնելով՝ սօցիալիզմի առաջն առնել: Բրիտտոնէական սօցիալիստներն՝ ի դէմս գլխաւորապէս կաթիլի և բողոքական հոգևորականութեան, իսկ վերջերս նաև ուս հոգևորականներին՝ հակառակ սօցիալիստական ուսմունքի՝ մարդկութեան կատարելագործութիւն են քարոզում աւետարանի ոգով, սրը և պէտք է թագաւորեցնէ երկրի վրայ արգարութիւնը, հաւասարութիւնն ու ընդհանուր բարօրութիւնը: Գործնականապէս քրիստոնէական սօցիալիզմն արտայայտում է իբրև բարեգործական ձեռնարկներին մի շարք՝ հոգևորականութեան հսկողութեամբ գլուխ բերած (ըստւորական ասսօցիացիաներ, սպառողական ընկերութիւններ, բարեգործական հիմնարկութիւններ, կոիւարբեցողութեան դէմ և այլն): (Տես Քաղաքատնտեսութիւն, Քաղաքական կուսակցութիւններ, Անարխիզմ, կաթիլը սօցիալիզմ):

ՊՅԻԱՆԻՍՏ-ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆՆԵՐ կամ էՍԷՐՆԵՐ—Տես Քաղաքական կուսակցութիւններ, Հողային ծրագիրներ:

ԱՕՅԻՕԼՕԳԻԱ. — Գիտութիւն, որի հիմնադիրն է Օգիւստ կօնտէ: Սօցիօլօգիան ուսումնասիրում է հասարակական երևոյթները և նրանց համագոյակցութեան ընդհա-

նուր օրէնքները (սօցիալական ստատիկա) և հետևողականութեան ընդհանուր օրէնքները (սօցիալական դինամիկա): Սօցիօլօգիան սկսեց զարգանալ XIX-րդ դարի երկրորդ կիսում և ունեցաւ զանազան ուղղութիւնների ուսումնասիրողներ ու բացատրողներ: Հասարակութեան օրգանական քեօրիան ստեղծեցին Սպենսերը, Լիլիկէնֆէլդը, Շէֆֆլէն, Վօրմսը, Դիւրկհէյմը: Ըստ այս թէօրիայի, հասարակութիւնը մի օրգանիզմ է վերջինիս յատուկ գծերով: Գարվինական թէօրիան հասարակական զարգացումը բացատրում է գոյութեան կուով, բնական ջոկումով և այլն (Կլէմանս Ռօյէ, Հէլլվալտ, Բէջգօդ, Կիրդ): Սօցիօլօգիան մօտեցնում են Բիօլօգիային (տես Բիօլօգիա) Միլլը և Սպենսերը, նշանակութիւն տալով նաև հոգեկան գործօններին: Նորագոյն ժամանակում առաջ եկան մարդկանց հոգեկան փոխազդեցութեան քեօրիան (ներշնչում և նմանութիւն), որին ներկայացուցիչներն են Միխայիլօվսկին, Տարդը, Վօրդը, Հիդդինգսը: Մարքսի ժամանակից ստեղծւել է տնտեսական մատերիալիզմը: (Տես Մատերիալիզմ, Գարվինիզմ):

ՍՕՁՏԼ—1) Տաճկաստանում, հոգևոր բարձրագոյն դպրոցների սաները: 2) Ազգային ֆանատիկոսներ Տաճկաստանում, որ թշնամի են Եւրօպայի քաղաքականութեանը:

ՍՖԻՆՔՍ—1) Ըստ աւանդութեան՝ թեաւոր առիւծի մարմին ու գլուխ և կնոջ կուրծք ունեցող հրէշ, որն ապրում էր Թէբէյի ժայռերի վրայ և ամեն պատահող մարդու զանազան հարցեր էր առաջարկում. եթէ պատասխանն անյաջող էր՝ նա իր գոհին սպանում էր: 2) Խորհրդաւոր, առեղծածային, հանելուկային մարդ:



- ՎԱԳՕՆ—Փոքր սենեակի նման ծածկւած կառք: Երկաթուղու մարդատար գնացքը կաղմւած է լինում 6—15 վագոնից, իսկ սպրանքատարը՝ մինչև 30—40: Կան և յատուկ նպատակով պատրաստած վագոններ—նաւթ փոխադրելու (տակառանման) և այլն: Տրամվայի (տես Տրամվայ) վագոններն աւելի փոքր են:
- ՎԱԼԻ—Տաճկական նահանգապետ:
- ՎԱԼԻԻՏԵ—1) Մուրհակի արժէքն սպրանքով կամ դրամով, 2) Դրամի արժէքը թանկագին մետաղով (ոսկով կամ արծաթով): 3) Թղթադրամի անւանական գնի յարաբերութիւնը նրանց արժէքին:
- ՎԱԼՍ—Գերմանական արագաշարժ պար:
- ՎԱԿԱՆՍԻՆ—Ազատ, չը բռնւած տեղ:
- ՎԱԿՆՅԻՆ—Արձակուրդ, աշխատանքից ազատ ժամանակ:
- ՎԱԿԶԱԼ—Երկաթուղային կայարաններում հասարակութեան համար նշանակւած դահլիճ:
- ՎԱԿԽ—Տես Բարոս:
- ՎԱԿԽԱՆԱԼ կամ ՎԱԿԽԱՆԱԼԻՆ—Տես Բարոս:
- ՎԱԿՈՒՅ—Մահմեդական մզկիթներին և բարեգործական ընկերութիւններին՝ տուրքերից ազատ՝ կայքերը:
- ՎԱՄՊԻՐ—Արիւնախում, ըստ ժողովրդական աւանդութեան՝ մեռեալ, որ գերեզմանից դուրս է եկել կենդանի մարդկանց արիւնը ծծելու: 2) Թռչող չղջիկ, մուգ-կարժրագոյն, սպրում է Ամերիակայում և կերակրում միջատներով կամ կենդանիների արիւնը ծծելով:
- ՎԱՅԻՍ—Տես Բրամանիզմ:
- ՎԱՆ—2 ինական տիտղոս, որ համապատասխանում է իշխան տիտղոսին:

- ՎԱՆԴԱԼ—Մարդ, որը հակառակ է վանդալիզմի: (Տես Վանդալիզմ):
- ՎԱՆԴԱԼԻԶՄ—Վանդալականութիւն, աւերածութիւն, անմիտ ոչնչացում:
- ՎԱՆՆԱ—Խորունկ տաշտ: Բժշկութեան մէջ վաննա ընդունել՝ նշանակում է լողանալ որոշ ժամանակով, ամբողջ մարմինը կամ նրա մի մասն ընկղմել որևէ հեղուկի, կամ ցեխի, աւազի, արևի ճառագայթների մէջ: 2) Դեղաբաններում վաննա կոչւում են այն ամանները, որոնց մէջ են ընկղմում զանազան իրեր, լւանալու կամ որոշ քիմիական ազդեցութեան ենթարկելու համար:
- ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԵՐԸ—Եկեղեցական հողերի հետ միասին բռնում են 2 միլ. դես. տարածութիւն: (Տես Հողապտուրքիւն):
- ՎԱՍՍԱԼ—Տես Ֆեօդալիզմ:
- ՎԱՍՍԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ—Վոչւում է ուրիշ պետութեան գերիշխանութեան տակ գտնուող պետութիւնը, որն ունի իր կառավարիչը (իշխանը, թագաւորը) և ներքին անկախ կառավարութիւնը: Օրինակ՝ Բուխարան Ռուսաստանի վասսալն է, Եգիպտոսը՝ Տաճկաստանի:
- ՎԱՏԻԿԱՆ—Հռոմի պապի պալատը, որ շինւած է V-րդ դարում Վատիկան բլուրի վրայ: Մի հակայական շինութիւն է, որ 22 բակ ունի, հազար սենեակ և լայնարձակ պարտէզներ: Վատիկան կոչւում է և կաթոլիկ եկեղեցու կենտրոնական վարչութիւնը:
- ՎԱՏԻԿԱԼՕԶԷՏ—Այնպիսի յարմարութիւններով շինւած արտաքնոց, որտեղ անմաքրութիւնն անմիջապէս լւացւում է:
- ՎԱՐԻԱՆՏ—Միևնոյն պատմութեան կամ գրւածքի տարբեր ընթերցանութիւն կամ պատմւածք:

ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Կամ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ —
Տես Բանկ:

ՎԵԴԱ—Տես Վեդդա:

ՎԵԴՒՆ—Բրամիններւի կրօնական սրբազան գրքերը, որ ընդ-
ամենը չորս են: (Տես Բրամանիզմ):

ՎԵԼՕՍԻՊԷԴ—Հեծանիւ, 2 կամ 3 անիւ ունեցող գործիք,
որի հեծնողը շարժում է անիւներն իր ոտքերով և գը-
նում առանց ուրիշի օգնութեան:

ՎԵԿՍԵԼ—Մուրճակ: Գոյութիւն ունեցող օրէնքների հիման
վրայ կազմուած փառաթուղթ, որով մի իրաւատէր
անձ կամ հաստատութիւն միւսի վերաբերմամբ որոշ
գրամական պարտաւորութիւն է յանձն առնում: Վեկ-
սելն սկիզբ է առել Իտալիայում, երբ վերջինս բռնեց
առաջին տեղն իրրև առևտրական կենտրոն (միջին դա-
շերում): Վեկսելի գործածութիւնը Ռուսաստան է
մտնում միայն օտարազգի վաճառականների հետ: Վեկ-
սելները լինում են երկու տեսակի՝ 1) փոխադրական
(переводный), որով գրածը փոխադրում է ուրիշի
վրայ, 2) հասարակ վեկսել, որով պարտապանը պար-
տաւորում է վճարել մուրճակատիրոջն որոշ գումար:
Վեկսելի մէջ կամ նշանակում է հատուցման ժամանա-
կը, կամ գրում է «ըստ պահանջի», այսինքն՝ երբ որ
պարտատէրը պահանջէ: Վեկսելը տրւում է կամ վերց-
րած գրամի փոխարէն (գրամական վեկսել), կամ ապ-
րանքի (ապրանքային): Վեկսելը պէտք է գրւած լինի
պետութեան, յատուկ այդ նպատակով բաց թողած,
կնքւած թղթի վրայ, որը վաճառում է նշանակւած
յայտնի գնով, նայելով թէ ի՞նչ գումարի մուրճակ է
տրւում: Վեկսելը համարում է պարտքի անվիճելի ա-
պացոյց (երբ՝ ի հարկէ՝ կեղծած չէ) և դատարանը իր
վճիռը կայացնում է անմիջապէս:

ՎԵԿՍԵԼԻ ԿՈՒՐՍ—կոչւում է օտար պետութիւնների վեկսելի գինը բիրժայում (տես Բիրժա): Օրինակ՝ ասում են. «Կուրսը Փարիզում երեք ամիս յետոյ 350 սանտիմով» — դա նշանակում է, որ վեկսելում նշանակւած ամեն մի ուրբու դէմ, երեք ամիս յետոյ, պէտք է վճարել Փարիզում 350 սանտիմ, այսինքն՝ նիժէ վեկսելը 100 ուրբու է, հասուցումը կը լինի 35000 սանտիմ: (Տես Կուրս):

ՎԵՆԵՐԱ—1) Սիրոյ, գեղեցիկութեան և ամուսնութեան շատւածունու հոռմէական անունը: Համապատասխանում է հայ Աստղիկ շատւածունուն: 2) Այդպէս է կոչւում և մոլորակներից մէկը, որը լուսադիմին երևալիս՝ կոչւում է Արուսեակ:

ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ—Տես Սիֆիլիս:

ՎԵՏԵՐԱՆ—Հին, երկար ժամանակ ծառայած զինուոր: Վետերան է կոչւում և հին, արժանաւոր զործիչը զանազան ասպարէզներում:

ՎԵՏԵՐՆԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆ—Բժշկականութեան այն մասը, որ զբաղւում է անասունների հիւանդութիւններով, քննում է վերջիններիս դէմ կուելու միջոցները:

ՎԵՏԵՐՆԱՐ—Անասունների բժիշկ:

ՎԵՐԻՆ ՊԱԼԱՏ—Տես Պարլամենտ:

ՎԵՏՕ—նշանակում է «արդելում եմ»: Այդ ֆորմուլով Հին Հռոմում ժողովրդական տրիբունները կանգնեցնում էին Սենատի վճիռները: Այժմ վետօն պետական իրաւունքի այնպիսի ինստիտուտ է, որի համաձայն պետական իշխանութեան որևէ օրգանը կանգնեցնում է միւս օրգանների վճիռը: Վետօյի իրաւունքը սովորաբար միապետին է վերապահւում: (Տես Դեմօկրատիա):

ՎԵՐՄԻՇԷԼ—Իտալական արիշտա:

ՎԵՋԻՐ—Տիտղոս, որ արւում է արևելքում բարձր պաշտօն-

- հաներին: Մեծ-Վեզիր—Տաճկաստանում կոչուում է պետական ամենաբարձր պաշտօնեան:
- ՎիԳիլեներ—կոչուում են Անգլիայի պարլամենտական ազատամիտ կուսակցութեան անդամները: (Տես Լիբերալիզմ):
- ՎիՉԱՎի—Դէմ առ դէմ:
- ՎիՉիՏ—Նյոյ, այցելութիւն:
- Վիլլեմօթ—Տաճկական նահանգ, որ կառավարուում է վաշան: Վիլայէթը բաժանուում է սանջաղների (գաւառների):
- ՎիՄԱԳՐԱՏՈՒՆ—Վրմագրութեան արհեստանոց: (Տես Վիմագրութիւն):
- ՎիՄԱԳՐՈՒԹԻՒՆ—Տպագրութեան այն ձևը, որի ժամանակ նկարում կամ քանդակում են քարի վրայ կապա դուրս բերում թղթի վրայ:
- ՎիՇՆՈՒ—Հնդկական աստուածային երրորդութեան մի անձը: Արևի և Բարիի մարմնացումը: (Տես Բրամանիզմ):
- ՎիՍՏ— Թղթախաղի մի տեսակը:
- ՎիՐՏՈՒԹՅՈՒՆ—Երաժշտական կամ որևէ արեստի մէջ ծայրահեղ կատարելութեան հասած մարդ:
- ՎիՅ—Փոխ, մասնիկ, որ աւելացնելով որևէ պաշտօնեայի տիրոջ սկզբին՝ տալիս են նրա օգնականին կամ տեղապահին: Օրինակ՝ վից-մինիստր=փոխ-մինիստր:
- ՎՈՒԱԼ—բարակ, թափանցիկ գործածք, որով կանայք ծածկում են իրանց հրեսը:
- ՎՈՒՎԿԱՆ—կրակի և մետաղագործութեան շաստածը Հռոմում:
- ՎՕԴՎՎԻ—Թեթև, զաւեշտական բովանդակութեամբ թատրոնական արտադրութիւն:
- ՎՕԼՆՊԻԻԿ—Արհեստական լեզու, որ 1880-ին հնարեց գերմանացի պաստօր Շլէյէբը, որի նպատակն էր ամենքին հասկանալի համաշխարհային լեզու ստեղծել:
- ՎՕՅԵԱԺ—պտոյտ, ճանապարհորդութիւն:

S

ՏԱԼՄՈՒԴ— Հրէաների կրօնական-իրաւական զիրքը, որ կազմւած է Ք. ա. և պարունակում է իր մէջ Աստուածաշընչի բացատրութիւնները, բարոյախօսութիւններ, ցուցմունքներ կրօնական ծիսակատարութիւնների և քրէական ու քաղաքացիական խնդիրների մասին, տեղեկութիւններ աստղագիտութիւնից, մաթեմատիկայից, բժշկութիւնից, հնագիտութիւնից, առողջապահութիւնից. անեկզօտներ, հերթաթներ, աւանդութիւններ: Այդպիսի բազմազան բովանդակութեան հետ Տալմուդն ունի նաև բազմաթիւ հակասութիւններ և առանձին անհամբերողութեամբ է վերաբերում զէպիսայակրօնները:

ՏԵԿՏԻԿԱ— Գործելակերպ: 1) Զինւորական գիտութիւն, որն ուսումնասիրում է զօրքի պատերազմական յատկութիւնները և նրանց պատրաստութեան խնդիրը խաղաղ ժամանակ, ինչպէս և պատերազմի միջոցին զանազան զօրաբաժիններն այս ու այն նպատակին ծառայեցնելու ձևերը: 2) Նոյն նշանակութեամբ տակախկա բառը գործածւում է նաև հասարակական-քաղաքական հարցերում: Քաղաքական կուլի բոլոր այն միջոցներն ու ձևերը, որ կուսակցութիւնը գործ է ղընում, իր ծրագրով որոշւած նպատակներին հասնելու համար, կոչւում է նրա տակախկան: Ամեն կուսակցութեան տակախկան լիովին համապատասխանում է կուսակցութեան դասակարգային կազմին: Եթէ կուսակցութիւնը տիրող դասակարգերի շահերը պաշտպանելու համար է ստեղծւած, նրա գործունէութիւնը լեզալ կլինի և տակախկան խաղաղ ու պաշտպանողական, մանաւանդ այն զէպքում, երբ գոյութիւն ունեցող հա-

սարակական ու քաղաքական կարգերի դէմ թշնամական դիրք լինեն բնած դժգոհ ու զրկած դասակարգերը: Իսկ եթէ կուսակցութիւնը ճնշած ու զրկած դասակարգերի շահերը պաշտպանելու համար լինի կաղձակերպւած և նպատակ ունենայ հիմնականօրէն փոխել գոյութիւն ունեցող հասարակակարգերը—այդ կուսակցութեան գործունէութիւնը կլինի անլեզալ-ապօրինի, դիրքը՝ թշնամական դէպի գոյութիւն ունեցող պետական-հասարակական կարգերը, իսկ տակտիկան՝ յարձակողական ու կտրուկ այն դասակարգերի ու կուսակցութիւնների վերաբերմամբ, որոնք գոյութիւն ունեցող կարգերի կողմնակիցն ու պաշտպանը կհանդիսանան:

ՏԱՃԱՐԱԿԱՆՆԵՐ—Տես Տամպլիերներ:

ՏԱՄՊԼԻԷՐՆԵՐ կամ **ՏԱՃԱՐԱԿԱՆՆԵՐ**—Ասպետական օրդէն, որ հիմնւած է 1119 թ., Երուսաղէմ գնացող քրիստոնեայ ուխտաւորներին պաշտպանելու համար. ոչնչացւրւած է 1312 թ.:

ՏԱՄՕԺՆԵԱ—Մաքսատուն. առանձին պետական հիմնարկութիւն, որի նպատակն է խիստ հսկողութիւն ունենալ արտասահմանեան ապրանքների ներմուծման վերայ, ուստի մաքսային հաստատութիւնները կենտրոնացած են լինում գլխաւորապէս պետութեան այն սահմաններում, որտեղից ամենից շատ է ապրանք ներմուծում: Մաքսային հսկողութիւնը հետապնդում է սովորաբար հրեք նպատակի.—1) Ֆիսկալ—պետութեանն որոշ եկամուտ հասցնել, ներմուծող ապրանքներից մաքս վերցնելով, 2) տնտեսական—ներքին, հայրենական արդիւնագործութիւնը պաշտպանել օտարերկրեայ մրցութիւնից, արտասահմանեան ապրանքների վրայ խոշոր մաքս նշանակելով և 3) ուստիկանական—

- արգելել գոյութիւն ունեցող հասարակական-պետական կարգերի տեսակէտից ֆնասակար առարկաների ներմուծումը (զէնք, յիզափոխական զրականութիւն և այլն):
- ՏԱՆՏԱԼ**—Ֆրիզիէի թագաւորը, որ աստուածներին իր որդու մտով հիւրասիրելու պատճառով դատապարտւած էր տարտարոսում (դժողքում), պտղատու ծառերի տակ, մինչև շրթունքները ջրի մէջ կանգնած, սոված ու ծարաւ մնալու և յաւիտեանս տանջւելու: Այստեղից է «Տանտալի տանջանք» արտայայտութիւնը:
- ՏԱՐԻՖ**—Ապրանքներ և մարդիկ փոխադրելու սակազինը, որ հրատարակւում է ի գիտութիւն ամենքին:
- ՏԱՐԻՖ ԴԻՖՖԵՐԵՆՑԻԱԼ**—Տես Դիֆֆերենցիալ տարիֆ:
- ՏԱՐՏԱՐՈՍ**—Ըստ Հոմերոսի՝ խոր անդունդ, որ Ջելսը գըցում էր յանցաւորներին: Տարտարոսն աւելի ուշ ժամանակներում ստացաւ դժողքի նշանակութիւն:
- ՏԱՐՏԻՖ**—Ֆրանսիացի գրող Մօլիէրի Տարտիֆ կօմեդիայի հերոսը, որ սուրբ ձևացող սնոտիապաշտ, կեղծաւոր, անբարոյական մի մարդ էր:
- ՏԵԼԵՖՕՆ**—Հեռախօս. գործիք, որի միջոցով խօսում են հեռաւոր տարածութիւնների վրայ:
- ՏԵԽՆԻԿ**—Արւեստագէտ:
- ՏԵԽՆԻԿԱ**—Արւեստագիտութիւն:
- ՏԵԽՆՕԼՕԳ**—Արւեստագէտ, տեխնօլօգիայի մասնագէտ: (Տես Տեխնօլօգիա):
- ՏԵԽՆՕԼՕԳԻԱ**—Գիտութիւն, որն ուսումնասիրում է հում նիւթերը մշակելու ձևերը: Բաժանւում է երկու մասի. 1) մեխանիքական տեխնօլօգիա, որն զբաղւում է հում նիւթերի մշակութեամբ, առանց նրանց բաղադրութիւնը փոխելու և 2) քիմիական տեխնօլօգիա, որն ուսումնասիրում է հում նիւթերի քիմիապէս մշակելու ձևերը:

ՏԵՄՊԵՐԱՄԵՆՏ—Խառնւածք, մարդու հոգեկան տրամադրութեան ընդհանուր բնոյթը: Ընդունւած է չորս տեմպերամենտ. 1) խօլերիկ—բարկացկոտ, մաղձոտ, դանասիրտ, դիւրաբորբոք, 2) սանգւիինիկ—ուրախաբարոյ, զւարթ, վառվռուն: 3) ֆլեգմատիկ—սառնարիւն, անկենդան և 4) մելանխօլիկ—մելամաղձոտ, սևամաղձոտ:

ՏԵՆԴԵՆՏ—Ձգտումն մի որոշ նպատակի:

ՏԵՆԴԵՆՏԻՕԶ—Որոշ նպատակի ձառայող:

ՏԵՆՑԻ—Բարձր արական ձայն:

ՏԵՎՏՕՆԵՐ—1) Սսպետական օրդէն, որ հիմնւած է 1190 թ.

Պաղեստինում, հիւանդ և վիրաւոր խաչակիրներին օգնելու համար: 2) Գերմանական հին տեղ, որի անունով յաճախ կոչում էին բոլոր գերմանացիներին:

ՏԵՐՄԻԴՕՐ—Ֆրանսիական յեղափոխական տարւայ 11-րդ ամիսը (յուլիսի 19-ից մինչև օգոստոսի 18-ը):

ՏԵՐՄԻՆ—Մասնագիտական բառ կամ արտայայտութիւն գիտութեան և արհեստների մէջ:

ՏԵՐՄՕՄԵՏԲ—Ջերմաչափ:

ՏԵՐՐԻՏՕՐԻԱ—Երկիր, պետութեան սահմանը:

ՏԵՐՐՕՐ—Ահաբեկումն, ահաբեկութիւն:

ՏԵՐՐՕՐԻՍ—1) Տերրօրի կողմնակից: 2) Տերրօր կատարող:

ՏԷՐԵՐԻ ՊԱՒԱՏ—Տես Պարլամենտ:

ՏԷՐՕԿՐԱՏԻԱ—Հարստապետութիւն. կառավարութեան այնպիսի ձև, որի ժամանակ քաղաքացիական իրաւունքներ վայելում են միայն հարուստները, իրանց հարըստութեան քանակի համեմատ:

ՏԻՊ—Տիպար:

ՏԻՊԻՔ—Բնորոշ, առանձնայատուկ:

ՏԻՏԱՆ—Հսկայ:

ՏԻՏՈՒԼԵԱՐՆԻՅ ՍՕՎԷՏՆԻԿ—Տես Աստիճանների կարգ:

ՏԻՐԱԺ—Վիճակահանութիւն:

ՏԻՖ—ժանտատենդ. սիպնոյ տիֆ—բժաւոր տիֆ. բրիւշնոյ տիֆ—փորահարինք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄ—Տես Լիբերալիզմ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ, նոյնը և Դիալեկտիկական մատերիալիզմ կամ Պատմութեան տնտեսական հասկացողութիւնը—Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի պատմա-փիլիսոփայական ուսմունքը, որը մարդկային հասարակութիւնների պատմական զարգացման հիմքն ընդունում է ժողովուրդների տնտեսական կեանքի տարրերային զարգացումը և կատարելագործումը: Գոյութեան կռիւն աւելի յաջող առաջ տանելու համար, մարդիկ անյիշելի ժամանակներէ սկսում են հասարակութիւններ կազմել: Բնութեան դէմ մղած տեւական, ծանր կռիւր հասարակական մարդուն ստիպում է իր աշխատանքը թեթեւացնելու մասին մտածել և դրդում է նորանոր գիւտեր ու կատարելագործութիւններ անելու: Գործիքները և արտադրութեան միջոցներն ու ձևերը անշեղ կերպով զարգանում են ու կատարելագործւում: Այս տարրերային պրօցէսսի մէջ մարդկային խելքն ու կամքը զարգանալով՝ պատրաստի մասերն ու տարրերը իրար միացնելու դերն են միայն կատարում: Մարդը, որոշ տնտեսական միջավայրում ապրելով, իր կարիքները բաւարարելիս այնպէս է վարւում, ինչպէս թելադրում է նրան շրջապատող տնտեսական միջավայրը.— թէ որ նա ապրում է ծովի ափին՝ ձկնորս է, անտառում՝ որսորդ, խոտառատ հովտում՝ անասնապահ—հովիւ, հողի պակասութեան դէպքում՝ նստակեաց երկրագործ և այլն, և այլն: Մարդու խելքը և կամքը արտադրողական ոյժերի զարգացման պրօցէսսում նոր,

գոյութիւն չունեցող բան չեն ստեղծում, այլ միայն միացնում են այն, ինչ որ իրան շրջապատող նիւթական միջավայրում ցրւած է և որոնող մարդու աչքին և ընկնում: Մարդկային խելքը, սեփական տնտեսական բարօրութիւնն աչքի առաջ ունենալով, որոշ պահանջ է դրում արտադրողական ոյժերն աւելի զարգացնելու և այն, ինչ որ իրան հարկաւոր է, գտնում է իրան շրջապատող երևոյթներէ և բնութեան ոյժերէ մէջ: Առանձին պատմական շրջանների մարդիկ՝ արտադրողական ոյժերի զարգացմանը մասնակցելիս՝ հետապնդում են լոկ իրանց մօտակայ անձնական նպատակները, առանց մտածելու այն բանի մասին՝ թէ ի՞նչ ազդեցութիւն կունենայ այդ զարգացումը մարդկութեան ապագայի վրայ: Եւ բնութեան ոյժերը, որ գործադրւած են լինում իբրև մարդուն ծառայելու միջոցներ, արտադրող ոյժ դառնալով, սովորաբար իրանց զարգացմամբ աւելի հեռու են գնում, քանի՛ք մտադրւած են լինում մարդիկ: Արտադրողական ոյժերի և արտադրութեան ձևերի տարերային զարգացումը մարդկային հասարակութիւնների թէ՛ տնտեսական և թէ՛ հոգեկան յառաջադիմութեան ու զարգացման հիմքը, բազիսն է: Հասարակական արտադրութեան պրօցէսսի մէջ մարդիկ որոշ փոխադարձ յարաբերութիւնների մէջ են մտնում, և վերջիններս կախւած են այն դերից, որ նրանք խաղացել են արտադրութեան մէջ: Այս հասարակական խմբերից առաջանում են դասակարգերը: Հասարակութեան զանազան դասակարգերը հասարակական արտադրութեան մէջ տարբեր և նոյնիսկ իրար հակառակ կերպով են շահագրգռւած. այստեղից ծագում է կռիւլը դասակարգերի մէջ: Դասակարգային կռիւլը քաղաքակրթւած հասարակութիւնների ամբողջ պատմութեան

բովանդակութիւնն է կազմում: Հասարակութեան դասակարգային կառուցւածքն որոշում է նրա կեանքի բոլոր ձևերը, բոլոր կողմերը,—պետական և իրաւական կազմը, բարքերն ու սովորոյթները, կրօնը, փիլիսոփայութիւնը, գիտութիւնը, արեստը, զրականութիւնը,—այս բոլորն ամբողջովին կախւած են հասարակութեան դասակարգային կազմւածքից: Արտադրողական ոյժերի անշեղ զարգացումը միքանի դասակարգերին տանում է դէպի զառամութիւնը, թէև սրանք մինչ այդ գերակշռող դիրքի տէր լինէին, և կեանքի է կոչում նոր, մինչ այդ ճնշւած դասակարգեր: Այն անցողական շրջանները, երբ խիստ կերպով փոփոխուում է հասարակութեան դասակարգային կառուցւածքը, երբ տէրերն ու իշխողները զրկւում են իրանց արտօնեալ դրութիւնից, իսկ ճնշւածներն ազատուում են կեղեքումից և բռնում են իշխողներին տեղը—այդ շրջաններն են, որ կազմում են Սօցիալական յեղափոխութիւնների բովանդակութիւնը: Դիալեկտիքական մատերիալիզմն իր անունն ստացել է՝ մի կողմից՝ մտածողութեան դիալեկտիքական մեթօդից, որ դրւած է պատմական ուսումնասիրութեան հիմքում, իսկ միւս կողմից՝ նրանից, որ այս ուսմունքը պատմութեան հիմնական դրոշիչ ոյժը համարում է տնտեսական, արտադրողական ոյժերի զարգացումը: Տնտեսական մատերիալիզմի ուսմունքը կոչւում է նաև Մարքսիզմ: (Տես Սօցիալիզմ):

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ԻՆՏԵՆՍԻՒՒ—Տես Ինտենսիւ տնտեսութիւն:

ՏՈՒԱԼԷՏ—1) Արդուզարդ: 2) Արդուզարդի սեղան:

ՏՈՒՔԵՐԿՈՒԼԻՕԶ—Բարակացաւ, թորախտ:

ՏՈՒԺՈՒԲԿԱ—Վերնազգեստ:

ՏՈՒՆԷԼ—Ստորերկրեայ անցք, ճանապարհ:

ՏՈՒՇ—1) Ողջոյն նւագածութեամբ: 2) Սև ներկ, որ ծախ-

ուժ է կտորներով: Ամենալաւ տուչը համարուժ է չինականը:

ՏՈՒՐԻՍ—Գիտական նպատակով կամ զւարճութեան համար շրջող ճանապարհորդ:

ՏՈՒՐՆԷ—Պտոյտ:

ՏՈՒՖԼԻ—Ունաման:

ՏՐԱԳԵԴԻԱ—Դրամատիքական արտադրութիւն, որի մէջ հերոսի կրած տանջանքները բարձր-բարոյական տարբեր են պարունակուժ իրանց մէջ: Տրագիդիան սկիզբ է առնել Յունաստանուժ, ուր զարգացման ամենաբարձր աստիճանին հասնուժ է էսխիլի, Սօֆօկլի և էւրիպիդի օրով: Հին յոյների աշխարհայացքով, մարդկանց պիտին սաւառնուժ է անխուսափելի ճակատագիրը: Ճակատագրի դէմ գնալը, կամ նրա օրէնքները խախտելը՝ հերոսի համար մի ոճիր է, թէկուժ նա հակառակ գնացած էլ չլինի բարոյականութեան: Հերոսն իր յանցանքի համար դատաւարուժ է տանջանքների, որոնք միայն կարող են հաշտեցնել նրան ճակատագրի հետ: Ըստ Արիստոտէլի՝ տրագիդիայի նպատակը բարձրագոյն ոյժի դէմ մեղանշող յանցաւոր հերոսի արդարացումն է՝ տանջանքների միջոցով: Շէքսպիրի ժամանակից տրագիկականի հասկացողութիւնը փոխուժ է— քանի որ փոխուժ են նաև բարոյականի ըմբռնողութիւնը: Նոր տրագիդիան հնից այն բանով է տարբերուժ, որ մինչդեռ հինը դրուբեան եւ վիճակի տրագիդիան էր, օբիեկտիւ տրագիդիան էր, նորը դառնուժ է սուբիեկտիւ կամ բնաւորութիւնների տրագիդիա: Այստեղ տրագիդմը կատարուժ է հերոսի ներքին աշխարհուժ: Յոյն յայտնի տրագիկներն են՝ էսխիլ, Սօֆօկլ, էւրիպիդ, Սպանիայուժ՝ Լօպէ-ղը-Վէզա, Կալտերօն, Տելլին, Փրանսիայուժ՝ Կօրնէյլ, Ռասին, Վօլտէր, Գեր-

մանխայում՝ Շիլլեր, Անգլիայում՝ Շէքսպիր, Ռուսաստանում՝ Սոււմարոկով, Կնեաժնին, Օդերով, Պուշկին:

ՏՐԱԳԻԿ—1) Հեղինակ, որ գրում է տրագեդիաներ: 2) Դերասան, որ խաղում է տրագեդիաների գլխաւոր դերը:

ՏՐԱԳԻԿՕՄԵԴԻԱ—Իրամատիքական երկ, որտեղ տրագիկական սիւժէտը կոմիկական ձևով է պատկերացրւած, կամ որտեղ տրագիկական ու կոմիկական տարրերը փոխանակոււմ են իրար հետ: (Տես Տրագեդիա):

ՏՐԱԿՏ—Ճանապարհ, ուղղութիւն, գիծ:

ՏՐԱԿՏՍՏ—1) Միջազգային պայմանագիր: 2) Գիտական արտադրութիւն:

ՏՐԱԴԻՅԻԱ—Աւանդութիւն:

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԻԴԷԱԼԻԶՄ—Տես Իդէալիզմ:

ՏՐԱՄԱԲԵՆՈՒԹԻՒՆ—Գիտութիւն, որն ուսումնասիրում է գիտական մտածողութեան եղանակներն ու մեթոդները և առհասարակ մտածողութեան դերը գիտութեան զարգացման մէջ:

ՏՐԱՄՎԱՅ—Երկաթուղի քաղաքի սահմաններում. շարժւում է գլխաւորապէս ձիով կամ ելէքտրականութեամբ:

ՏՐԱՆՍՊԱՐԵՆՏ—Տողացանց, տողացոյց:

ՏՐԱՆՍՅԵՆԴԵՆՏԱԼ ԻԴԷԱԼԻԶՄ—Տես Իդէալիզմ:

ՏՐԱՆՍՅՕՐՄԻԶՄ—Չեափոխականութիւն. ուսմունք, թէ բոլոր բուսական ու կենդանական աշխարհը ծագել է անտիճանական ձեւփոխութեամբ—էվոլիւցիայով, ըստ որում, աւելի բարձն առաջ է եկել աւելի պարզից ու տարրականից: (Տես Դարւիցիզմ, էվոլիւցիոնիզմ):

ՏՐԵՕՍՏՆԵՐ—Արդիւնագործների միութիւններ: Տրեստը ներկայումս արտադրութեան կենտրոնացման ամենաբարձր տիպն է, հսկայական արդիւնագործական ընկերութիւններ, որ կենտրոնացնում են իրանց ձեռքում առապին կապիտալներ և միացնում արդիւնագործու-

Թեան միևնոյն ճիւղը նոյնիակ մի քանի երկրներում։ Սովորաբար կազմուած են մի քանի ընկերութիւններից։ Կարտէշներից (տես Կարտէյ, Մինդիկատ) և սինդիկատներից տրեստները նրանով են տարբերուած, որ մինչդեռ սրանք միատեսակ ձեռնարկութիւնների անհաստատ դաշնակցութիւններ են՝ իրար հետ կապւած այս ու այն խնդրի վերաբերմամբ որոշ համաձայնութեամբ, իսկ իրանց մնացած գործունէութեան մէջ լիովին անկախ են իրարից, — տրեստը մի ամբողջական հսկայական ձեռնարկութիւն է, իր կենտրոնական միայն մէկ վարչութեամբ։ Տրեստներն առանձնապէս լայն ծաւալ են ստացել Ամերիկայում և այնտեղից իրանց ազդեցութիւնը տարածում են նաև Եւրոպայում։ 1903 թիւ յունւարի 1-ին Հիւսիս. Ամերիկայի տրեստների դրամագլուխը հասնում էր հարիւր միլիարդ ֆրանկի (=40 միլիարդ ուրլի), որը Միացեալ Նահանգների ամբողջ հարստութեան $\frac{1}{5}$ մասն է կազմում։

ՏՐԷԴ-ՈՒՆԻՍՆ — Տես Բանկորական միութիւններ։

ՏՐԻՊՊԷԼ — Միզային անցքի բորբոքումն։

ՏՐԻԻԻԶՄ — Ակնյայտնի ճշմարտութիւն, որ յայտնի է ամենքին և որը կրկին բացատրելը ծիծաղելի կը լինէր։

ՏՐԵՐԱՆՏ — Համբերատար. համբերատար կրօնական խընդիրներում։

ՏՐՆ — Ծանրութեան, հատիկների և հեղուկների չափ։ Անգլիական տօնը = 62 փութի, գերմանական, աստորիական և ֆրանսիականը = 61 փութի։

ՏՐՆԷԼ — Տես Տուններ։

ՏՐՊԹՐԱՅ — Տեղագիր, տեղագրող։ (Տես Տօպօգրաֆիա)։

ՏՐՊԹՐԱՅԻՆ — Տեղագրութիւն, որիէ տեղի, երկրի նկարագրութիւն՝ ամենայն մանրամասնութեամբ։

ՏՐՐԱ — Մոպսէսի օրէնսգրքի հին հրէական անունը։

ՏՕՐԷԱԴՅՐ—Ցլամարտիկ Սպանիայում:

ՏՕՐԻՆԵՐ—Անգլիայի պարլամենտական պահպանողական կուսակցութեան անդամները: (Տես Կօնսերևատիզլ):

ՏՕՐՏ—Մեծ կարկանդակ, մրգերով, ձուով, շաքար-կաթով պատրաստած:

Յ

ՅԱՐ—Ռուսաց թագաւորի տիտղոսը:

ՅԱՐԻԶՄ—Քաղաքական սիստեմ, որ հիմնւած է անսահման իշխանութեան վրայ: (Տես Կառավարութեան մեք):

ՅԵՆԶ—Այն պայմանների ամբողջութիւնը, որոնք մարդուն որոշ քաղաքական կամ այս ու այն պաշտօնը վարելու իրաւունք են տալիս:

ՅԵՆԶՈՒՐԱ—Գրաքննութիւն: Յենզուրայի նպատակն է սահմանափակել խօսքի ազատութիւնը և յատկապէս միապետական ու բռնապետական երկրներում արգելել քաղաքական ազատ կարգերի մասին խօսելը: Յենզուրան լինում է երկու տեսակի՝ նախնական և պատժողական: Նախնական ցենզուրայի ուղղակի և անմիջական նպատակն է սահմանափակել խօսքի ազատութիւնը և թոյլ չտալ տպագրելու այնպիսի արտադրութիւններ, որոնք վնասակար են համարուում. դրա համար ամեն մի գրւածք, նախքան տպագրութեան յանձնելը, պէտք է ներկայացւի գրաքննիչին, որը կարգալուց յետոյ իր ստորագրութեամբ և կնիքով իրաւունք է տալիս տպելու: Նախնական ցենզուրան մեծ մասամբ քաղաքական նպատակներ ունի: Նախնական ցենզուրայի ենթարկւած հեղինակութիւնն այնուամենայնիւ չէ ազատում նաև դատաստանական պատասխանատուութիւնից, որին ենթարկում է գիրքը կամ լրագիրը լոյս տեսնելուց յետոյ: Պատժողական

ցենզուրան պատասխանատուութեան է ենթարկում հեղինակին կամ հրատարակչին՝ զրքի կամ լրագրի լոյս տեսնելուց յետոյ, դատարանի միջոցով: Յենզուրայի կանոնները կախած են երկրի քաղաքական պայմաններից: Քաղաքականապէս ազատ երկրներում գոյութիւն չունի ոչ մի տեսակի ցենզուրա, և տպագրական խօսքի միջոցով յանցանք գործողներն ենթարկուած են դատաստանական պատասխանատուութեան այն հիմնարկութեան կամ անհատի կողմից, ում որ իրանց բովանդակութեամբ փաստուած են: Ռուսաստանում մինչև 1905 թ.ի հոկտ. 17-ը գոյութիւն ունէր նախնական և պատժողական խիստ ցենզուրա, իսկ այդ մանիֆէստով տրուեց խօսքի լիակատար ազատութիւն, բայց նոյն տարւոյ նոյեմբերի 24-ի ժամանակաւոր կանոններով նորից ազատ խօսքը սահմանափակուեցին երկրակեց: Ներկայումս տպագրական խօսքն ենթարկուած է թէ՛ այդ կանոններին և թէ՛ գեհեւրալ-գուբերնատօրներին, որոնք անսահման իրաւունք են վայելում ամեն տեսակ պատիժ տալու յանցաւոր համարուածներին: Յենզուրան իրագործուած են յատուկ պաշտօնեաները՝ ցենզորները (գրաքննիչները) և ցենզուրական կօմիտեակները (գրաքննական ատեաններ): Յենզուրական կօմիտէաներ գոյութիւն ունեն Ռուսաստանի չորս քաղաքներում՝ Պետերբուրգ, Մօսկվա, Վարշավա և Թիֆլիզ: Արտասահմանեան հրատարակութիւնների համար գոյութիւն ունեն յատուկ կօմիտէաներ Պետերբուրգում, Ռիգայում, Օդեսայում և մի քաղաքում՝ Մօսկվայում: Յենզուրական բոլոր գործերն ենթարկուած են ներքին գործոց նախարարութեանը: Ռուսաստանում գոյութիւն ունեն նաև՝ ճոզեւոր ցենզուրա (կըրօնական հրատարակութիւնների համար) և պալատա-

կան ցենզուրա (կայսերական պալատի ներքին կեանքին վերաբերեալ հարցերի համար):

ՅԵՆԶՈՒՐԱԿԱՆ ԿՕՄԻՏԷՏ—Տես Յենզուրա:

ՅԵՆԶՕՐ—Գրաքննիչ: (Տես Յենզուրա):

ՅԵՆՏ—Դրամ. նիդերլանդիայում $= \frac{1}{100}$ գուլդէնի, Հիւսւսւմեր. Միացեալ Նահանգներում $= \frac{1}{100}$ դոլլարի:

ՅԵՆՏՆԷՐ—Ծանրութեան չափ Գերմանիայում, Շվէյցարիայում և Դանիայում $= 50$ կիլօգրամմի $= 3,1$ փութի: Աւստրիայում, Ֆրանսիայում, Սպանիայում, Փորթուգալիայում ցենտնէրը $= 100$ կիլօգրամմի $= 6,1$ փութի:

ՅԵՆՏՐԱԼԻԶՄՅԻԱ—Կենտրոնացում:

ՅԵՆՏՐՕՖՈՒԳ—Տես Սեպարատոր:

ՅԵՆԲԵՐ—Օձի պոչով ու բաշով բազմապլխանձ մի շուն, որ ըստ յունական աւանդութեան՝ պահպանում է անդըրերկրեայ աշխարհի մուտքը:

ՅԵՍԱՐԵՎԻԶ—Ռուսական թագաժառանգի տիտղոսը, որ հաստատուած է 1797 թ. ապրիլի 5-ի մանիֆէստով: Յեսարեվիչ տիտղոսը կարող է շնորհւել նաև կայսերական ընտանիքի միւս անդամներին՝ առանձին ծառայութիւնների համար:

ՅԵՍԱՐԵՒԷՆԱ—Ռուսական թագաժառանգի կինը:

ՅԻԼԻՆԴԻՐ—1) Գլանակ: 2) Գլանակաձև զլխարկ:

ՅԻԿԷ—Խումբ, շրջան:

ՅԻՆԳԱ—Լնդացաւ, ընդախտ:

ՅԻՆԻԶՄ—Տես Յինիկներ:

ՅԻՆԻԿՆԵՐ—Բառացի կերպով նշանակում է շներ: Փիլիսոփայական ուղղութիւն, որ հիմնւել է Յունաստանում 380 թ. Ք. ա.: Աշխարհի միակ բարիքը համարում է առաքինութիւնը, որը նրանց ուսմունքով կայանում է լիակատար ազատութեան մէջ—ժխտում է ամեն մի օրէնք, հասարակական պայման, մարդկային կարծիք:

մի խօքով՝ ամեն մի նախապաշարմունք ու ընդուն-
ւած կարգ: Այստեղից՝ ցինիզմ բառը, որ նշանակում
է անամօթութիւն, անպատկառութիւն:

ՅԻՐԿ—Կրկէս:

ՅԻՐԿՈՒԼ—Կարկին: Շրջան գծելու գործիք:

ՅԻՐԿՈՒԼԵԱՐ—Շրջարերական:

ՅԻՎԻԼ ԹԵՐԹ—Թագաւորի ծախսերի ցուցակը: Սահմանա-
դրական երկրներում ցիվիլ թերթը հաստատում է
պարլամենտը: Ամեն պետութեան մէջ որոշուած է արքու-
նական ծախսերի չափը, որ հետեւեալն է. Ռուսաստա-
նում՝ 12,781 հազար ռուբլի, Անգլիայում՝ 5,760 հազ.
ռուբլի (576 հազ. ֆ. ստերլինգ), Ֆրանսիայում՝ 450
հազ. ո. (1,200 հազ. ֆր.), Պրուսիայում՝ 720 հազ.
ո. (1,500 հազ. մարկ), Իտալիայում՝ 5,525 հազ. ո.
(15,000 լիրա), Աւստրօ-Վենգրիայում՝ 5,766 հազ. ո.
(9,300հ. գուլդէն), Իսպանիայում՝ 3,638 հազ. ո. (7,000
հ. պեզետ), Հիւսիսային Ամեր. Միաց. Նահանգներում՝
388 հազ. ո. (200 հազ. դոլլար), Եւպոնայիում՝ 3,500
հազ. ռուբլի:

ՅԻՎԻԼԻԶԱՅԻԱ—Քաղաքակրթութիւն:

ՅԻՎԻԼԻՍ—Քաղաքացիական իրաւունքի մասնագէտ:

ՅԻՏԱՏ—Հեղինակի գրածը բառացի կերպով վերցրած՝ իր-
րև յայտնած մտքի վկայութիւն կամ բացատրութիւն:

ՅԻՅԵՐԾ—Տպարանական № 12 տառերի անունը:

Փ

ՓԱՍՏԱԲԱՆ կամ ԱԴՎՕԿԱՏ—Դատաւարութեան ժամանակ
մեղադրեալին պաշտպանողը: Լայն մտքով փաստաբան
նշանակում է պաշտպան, մարդկային պատւի և քաղա-
քացիական իրաւունքների անձեռնմխելիութեան պահա-
պան: Փաստաբանի պաշտօնը հասարակական ծանր ու

պատասխանատու գործ է համարուում, ուստի և փաստարանից պահանջուում է իրաւագիտական բարձրագոյն կրթութիւն ու լայն զարգացողութիւն, որպէսզի կարողանայ օրէնքների էութիւնը, ոգին պարզել և ճիշտ ընդհանրացումներ անել: Փաստարանութիւնը Ռուսաստանում մտցուեց 1864 թ.:

ՓԱՐԸԻՑՆ—Հին եգիպտացիների թագաւորի տիտղոսը:

ՓՐԻՍԵՑԻՆԵՐ — Հին հրէական կրօնական-քաղաքական կուսակցութիւն, որ աչքի էր ընկնում իր ֆանատիկոսութեամբ և աստուածապաշտութեան արտաքին կանոնների ճշտապահութեամբ: Փարիսեցի—կեղծաւոր մարդ:

ՓԵՏՐԻԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ—կատարեց Փարիզում 1848 թ. փետրւարի 24-ին, որի հետեանքն եղաւ Լիւդովիկոս Ֆիլիպպ թագաւորի դահլնկեցութիւնը և երկրորդ հանրապետութեան յայտարարումը: Այս յեղափոխութիւնն արձագանք գտաւ նաև Գերմանիայում և Իտալիայում, ուր նոյնպէս սկսեցին յեղափոխական շարժումները:

ՓԵՏՐԻԱՐԵԱՆ ՕՐԵՐ—Տես Փետրւարեան յեղափոխութիւն:

ՓԻԼԻՍՈՓԱՅԵԱՆ ԻԴԷԱԼԻԶՄ—Տես Իդեալիզմ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԵԱՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄ—Տես Լիբերալիզմ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԵԱՆ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄ—Տես Նատուրալիզմ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԵԱՆ ՌԵՑԻՓԵՆԻԱԼԻԶՄ—Տես Ռացիօնալիզմ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԵԱՆ ՌԷԱԼԻԶՄ—Տես Ռեալիզմ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԵԱՆ ՊԵՏՐՈՒԹԻՒՆ—Տես Փիլիսոփայութիւն:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ—Ուսմունք էութեան և իմացականութեան հիմնական սկզբունքների մասին, որն աշխատում է բոլոր էութիւնների ընդհանուր կապը պարզաբանել և մարդկային գիտութեան հիմունքները քննելով՝ միացնել նրա բոլոր ճիւղերը: Փիլիսոփայական

գիտութեան սաղմը գտնում ենք դեռ ևս հին արևելքում, բայց իբրև գիտութիւն՝ փիլիսոփայութիւնն ասպարէզ է գալիս առաջին անգամ յօյների մէջ, որտեղ մինչև Սոկրատէսը գոյութիւն ունէին հետեւեալ ուղղութիւնները (շիւլանները), որոնք հոգեբանութիւնն ու էտիկան բացատրում էին կօմօլօգիայով (տիեզերախօսութեամբ). — 1) Յոնիական շիւլա (Թադէս, Անաքսիմանդր), 2) Պլարագորեան շիւլա (Պլաթագոր), 3) Էլէտեան շիւլա (Քսենոֆան, Պարմենիդ, Զենօն), 4) Յիպիկների շիւլա (Հերակլիտ, Էմպէդոկլ), 5) Ատօմիստական շիւլա (Լեվկիպպ, Դեմօկրիտ, 6) Սօֆիստներ (Պրօտագոր, Հիպպիոս, Հորգիոս): Սոկրատէսն առաջինը թողեց կօմօլօգիան և իր գիտողութիւններին առաքելայ դարձրեց մարդու բարոյական աշխարհը, ամեն ջանք գործ դնելով հասնելու ինքնաձանաչութեան: Այդպիսով նա հիմք դրեց մի շարք նոր, բազմատեսակ փիլիսոփայական սիստեմների, որոնց մէջ առաջին տեղը բռնում են Պլատօնի և Արիստօտէլի սիստեմները: Փիլիսոփայութեան զարգացման երկրորդ շրջանը կազմում է հոմէականը (Ստօյիկներ — Զենօն, Խրիզիպպ, Էպիկուրեաններ — Էպիկուր. Սկեպտիկներ — Պիրրօն, Կարնէադ. Էկլէկտիկներ — Պլուտարքոս, Տիցերօն. նէօպլարագորեաններ — Ապոլլօն Տիանայի), հրէականը (Յիւրն-Ալէքսանդրիական դար) և նէօպլատօնիզմի անկումից յետոյ (յունակ. և արևելեան փիլիսոփայութեան միացումը — Պլօտին Եամբլիխ) քրիստոնէաներինը, որոնք միջին դարերում փիլիսոփայութիւնը սխօլաստիքայի վերածեցին, երկրորդական դեր յատկացնելով նրան և ասուածարանութիւնը լրացնելով ու նրան ենթակայ առարկայ դարձնելով: Փիլիսոփայութեան վերածնութիւնն սկսում է կլաստիքական հումանիզմի ազդեցու-

Թեան տակ: Ինքնուրոյն փորձեր են լինում ընդլայնել մինչ այդ եղած փիլիսոփայական հայեացքը քնութեան մասին (Նիկոլայ Կուզանացի, Ջորդանօ Բրունօ, Կամպանելլա): Նոր փիլիսոփայութեան նախահայրերը հանդիսացան Բէկօն Վերուլամացին և Դեկարտը: Բէկօնը գիտական ուսումնասիրութիւնները զատեց ասուածաբանութիւնից և ապագայ պօզիտիւլիզմի տենդենցները տուեց, իսկ Դեկարտը սահման դրեց արտաքին աշխարհի երևոյթների մէջ՝ մի կողմից, որոնք մեխանիքական շարժման տեսակէտով պէտք է քննութեան ենթարկուեն և՛ միւս կողմից՝ ներքին-հոգեկան աշխարհի երևոյթների մէջ, որոնք քննութեան առարկայ պէտք է դառնան բացառապէս բանական պարզ ինքնագիտակցութեան տեսակէտով: Մասամբ նոյնանման ուղղութիւն ունէին նաև Էմպիրիկների (Լօկկ, Իւմ) աշխատանքները, իսկ Դեկարտի դրած հարցերի անմիջական արդիւնքն են լինում օկկազիօնալիզմը, Սպինօզայի մետաֆիզիքական սիստեմը և Լէյբնիցի թէօրիաները (մօնադների թէօրիան, նախորոշեալ հարմօնիայի—համաչափութեան թէօրիան): Լէյբնիցի ուսմունքը զարգացրեց Գերմանիայում Բր. Վօլֆը, մինչդեռ Ֆրանսիայում Կօնդիլեակը հրապարակ հանեց սենսուալիզմը, իսկ Նօլբախը՝ մատերիալիզմը: Փիլիսոփայութեան նորագոյն շրջանը սկսուեւ է Կանտի քննադատական փիլիսոփայութեամբ, որն ազատում է մարդկային հոգին ինքնօրէն և ինքնագոհ աշխարհ-մեքենայի ճնշումից, որի մէջ մարդը հանդիսանում էր մի չնչին անիւ, և ապացուցում է, որ մեր ճանաչած աշխարհն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեր երևակայութեան, մեր իմացական սուբիէկտի արգասիքը: Կանտի շարունակողը հանդիսանում է Ֆիխտէն, որը Կանտի տրանսցենդենտալ ի-

դեպի զմը դարձնում է սուրբէկտիւ և մարդկային հո-
ղին վերջնականապէս ազատում է արտաքին առար-
կաների իշխանութիւնից: Սրանով ինքնագիտակցու-
թիւնը զրկում է բովանդակութիւնից. պէտք էր նրան
ազատել այդ ձևական դատարկութիւնից—մի դեր, որ
ստանձնում է սկզբում Շէլլինգը և ապա Հեգելը, որի
փիլիսոփայութիւնը բոլոր փիլիսոփայական պրօբլեմ-
ները վերջնականապէս լուծելու յաւակնութեամբ է
հրապարակ իջնում, բայց զիջելով էմպիրիկ իրակա-
նութեան պահանջներին՝ Հեգելեաններին մէջ ծագած
բաժանումից յետոյ, կրքոցնում է իր վարկը և ճանա-
պարհ տալիս Կոնտի պօզիտիւիզմին: Փիլիսոփայական
մտքի յետագայ շարժումն արտայայտում է Շօպէն-
հաուէրի և Հարտմանի սիստեմներով, Միլլի Էմպերիզմով,
Սպենսէրի Էվոլյուցիօնիզմով և, վերջապէս՝ բնորոշ
«դարձով դէպի Կանտը»: Նեօկանտականութիւնը կամ
նեօկրիտիցիզմը՝ միացնելով բազմաթիւ հայեացքների
ներկայացուցիչներին (Լիբման, Պաուլսէն, Ֆօլկլէտ,
Լանգէ և Էրդմանը—Գերմանիայում, Ռէնուլիէ—Ֆրան-
սիայում), աշխատում է հաշտել զրական գիտութեան
հետ և Կանտի մէջ ամենից թանկ է գնահատում մե-
տաֆիզիքայի ժխտումը: Ն.որ կամ նեօկանտականներին
աւելի կամ պակաս մօտենում է մտածող-պօզիտիւ-
իստների մի ամբողջ շարք (Լասս, Ռիլ, Աւենարիուս):
Ռուսաստանում փիլիսոփայական մտածողութեան ա-
ռաջին ներկայացուցիչը համարում է Սկօլօրօզան:
XVIII-րդ դարի դպրոցներում գերիշխող էր Վօլֆակա-
նութիւնը, մինչդեռ հասարակութիւնն ամբողջովին
գտնում էր էնցիկլօպեդիստների ազդեցութեան տակ,
իսկ Աղէքսանդր I-ի օրով տարածում է միտիցիզմը
(Սէն-Մարգէն, Եակօվ Բէմ): Շելլինգի նատուր-փիլի-

սովալուծեան, ազդեցութեան տակ էին պրօֆ. Վելլանս-
սկին, Հալիչը Դավիդովը: Առանձին ազդեցութիւն է
ձեռք բերում հեգելականութիւնը, որի անկումից յե-
տոյ գերիշխող է դառնում պօզիտիւիզմը (Վ. Մարկով,
Վ. Միլիւտին) և մատերիալիզմը (Ն. Չերնիշեվսկիյ,
Անտօնովիչ, Լավրով): Պօզիտիւիզմի գլխաւոր ներկա-
յացուցիչն է հանդիսանում է. Վ. դը-Ռօբէշտին. այս
ուղղութեանն են հետևում մասամբ նաև Միխայլով-
սկին, Լեօսովիչը: Նոր-կանտականութեան ներկայացու-
ցիչն է Ա. Ի. Վլեկենսկին, անգլիական էմպիրիզմի
ներկայացուցիչը՝ Մ. Ի. Տրօցկին և Պ. Ֆ. Կապտերե-
վը, Սպենսերի հետևորդներն են՝ Ն. Ի. Կարէեվը, Լ. Ն.
Օբօլինսկին: Լօցի, Շօպէնհաուէրի և Հերբարտի սիս-
տեմնիքի վրայ հիմնած մատերիալիզմի դէմ դուրս ե-
կան 1860-ական թւականներին Իւրկեվիչը, Վլադիսլավ-
լեվը, ապա նաև՝ Գ. Ստրուվէն, Կավէլինը: Ռուսական
թէլիստական փիլիսոփայութեան հիմնադիրն է հանդի-
սանում Ֆ. Ա. Գօլուբինսկին, սրա հետևորդը՝ Վ. Գ.
Կուզրեալցեվը. ինքնուրոյն փիլիսոփայական աշխա-
տութիւններով ամենքից շատ է աչքի ընկնում Վլ. Ս.
Սօլօվեօվը, որի ազդեցութեան տակ են Լ. Մ. Լօպա-
տինը և Իշխ. Ս. Ս. Տրուբէցկօյը: (Տես յիշած յատուկ
անունները և ուղղութիւնները բառարանում):

ՓՈԽԱՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ — Տես Ապաւովագրութիւն:
ՓՈԽԱԴԱՐԸ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Տես Բան-
ւորական միուշխններ:

ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ ՄԵԼԻՕՐԱՏԻ — Տես Մելիօրատի կրեդիտ,
Մելիօրատի ցնկերութիւն:

ՓՈԽԱՏՈՒ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ — Տես Բանկ:
ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ԲԱՆԻՈՐՆԵՐ — Տես Մանկամասակների աշխա-
տանք:

Ք

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՈՒԱԼԻԶՄ—Տես Դուալիզմ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ — Կոչւում է այն ընկերութիւնը, որ նպատակ է դրել այսպէս կամ այնպէս ազդել երկրի քաղաքական կազմի վրայ: Քաղաքական ընկերութիւնը կարող է լինել լեզալ և անլեզալ: (Տես Քաղաքական կուսակցութիւն):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ — Քաղաքական կուսակցութիւնը՝ իրանց ազատ կամքով միացած անհատների կապակցութիւնն է, որ կազմւում է պետութեան ներսում քաղաքական այնպիսի գործողութիւնների համար, որոնց նպատակն է ծառայել կուսակցութեան անդամների ընդհանուր պահանջներին ու շահերին, կամ հասարակական այն դասակարգի պահանջներին ու շահերին, որոնց ներկայացուցիչը փաստօրէն հանդիսանում է կուսակցութիւնը: Ամեն քաղաքական կուսակցութիւն ունի իր ծրագիրը, որտեղ պարզաբանւում է նրա նպատակը և այդ նպատակին հասնելու համար գործելու եղանակը կամ տակտիկան: Քաղաքական կուսակցութեան թէ՛ նպատակը և թէ՛ տակտիկան կախւած են այն երկրի ընդհանուր քաղաքական-սոցիալական կարգերից, որի մէջ գոյացել է կուսակցութիւնը: Իրաւական պետութիւնների մէջ, այսինքն՝ այն պետութիւնների մէջ, որտեղ երկրի կառավարութեանը մասնակցում է ժողովուրդը իր ներկայացուցիչներով և որտեղ իշխանութեան ու ազգաբնակչութեան փոխադարձ յարաբերութիւնները խիստ ու անխախտ օրէնքի տակ են դրած՝ քաղաքական կուսակցութիւնները մեծ մասամբ կրում են խաղաղ բնաւորութիւն և իրանց գործունէութիւնը կենտրոնացւում են պարլամենտում

(տես Պարլամենտ), որտեղ աշխատում են սահմանադրութիւնը լայնացնելով (տես Սահմանադրութիւն) ընդարձակել ժողովրդի իրաւունքները ուստի՝ իրաւական կամ սահմանադրական երկրներում քաղաքական կուսակցութիւնները մեծ մասամբ խաղաղ, պարլամենտական գործունէութեան են հետևում: Ոստիկանական պետութիւններին մէջ, ուր ինքնիշխան կառավարում է միապետի կամ բռնապետի անսանձ կամքը, և ուր չը կայ պարլամենտական ազատ գործունէութեան ասպարէզ՝ քաղաքական կուսակցութիւնները դառնում են յեղափոխական թէ՛ ծրագրով և թէ՛ տակտիկայով. այսինքն՝ ձգտում են իրանց երկրում տիրող բոլոր կարգերը միանգամից տապալել և հիմնովին նոր կարգեր մտցնել, երկիրը յեղափոխել: Այդպիսով, քաղաքական կուսակցութեան գործելու եղանակը կամ տակտիկան լիովին կախած է երկրի ընդհանուր կարգերից: Քաղաքական կուսակցութիւնը զուտ քաղաքական նպատակներով չի կարող սահմանափակել, որովհետև ամեն երկրի քաղաքական կեանքն անխզելի կապերով կապւած է ազգաբնակչութեան տնտեսական-սոցիալական դրութեան հետ, ուստի բոլոր քաղաքական կուսակցութիւններն իրանց ծրագրում մտցնում են նաև այն նպատակները, որոնց ցանկալի են համարում իրագործել երկրի տնտեսական-սոցիալական կեանքում: Այսպիսով՝ ամեն քաղաքական կուսակցութիւն միաժամանակ նաև տնտես.-սոցիալ. կուսակցութիւն կարելի է անւանել: Հասկանալի է ինքնըստինքեան, որ կուսակցութեան տնտես. և սոցիալ. պահանջները լինում են այն ուղղութեամբ և մտքով, որ լիովին ծառայեն այդ կուսակցութեան անդամների շահերին և կամ այն հասարակական դասակարգի շահերին, որի ներկայացու-

ցիչը հանդիսանում է կուսակցութիւնը: Քաղաքական կուսակցութիւնները բոլոր երկրներում կարելի է երկու մասի բաժանել. 1) նրանք, որ պահանջում են հիմնական փոփոխութիւն տնտեսական-սոցիալական կեանքում, վերացնելով մասնաւոր սեփականութեան իրաւունքը և հաստատելով սոցիալիզմը, որի համար և կոչւում են սոցիալիստական և 2) նրանք, որ պահանջելով այս ու այն լայն կամ նեղ բարեփոխութիւնը, պահպանում են մասնաւոր սեփականութեան իրաւունքը. սրանք բուրժուական կուսակցութիւններն են: Բուրժուական կուսակցութիւնը կարող է իր քաղաքական պահանջների մէջ խիստ մօտենալ սոցիալիստական կուսակցութիւններին, բայց տնտես.-սոցիալական պահանջների մէջ միշտ նրա հակառակորդն է ու խոչնդանը: Սոցիալիստական կուսակցութիւն հիմնելու առաջին փորձերն եղել էին XIX-րդ դարի 40-ական թւականներին, իսկ հաստատուն կազմակերպութեան ընաւորութիւն են ստանում 60-ական թւականներից, հրք (1863 թւին) հիմնուած են Գերմանական ընդհանուր բանւորական միութիւնը (հիմնադիրն է Լասսալը) և Գերմանական բանւորական ընկերութիւնների միութիւնը, որոնք 1875 թւին Գօտ'ի կօնգրեստում ձուլւում են և դառնում մի կուսակցութիւն՝ Սոցիալ-դեմօկրատական բանւորական կուսակց. անունով, որ ներկայումս Գերմանիայում բաւական խոշոր դեր է կատարում: Կուսակցութեան ծրագիրը, որ վերջնականապէս մշակւել է Էրֆուրտի կօնգրէստում 1891 թւին, ելակէտ ունենալով զիտական սոցիալիզմի (տես Սոցիալիզմ) հիմնական դրութիւնները, ժամանակակից կապիտալիս. կարգերի (տես Կապիտալիզմ) մօտիկ տապալման անխուսափելիութիւնը և նոր կարգերի սահմանումը, որտեղ պիտի

տիրէ իրաւունքների ու պարտականութիւնների լիակատար հաւասարութիւն, միաժամանակ ցուցադրում է մի շարք գործնական պահանջներ, որոնց իրագործումը հնարաւոր է նոյնիսկ ներկայ հասարակակարգերում: Կուսակցութիւնը պահանջում է ընտրութիւնների ժամանակ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատուութիւն, առանց սեռի խարութեան. պահանջում է մշտական զօրքի ցրումը և ժողովրդական ընդհանուր զինւորութիւն, խօսքի, խզի, ժողովներին ու միութիւններին լիակատար ազատութիւն, ընդհանուր և ձրի ուսում, ձրի դատաւարութիւն, ձրի իրաւաբանական և բժշկական օգնութիւն, եկամտային պրօգրեսսիւ տուրք, բոլոր անուղղակի հարկերի վերացումը, ութժամեայ բանւորական օր, փոքրաշասակների (մինչև 14 տարեկան) աշխատանքի վերացումը, գիշերային աշխատանքի կրճատում, ամեն շաբաթ 36-ժամեայ հանգստութիւն, բժշկական հսկողութիւն բոլոր արդիւնագործական հիմնարկութիւններէ վրայ և այլն, և այլն: Հետեւալ թւերը կարող են գաղափար տալ գերմանական սօցիալ-դեմօկրատիայի զարգացման մասին: Պարլամենտական ընտրութիւնների ժամանակ՝ 1871 թւին՝ սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնն ստանում է 113 հազար ձայն (բոլոր ձայներին 3⁰/₀-ը), 1877-ին՝ 493 հազ. ձայն (9⁰/₀), 1884-ին՝ 549 հազ. ձայն (10⁰/₀) 1890-ին՝ 1,427 հազ. ձայն (20⁰/₀), 1898-ին՝ 2,107 հազ. ձայն (27⁰/₀), 1903-ին՝ 3,010 հազ. ձայն (32⁰/₀): Նոյն չափով աւելանում էր և ուլտիստագի սօց.-դեմ. անդամների թիւը.—1871-ին այդ թիւը միայն 2 էր, 1877-ին՝ 13, 1884-ին՝ 24, 1890-ին՝ 35, 1898-ին՝ 56, 1903-ին՝ 81: Կուսակցութեան լիդերներն են՝ Բէքէլ, Լիբկնեխտը, († 1900) Զինգեր, Ֆօլմար, Աուէր, Գէյնէ: 1890-

ական թւականներին առաջ եկաւ չափաւոր ուղղութիւն, որի ներկայացուցիչն է էդ. Բէրնշտէյնը: Բեյզիայում բանւորները սկսեցին միութիւններ կազմել 50-ական թւականներէց: 1879-ին կազմեց Բեյզիական բանւորական կուսակցութիւնը, որի ծրագիրը գրեթէ նոյնն է, ինչ որ Գերմանիայի սօցիալ-դեմօկրատիայինը: 1900 թւին Բեյ. բան. կուսակց. ընտրութիւններէ ժամանակ ստացաւ 500 հազար ձայն ($23\frac{0}{10}$) և անցկացրեց պարլամենտ իր 33 թեկնածուներին: Ֆրանսիայում սօցիալիստական կուսակցութիւնն ուժեղանում է 1879 թ. Մարսէյլի կօնգրեսից յետոյ, որտեղ ժիւլ Գէդը հիմնում է Բանւորական կօլլեկտիւ կուսակցութիւն, գերմանական սօց.-դեմօկրատիային շատ մօտիկ ծրագրով: Սօցիալիստական կուսակցութեան յետագայ զարգացումը Ֆրանսիայում դանդաղում է շնորհիւ այն հանգամանքի, որ նրա ղեկավարների մէջ (ժիւլ Գէդ, Լաֆարգ, Մալոն, Բրուսս, Ալլէման և ուրիշները) զբժտութիւն է ծագում և կուսակցութիւնը բաժանում է մի բանի ֆրակցիաների—մասերի, որոնց ծրագիրներն իրարից խոշոր տարբերութիւններ չունեն: 1899 թւի Փարիզի կօնգրէսում բոլոր ֆրակցիաները միանում են մի ֆեդերացիայի (դաշնակցութեան) մէջ: Այդ ֆրակցիաներն են. 1) Գէդիստները կամ սօցիալ-դեմօկրատները, 2) Անկախ սօցիալիստները կամ ժօրէսիստները, 3) Ալլէմանիստները, 4) Բրուսսիստները և 5) Բլանկիստները: Սակայն այդ ֆրակցիաների միութիւնից կարճ ժամանակ անցած, երբ անկախ սօցիալիստ Միլէյրանը մտնում է Վալդէկ-Ռուսսօյի բուրժուազական մինիստրութեան կազմի մէջ, առանց կուսակցութեան համաձայնութիւնն ստանալու, Ֆրանսիայի սօցիալ-դեմօկրատները (զէդիստները) և բլանկիստները

րը բողոքում են այդ վարմունքի դէմ, համարելով դա յեղափոխական սօցիալիզմին հակառակ ու փնասակար գործողութիւն, իսկ միւս ֆրակցիաները, ընդհակառակը, սօցիալիստի մինիստր դառնալը համարում են բանւորական կուսակցութեան ուժեղացման ապացոյց: 1900 թւին գէդիստները կուսակցութիւնից հեռացան, իսկ 1901-ին նրանց հետեւեցին նաև բլանկիստները և երկուսը միասին նոր կուսակցութիւն կազմեցին: Չը նայելով ներքին երկպառակութիւններին՝ սօցիալիստ թեկնածուները դարձեալ բաւական ձայն էին ստանում ընտրութիւնների ժամանակ: 1881-ին նրանց ձայն էին տւել 60 հազար հոգի, իսկ 1898-ին՝ 840 հազար. և պատգամաւորների թիւը 1881-ին երկու հոգուց հասաւ՝ 1898-ին՝ 52-ի: Աւստրիայում բանւորներն ըսկըսեցին միանալ գրեթէ նոյն ժամանակ, ինչ որ Գերմանիայում, բայց շնորհիւ տեղական մի քանի անըպաստ հանգամանքների—արգիւնազորութեան յետաձիսացութեան, Աւստրիան կազմող ազգութիւնների փոխադարձ թշնամութեան և մասամբ կառավարութեան հալածանքների՝ մեծ ոյժ չեն ձեռք բերում սօցիալիստները: 1899-ին բաժանւեցին ազգային վեց կազմակերպութիւնների, որոնք իրար հետ միացած են Ֆիզերտտիւ ձևով: Լիդերներն են՝ Ադլէրը (գերմանացի) Դաշինսկին (լեհացի), Պերզէրստօֆէրը (գերմանացի) և ուրիշները: Իտալիայի բանւորները թէև սօցիալիստական ուսմունքից հեռու չեն եղել, բայց կանոնաւոր կուսակցութիւն սկսել են կազմել 1890-ական թըւականներից: Անգլիայում բանւորական պրօֆեսսիօնալ միութիւններն ահագին չափեր են ընդունում վաղ ժամանակներից, բայց նրանք ոչ միայն սօցիալիստական չէին, այլ և իրանց հեռու էին պահում քաղաքա-

կան խնդիրներէց (աես Տրէդ-ուեիօնիզմ): Սօցիալիստական ընաւորութիւն կրող առաջին կուսակցութիւնը Անգլիայում կազմակերպում են 1881-ին Հայնդմանը և Բաքսը՝ Աշխատանքի սօցիալ-դեմօկրատական Ֆէդերացիա անունով: 1893 թ. հրապարակ է գալիս Անկախ բանւորական կուսակցութիւնը՝ չափաւոր սօցիալիստական Պուղղութեամբ: Այդ երկու կուսակցութիւններըն ևս միայն վերջին ժամանակներն են նշանակութիւն ստանում: Բացի սօցիալիստական բանւորական կուսակցութիւններէց, Անգլիայում զարգացան բանւորական ոչ-սօցիալիստական կուսակցութիւնները, որոնք խմբեցին Բանւոր. ներկայացուցչութեան կօմիտէտի շուրջը, որ հիմնւել է սրանից 7—8 տարի առաջ: Ընտրութիւնների ժամանակ առաջին անգամ աչքի ընկնող դեր խաղացին բանւորական կուսակցութիւնը 1905 թիւն, երբ պարլամենտ անցկացրին իրանց 29 թեկնածուներին: Հիւսիսային Ամերիկայի Միաց. Նահանգներում նոյնպէս բանւորական կուսակցութիւնները զործում էին իբրև պրօֆեսսիօնալ միութիւններ՝ ձեռնարկողների դէմ զուտ տնտեսական պահանջներ գնելով: 1876-ից թէև կազմւել էր Միացեալ-Նահանգների բանւորական կուսակցութիւնը, որն ընդունել էր զերմ. սօց.-դեմօկրատիայի ծրագիրը, բայց այդ հոսանքը Միացեալ-Նահանգներում երբէք չէ ուժեղացել և մինչև օրս էլ խոշոր նշանակութիւն չէ ձեռք բերել: Աւելի ուժեղ է Աշխատս սիւ Ասպետների Օրդինը, որ հիմնւել է 1869 թ. և որը մի քանի հարիւր հազար անգամներ ունի: Այս միութիւնն ևս սօցիալիստական չէ, թէև մի քանի պահանջներ է անում և իր ձայները տալիս է բանւորների շահերը պաշտպանող թեկնածուներին: Ռուսաստանում նոյնպէս քաղաքական կու-

սակցութիւնները բաժանուում են երկու զլխաւոր մասի. 1) սօցիալիստական և 2)՝ բուրժուազական: Սօցիալիստական կուսակցութիւնները հետեւեալներն են. 1) Սօցիալիստ-լեղափոխականներ կամ ինչպէս կրճատուած ասում են՝ էսերներ: Այս կուսակցութիւնից վերջին տարիները բաժանուեցին մի քանի հոգի և կազմեցին՝ 2) Ժողովրդական-սօցիալիստների կուսակցութիւնը և մի այլ խումբ կազմեցին 3) Մարսիմալիստ-սօց-լեղափոխականների ճիւղաւորութիւնը: 4) Սօցիալ-դեմօկրատների կուսակցութիւնը, որը բաժանուում է Բալլըն-վիկների (մեծամասնականների) և մենշևիկների (փոքրամասնականների): Սօցիալիստական և բուրժուական կուսակցութիւնների միջին տեղը բռնում են. 1) Աշխատաւորականները (տրուդօվիկներ), 2) Համառուսական գիւղացիական միութիւնը: 1905 թւի ազատագրական շարժումների ժամանակ կազմեցին բուրժուական 1) ռադիկալների (արմատականների) կուսակցութիւնը, 2) Եզատամիտների կուսակցութիւնը, 3) Ժողովրդական ազատութեան, Մանմանադիր-ռամկալար կամ Կադէտների կուսակցութիւնը, 4) Չափաւոր պրօգրէսսիւ կուսակցութիւնը (Մաքս. Կօվալեվսկի), 5) Դեմօկրատական ռեֆօրմների կուսակցութիւնը, 6) Եռեստրարդիւնաբերական կուսակցութիւնը, 7) Յուդաղ վերանորոգութեան կուսակցութիւնը, 8) Հոկտեմբերի 17-ի միութիւնը կամ Հոկտեմբերականները, 9) Իրաւակարգի կուսակցութիւնը, 10) Մօնարխիստները, 11) Ռուս ժողովրդի միութիւնը: Ոչ-սօցիալիստական վերև յիշուած տասնևմէկ կուսակցութիւններից շատերը քանդուեցին, իսկ շատերն էլ անւանական գոյութիւն պահպանեցին: Ներկայումս աչքի են ընկնում՝ ժողովրդական ազա-

տութեան, Հոկտեմբերականների և Ռուս ժողովրդի միութեան հուսակցութիւնները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄՈՉՄՈՒՆՔՆԵՐ—Պետական կազմի ձևերի և նրա կառավարութեան մասին ունեցած համոզմունքներ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ կամ **ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՄԱՀ**—Համարում է ըստ քաղաքական և քաղաքացիական իրաւունքներից զրկւած լինելը, որին ենթարկւում է յանցաւորը իբրև պատիժ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ կամ **ՊԵՏԱԿԱՆ ՅԱՆՑԱԻՈՐ**—Կոչւում է այն մարդը, որ գործել է երկրում գոյութիւն ունեցող քաղաքական և պետական ընդհանուր կարգերի դէմ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱ—Տես Քաղաքային հասարակական հիմնարկութիւններ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍՆՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ—Քաղաքային հասարակական հիմնարկութիւնների հիմքը կազմում են 1870 և 1892 թ. թ. օրէնքները: Քաղաքային վարչութեան օրգաններն են Քաղաքային Դուման և Քաղաքային Ուպրաւան: Քաղաքային Դումաները կազմւում են 20—160 հոգուց: Ընտրելու իրաւունք ունեն 300 ու—3000 ուրբի և աւելի արժեցող անշարժ կայք ունեցողները, նաև I և II կարգի վաճառականները: Քաղաքային վարչական օրգանների իրաւասութեանն են ենթարկւում քաղաքի սահմանում ըստ աշխատի հարցերը, որոնք նահանգում ենթարկւում են զեմստովոյի իրաւասութեանը—քաղաքի բարեկեցութիւնը, մաքրութիւնը, ներքին կարգերը և այլն, և այլն: Քաղաքային Դումայի հերթական նիստերը տեղի պիտի ունենան ոչ պակաս, քան չորս անգամ տարեկան և ոչ աւելի, քան քսանչորս անգամ: Դումայի վճիռները հաստատում է նահանգապետը: Քաղ. Դումայի գործա-

դիր մարմինը Քաղաքային Ուպրավան է, որը կազմւած է 3—7 հոգուց: Ուպրավայի անդամների ծառայութիւնը պետական է համարուում: Քաղաքային ինքնավարութեան մէջ ծառայողներն ենթակայ են թէ դիսցիպլինար և թէ դատարանական պատասխանատուութեան: **ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱԻԱ**—Տես Քաղաքային հասարակական հիմնարկութիւններ:

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ—Գիտութիւն, որն ուսումնասիրում է մարդկանց հասարակական յարաբերութիւնները տնտեսական ասպարէզում: Քաղաքատնտեսութիւնը բաժանւում է երկու մասի՝ տեսական (թէօրետիք) և գործնական (տնտեսական քաղաքականութիւն): Առաջինն ուսումնասիրում է տնտեսական երևոյթները, ցոյց է տալիս նրանց կարևորութեան աստիճանը և պատճառական կապը. երկրորդը գնահատում է տնտեսական երևոյթների նշանակութիւնը, որոշում է տնտեսական գործունէութեան նպատակն ու միջոցները: Տեսական քաղաքատնտեսութիւնը բաժանւում է հետևեալ մասերին. 1) ուսմունք տնտեսական ընդհանուր հասկացողութիւնների մասին, 2) արտադրութեան մասին, 3) փոխանակութեան մասին, 4) բաշխման մասին, 5) սպառման մասին: Քաղաքատնտեսութիւնը գիտութեան նըշանակութիւն ստացաւ նորագոյն ժամանակները քաղաքակիրթ ազգերի տնտեսական կեանքի զարգացման հետ: Տնտեսական երևոյթները մարդկանց մէջ հետաքրքրութիւն են զարթեցրել դեռ հին ժամանակներից (Արիստոտէլ, Կատօն): Միջին դարերում աստուածաբաններն են հնարել մի քանի տնտեսական թէօրիաներ: XVI-րդ դարում հրապարակ են դալիս տնտեսագէտներ՝ բառիս իսկական իմաստով, և Արևմտեան Եւրոպայում ստեղծում են մերկանտիլիստների (տես մեր-

կանտիլիզմ) և Ֆիզիօկրատների (տես Փիզիօկրատներ) շկօլան: XVІІІ-րդ դարում անգլիացի Ադամ Սմիտը (տես Ադամ Սմիտ) իր յայտնի գրքում («Հետազօտութիւն ժողովուրդների հարստութեան պատճառների և ընդթի մասին»), որը լոյս տեսաւ 1776 թւին, քաղաքատնտեսութեան կլասսիքական շկօլայի (ուղղութեան) հիմքը դրեց: Այդ ուղղութիւնը քաղաքատնտեսութիւնն համարում է մի այնպիսի գիտութիւն, որն ուսումնասիրում է տնտեսական հարստութեան ընդհանուր օրէնքները բոլոր ժամանակների և ժողովուրդների վերաբերմամբ: Իր տեսական ուսումնասիրութիւնների ժամանակ՝ ելակէտ ունենալով անհատական տնտեսութիւնը, կլասսիքական շկօլան տնտեսական պօլիտիքայի (քաղաքականութեան) հիմնական սկզբունք ընդունում է անսահման ազատութիւնը: Պետական իշխանութիւնն ամենին չպէտք է խառնէ տնտեսական խնդիրների մէջ: Անգլիայում այդ շկօլայից են Մալտուսը, Ռիկարդօն, Մակ-Կուլոնը, Ֆրանսիայում՝ Սէյը, Սիսմօնդին, Գերմանիայում՝ Տիւնէնը և այլն: Կլասսիքական շկօլային մօտենում են իրանց ուղղութեամբ Փրիդրեդերները (XIX-րդ դարի առաջին կիսուս), որ աշխատում էին իրականացնել տնտեսական ազատ գործողութեան սկզբունքը (Անգլիայում փոխել տւին զհացի օրէնքները): Փրիդրէդէրների ներկայացուցիչներն են Ֆրանսիայում՝ Բասսիան, Լէրուա-Բօլիկն, Գերմանիայում՝ Շուլցէ-Դեյլինը, Վիրտը, Տրէյչկէն): Կլասսիքական շկօլայի նոր կողմնակիցները՝ Միլը, Ֆաուսէտտը, Ժիզը, փոփոխութեան ենթարկեցին իրանց նախորդների ուսմունքը, ընդունելով, որ տնտեսական օրէնքներն արպօլիտ բնաւորութիւն չունեն և իրանց ուշադրութիւնը դարձրին անհատական տնտեսութեան և ժողովրդ-

դական տնտեսութեան առանձնայատկութիւնների վը-
 րալ: Այս ուղղութիւնը մօտենում է քաղաքատնտե-
 սութեան պատմական շկօլային, որ առաջ եկաւ XIX-րդ
 դարի երկրորդ կիսում: Պատմական շկօլան ընդունու-
 նում է բոլոր տնտեսական երևոյթիների յարաբերակա-
 նութիւնը: Նա ձգտում է ընդգծել միայն նրանց զար-
 ցացման օրինակութիւնը, որոշ օրէնքով կատարելը,
 որի համար ուսումնասիրում է ժողովուրդների ամբողջ
 տնտեսական և հասարակական կեանքն իրանց փոխա-
 դարձ կապով: Այս շկօլայի կարծիքով, ժողովրդական
 տնտեսութիւնը մի օրգանական ամբողջութիւն է: Այս
 շկօլայի ներկայացուցիչներն են՝ Ֆրիդրիխ Լիստը, Ռօ-
 շէրը, Կնիսը, Շմօլլէր, պատմաբան Նասսէն, Լամպրիխ-
 տը, նաև՝ Շենքերգ, Բրենտանօ, Շտէրն, Կօն, Ինամա-
 Շտերնեհհ, Կնապպ, Բեօմ-Բափերկ և ուրիշները: Քա-
 ղաքատնտեսութեան պատմական շկօլայի այն կոմսա-
 կիցները, որ ժողովրդական տնտեսութեան մէջ առան-
 ձին նշանակութիւն են տալիս էտիքական տարրին,
 կազմում են սօցիալ-էտիքական կամ կարեգրք-սօցիա-
 լիստների շկօլան: Նոյն շկօլայի այն հետևորդները, որ
 տնտեսական-հասարակական յարաբերութիւնների մէջ
 առաջնակարգ դեր են վերագրում պետութեանը, կոչ-
 ւում են պետական սօցիալիստներ (Վազներ, Շէֆֆլէ
 և ուրիշները): Քաղաքատնտեսութեան մէջ առանձին
 տեղ են բռնում սօցիալիստական ուղղութիւնները, որ
 առանձնապէս զարգանում են թէ տեսականօրէն և թէ
 գործնականօրէն XIX-րդ դարում: Սօցիալիստները՝
 դժգոհ լինելով գոյութիւն ունեցող տնտեսական կար-
 գերից, ձգտում են արտադրութեան բոլոր միջոցները
 — հողը և կապիտալը բոլոր հասարակութեան ընդհա-
 նուր սեփականութիւնը դարձնել: Սօցիալիզմն իր զար-

զացման ընթացքում ունեցել է երկու խոշոր ուղղութիւն (տես Սօցիալիզմ) — Ուտօպիական սօցիալիզմ, որը ձգտում էր իրագործել սօցիալիզմը, որպէսզի բաղաւորացնէ ամբողջ մարդկութիւնը (սաղմային դրութեամբ սկսւում է Պլատօնից և ապա զարգացնում են XIX-րդ դարի առաջին կիսում Սէն-Սիմօնը, Ֆուրիէն, Օվէնը և ուրիշները): Ապա դալիս է անցողակի շրջանը, երբ բանւորներին ընդունում էին հասարակական մի առանձին դասակարգ իր շահերով ու պահանջներով, և աշխատում էին մասնաւոր անհատական տնտեսութիւնը վերափոխել հասարակականի՝ բանւորական սոցիալիզմի (միւթիւնների) միջոցով (Լ. Բլան, Լասսալ): Ուտօպիական սօցիալիզմին հետևում է այսպէս ասած գիտական սօցիալիզմը (Վ. Մարքս և Ֆ. Էնգելս), որ պատմական զարգացման հիմնական գործօն ընդունում է անհատի նիւթական շահը և դասակարգային կոիւր: Տնտեսական զարգացման հետ արտադրութիւնը կենտրոնանում է փոքրաթիւ անհատների ձեռքին և աւելի ու աւելի ուժեղացնում կապիտալիստների տիրապետութիւնը (տես Կապիտալիզմ), որի հետ զուգընթացաբար զարգանում է բանւորների համերաշխութիւնը և բանւորական դասակարգի ուժեղացումը, որը ձգտում է քաղաքական իշխանութիւնն իր ձեռքն առնել: Սօցիալիստները տնտեսական թէօրիաների մէջ աշխատանքին առաջնակարգ տեղ են տալիս: Քրիստոնեական սօցիալիստները աշխատում են իղէալական հասարակական տնտեսութիւնն ստեղծել կրօնական և բարոյական հիմունքների վրայ: (Մաննինգ, Ռեսկին, Կետտէլէր): Տես Սօցիալիզմ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ — Տես Քաղաքացիական պակ:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ—Կոչւում է իրաւագիտութեան այն ճիւղը, որը վերաբերում է հասարակութեան անդամների փոխադարձ յարաբերութեանը՝ նրանց մասնաւոր կեանքում. այսինքն՝ որոշում է անձնական, ընտանեկան և անտեսական փոխադարձ յարաբերութիւնները:

ՔԱՂԱՔԱՑԻԱՅԱՆ ՊՍԱԿ—Կոչւում է ամուսնութեան այն ձևը, որին եկեղեցին չի մասնակցում և որը կատարւում է պետական հիմնարկութիւնների միջոցով: Արեւմտեան Եւրոպայում քաղաքացիական ամուսնութիւնն աւելի օրինական է համարւում, քան եկեղեցական պըսակը: Պետական աշխարհիկ հիմնարկութիւնների միջոցով կատարւած ամուսնութիւնը լիովին օրինական է համարւում, մինչդեռ եկեղեցական կարգով կատարւած պսակը՝ օրինական դառնալու համար պէտք է լըրացւի քաղաքացիական ակտով:

ՔԱՄԷԼԷՕՆ—1) Սողուն, որի կաշին վայրկենապէս իր գոյնը փոխելու յատկութիւնն ունի: 2) Ստորաքարշ և յարմարող մարդ:

ՔԱՌԱՍՏԻՃԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ—Տէս Երկաստիճան քնտրութիւն:

ՔԱՐԱՆՏԻՆ—1) Սահմանադիտում կառուցած շինութիւն, որտեղ որոշ ժամանակ կանգնեցնում են տարափոխիկ հիւանդութիւններով վարակւած երկրից եկող ճանապարհորդներին: 2) Քարանտին է կոչւում նաև ճանապարհորդներին պահելու ժամանակամիջոցը:

ՔԱՐԱՔՏԵՐԻՍՏԻԿԱ—Մարդու կամ ժողովրդի բնաւորութեան գլխաւոր յատկութիւնների ու գծերի որոշումը:

ՔԱՕՍ—1) Յունական առասպելների մէջ քաօս սկզբում կոչւում էր դատարկ ու անծայր տարածութիւնը, իսկ յետոյ քաօս անունով սկսեցին նշանակել նախնական

այն խառնաշփոթ ու անկարգ խառնուածքը, որից կազմուած էր տիեզերքը մինչև աշխարհի ստեղծագործութիւնը: 2) Ամեն մի անկարգ, խառնաշփոթ բան:

ՔԻԼՕ—Մասնիկ, որն աւելացելով ամեն մի չափի սկզբին, ցոյց է տալիս, որ այդ չափից վերցրած է 1000: Քիլո + մետր = հազար մետր, քիլո + գրամ = հազար գրամ և այլն, և այլն:

ՔԻԼՕՄԵՏՐ—Տարածութեան չափ = 1000 մետրի = $\frac{1}{15}$ կամ 0,937 վերստի (468,7 սաժէն): Քառակուսի քիլոմետրը = 0,878 քառ. վերստի:

ՔԻՄԻԱ—Գիտութիւն, որն ուսումնասիրում է հասարակ մարմիններին և նրանց միաւորման յատկութիւնները: Մարմինները քիմիապէս լուծելուց յետոյ, ստացւած նիւթերն ոչ մի ընդհանուր յատկութիւն չունեն այն մարմնի հետ, որի բաղադրիչ մասը կազմում էին իրանք, որովհետև քիմիական վերլուծութիւնը փոխում է նիւթերն ըստ էութեան: Քիմիան ապացուցում է, որ բոլոր մարմինները կազմուած են հասարակ տարրերից, որոնց թիւը բնութեան մէջ հասնում է 80-ի:

ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ—Սենեակ, որտեղ քիմիական աշխատանքներ են կատարւում և որն այդ նպատակի համար ունի բոլոր յարմարութիւններն ու գործիքները:

ՔԻՄԻԱԿԱՆ ՏԵԽՆՕԼՕԳԻԱ—Տես Տեխնոլոգիա:

ՔԻՄԻԿՈՍ—Քիմիայի մասնագէտ: (Տես Քիմիա):

ՔԻՆԵՔԻՆԱ—Տես Խիմնա:

ՔՆԱԴԱՍԱԿԱՆ ԻԴԷԱԼԻԶՄ—Տես Իդէալիզմ:

ՔՆԱԵԴԱՍԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ—Տես Սօցիալիզմ, Ռեվոլյուցիոնիզմ:

ՔՇԱՏՐԻ—Տես Բրամանիզմ:

ՔՍԵՆԶ—Լեհական քահանայ:

ՔՐԵՍՏՕՄԱՏԻԱ—Քաղաքների ժողովածու՝ լուսագոյն հեղինակների գրածքներից, դասաւորւած որոշ սխտե-

մով: Գործածւում է սովորաբար իբրև դասագիրք
դպրոցներում:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ—Տես Սօցիալիզմ:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏ—Տես Քաղաքատնտեսութիւն և
Սօցիալիզմ:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐ—Տես
Բանւորական միութիւններ:

ՔՐՕՆԻՔԱԿԱՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԻԻՆ—Երկար տևող հիւանդու-
թիւն, որի բժշկութիւնը շատ դանդաղ է առաջ գնում:
Սուր հիւանդութիւններն, ընդհակառակը, խիստ կար-
ճատե են լինում և շուտով վերջանում են կամ մահ-
ւամբ, կամ առողջութեամբ և կամ փոխւում են քրօ-
նիքականի:

ՔՐՕՆԻԿ—1) Պատմական անցքերի տարեցուցակ: Քրօնիկը
կարող է վերաբերել ինչպէս համաշխարհային պատ-
մութեանը, որնէ ժողովրդի, պետութեան կեանքին,
այնպէս և ընտանիքի կեանքին. վերջին դէպքում նա
կոչւում է ընտանեկան քրօնիկ: 2) Լրագրական բա-
ժին, որտեղ մտցւում են որոշ ժամանակամիջոցում
կատարած բոլոր դէպքերն ու անցքերը:

Օ

ՕԲԷՐ—Նախդիր, որով նշանակում են պաշտօնիայի կամ աս-
տիճանաւորի աւագութիւնը, այսպէս՝ օրէր-օֆիցէր
(աւագ-սպայ), օրէր-կօնդուկտօր (աւագ-կօնդուկտօր)
և այլն:

ՕԲԻԷԿՏ—Սուարկայ. ուսումնասիրութեան, դիտողութեան և
առհասարակ ամեն մի գործողութեան առարկայ: Հա-
կառակը՝ սուբիէկտ: (Տես Սուբիէկտ):

ՕԲԻԷԿՏԻԻ ԻՊԷԱԼԻԶՄ—Տես Իդէալիզմ:

ՕԲԻԷԿՏԻԻԶՄ—Անաշառութիւն, անկողմնակալութիւն, անկողմնապահութիւն, խաղաղ վերաբերմունք դէպի որևէ խնդիր: Առարկաների, դէպքերի, փաստերի, ուսմունքների զնահատութիւն, ճիշտ ուսումնասիրութեան վերայ հիմնւած և ոչ թէ անհատական ու անձնական նախապաշարումներին ու կարծիքներին հետևելով:

ՕԲՍԿՈՒՐԱՆՏ—Խաւարապաշտ, լուսաւորութեան թշնամի:

ՕԲՍԿՈՒՐԱՆՏԻԶՄ—Խաւարապաշտութիւն:

ՕԲՍՏՐՈՒԿՑԻԱ—Խանգարումն: Պարլամենտներում և ժողովներում օբստրուկցիա են անում երկար խօսելով, որով թոյլ չեն տալիս, որ վերջնական վճիռ կայանայ այս կամ այն հարցի վերաբերմամբ: Ռուսական համալսարաններում ընդունւած է քիմիական օբստրուկցիան, որի ժամանակ ուսանողներն իրանց ատելի պրօֆեսսորների դասախօսութիւնը խանգարելու, կամ քաղաքական նպատակներով դասախօսութիւնները դադարեցնելու համար քիմիական գարշահոտ հեղուկներ են թափում լսարաններում, որից յետոյ դասախօսութիւնները շարունակել անհար է լինում:

ՕԳՈՍՏՈՍ—Լատիներէն բառ է, որ նշանակում է սրբազան: Օգոստոս տիտղոսն ստացաւ Հռոմի Օկտաւիան կայսրը, որ ծնւել է Բրիտոսից 63 տարի առաջ: Օգոստոսի կայսերութեան ժամանակ Հռոմն աշխարհի ամենահզօր պետութիւնն էր և հասել էր իր փառքի գագաթնակէտին, որի պատճառով և յետագայում կայսրներին օգոստափառ էին անւանում, իբրև ամենապատւաւոր, ամենաբարձր տիտղոսը: Տարւայ ութերորդ ամիսը նոյնպէս կոչւում է Օգոստոս:

ՕԳՈՍՏԱՓԱՌ—Տես Օգոստոս:

ՕԴԵՐԵԻՈՅՔԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՅՆՐԱՆ կամ **ԴԻՏԱՐԱՆ**—Շինութիւն, որտեղից զանազան գործիքներով դիտում են

- օգերևոյթարանական երևոյթները—եղանակը, տաքու-
թիւնը, անձրևը, փոթորիկը և այլն, և այլն:
- ՕԴԵՐԵԻՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ—Պայմանական նշաններ,
զանազան օգերևոյթարանական երևոյթներ նշանակելու
համար:
- ՕԴԵՐԵԻՈՅԹԱԲԱՆՈՒԹԻԻՆ—Գիտութիւն, որն զբաղւած է
օդային երևոյթների ուսումնասիրութեամբ և՛ գլխաւո-
րաւորապէս՝ եղանակի փոփոխութեամբ ու զբա պատ-
ճառների բացատրութեամբ:
- ՕԿԿԱԶԻՕՆԱԼԻՉՄ—Ուսմունք, որը հոգու և մարմնի փոխա-
դարձ ներգործութիւնը բացատրում է Աստուծոյ մի-
ջամտութեամբ: (Տես Փիլիսոփայութիւն):
- ՕԿԿՈՒՊԱՅԻՆ—Գրաւում, տիրապետում:
- ՕՄՆԻԲՈՒՍ—Հանրակառք, կառք՝ որ կանոնաւոր կերպով
երթնակում է որոշ դժի վրայ և որից օգտուում են ա-
մենքը:
- ՕՆԱՆԻՉՄ—Մարմնաշարժութիւն, ձեւնաշարժութիւն:
- ՕՆԱՆԻՍՏ—Մարմնաշարժութեամբ պարապող:
- ՕՆՏՈՒՕԳԻԱ—Էախօսութիւն, գոյախօսութիւն, փիլիսոփա-
յական ուսմունք՝ էութեան հիմնական սկզբունքների
մասին:
- ՕՊԵՐԱ—Երաժշտական-դրամատիքական ներկայացում, որ-
տեղ խօսակցութիւններին փոխարինում է նւազը և
երգը:
- ՕՊԵՐԵՏՏԱ—Իեմական արտադրութիւն, որի բովանդակու-
թիւնը զաւելտական է և որի մէջ ուրախ, պի-
կանտ նւագածութիւնը հետևում է խօսակցութեանը:
- ՕՊՏԻՄԻՉՄ—Լաւատեսութիւն: Փիլիսոփայական ուսմունք,
որի համաձայն՝ գոյութիւն ունեցող աշխարհը, չնայե-
լով իր բոլոր թերութիւններին, ամենալաւն է, և եթէ

կան այդտեղ վատ բաներ, այդ բոլորի էլ վերջնական նպատակը բարին է: Այդ ուսմունքի աչքի ընկնող ներկայացուցիչը Լէյբնիցն է: Հակառակ ուղղութիւնը կոչուում է Պեսսիմիզմ (տես Պեսսիմիզմ):

ՕՊՊՕԶԻՑԻՆ—Ընդդիմադրութիւն, ընդդիմադիր կուսակցութիւն կամ խումբ:

ՕՊՊՕՆԵՆՏ—Ընդդիմախօս, հակաճառող, հակառակորդ, ախտյեան:

ՕՊՊՕՐՏԻՆԻՒՍ—Հանգամանքներին ու պայմաններին յարմարւող, իր համողմունքներն ու հայեացքները պայմանների համեմատ փոփոխող:

ՕՍՄԱՆԻԷ—Տաճկական շքանշան, որ հիմնել է սուլթան Աբդուլ-Ազիզը:

ՕՍՏՐԱԿԻԶՄ—Աքսոր:

ՕՏԵԼ—Հիւրանոց:

ՕՐԳԱՆԱԿԱՆ ԹԷՕՐԻԱ—Տես Սօցիոլոգիա:

ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ԻՆԻՑԻՍԻՒՒ—Օրէնսդրական հիմնարկութեան մէջ նոր օրէնք հրատարակելու հարցը բարձրացնելու կամ հինը վերացնելու իրաւունքը մի առանձին քաղաքական իրաւունք է, որ կոչուում է օրէնսդրական ինիցիատիւի (նախաձեռնութեան) իրաւունք: Անսահման միապետութեան մէջ այդ իրաւունքն անւանապէս վայելում է միապետը, բայց փաստօրէն իրագործում են միւս իստրները: Սահմանադրական երկրներում այդ իրաւունքը վայելում են թէ՛ թագաւորը և թէ՛ պարլամենտի անդամները: Շվեյցարիայում ինիցիատիւի իրաւունքն ունի նաև ժողովուրդը. եթէ 50 հազար հոգի ստորագրեցին նոր օրէնք առաջարկող պետիցիան, այդ օրէնքի քննութիւնը պարտադիր է դառնում Ազգային ժողովի համար: (Տես Ռեֆերենդում):

ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ՌԷՖԷՐԷՆԻՆԴՈՒՄ—Տես Ռեֆերենդում:

ՕՐԹՕԳԻՓԻՍ—Ուղղափառ:

ՕՐԹՕԳԻՓԻՍ ԵՎԵՂԵՑԻ—Կոչուած է յունադաւան եկեղեցին,
որի հետևորդներն են և սուսները:

ՕՐԹՕԳԻՓԻՍ ՄԱՐԲՍԻԶՄ—Տես Սօցիալիզմ, Մարքսիզմ:

ՕՐԻԳԻՆԱԼ—1) Բնաղիբ, բուն օրինակ: 2) Ինքնատիպ, տար-
օրինակ մարդ կամ առարկայ:

ՕՖԻՑԷՐ—Սպայ: Բոլոր բարձր զինուորականները համարուած
են օֆիցէր և բաժանուած են երեք կարգի. 1) Սրէր-
օֆիցէրներ (պօղպօրուչիկից մինչև կապիտանը), 2)
Շտաբ-օֆիցէրներ (պօղպօլկօֆնիկներ և պօլկօլնիկ-
ներ) և 3) զեներալներ:



ՖԱԲՐԻԿԱ—Գործարան: Ֆարբիկան խոշոր արդիւնագործա-
կան հիմնարկութիւն է, որտեղ շատ թւով բանւորներ
աշխատում են մեքենաների օգնութեամբ, շոգիի կամ
ելեքտրականութեան ոյժով և որտեղ աշխատանքի խիստ
բաժանուած կայ: Մինչդեռ արհեստանոցն աւելի փոքր
հիմնարկութիւն է, որտեղ աշխատանքները կատարուած
ին հասարակ գործիքներով և մարդկային ոյժով. բացի
այդ՝ աշխատանքի բաժանում գրեթէ չկայ, կամ խիստ
փոքր չափով կայ, այսինքն՝ միևնոյն մարդը շինում է
առարկայի բոլոր մասերը: Միայն մեքենաների գիւտից
յիտոյ, հնարաւոր դարձաւ գործարանային արդիւնա-
գործութեան ժամանակակից հսկայական զարգացումը:
Սակայն նոյն մեքենաները, աշխատանքի արդիւնաւե-
տութիւնը բարձրացնելով, մի քանի տխուր երևոյթներ
ևս առաջ բերին—դուրս քշեցին արհեստաւորներին և
տնայնագործներին: Այս գործարանային արդիւնա-
գործութիւնը, բանւորից չը պահանջելով ոչ տեխնի-

բական գիտութիւններ և ոչ ֆիզիքական ոյժ, հնարա-
ւորութիւն տւեց աշխատանքի ընդունելու նաև կանանց
և երեխաներին, որոնք փոքր վարձով աշխատելով,
զցեցին աշխատավարձը: Գործարանային միապաշար
աշխատանքը քայքայող ազդեցութիւն է անուժ բան-
ւորներին առողջութեան վրայ, յատկապէս կանանց և
երեխաների—հանգմանք, որը գործարանային օրէնս-
դրութեան անհրաժեշտութիւնն առաջ բերեց (տես
Գործարանային օրէնսդրութիւն):

ՖԵՐՐԻԿԱՆՏ—Գործարանատէր:

ՖԱՔՐԻԿԱՏ—Գործարանային ապրանք, այն բոլորը, որ ար-
տադրում է գործարանը:

ՖԵՐՐԻՉԼԻՅ ԻՆՍՊԷԿՏՕՐ—Տես Գործարանային օրէնսդրու-
թիւն:

ՖԵՉ—Տես Փագիս:

ՖԱԷՏՕՆ—Կառք:

ՖԵՉԻՍ կամ **ՖԱՉ**—Շրջան, ժամանակամիջոց:

ՖԱԼՇ—Խարէութիւն, կեղծիք, խորամանկութիւն:

ՖԱԼՍԻՖԻԿԱՅԻԱ—Կեղծիք:

ՖԱԿԷԼ—Ջահ, կերոն:

ՖԱԿՈՒԼՏԱՏԻ ԲԷՖԷԼԷՆԴՈՒՄ—Տես Բեֆերենդում:

ՖԱԿՈՒԼՏԷՏ—Տես Համալսարան:

ՖԱԿՍԻՄԻԼԷ—Չեռագրի, նկարի ճիշտ արտատպումն:

ՖԱԿՏ—Փաստ, իրապէս կատարւած դէպք:

ՖԵՄԻԼԵԱՐ—Անպարկեշտաբար, յանդգնօրէն, խիստ ազատ:

ՖԱՆԵՏԻԿՈՍ—Մոլեռանդ, կոյր հետևող:

ՖԱՆԱՏԻԿՈՍՈՒԹԻՒՆ—Մոլեռանդութիւն, կոյր հետևողու-
թիւն:

ՖԱՆՏԱՉԻՆ—Երազ, ցնորք, դառանցանք, երևակայութիւն:

ՖԱՆՏԱՉԵՕՐ—Երազների, ցնորքների, դառանցանքների անձ-
նատուր եղած մարդ, երևակայութեամբ ապրող:

ՅԱՆՏԱՍՏԻՔ—Յնորական, երևակայական, մտացածին:

ՅԱՆՅԱՐՕՆ—Մնապարծ, փջող:

ՅԱՍԵՂ—Շինութեան երեսը, դրսի մասը:

ՅԱՍՕՆ—Ձև:

ՅԱՏ—Թեթևօրիկ, պճնասէր, դատարկ, փուչ մարդ:

ՅԱՏԱԼ—Անխուսափելի, ճակատագրական, դժբախտ:

ՅԱՏԱԼԻԶՄ—Խորը հաւատ դէպի ճակատագրը, նախախնամութիւնը:

ՅԱՏԱԼԻՍ—Փատալիզմին (տես Փատալիզմ) հաւատացող:

ՅԱՐՄԱՆ—Տես Փիրման:

ՅԱՐՄԱՍՕՆ—Ֆրանկ-մասօն բառի աղաւաղած ձևը: Այս անունը տգէտ մարդիկ տալիս են նրանց, ում անհաւատ ու անկրօն են համարում:

ՅԱՐՄԱՅԵՎՏ—Դեղագործ: Մասնագէտ, որն ուսումնասիրել է դեղագործութեան արհեստը:

ՅԱՐՄ—Ձաւեշտական պիէսա, որը՝ հասարակութեանը զարճութիւն պատճառելու համար, չափազանցութիւնների մէջ է ընկնում:

ՅԱՐՏՈՒԿ—Գողցոց:

ՅԱՐՅՅՐ—Կաւի աղնիւ տեսակը:

ՅԱԻՅՐԻՏ—Սիրելի, սիրւած: (Տես Ֆաւօրիտիզմ):

ՅԱԻՅՐԻՏԻԶՄ—Խնամիրութիւն, իր անպէտք ու անարժան ազգականներին, բարեկամներին ու սիրելիներին բարձրացնելը և զանազան պաշտօնների հասցնելը:

ՅԵԴԵՐԱԼԻԶՄ—Դաշնակցակային պետական ձև, որի ժամանակ պետութեան սահմաններում գտնւող բոլոր նահանգները (շտատ) պահում են իրանց անկախութիւնը բոլոր ներքին գործերում և ներկայացուցիչներ ուղարկում ընդհանուր-պետական կենտրոնական հաստատութիւնը, որի իրաւասութեանն են պատկանում ամբողջ պետութեանը վերաբերեալ բոլոր գործերը:

Ֆեդերալիստ—Ֆեդերալիզմի կողմնակից, դաշնակցական:
(Տես Ֆեդերալիզմ):

Ֆեդերալիզմ—Դաշնակցութիւն (Տես Ֆեդերալիզմ):

Ֆեդերալիզմ—Տես Աստիճանների կարգ:

Ֆեդերալիզմ—Վերաբոյժի օգնական:

Ֆեդերալիզմ—Մտորին զինուորի ամենաբարձր աստիճանը:

Ֆեդերալիզմ—Լրագրի ասանձին բաժանմունք, որ ներուած է լինում գրական, գիտական կամ հրապարակախօսական որևէ խնդրի՝ պարզաբանած մտաչելի ու թեթև լեզուով:

Ֆեդերալիզմ—Հին արարների և եգիպտացիների խառնուրդից առաջ եկած ժողովուրդ, որ պարապում է գլխաւորապէս երկրագործութեամբ, հակառակ բեզուխնների, որոնք թափառական ցեղ են:

Ֆեդերալիզմ—Հասարակական հոսանք, որի նպատակն է կանանց քաղաքական ազատագրութիւնը:

Ֆեդերալիզմ—Կանանց իրաւահաւասարութեան պաշտպան:
(Տես Ֆեմինիզմ):

Ֆեդերալիզմ—Հազարաւոր, արտակարգ երևոյթ:

Ֆեդերալիզմ—Կուռք:

Ֆեդերալիզմ—Կոսպաշտութիւն:

Ֆեդերալիզմ—Ընկերութիւն, միութիւն:

Ֆեդերալիզմ—Ազարակ:

Ֆեդերալիզմ—Ազարակատէր:

Ֆեդերալիզմ—Աւատական իշխան, ազնւական (Տես Ֆեոդալիզմ):

Ֆեդերալիզմ—Հասարակակարգ, որ ստեղծւեց միջին դարում (տես Միջին դարեր) Արեւմտեան Աւրոպայում: Ֆեոդալական սխտեմք կայանում է նրանում, որ երկիրը բաժանուած է բազմաթիւ մասերի, որոնց տէրերը՝ ֆեոդալները իրարից կախում ունեն աստիճանական կարգով, ըստ որում, ամենաբարձր աստի-

ճանի վրայ նա է կանգնած, ում հողաբաժինն ամենից մեծ է, որովհեաև նա այնքան շատ ստորագրեալներ— վաստալներ կունենայ: Թագաւորն ամենամեծ հողատէրն է— ֆէօդալը, որին ենթարկւած են բոլոր միւս ֆէօդալները: Վերջիններս թագաւորի վերաբերմամբ վաստալներ են, բայց իրանց հերթում նոյնպէս ունեն իրանց վաստալները— իրանցից փոքր հողատէրերը: Ֆէօդալական սխտեմն ո՛չ միայն պետութեան հողերն է մաս-մաս անում, այլև պետական բարձրագոյն իշխանութիւնը բաժանում է բազմաթիւ ֆէօդալների մէջ, որովհետև թագաւորն ամբողջովին յենում է իր վաստալներէ վրայ, իսկ վերջիններս օգտուելով դրանից՝ բաւական լայն իրաւունքներ են ձեռք բերում: Ժողովուրդը թէ քաղաքականապէս, թէ իրաւապէս և թէ տնտեսապէս կախւած էր ֆէօդալների այդ երկար շարքերից: Ֆէօդալիզմի տնտեսական պատկերը հետևեալ բնորոշ գծերն ունէր. գերիշխում էր քնական տնտեսութիւնը (տես Բնական տնտեսութիւն), այսինքն ամեն ընտանիք արտադրում էր իր կարիքներին անհրաժեշտ մթերքները. փոխանակութեան թուլութիւն, աշխատանքի բաժանման բացակայութիւն (տես Աշխատանքի բաժանում), ըստ որում՝ տնտեսական գործունէութեան զլխաւոր ասպարէզն երկրագործութիւնն է, որի մէջ աշխատողները, գիւղացիներն ամբողջովին ենթարկւած են իրանց տէրերի իշխանութեանը և՛ առհասարակ՝ ամբողջ հասարակակարգը դասային անհաւասարութեան վրայ է հիմնւած:

Ֆիւ.Ս.Ս.40.— Կատարեալ պարտութիւն, գործի ամբողջական անյաջողութիւն:

Ֆի.Չի.ԿԱ.— Գիտութիւն, որն զբաղւում է այնպիսի երևոյթների ուսումնասիրութեամբ, որոնց ժամանակ երև-

ոյթներն առաջ բերող մարմինների կազմը նոյնը մնալով, փոխուում է նրանց կամ նրանց մասերի զիրքը: Գիտութիւն բնական երևոյթների մասին:

Ֆիզիկական Իդէալիզմ—Տես Իդէալիզմ:

Ֆիզիկոս—Ֆիզիկայի մասնագէտ: (Տես Ֆիզիկա):

Ֆիզիոլոգ—Բնախօս:

Ֆիզիոլոգիա.—Բնախօսութիւն, գիտութիւն, որ ուսումնասիրում է կենդանի մարմինների կամ օրգանիզմների մէջ կատարուող զանազան երևոյթներն ու գործողութիւնները:

Ֆիզիոկրիտիզմ—Ուղղութիւն, քաղաքատնտեսութեան մէջ, որի հիմնադիրն է Ֆրանսիացի Կէնը: Գլխաւոր ներկայացուցիչներն են՝ Տիւրգոն, Դիւպոն-դը-Նէմուրը, Կոնդիլեակը և այլն: Հասարակութեան տնտեսական կեանքում, ասում են ֆիզիոկրատները, ինչպէս և ամեն տեղ բնութեան մէջ, տիրում են որոշ օրէնքներ: Մարդկանց տնտեսական կեանքում ոչ մի արհեստական միջոց նշանակութիւն չունի, այլ բնութիւնն է և յատկապէս հողը, որ հարստացնում են մարդուն: Հարկաւոր է է ճանաչել բնութեան այդ օրէնքները և օգտւել նրանցից: Հարկաւոր է ոչ թէ զարգացնել հում նիւթեր մշակող արդիւնագործութիւնը, ոչ թէ պէտք է զարգացնել արտաքին առևտուրը—արտահանութիւնը, բազմացնել գործարանների, արհեստանոցների թիւը, ինչպէս քարոզում են մերկանտիլիստները, այլ պէտք է դիմել բնութեան ոյժերին, որոնք միակն են, որ ըստեղծում են նոր հարստութիւններ: Արդիւնագործութիւնը և առևտուրը առարկաների միայն տեսքն ու ձևն են փոխում, էութիւնը թողնելով անփոփոխ և ոչ ինչ նոր բան չաւելացնելով, մինչ դեռ հողը ստեղծում է կատարելապէս նոր հարստութիւններ: Պետու-

թիւնը ժողովրդի տնտեսական կեանքին չպէտք է միջամտէ, նա միայն պէտք է ապահովէ ազգաբնակչութեան իրաւունքները: Ֆիզիօկրատները համարոււմ են Ազամ Սմիտի կլասսիքական շկօլայի նախորդները: (Տես Մերկանտիլիզմ, Կլասսիքական շկօլա, քաղաքատրնտեսութիւն):

Ֆիզիօկրատիզմի սկզբունքները պաշտպանող: (Տես Ֆիզիօկրատիզմ):

ՖիզիօլոՄիԱ.—Դէմք, կերպարանք, տեսք:

ՖիզիօլոՄիԱՍ.—Դիմագէտ, մարդու դէմքից նրա բնաւորութիւնն որոշելու արւեստը գիտեցող մարդ:

ՖիլԱՆՏՐՕՊ—Մարդասէր, բարեգործ:

ՖիլԱՆԴՐՕՊիԱ.—Մարդասիրութիւն, բարեգործութիւն:

Ֆիլէ.—Սուկի:

ՖիլիսԱ.—Ստորագրեալ, բաժանմունք, ճիւղ կազմող:

ՖիլիՊՊիկ—Յոյն Դեմօսթէնի ճառերն ընդդէմ Մակեդոնիացի թագաւոր Փիլիպպի. նաև Յիցերօնի ճառերն ընդդէմ Անտոնիոսի: Այստեղից՝ Փիլիպպիկ անւանոււմ են ամեն մի տաք, մերկացնող ճառ:

ՖիլիՍՏէՐ.—Նեղ հայեացքների տէր, յետադէմ, առօրեայ հոգսերով կլանւած մարդ:

ՖիկՏիԻ.—Պատիր, խաբուսիկ, շինծու:

ՖիկՏիԱ.—Կեղծիք, սուտ:

ՖիՆԱԼ.—1) Վերջաւորութիւն: 2) Երաժշտական արտագրութեան վերջաբանը:

ՖիՆԱՆՍիԱՍ.—1) Դրամական և բանկային ամեն տեսակ գործողութիւնների հմուտ մարդ: 2) Փողի մարդ: 3) Ֆինանսական գիտութիւնների մասնագէտ:

ՖիՆԱՆՍՆԵՐ.—Ելիմուտք, դրամական միջոցներ:

ՖիՐՄԱ.—Առևտրական ձեռնարկութեան ընդհանուր անունը: Ֆիրմային յաճախ տրոււմ է տէրերից մէկի անունը:

առանձնապէս կամ «և Ընկ.» («И К⁰») յաւելածով, և կամ որևէ ընդհանուր անուն ինչպէս, «Արամազդ», «Միութիւն», «Հաւատ» և այլն, և այլն:

ՖիրՄԱՆ—Տաճկահայն սուլթանի հրամանը:

ՖլԱՆԵԼ—Բրդի գործւածք:

ՖլԻԳՄԱՏԻԿ—Տես Տեմպերամենտ:

ՖլԻԳԵԼ ԱԴԻԻՏԱՆՏ—Թագաւորի ազիւտանտը:

ՖլԻՐՏ—Սիրային խաղ:

ՖլՕՏ—Նաւատորմիդ:

ՖլՕՐԻՆ—Արծաթէ գրամ՝ Անգլիայում=2 շիլինգի=մօտաւորապէս 1 ո., Աւստրիայում=75 կոպ.:

ՖոնԵՆԳՅԻՆ—Դեր, կոչում, կատարելիք գործ, պաշտօն:

ՖոնԵՆՏ ՄՏԵՐԼԻՆԳ կամ ՈՎԵՐԻՆ—Անգլիական ոսկեայ դրամ=20 շիլլինգի=340 պենսի=10 ո. (ըստ կուրսի կարող է բարձրանալ):

ՖոնԵՏ—Երկարութեան չափ, որ Ռուսաստանում= $\frac{1}{7}$ սաժ. =12 դիւյմի=120 լինի:

ՖոնԵՏԼԵԱՐ—Արկղիկ, որ շինւած է որոշ առարկայ մէջը պահելու համար:

ՖոնԵՏԻՆԻՐԻՉՄ—Փրանսիացի գիտնական Շ. Փուրիէի ուսմունքը, որ ուսուցիական սօցիալիզմի մի ճիւղաւորութիւնն է: (Տես Սօցիալիզմ):

ՖոնԵՐՕՐ—Ազմկալից հանդիսաւորութիւն, ծայրայեղ հրճւանք:

ՖՐԱԶ—1) Նախադասութիւն, ասածի մի մասը: 2) Առանց համոզմունքի ու հասկանալու արտասանած խօսքեր կամ մտքեր:

ՖՐԱԶԵՐ—Գեղեցիկ, բայց անբովանդակ խօսող, դատարկախօս, ճոռոմարան:

ՖՐԱՅՏ—1) Ապրանքների տեղափոխում: 2) Տեղափոխելի ապրանք, բեռ: 3) Ապրանք տեղափոխելու վճարը, ճանապարհածախար:

ՓՐԱԿ—Տղամարդի հանդիսային հազուստ:

ՓՐԱԿՅԻԱ—Ճիւղ, ճիւղաւորութիւն, կուսակցութեան մասը:

ՓՐԱՆԿ—Փրանսիական արծաթէ դրամ=100 սանտիմի=20 սոււի=25 կոպ. (որը կուրսի համեմատ աւելանում է). ներկայումս=37¹/₂ կոպ.:

ՓՐԱՆԿՄԱՍՕՆ—Տէ՛, Մասօն:

ՓՐԷՅԼԻՆԱ—Պալատական կին, որ համարուում է կայսերական ընտանիքի շքովմքի անդամ:

ՓՐԻՏՐԷԴԵՐՆԵՐ—Տէս Լիբերալիզմ, Քաղաքատնտեսութիւն:

ՓՐՕՆՏ—Մարտական կարգով կանգնեցրած զինւորների երեսի կողմը:

ՓՕԿՈՒՄ—1) Ձեռնածութիւն, աչքակապութիւն: 2) Կիզակէտ:

ՓՕՅԷ—Զբօսանքի դահլիճ՝ թատրոնների մէջ:

ՓՕՆ—1) Նկարի յետին պլանը: 2) Գերմաներէնի մէջ նախադիր, որ աւելացնում են ազգերի սկզբին, ազնւական ծագումը ցոյց տալու համար:

ՓՕՆԴ—1) Կոչւում է պետական ֆինանսների մի մասը, որ տարբեր պետութիւնների մէջ տարբեր նպատակի է ծառայում: Անդլիայում ֆօնդ կոչւում էին պետական այն եկամուտները, որոնք գործադրւում էին պետութեան պարտքերը և նրանց տոկոսները վճարելուն: Յետագայում ֆօնդերն սկսեցին գործադրւել նաև թագաւորական տան և պետական հիմնարկութիւնների ծախսերի վրայ: Փրանսիայում ֆօնդ կոչւում են պետական և տեղական ինքնավարական մարմինների փոխառութիւնները: Գերմանիայում և Ռուսաստանում ֆօնդ կոչւում են ընդհանրապէս բոլոր տոկոսաբեր թղթերը, իսկ մասնաւորապէս պետական փոխառութեան տոմսերը, օբլիգացիաները և միւս տոկոսաբեր թղթերը, որոնք անվստիս ու ճիշտ որոշած տոկոս

են բերում: Գաղտնի ֆօնդ սահմանադրական երկրնե-
րում կոչւում են այն զրամական միջոցները, որոնք
զբւում են ամեն մի մինիստրի լիակատար տրամա-
դրութեան տակ՝ պետութեան այնպիսի ծախսերի հա-
մար, որոնք պազոնի են պահւում թէ՛ հասարակութիւնից
և թէ՛ պարլամենտից: Այդ զրամագլուխները գործադրւում
են սովորաբար կառավարութեան ղիրքը, իշխանու-
թիւնն ու ազգեցութիւնն ամբապնդելու գործին այն-
պիսի ճանապարհներով, որոնք ոչ մի դէպքում չէին
կարող ժողովրդական ներկայացուցիչներին կողմից հա-
ւանութիւն ստանալ: Այդ ճանապարհներն են՝ ժողո-
վրդի ճնշման գործը կատարելագործել և ուժեղացնել
(ոստիկանութիւնը շատացնել, լրտեսներ վարձել, պա-
տահական մարդկանց մատնութիւնները վարձատրել և
այլն, և այլն), կաշառել թէ՛ արտասահմանեան և թէ՛
հայրենական մամուլը և այդպիսով կեղծ հասարակա-
կան կարծիք կազմել յօգուտ կառավարութեանը: Լրա-
պրներին կաշառելու վրայ գործ դրած միջոցները կոչ-
ւում են Ռեպտիլ ֆօնդ (տես Ռեպտիլ ֆօնդ): 2) Հիմք:
3) Որևէ ձեռնարկութեան մէջ ֆօնդ կոչւում է հիմնա-
կան զրամագլուխը: 4) Պետական արժէքաւոր թղթերի
անունը:

ՖՕՆՕԳԻՐԱՖ—էղիսօնի հնարած գործիք, որը գրի է առնում
խօսակցութիւնն ու երգը և ապա արտասանում ու եր-
գում:

ՖՕՐՄԱԼԻԶՄ—2որ ձևականութեան կողմնակից ի վնաս բո-
վանդակութեան:

ՖՕՐՄՈՒԼ—Արտայայտութիւն, որ ծառայում է իբրև ընդ-
հանուր օրինակ առանձին դէպքերի համար:

ՖՕՐՄՈՒԼԱՐ—Ծառայութեան ցուցակ, վկայագիր, որտեղ
նշանակւում են տիրոջ մասին եղած բոլոր պաշտօնա-

կան տեղեկութիւնները, ծառայութեան ժամանակը,
տարին, դաւանութիւնը, ընտանեկան և նիւթական
դրութիւնը, ստացած շքանշանները, պատիժները և
այլն, և այլն:

ՖՕՐՏԵՊԻԱՆՑ—Դաշնամուր:

ԲԱՅ ԹՈՂԻԱԾ ԲԱՌԵՐԻ ՅԱԻԵԼԻԱԾ

ԱԲՍՕԼԻԻՏԻԶՄ—Տէս Կառավարութեան ձեւ:

ԱԲՍՈԼԻԻՏ ԻԴԷԱԼԻԶՄ—Տէս Իդէալիզմ:

ԱԶԱՍՄԻՏՆԵՐ—Տէս Լիբերալիզմ:

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻԻՆ—Տէս Կլերիկալիզմ:

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐ—Տէս Հարկեր:

ԱՆՍԱՀՄԱՆ ՄԻԸՊԵՏՈՒԹԻԻՆ—Տէս Կառավարութեան ձեւ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ—Տէս Մանուֆակտուրա:

ԱՇԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻԻՆ—Կոչուած է այն տնտես-
ութիւնը, որի մէջ հողատէրն ինքն անձամբ է աշխա-
տում, առանց վարձու բանւորների:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԲԱՆԿ—Տէս Բանկ:

ԱՍՍՑԵՍԻՅԻՆ—Տէս Կօօպերացիա:

ԱՍՏԻԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՍՑԵՍԻՅԻՆ—Տէս Սօցիալիզմ:

ԱՍՏԻԱԾՊԵՏԱԿԱՆ ՄԻԸՊԵՏՈՒԹԻԻՆ—Տէս Կառավարու-
թեան ձեւ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԻԻՆ—Տէս Արտակարգ պահպանութիւն:

ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՀՊԵՆՈՒԹԻԻՆ—Ուժեղացրած պահպանու-
թեան աւելի խիստ աստիճանը: Ռուսաց կառավարու-

թիւնն արտակարգ պահպանութիւն մտցնում է այն ժամանակ, երբ գտնում է, որ այս կամ այն տեղի աղգարնակութիւնն անհանգիստ դրութեան մէջ է: Արտակարգ դրութիւն յայտարարում է բարձրագոյն հաստատութիւնը ստացած Մինիստրների Սորհրդի վճռով՝ ներքին գործոց նախարարի առաջարկութեամբ: Արտակարգ դրութեան ժամանակամիջոցը վեց ամիս է, բայց ներքին գործոց նախարարը՝ Մինիստրների Սորհրդի որոշմամբ կարող է ժամանակն երկարացնել: Արտակարգ դրութեան էութիւնը հետեւեալն է. այդ տեղում նշանակուում է կառավարչապետ, իսկ եթէ կայ՝ գեներալ-գուբերնատօր, որին տալիս են կառավարչապետի իրաւունքներ, այն է՝ 1) երկրի զանազան մասերն որոշ անձերի իշխանութեանը յանձնել, 2) զինւորական-ոստիկանական խմբեր հաստատել, 3) որոշ բնաւորութիւն կրող գործերը յանձնել զինւորական զատարանին, 4) արգելքի տակ զնել շարժական ու անշարժ կայքերը, 5) իր իրաւունքով ենթարկել բանտարկութեան կամ բերդարգելութեան մինչև երեք ամիս ժամանակով, կամ տուգանքի մինչև 3 հազար ռուբլ. ամեն մի յանցանքի համար, 6) բոլոր վարչութիւնների ծառայողներին—չինօթլիկներին պաշտօնից հեռացնել, ինչպէս և տեղական ինքնավարական մարմինների ընտրած պաշտօնեաներին, 7) վճռել կամ արգելել դասային, քաղաքային կամ գեմտովային հաստատութիւնների նիստերը, 8) փակել պարբերական հրատարակութիւնները և զպրոցական հաստատութիւնները մէկ ամիս ժամանակով:

ԱՐՏԵԼ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ — Տես Կօօպերացիա

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Բառարանիս զնահատութիւնը թողնելով նրանից օգտուողներին, կարևոր ենք համարում յիշել, որ նա կազմւած է հետեւալ հրատարակութիւններէս.---Энцикл. сл. Брокъ-Ефр., Слов. Юрид. и Госуд. наукъ А. Волкова и Ю. Филиппова, Слов. иностр. сл. Павленкова, Соврем. общ.-полит. и экономич. сл. Сытина, Сл. по аграр. вопр. изд. Нов. Моск. Книгоизд., Слов. по рабочему вопр. того-же изд., Общ.-пол. сл. того-же изд., Сборникъ прогр. полит. парт. Водовоз., Общедост. сл.-толкователь изд. Разсв., Общедост. сл. Лебедова, Кратк. нар. сл. Смирн., Толк. полит. сл. изд. «Трудъ».

Աչքի առջ ունենալով հայ ընթերցողի պահանջները, Բառարանումս տեղ ենք տւել թէ օտարազգի բառերին, որոնք գործածոււմ են մեր լեզուի մէջ, թէ հանրագիտական և թէ մանաւանդ սօցիալ-տնտեսական խնդիրների վերաբերմամբ ամենաանհրաժեշտ տեղեկութիւններին, առանց որոնց, մեր կարծիքով, թերի կլինէր մտքերի ու հասկացողութիւնների լուսարանութիւնը:

Աւելորդ չենք համարում միաժամանակ նկատել, որը չմոռանալով Բառարանիս ծաւալը, ստիպւած եղանք մի քանի բառերի աւելի համառօտ բացատրութիւնը տալ, քան թէ հարկաւոր էր, իսկ մի քանի բառերի միայն այն նշանակութիւնը բացատրել, որը գործածական է առօրեայ ընթերցանութեան մէջ—հանդամանք, որը թերևս խանգար-

րած է նիւթերի համաշափութիւնը: Միևնոյն ժամանակ,
մեզնից անկախ պատճառով հարկադրեցինք, Բառարանս
կազմելուց յետոյ, տպագրութեան ընթացքում, նոր կրճա-
տումներ անել, դուրս թողնելով «Ազրարային ծրագիրը» և
այլ բառեր, թէև սրանց մասին Բառարանումս տեղ-տեղ
յիշւած է:

Վերջում կցւած է բաց թողւած բառերի մի փոքրիկ
յաւելւած:

Տէր-Ղազարեան

1908 թ. մայիս
թիֆլիս





